ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԺԱ-ԺԳ. ԴԱՐԵՐԻ ՀԱՅ - ՎՐԱՑԱԿԱՆ ԴԱՎԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԱՌ ՎՐԱՑԻՍ» ԹՈՒՂԹԸ

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԳՐԵՐ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2011

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դ.

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

ԱՌ ՎՐԱՑԻՍՆ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4503

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԺԱ-ԺԳ. ԴԱՐԵՐԻ
ՀԱՅ – ՎՐԱՑԱԿԱՆ ԴԱՎԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՎ
ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԱՌ ՎՐԱՑԻՍՆ» ԹՈՒՂԹԸ

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԳՐԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2011

ՀՏԴ 930
ԳՄԴ 63.2
Մ 922

Տպագրվում է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրապարակչական Խորհրդի
երաշխավորությամբ

Խմբագիր՝
Գ. Տեր-Վարդանյան

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ
Մ 922 ԺԱ-ԺԳ. ԴԱՐԵՐԻ ՀԱՅ – ՎՐԱՑԱԿԱՆ ԴԱՎԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԱՌ ՎՐԱՑԻՍՆ» ԹՈՒՂԹԸ: ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԳՐԵՐ / Պարույր Մուրադյան, Խմբ.՝ Գ. Տեր-Վարդանյան. - Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ., 2011,- 288 էջ:

ՀՏԴ 930
ԳՄԴ 63.2

Տպագրվում է մեկենասությամբ

ԱՐՄԵՆ ԵՎ ՆՈՒՆԵ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ

ISBN 978-9939-59-083-7
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011 թ.

Բյուզանդական կայսրության սահմաններում տեղի ունեցող դավանական-մատենագրական զարգացումները լայն արձագանք էին գտնում ԺԱ-ԺԳ. դարերի վրաց գիտակրթական կենտրոններում ու մատենագրության մեջ: Եվ քանի որ բյուզանդական օրթոդոքս եկեղեցին հետևողական անհանդուրժողականություն էր ցուցաբերում Հայոց որդեգրած դավանության հանդեպ, վրաց եկեղեցին ևս, հակառակ Հայոց հետ ունեցած էթնոմշակութային սերտության, հետևորդ եղավ հունական կեցվածքին: Մեզանում երևան եկան հակաճառական երկեր, որ պատասխանելով հույն-վրացական դավանական հարցումներին ու հալածումներին՝ կոչված էին պաշտպանել եկեղեցու ավանդական դիրքորոշումը: Հայոց եկեղեցու ընդունած դավանաբանությունը ներկայացնելիս մենք վստահաբար հետևել ենք «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացեալ» *բանաձևին, որի հանգամանալի քննությունն ու հիմնավորումը կատարել է պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանը «Կնիք հաւատոյ եւ Հայոց Եկեղեցու դաւանական գիրքը Զ. եւ Է. դարերում» գրախոսական հոդվածում (Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա. և Բ., 1921-1922, էջ 262-279):*

Գիրքը նվիրված է հիշյալ խնդիրների քննությանը և առ այդ կոչված բնագրերի հրատարակությանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 7
2. ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ ԺԱ-ԺԲ. ԴԱՐԵՐՈՒՄ 15
   ա. ՍԱՄՈՒԵԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑԻ 15
   բ. ՊՈՂՈՍ ՎՐԴ. ՏԱՐՈՆԱՑԻ 19
   գ. ՀԱԿՈԲ ՎՐԴ. ՍԱՆԱՀՆԵՑԻ ԿԱՄ ՔԱՐԱՓՆԵՑԻ 23
   դ. ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ՍԱՆԱՀՆԵՑԻ 26
   ե. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎՐԴ. ՍԱՐԿԱՎԱԳ 30
3. ՂՐՏԻԼԱՅԻ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ «ԺՈՂՈՎԸ» 37
4. ԵՓԹՈՒԻՄԻՈՍ ԳՐՋԵԼԻԻ (ԵՐԿԱՅՆԻ) ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՍԹԵՆԻՈՍԻՆ 43
5. ԱՐՍԵՆ ԻՂԱԼԹՈՅԵՑՈՒ «ԴՈԳՄԱՏԻԿՈՆԸ» 52
6. «ՀԱՅՈՑ ՀԵՐՁՎԱԾԻ ԵՐԵՍՈՒՆ ԴՐՎԱԳ» 66
7. «ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԱՌ ՀԱՅՍ»-Ի ՁԵՌԱԳՐԵՐԸ 73
8. «ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԱՌ ՀԱՅՍ» 77
9. ՄԽ. ԳՈՇԻ «ԱՌ ՎՐԱՑԻՍՆ» ԹՈՒՂԹԸ ԵՎ ԴԱՎԱՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 171
10. ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՎԱՆԱԿԱՆ ԹՂԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ 191
11. ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, «ԹՈՒՂԹ ԱՌ ՎՐԱՑԻՍՆ՝ ՅԱՂԱԳՍ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՈՅ» 195

ՀԱՎԵԼՎԱԾ

ՊԱՐԱԿԱՆՈՆ ՇԱՐԱԴՐԱՆՔՆԵՐ 267
   ա. ԱՍՔ ՊԵՏՐՈՍ ԹԱՓԻՉԻ, ԱԼԱՋԻ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐԱՑ ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ 269
   բ. «ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՈՒԲՈՒԼԻ ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ՄԱՍԻՆ» 272

ՑԱՆԿԵՐ 275

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Հայոց հին ու նոր պատմության ծալքերը տևականորեն պրպտած Ն. Ադոնցը եկեղեցական պատմության ծավալն ու անելիքները սահմանելիս կատարում է կարևոր մի ընդհանրացում, որ ելակետային է մեր անցյալի որոշ առանձնահատկություններ քննելիս: «Ճշմարիտ է,– գրում է նա,– եկեղեցին բարոյական խոշոր հաստատութիւն է, որի պատմութիւնը և կեանքն իր սեփական անիւներն ունին, բայց անուրանալի է, որ նրանց պտոյտները կատարուել են գրեթէ միշտ քաղաքական ելևէջների շրջանակի մէջ: Հայ-վրացական և հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերութիւնները, նրանց բեկումները և վերջնական դասաւորումը, անկախ տեղական բովանդակութիւնից, դաւանաբանական, վարչական և ազգային խթաններից, վերջին հաշուով չիտակ անդրադարձումներ են երկու հարևան մեծ պետութիւնների մրցութեան և նրանց քաղաքական գերակշիռ ազդեցութեան»[1]:

Ուրեմն պետական այդ կազմավորումների հետ Հայոց առնչությունները պարզաբանելու ընդգրկուն եղանակներից մեկը դավանական խնդիրների շուրջ եղած վայրուվերումների ուսումնասիրությունն է: Լիովին կարելի է պատկերացնել այն քաղաքական ու էթնոմշակութային շահագրգռությունները ու մղումները, որ ցուցաբերում էին հարևան պետությունները դավանական հակամարտ դիրքորոշումները հաղթահարելու և դաշնակցային վերաբերումները ապահովելու համար: Բյուզանդական կայսրերն ու պատրիարքները հրաշալի գիտակցում էին, որ քաղաքական հանգամանքների բերումով կայսրության սահմաններում հայտնված կամ հաստատված հայությունը շարունակում է պահպանել իր ինքնուրույն դավանական նկարագիրը և նվիրապետական առումով անկախ չէ Հայոց հայրապետական աթոռից, և քանի որ հայկական համայնքները երկրի բնակչության նկատելի մաս էին կազմում ու նշանակալի դերակատարություն ունեին Բյուզանդիայի տնտեսական և ռազմական կյանքում, վստահություն չունեին, թե նրանք պահանջված չափով

---

[1] **Ն. Ադոնց**, Բագրատունիների փառքը.– «Պատմական ուսումնասիրութիւններ», Փարիզ, 1948, էջ 153:

իրենց «բյուզանդացի» են համարում և արտաքին դրդումներին կարող են ընդդիմանալ:

Քաղաքական իշխանությունները ջանում էին հարկապահանջության ծանրացումով ու դավանական հալածումներով ստիպել այլադավաններին, այդ թվում և հայրենի դավանությանը հավատարիմ մնացած հայությանը, կրկին մկրտությամբ ուղղադավանություն ընդունել և դրանով իսկ լուծվել բյուզանդական հասարակության մեջ:

Բյուզանդացիների վարած հալածական քաղաքականությունը առանձին դրվագներում հայերին ստիպում էր համակրանքով նայել դրսից կայսրության դեմ ուղղված ձեռնարկումներին: Մասնավորապես՝ այդպես եղավ սելջուկյան արշավանքների շրջանում, երբ հայերը տուրքերից ու հալածանքներից ազատվելու համար «իսլամ տիրապետության տակ գտնվող երկրներ տեղափոխուելը նախամեծար համարեցին»[2]: Այդպես էր նաև արաբական արշավանքների շրջափուլում, երբ «գունդագունդ դիմած էին» դեպի իսլամական երկրներ[3]: Կղերական մոլեռանդությունն ու դավանական անհանդուրժողականությունը մեծապես վնասում էին երկրի արմատական շահերին՝ մանավանդ սահմանները պաշտպանելու խնդրում: Բյուզանդական ազնվականությունը, ցավոք, թիկունք էր կանգնում ազգային կղերականությանը: Առանձին դեպքերում հալածանքները վերջանում էին ընդդիմացողների սպանությամբ ու աճաբեկված հոգևորականների օրթոդոքսություն ընդունելով, ինչպես այդ կատարվեց Հայոց ՆԼԵ. (=986) թվականին Սեբաստիայում: Ասողիկը պատմում է, որ տեղիս ավագերեց Գաբրիելին՝ «այր ծեր և իմաստուք լի և քաջապինդ ի հաւատս աստուածեղէնս» կապանքներով հասցնում են թագավորական պալատ և սպանում: Այս փաստից աճաբեկված Սեբաստիայի և Լառիսայի եպիսկոպոսներ Սիոնն ու Հովհաննեսը «ի ձեռն մետրոպոլիտին» բաժանվեցին Հայոց միավորությունից և քաղկեդոնականություն ընդունեցին[4]: Այս անցքին ի պատասխան Հայոց Խաչիկ հայրապետը Սեբաստիայի մետրոպոլիտին ընդարձակ հակաճառություն ուղարկեց՝ ջանալով հիմնավորել հայերի դավանությունը[5]:

[2] **Արշակ Ալպօյաճեան**, Պատմութիւն հայ գաղթականութեան, Բ., Գահիրէ, 1955, էջ 514:

[3] Նույն տեղում, էջ 515:

[4] **Ստեփանոսի Տարօնացւոյ** Ասողկան Պատմութիւն տիեզերական, երկրորդ տպագրութիւն, ի Ս. Պետերբուրգ, 1885, էջ 201-202:

[5] Հակաճառության բնագիրը բերված է Ասողիկի երկում, էջ 202-243:

Նման մի դեպք էլ կատարվել է Անանիա Մոկացի կաթողիկոսի օրոք. բյուզանդական հալածանքները արձագանք գտան նրանց անմիջական ազդեցության տակ գտնվող վրաց եկեղեցականության շրջաններում: Նույն Ասողիկը վկայում է, թե Կամրջաձորի վանքի առաջնորդ Հովհաննեսը «հալածեալ յարեւմտեայ աշխարհէն, յեգերացւոց գաւառէն, ի քաղկեդոնական մարդադաւան աղանդիցն», փախստական գալիս է և իր հետ բերում «հրաշագէն Նշան տերունական»[6]: Որ բյուզանդական դավանական թելադրանքը կիրառելի էր նաև նրա ազդեցության ոլորտ ընդգրկված վրաց միջավայրում՝ հաստատվում է նույն Ասողիկ պատմիչի մեկ այլ վկայությամբ. Խաչիկ կաթողիկոսի գահակալության տարիներին (972-992) «էին վարդապետքն Յովհաննէս՝ խաչակիրն Քրիստոսի, որ տկար բանիւ և մեծ գիտութեամբ բացայայտէր զգիտութիւն Գրոց սրբոց: Սա մեռաւ ի մոլեալ ազգէն Վրաց, որով և թաղեցաւ ի վանս, որ Ակսիգոմս ասի ի Բասեան գաւառի և այժմ սուրբ Յովհան առ ստորոտով Լերինն Ծիրանեաց»[7]: Ինչպես երևում է, վարդապետը փորձել է իր դավանած եկեղեցու վարդապետությունը հիմնավորել սուրբգրային վկայություններով, ինչը ընդունված է ջատագովական գրականության մեջ, բայց անհանդուրժողականության է հանդիպել և զոհվել քարոզելիս: Այս ու այլ եղելությունները ապացուցում են, որ հայ հոգևորականությունը սոսկ պաշտպանողական կեցվածքով չի բավարարվել և հետամուտ է եղել իր դավանությունը տարածելուն և չի խորշել իր նկատմամբ այլոց կիրառած մերժմանը պատասխանել համապատասխան գնահատությամբ:

Վրաց-հունական դավանական-մշակութային սերտությունը մեզ հետաքրքրող դարաշրջանում այնքան էր առաջացել, որ ժամանակի հույն մատենագիրներից շատերի գործերը՝ երևան գալուց քիչ անց, արձագանք էին գտնում վրաց կրթօջախներում և արժանանում թարգմանության: Այդպիսի հույն հեղինակներից էին Սիմեոն Մետափրաստեսը, Հովհան Քսիփիլինոսը, Նիկիտա Ստիթատոսը, Եվստաթիոս Նիկիացին, Միքայել Փսելոսը և ուրիշներ: Եվ սակայն ա-

[6] Նույն տեղում, էջ 173: «Էգերաց գաւառը» նույն Ափխազաց թագավորությունն է, որը կազմված էր ութ իշխանությունից, որից երկուսը բուն ափխազական: Էգերացիները նրա մի մասն էին ներկայացնում: Ընդ որում էգրիսի (=Ափխազքի) թեմը տակավին ենթարկվում էր Կոստանդնուպոլսի պատրիարքին: Հմմտ. Հովհ. Դրասխանակերտցու «Յաղագս պատերազմին Կոստանդնի Եգերացւոց արքային և ըմբռնման նորին...» գլուխը Ե. Ցագրեյշվիլու հրատ., თბილისი, 1965, էջ 109-112):

[7] Նշվ. աշխ., էջ 185:

սել, թե հույները խանդավառություն էին ապրում Վրաստանից դուրս եղած կրթօջախներում վրացիների ծավալած գիտակրթական գործունեության, վանական նոր կենտրոններ հիմնելու համար՝ փաստերն անտեսել կնշանակեր: Բավական է հիշել, որ 980-983 թվականներին Հովհանի և Թոռնիկի ջանքերով ու միջոցներով Աթոսում կառուցված Իվերոնի վանքում արդեն ԺԱ. դարի առաջին քառորդում փորձ եղավ միաբանությունը լցնել հույներով, իսկ Գրիգոր առաջինի տանուտերության տարիներին (1029-1039), ապա և Արսենի առաջնորդության շրջանում (1039-1041) նրան տիրանալու քայլեր ձեռնարկվեցին[8]: Պատահական չէ, որ չորս տասնամյակ անց Պետրիծոնի վանքը հիմնելիս հայ-վրաց-բյուզանդական վարչական-քաղաքական շրջաններին քաջ հայտնի Գրիգոր Բակուրյանը իր կազմած «Սահմանքում» արգելեց միաբանության կազմում հույներ ընդունել[9]:

Հայ հոգևորականներին զայրացնող և նրանց դավանական զգացումները վիրավորող պարագաներից մեկը օրթոդոքս միջավայրում Հայոց պաշտոնական եկեղեցու կարգով կնքվածներին առ ի հարկի կրկին մկրտության ենթարկելն էր: Ահա այդ փաստող մի կարևոր դրվագ վրաց մատենագրությունից. «Ս. Էքվթիմեի և Ս. Գեորգիի վարքում» պատմվում է, թե ինչպես Աթոսի վրաց վանք էր եկել Ջոջիկ իշխանի գանձապետաց ավագ Գյուրպելը «եւ կնքվեց՝ քանզի հայ էր, եւ Արսեն կոչեցին նրան» (§ 85,1)[10]: Այստեղից պարզորոշ հետևում է, որ Թ-ԺԱ. դարերի սահմանագլխին արդեն «հայ» և «վրացի» էթնոնիմները ձեռք էին բերել դավանական իմաստավորում. Գյուրպելը հայ էր, բայց կնունքից հետո Արսեն դարձավ ու վրացի: Սա շատ կարևոր ցուցում է միջնադարյան այլևայլ բնագրերի (այդ թվում և արձանագրությունների) վկայությունները մեկնաբանելիս, որ հաճախ հայ-վրացական խնդիրներ քննելիս մոռացության է տրվում:

8 კ. კეკელიძე, მიტაცება ბერძენთა მიერ ქართული ლიტერატურული კერისა ათონზე და მისი მდგომარეობა... «ეტიუდები...», III, თბ., 1955, გვ. 69-71. Հմմտ. Նույնի კულტურული დამოუკიდებლობისათვის ბრძოლის ანარეკლი ძველ ქართ. ლიტერატურაში, "ეტიუდები...", ტ. IV, გვ. 110-124.

9 **Պ. Մուրադյան,** Գրիգոր Բակուրյանի «Սահմանքի» հունարեն և վրացերեն խմբագրությունների գնահատության շուրջ.– «Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը», Երևան, 2008, էջ 290-307:

10 Բնագրում. «კუალად მოვიდეს გურჯელი, ჯოჯიკის მეგანძურთა უხუცესი და მოინათლა, რამეთუ სომეხი იყო, და არსენი უწოდეს .– გიორგი მთაწმიდელი, ცხორებაჲ იოვანესი და ეფთჳმესი, გამოსაცემად დაამზადა ივ. ჯავახიშვილმა, თბილისი, 1946, გვ. 41.

Անանիա Մոկացի կաթողիկոսի օրոք (943-967), ինչպես երևում է, ազդեցիկ հոգևորականների ժողով է գումարվել, ուր քննության է առնվել կրկին մկրտության հարցը և, ի պատասխան հույների ու վրացիների գործադրած խրողության՝ որոշում է կայացվել նույնը կիրառել քաղկեդոնականությունից դարձ կատարողների վերաբերմամբ. «Սոքա ամենեքեան (իմա՛ ժողովի եկած հայ հոգևորականները — Պ. Մ.) խորհրդական քննութեամբ ընտրութեամբ գրովք աստուածայնովք՝ հրամանաւ Տեառն Անանիայի զքաղկեդոնական մկրտեալսն կրկին անգամ հրամայեցին մկրտել»[11]:

Անանիային փոխարինած Վահան կամ Վահանիկ կաթողիկոսի գահակալության տարիներին (967-969) չէ թե քաղկեդոնականներին, այլև նրանց հանդեպ «սիրելութիւն և հաճութիւն» առնել կամեցողներին, ներառյալ կաթողիկոսը, Անիում հավաքված կրոնավորները մերժեցին, «իսկ Վահանիկն փախստեայ անկանի ի Վասպուրական, առ Ապուսահլ թագաւոր Վասպուրականի, որ էր որդի Գագկայ Արծրունւոյ»[12]:

Հիմքեր կան մտածելու, որ դավանական բանավեճերը ոչ միշտ էին տեղի ունենում քրիստոսաբանական նուրբ ու բավականաչափ խրթին հարցերում պահանջվելիք պատրաստություն ունեցող ախոյան հոգևորականների միջև: Մասնավորապես այդպես է բանավեճը ներկայացնում Ղրտիլայի եկեղեցական ժողովի ընթացքը պատմող վրացական բնագիրը: Սակայն երևում է, որ բանավեճի անծանոթ շարադրողը նպատակ ունի նվաստացնել հակառակ կողմի փաստարկներն ու կարողությունները: Հավանաբար ոչ պատահականորեն Խաչիկ կաթողիկոսը վերևում հիշատակված պատասխան թղթում գրում է. «Երբեմն գրելոցն անհմտութեամբ և երբեմն յաչա-

11 **Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 178: Ուշադրության է արժանի հավաքված հոգևորականների ցանկն ու բնութագրությունը, որոնց մեկ մասին տեսնելու և լսելու բարեբախտություն է ունեցել ինքը Ասողիկ պատմիչը. «էին վարդապետք վարժեալք վարդապետութեամբ Տեառն և ուսուցիչք ճշմարտութեան. Բասիլիոս ծերունին, քաջակորովն ի խօսս և քաջաքարոզն ի պատմել զօրէնս Տեառն, Գրիգոր քահանայ յամուսնացելոց, յորդախօսն և առատաբանն ի պատգամս Տեառն, և Ստեփանոս, աշակերտ Բարսղի, որ Հոգևորն կոչեցաւ, առաքելաշնորհ բանիւ և գործով. ընդ սմա և մեծանունն ի գիտութեան և յառաքինութեան Մովսէս, որ քառասուն աւուրբք ծգեցուցանէր զանսուաղութիւնն: Եւ Դաւիթ աղքատակերպ և գծծասէր գիտնականն, որում անուն Մաշկոտն կոչի, և Պետրոս, հաւատի մեկնիչ Գրոց սրբոց, և Անանիա, փիլիսոփայն մեծ, որ վանական Նարեկի: Սորա և գիրս է ասացեալ ընդդէմ աղանդոյն Թոնդրակաց և այլոց հերձուածոց», Ասողիկ, նշվ. աշխ., էջ 178:

12 **Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 181-182:

ղանօք թիւրելով զճշմարտութիւնն կամ բռնադատելով՝ ոչ պակասեաց պատճառ առնուլ ի Գրոց սրբոց և հաւատարիմ առնել զչարն կերպարանօք բարւոյ տգիտաց և պարզամտաց: Որով և դուք մանաւանդ սեղանակապուտք եղեալ գրոցն, և գողացեալ զմիտս գրելոցն և բարեաւն վարեցեալ առ չարն»[13]:

Միանգամայն գործնական նկատելով բանավեճերի կազմակերպումը՝ համաձայնության եզրեր գտնելու և միադավանության հասնելու համար, հույն ու վրացի հոգևորականությունը իր ունեցած դիրքն ու պետական պաշտպանությունը գերադասելի համարելով՝ փաստորեն քրիստոսաբանական խնդիրներում զիջումների չէր գնում, պահանջում էր կամ օրթոդոքսություն ընդունել, կամ հեռանալ երկրից: Կայսր Ալեքսիոս Ա. Կոմնինոսի օրոք (1081-1118) հայերին, ասորիներին և հրեաներին քաղաքից արտաքսելու դեպքի մասին կարևոր մի վկայություն է պահպանվել Միքայել Ասորու մոտ, երբ Կ. Պոլսո Նիկողայոս Գ. պատրիարքը հրամայեց «արտաքսել մեր (հակոբիկ ասորիների – Պ. Մ.) և Հայոց ժողովուրդը, որոնք չէին ընդունում նրանց (իմա՛ հույների – Պ. Մ.) հերձվածողությունը: Եվ որովհետև նա (իմա պատրիարքը – Պ. Մ.) պնդում էր, և սրանք էլ չէին ուզում ընդունել, պատրիարքի հրամանով բերին գրքերը՝ սուրբ խորհուրդը և ինչ որ կար ասորիների եկեղեցու մեջ և այրեցին հրապարակի վրա: Նույն բանը արին և հայերին, որոնց ս. Նշխարքը և ս. մեռոնը թափեցին գետին և ոտնակոխ արին»[14]: Մեկ այլ դրվագում Միքայել Ասորին պատմում է նույն կայսեր օրոք ասորիների և հայերի նկատմամբ հարուցված նաև ուրիշ հալածանքի մասին. ասորի քահանայի զրպարտությամբ կամ մատնությամբ կայսրը լուր է հասնում, թե հայերն ու ասորիները առնչություններ են հաստատել թշնամի թուրքերի հետ, ուստի կայսեր հրամանով հայոց ու ասորիների ունեցած մեկական եկեղեցիները այրվում են, իսկ քահանաները՝ արտաքսվում, «ժողովրդի մնացած շատ մասը հերետիկոս դարձավ» (գիրք XV, գլ. VII)[15]:

Ընդ որում, կայսրության պատմության մեջ այլադավանների արտաքսումը ներքին խնդիրները լուծելու եղանակ էր դիտվում: Կոստանդին Մոնոմաքոսի գահակալության առաջին իսկ տարիներին երկրի ներսում տեղի էին ունենում բարձրաստիճան զինվորականության, թեմակալ ստրատեգիկոսների և հարկերի ծանրությունից ըմբոստացող խավերի խռովություններ: Իսկ երբ դրանց գումարվեց թագուհիներ Զոյային ու Թեոդորային սիրուհի Սկլիրինայով փոխարինելու հակումը, 1044 թ. մարտի 9-ին ամբոխը շրջապատեց պալատը և սպառնաց կայսերը[16]: Դարձյալ մայրաքաղաքը հանդարտեցնելու միջոց ընտրվեց հրեաներին, մահմեդականներին ու հայերին քաղաքից վտարելը[17]: Հայերը բազմիցս փորձում էին հանուն հալածանքը մեղմելու և ունեցած վանական կենտրոնները չլքելու՝ չխորշել հալածիչների հետ երկխոսելուց: Գրիգոր Ապիրատը (1194-1203), օրինակ, Ներսես Լամբրոնացուն պատգամավորության ուղարկեց Կ. Պոլիս, սակայն ոչ միայն համաձայնության գալ չհաջողվեց, այլև հույները շարունակեցին քաղկեդոնականցնել հայերին, իսկ ընդդիմացողներին՝ արտաքսել:

Երբեմն կացությունն այնքան անհանդուրժելի էր դառնում, որ Բյուզանդիայի խորքերից («Վիկանտոնացիների աշխարհից») հայ հոգևորականները «ելեալ տարադէմ... քառասուն մարդովն փախստեայ լինէին և գային հասանէին յաշխարհս Հայոց...»[18], ինչպես այդ տեղի ունեցավ Ռոմանոս կայսեր (912-944) հարուցած հալածանքների տարիներին:

Որքան էլ հայոց հոգևորականությունը ընդդիմանալու և բանավիճելու կարողություններ ունենար՝ նրա կորուստները շատ ավելին էին, քանի որ նրա տնօրինած եկեղեցու հավատացյալների զանգ-

---

13 **Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 235-236:

14 Chronique de Michel le Syrien, patriarche Jacobite d'Antioche (1166-1199). E'ditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris, 1905, p. 166-167.

15 Նույն տեղում, էջ 185: Հմմտ. **Բաբգէն եպս.** Կ. Պոլսոյ հայ գաղութին ծագումը և հնագոյն եկեղեցիներ.- «Ընդարձակ տարեցոյց», Կ. Պոլիս, 1926, էջ 294:

16 История Византии в трех томах, т. 2, М., 1967, стр. 271.

17 Abé Albert Vogt, IV, p. 109: Հղումը կատարված է ըստ Հ. Սիրունու վկայակոչության (տես Նրա Պոլիս և իր դերը, Ա. հատ., Պէյրութ, 1965, էջ 82):

18 **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վեն. 1890, էջ 547: Հմմտ. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. Բ, յօրինեց Հ. Բարսեղ Սարգիսեան, Վենետիկ 1924, էջ 994. Լիկանդոսի մասին տե՛ս **Ն.Ադոնց**, Լիկանդոսի բանակաթեմը հայ-բյուզանդական հարաբերություններում, «Էջմիածին», 2006, Ժ-ԺԱ., էջ 48-69: Վիմագրագետ Ս. Գ. Բարխուդարյանը Լիկանդոսից հալածված և Մեծ Հայքում ապաստան գտած հոգևորականներին փորձեց նույնացնել Հաղբատի խաչքարերից մեկի վրա իր վերծանած արձանագրության մեջ թվարկվող հունական հնչում ունեցող անձանց հետ (Սեդրակ Բարխուդարյան, Նորահայտ արձանագրություն Հաղբատավանքում.– «Էջմիածին», 1967, Զ., էջ 56-61): Սակայն Լ. Գ. Ստեփանյանը Սեբաստացի քառասուն մանկանց վարքն ուսումնասիրելու առիթով պարզեց, որ Հաղբատավանքի խաչքարի արձանագրության մեջ թվարկված են հենց այդ սեբաստացի նահատակներից մի քանիսը: Նրանց անունների թվարկում կարելի է գտնել հին Թիֆլիսի Քառասուն նահատակաց 1930-ական թվականներին քանդված և վերջերս ամբողջությամբ վրացական վերակերտված եկեղեցու մուտքի ցուցանակի վրա:

վածներից, այնուամենայնիվ, նշանակալի կորուստներ էին լինում՝ հանձին քաղկեդոնականացողների: Պատահական չէ, որ մեկ-երկու դար անց կազմավորվեցին հայոց քաղկեդոնական աթոռներ, և հաճախ բանավիճողները ոչ թե հույներն էին կամ նրանց դավանակից վրացիները, այլ հայ քաղկեդոնականները՝ «արքայունները»[19]: Ուրեմն գաղափարական այդ պայքարը ունի նաև գրական-մշակութային ներհայկական ծալքեր, որ նույնպես պիտի ուսումնասիրվեն:

Դավանական խնդիրներին վերաբերող բնագրերի քննությունը մի առանձին բնագավառ է, որով հայագիտությունը ի մասնավորի քիչ է զբաղվել: Պատճառների մեջ կարելի է, կարծում ենք, երկու հիմնական պարագա հիշատակել՝ բնագրերի մշակման ու գիտական հրապարակման պակասը և առ այդ աշխատելու պատրաստություն ունեցողների սակավությունը: Վերջին պարագան շեշտելիս տողերիս հեղինակը նկատի ունի նախ այն, որ տասնամյակներ շարունակ հայագիտության նոր սերունդը հեռու է պահվել եկեղեցու և եկեղեցական մատենագրության ուսումնասիրության մարզից՝ գերքաղաքականացնելով պատմաբանասիրական գիտությունը: Կացությանը անդրադարձած մեր խոշորագույն հայագետներից ակադ. Մանուկ Աբեղյանը այսպես է ձևակերպել իրողությունը. «...տասնյակ տարիների ընթացքում դժվար թե երևան գան մեզանում գիտական պատրաստությամբ մարդիկ, որոնք առանձին սիրով, ինչպես հանգուցյալը (իմա՛ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը — Պ. Մ.), հետաքրքրվեն դավանաբանական չորուցամաք վերացական բանաձևերով: Մինչդեռ մեր հին գրականության մեջ զգալի տեղ են բռնում հենց այդպիսի նյութերը, քանի որ միջին դարն իր էական մասով եղել է կրոնական-եկեղեցական, և դավանական վեճերը, կռիվներն ու հալածանքներն ինչպես ընդհանուր, նույնպես և մեր եկեղեցու պատմության մի խոշոր մասն են գրավում: Մեր ձեռագրերի մեջ ահագին հատորներ այսպիսի մարդկանց են սպասում, որ գնահատվեն, լուսաբանվեն ու տպագրվեն և պատմության համար գործածվելով՝ լույս սփռեն մեր պատմության շրջանների մեջ և պարզեն մեր հին դարերի մտավոր դրությունը»[20]:

Մեր սույն աշխատությունը այդ «ահագին հատորներից» գեթ մեկ-երկուսը լուսաբանելու փորձ է:

---

19 Նրանց մասին տե՛ս **Н. Марр**, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1935, стр. 209-306:

20 **Մ. Աբեղեան**, Երկեր, է., Երևան, 1975, էջ 441-442:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ ԺԱ-ԺԲ. ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՍԱՄՈՒԵԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑԻ

Մատթ. Ուռհայեցու տեղեկությամբ՝ 985 թ. գահ բարձրացած Խաչիկ կաթողիկոսը այդ նույն կամ հաջորդ տարին դավանական բովանդակության թուղթ է ստանում Մելիտինեում նստող հույն պատրիարք Թեոդորոսից[1]: Հարկավ նրանում կրկնված պիտի լինեին քրիստոսաբանական և ծիսակարգային այն խնդիրները, որոնց շուրջ շարունակվում էին հայ և հույն եկեղեցականների տարակարծությունները: Կաթողիկոսի ընտրությամբ պատրիարքի թղթին պատասխան տալը հանձնարարվում է հայոց վարդապետ Սամուել Կամրջաձորեցուն, որ «կորովի և յաղթող» վարդապետ էր և, ինչպես պարզվում է հույն վարդապետների հետ Ծռազատկի շուրջ «յատենի խոսելուց» (1007 թ.), նաև հմուտ տոմարագետ[2]:

Ուշագրավ է Կամրջաձորեցու գրած պատասխանին Ուռհայեցու տված գնահատականը. «և վարդապետն Հայոց Սամուէլ գրեաց ընդդէմ նորա զպատասխանիսն վայելուչ եւ ցանկալի բանիւք, որ եղեւ իսկ հաճելի թուղթն այն ամենայն լսողացն, ևս առաւել մեծարեալ եղև առաջի Թէոդորոսի պատրիարգին Հոռոմոց և առաջի Խաչիկ կաթողիկոսին Հայոց»[3]: Հիրավի ջատագովական գրականության մեջ հազվագյուտ դեպք է, որ հավասարապես գոհ են մնում վիճող երկու կողմերը: Բարեբախտաբար՝ ժամանակին այդ բնագիրը «Գիրք թղթոց» ընդգրկվելու շնորհիվ պահպանվել է՝ «Տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի բան խոստովանութեան, Պատասխանի Յունաց գրոցն՝ զոր արձակեալ էր առ նա մետրոպոլիտն Մելիտինոյ» վերտառությամբ և

---

1 **Մատթ. Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 39:

2 Անդ, էջ 44-45: Մահկանացուն կնքել է 1093 թվականից շատ առաջ. Գևորգ Ուռճեցու մահվան մասին խոսելիս Ուռհայեցին ի մասնավորի նշում է, որ «թաղեցաւ ի մեծ անապատն Կարմնջաձոր, մօտ ի գերեզմանն Սամուէլի վարդապետին և Խաչկայ, որ էր երաժիշտ ի վերայ ծայնաւոր եղանակաց» (էջ 244):

3 Անդ, էջ 39:

մասնավորեցնող լուսանցագրությամբ. «Թուղթ Սամուէլի Կամրջաձորեցոյ Հայոց փիլիսոփայի, պատասխանի թղթոյն Թէոդորոսի մետրոպոլիտի Մելիտինոյ, գրեալ հրամանաւ Խաչկայ Հայոց կաթողիկոսի»[4]*:*

«Բարի է հրաւէրդ, եղբայր սիրելի,- կաթողիկոսի անունից գրում է Կամրջաձորեցին,- բայց անագան է յոյժ... Դադարեա՛, ով սիրելի, յայդմ խնդրոյ, թո՛ղ զմեզ և եր՛թ լե՛ր աւետարանիչ քարոզ և հրաւիրակ այնոցիկ, որ ոչ ճանաչեն զԱստուած, եւ ոչ հնազադին Աւետարանին փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զբարեացն առցես զհատուցումն, և մի՛ ջանար լինել ի վերայ այլոց հիման, զի մի՛ անվարձ մնացես»[5]*:*

Նրբին դիտողությամբ, զուցե և չվիրավորող հումորով նա պատրիարքին հիշեցնում է Հայոց՝ վաղուց ի վեր «զլոյս գիտութեան սրբոյ Երրորդութեանն» ընդունած լինելը, չի ժխտում «վասն միութեան եկեղեցւոյ և կապակցութեան հոգևոր սիրոյ» մտահոգվելու կարևորությունը, բայց և ստացած գրությունից քաղելով հիշեցնում է «զազգս հեթանոսաց՝ ըզԹուրքս, զԱլանս, զՃիկս, զՆախուարտս և զայլս նման սոցա» լուսավորելու պետքը, ինչ վերաբերում է «զՀայաստանեայս» հոգալուն, ապա «Թէպէտ և ոչ իցեմք հմուտ և տեղեակ պղատոնական պերճութեամբ բարձրայունակ վարժից և կրթութեանց... այլ սակայն շնորհիւ զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ լիով ունիմք յանձինս զվարդապետութիւն սրբոց առաքելոցն և մարգարէից, հանդերձ կենսաբեր Աւետարանաւն Քրիստոսի, զսուրբ և տիեզերական երից ժողովոցն զխոստովանութիւն և զհաւատս, զվարդապետութիւն սրբոյն Գրիգորի, որ է սիւն և հաստատութիւն ճշմարտութեան...»[6]*:*

Կամրջաձորեցին մետրոպոլիտի հորդորներն ու առաջարկները մերժում է ընդգծված պատվարժանությամբ, խրոխտությամբ Խորենացու պես հակադարձելով՝ «Թէպէտ և հալածեալք յամենայն ազգաց, այլ և ոչ երբէք լքեալք ի հաւատս, միշտ պատերազմ ունելով ընդ հեթանոսաց, Պարսից, Տաճկաց և բարբարոսաց, գերեալք, կողոպտեալք, նեղեալք, ձանձրացեալք յանաւրինաց յարուցելոց ի վերայ մեր, այլ զաւրութեամբ Աստուծոյ հաստատուն է յոյս մեր կեն-

4 Գիրք թղթոց, Երուսաղէմ, 1994, էջ 550-579:
5 Անդ, էջ 551-552:
6 Անդ, էջ 555:

4503

դանի, և սիւն հաւատոց մերոց, որ ոչ երբէք շարժեցաւ ի հիմանէ նախաճառեալ սրբոց աստուածազգեստից հարցն...»[7]*:*

Իհարկե, վերջին հաշվով հարցերն ու պատասխանները այլևս ավանդական կարելի է կոչել, բայց ամենևին ավանդական չէ պատասխանելու ոճը, որ կիրառում է մեր հեղինակը: Նա անշուշտ ճանաչում է բյուզանդական հոգևորականության ու իշխանավորների տրամադրությունները, հավանաբար գիտե նաև, որ ուրիշ մետրոպոլիտներ, ինչպես օրինակ նույն օրերում գործող Սեբաստիայի վերադիտողը, շատ ավելի կտրուկ ու մերժողաբար են պայքարում հայոց դավանության վերաբերմամբ: Որ Սամուել Կամրջաձորեցու շարադրանքի եղանակն ու գործածած ոճը խորապես գիտակցված իրողություններ են՝ երևում է մեր այս նույն հեղինակի դավանական մեկ այլ շարադրանքից, որ վերջերս լույս տեսավ «Գանձասար» աստվածաբանական հանդեսում[8]*: Այն ավանդված է մեկ ձեռագրով և հայագետներին հայտնի էր սոսկ «դավանական թուղթ» խորագրումով*[9]*: Իրական վերտառությունը բովանդակության համառոտումն է՝ «Պատասխանի մեծի և փառաւոր իշխանին, որոյ մականուն Ոսկիձեռն կոչի, յաղագս հարցման ընդ Սամուէլի վարդապետին, եթէ որպէս կարասցուք պատասխանի առնել անաւրէն հերձուածողաց երկաբնակացն, որք Բ. բնութիւնս և Բ. կիրս և Բ. ներգործութիւնս ասեն ի վերայ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի և ոչ երբէք թոյլ տան մեզ, այլ հանապազ խոցոտեն զմեզ նետիւք ստայաւդ պարծաբանութեամբն իւրեանց հարցանելով, թէ ընդէ՞ր ոչ ընդունիք զդաւանութիւն խոստովանութեան մեծ ժողովոյն Քաղկեդոնի, որ քարոզի յեկեղեցիս ամենայն ուղղափառաց»: Թե* Ոսկիձեռն *մականունը կրող այդ «մեծ ու փառաւոր», «պատուական» և «մեծայարգ և հզաւր» իշխանը պատմական Հայաստանի ո՞ր գավառի և ո՞ր տոհմի պատվաբեր ներկայացուցիչն է՝ չգիտենք, բայց լեցուն է*

7 Անդ, էջ 556-557: Ի դէպ, ի պատասխան մեղադրանքի, թե Քաղկեդոնի որոշումները միայն հայերը չեն ընդունում, Կամրջաձորեցին հիշատակում է բացի հայերից նաև «Աղուանք, Լփինք, Կազբք, Ճիղբք, Ասորեստանեայք, որք են Յակոբիկ, ամենայն Եգիպտոս, Եթիոպա մեծ, Արաբիա, Արապինար և ամենայն աշխարհն Հնդկաց. ամենեքեան սոքա ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի, այլ ընդ մեզ մի բնութիւն ասեն Բանին մարմնացելոյ, թէպէտ և ունին ինչ բաժանմունս և կրաւնս իւրաքանչիւր» (անդ, էջ 578): Մեր «Կազբք» ընթերցման դիմաց բնագրում «Կաղբք» է, իսկ անվանացանկում «Կաղնիք», որ զ>ղ շփոթի հետևանք է:
8 **Յակոբ Քեոսէեան,** Սամուէլ Կամրջաձորեցու դաւանաբանական թուղթը ուղղուած Հայոց Ոսկիձեռն իշխանին.– «Գանձասար», Ը, Երևան, 2010, էջ 309-321:
9 **Նորայր եպս. Պողարեան,** Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 163:

հայրենի ավանդության հետևորդի վճռականությամբ և լիովին պաշտպանում է ազգային հոգևորականության սեփականած դավանությունը: Հարցումից երևում է, որ քրիստոսաբանական ու ծիսակարգային վեճերը չէին ամփոփվում հոգևոր շրջանակներում և թափանցել էին նաև իշխանական միջավայր, ուստի անհրաժեշտություն էր առաջացել «լիազէն դաւանական» ունենալ, որ այլ պարագայում «Հաւատարմատ» կամ «Արմատ հաւատոյ» պիտի կոչվեր: Տարաձայնություններն ու պատասխանելիքը ներկայացնելուց հետո Կամրջաձորեցին ամփոփում է. «այս բանք թէպէտ և սակաւք ի բազմաց ասացան, սակայն բաւական է քեզ պատասխանի առնել այնոցիկ, որք ոչ ուղղապէս խոստովանին զՏէր մեր Յիսուս Քրիստոս: Ողջ լե՛ր, եղբա՛յր իմ պատուական և գլուխ և փառք ամենայն իշխանաց Հայաստանեայց»[10]:

10 Անդ, էջ 321:

2. ՊՈՂՈՍ ՎՐԴ. ՏԱՐՈՆԱՑԻ

Հայոց ՇՀԲ. (=1123) թվականին տեղի ունեցած թվարկելի անցուդարձերի շարքում եղելությանը ժամանակակից պատմիչ Մատթեոս Ուռհայեցին արձանագրում է. «...Յայսմ ամի մեռաւ մեծ իմաստասէրն Պօղոս վարդապետն. սա երևեալ այր հրաշալի, տեղեակ Հին և Նոր կտակարանացն, [հասեալ շնորհացն] առաջին սուրբ վարդապետաց, երկրորդ լուսաւորիչ երևեալ տանս Հայոց և վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց և յոյժ ախոյեան լեալ ուղղափառաց և անպատկառելի վարուք կացեալ ի կեանս իւր ընդդէմ հերետիկոսացն. և սա [էր] ի Տարօն գաւառէն, յայսմ ամի մեռանէր և թաղեցաւ ի վանսն Ղազարու մերձ ի Սասունն»[1]:

Պողոս Տարոնացու «Թուղթ երանելւոյն Պօղոսի Տարօնացոյ յաղթող ախոյեան վարդապետի ընդդէմ Թէոփիստեայ Հոռոմ փիլիսոփային» երկի ընդարձակ խմբագրության 1752 թ. Կ. Պոլսի հրատարակիչները կռահել են Ուռհայեցու գնահատության միտք բանին և, թվարկելով «առաջին սուրբ վարդապետացն» Սահակից ու Մեսրոպից սկսած մինչև Գրիգոր Նարեկացին ու Ներսես Շնորհալին, հավելել են՝ «Սոքա ղամբարք անշէջք, աստղք փայլունք, ակունք բոցաճաճանք, սիւն և հիմն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ... Յորոց մի ևս է սուրբ և բանիբուն վարդապետս այս՝ ախոյեանն հաւատոյ երանելին Պօղոս Տարօնացին, շարադրողն գրքոյս այսորիկ՝ ուղիղ դաւանութեամբ, սերտ հաւատով, յաճախ վկայութեամբ և կարի քաջ հմտութեամբ, կորովի բանիւք վարեցեալ ընդ հակառակն, նմանելով ճշմարիտ և քաջ հովուին Քրիստոսի, որ ջերմ սիրով եդ զանձն իւր ի վերայ բանաւոր հօտին Հայոցս ազգի»[2]:

1 **Մատթէոս Ուռհայեցի** ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 355-356: Վերականգնումը կատարել ենք ըստ տողատակի **Ե.** տարընթերցման, առանց որի բնագիրը պակասավոր է ներկայանում: Այս Պողոս Տարոնացուն չպիտի շփոթել Շնորհալու գրած թղթի հասցեատեր Պողոս Տարոնացու հետ, ինչպես այդ տեղի է ունեցել Ա. Ալպոյաճյանի գրքում. «Պատմութիւն հայ գաղթականութեան. Հայերու ցրուումը աշխարհի զանազան մասերը», Բ., Գահիրէ, 1955, էջ 516:

2 Թուղթ երանելւոյն **Պօղոսի Տարօնացւոյ**..., Կ. Պոլիս, 1752, էջ 327-329: Այս գործի նախնական համառոտ տարբերակը հրատարակվել է Նոր Ջուղայի «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց»-ում (Նոր Ջուղա, 1688 թ., էջ 376-450) և պահպանվել մատենադարանի մի շարք ձեռագրերում (ցանկը տե՛ս **Մեսրոպ քահանայ Արամեան,** Պօղոս Տարօնացու «Հաւատքի խօսքն ընդդէմ հերձուածողների». - «Գանձասար», Է., Երևան, 2003, էջ 298-302, 303-330):

Թղթի հրատարակիչները, պարզվում է, բանավեճին վերաբերող լրացուցիչ աղբյուր են ունեցել, ըստ որի հավատաքննության նախաձեռնողը Բալուի Ճանճիպրկա գյուղից մի չինականի որդի է եղել: Նա ինքը գրավոր շարադրելու հմտություն չի ունեցել, ուստի Սասնո մեծ իշխան Զորավանելին է մատուցել «ոմն թարգմանիչ յոյն լեզուի, որոյ անունն Թէոփիստէս յորջորջիւր, այր իմաստուն և հանճարեղ, պատուաւոր և քաջաբան, կրօվի բանիւք և հմուտ լեզուիս Հայոց և Հոռոմոց» շարադրանքը[3]: Ուստի Տարոնացուն պատուիրողը Սասնո Հայոց իշխանն է՝ Թոռնիկ Մամիկոնյանի Զորտուանել որդին[4], որը նախանձախնդիր է ազգային եկեղեցու դավանական սկզբունքների պաշտպանությանը: Դատելով Պողոս վարդապետի պատասխանների խմբավոր դասդասումից, պրոտոնոտար Թեոփիստեն ի մի է հավաքել բյուզանդական օրթոդոքս միջավայրում ավանդաբար Հայոց եկեղեցուն ներկայացվող քրիստոսաբանական և ծիսական գրեթե բոլոր տարակարծություններն ու ամբաստանությունները՝ կոչ անելով միաբանական քայլեր անել և անսալ կայսրության հոգևորականության հաստատումներին: Տարոնացին չի ժխտում հակառակության վերացնելու կարևորությունը, սակայն ոչ այն եղանակով, որ առաջարկում են հույները. «Եւ ի՞նչ օգուտ է հաւատացելոց բանակռիւ լինել ընդ միմեանս և հակառակիլ ի հաւատսն: Այլ այս էր մեզ օգուտ՝ հաւատալ և խոստովանիլ, փառաւորել և երկիր պագանել լռութեամբ և ամենայն հաւանութեամբ: Եւ այսու ամենայնիւ թող հաճոյ լինէաք Քրիստոսի ի հաւատս ճշմարտութեան», և թվարկում է այն հաստատումները, որ որդեգրել է Հայոց եկեղեցին: Ուստի նրա գործածած «փառաւորել և երկիր պագանել լռութեամբ» արտահայտությունը պիտի հասկանալ այն, ինչ հարյուր տարի անց Մխիթար Գոշն էր ասում՝ ամեն մեկը թող մնա իր հավատքին, բայց դադարեն իրար ամբաստանելուց, որովհետև Քրիստոսի է վիրավորանք, քանզի «որք քննեն զորպիսութիւն հաւատոյն, յետոյ անհաւատք գտանին և լինին կապեալ ոտիւք և ձեռօք և մասն ընդ անհաւատսն ի խաւարն արտաքին առցեն»[5]:

3 Անդ, էջ 330: Հունարեն լեզվից թարգմանություններ կատարելը հիմք է տալիս եզրակացնելու, որ Թեոփիստե անունը կրող հեղինակը հայ քաղկեդոնականության ներկայացուցիչ է: Կան և այլ կռվաններ:

4 Սասունի Թոռնիկյանների տոհմածառը կարելի է գտնել **Հ. Ն. Ակինյանի** «Ներսէս Լամբրոնացի» գրքում, Վիեննա, 1956, էջ 402 և 403 միջև:

5 Թուղթ Երանելւոյն Պօղոսի Տարօնացոյ, էջ 79:

Նախորդող 74 մասերում վարդապետական քննություն կատարելուց հետո Տարոնացին դիմում է հակաճառության նախաձեռնողին. «Արդ, ո՛վ Թէոփիստէ, ահա ընդ բազում բանս վարդապետութեանց սրբոյ Աւետարանիս մեր ընթացաք մեծաւ քննութեամբ և զաստուածախօսութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ լուաք, չկարացաք գտանել զխորհուրդ և կամ պատճառ երկու բնութեանցն քո»[6], ուստի այլևս վիճաբանելն ավելորդ է:

Հայոց եկեղեցու աստվածաբաններից առաջիններից մեկն է Պողոս Տարոնացին, որ հակաճառելիս չի գոհանում միայն սուրբ հայրերի վկայություններով և հակադարձելիս արձանագրում է, թե. «Եւ արդ, ոչ միայն մեք չեմք ընդունօղք Քաղկեդոնի ժողովոյն և սուտ կրոնից նորա, այլև բազումք ի սրբոցն ոչ են ընդունօղք նորադիր և օտար կանոնաց նորա»[7], բայց նորից մխրճվում է երկու բնությունը ժխտող հայրախոսական հիմնավորումների մեջ և փաստորեն հարցադրման պատասխան որոնելը թողնում հաջորդ սերունդների ազգային աստվածաբաններին:

Պողոս Տարոնացու հիմնավորումների ու մեկնաբանությունների մեջ ջատագովական գրականության համար ուսանելի այլևայլ նկատումներ կան, որոնք հանդիմանություններին դիմակայելու ամրություն պիտի ներշնչեին խնդրին անդրադարձ ունեցող հայ մատենագիրներին: Դրանցից մեկը հույներից սովորելը չժխտելու և նույն այդ հույներին հակադարձելու համարձակությունն ու կարողությունն է: Այդպիսի մի ամփոփում էլ կա նրա պատասխանի 91-րդ դրվագում. «Եւ արդ, զի՞նչ ևս պիտոյ է մեզ այլ բազում վկայութիւնք կամ յաճախութիւն ճառից, զի ահա անթիւք են վկայութիւնք վասն միոյ բնութեանն և ճշմարիտ խոստովանութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ արդ, զայս ամենայն զոր ասացաք՝ ի ձերոց հայրապետաց և ի ձերոց գրոցն ասացաք, զոր կայ ի միջի ձերում: Եւ ահա, զայս ամենայն զորոց զանուանսն ասացաք՝ ձեր հայրապետք են»[8], և թվարկում է այդ հայրապետներին ու բերում նրանց ասույթները: Հարցը հանգում է հետևյալին. այո՛, ձեր հեղինակներից սովորում ենք և ձեզ առարկում: Դուք «բազում տրտմութիւնս և հայհոյութիւնս հասուցանէք ազգիս Հայոց և զամենայն ճշմարիտ և աստուածախօս զգիրս վարդապետացն ձերոց ընթեռնուք և ի

6 Անդ, էջ 101:

7 Անդ, էջ 133-134:

8 Անդ, էջ 164:

միտս ոչ առնուք և ոչ ուսանիք: Եւ ահա ի ձեր գրոցն խօսեցայ ընդ ձեզ, զոր ասացաք վասն միոյ բնութեանն»[9]*: Այս ոգով է Պողոս Տարոնացին ավարտում քրիստոսաբանական իր քննությունը և 98 մասում ասելիքն սպառելուց հետո անցնում ծիսակարգային հարցերին՝ սկսելով «Յաղագս ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» ավանդական քննությունից: 25 մասից բաղկացած այս երկրորդ պրակն ավարտվում է Թեոփիստեին և ընթերցողներին հասցեագրված հիշատակարանային շարադրանքով: «Ո՛վ Թէոփիստէ,– գրում է նա,- ընկա՛լ այժմ ի մէնջ զսակաւ պատասխանիս, զոր դուք ինքնին շարժեցիք զմեզ ի բանակռուութիւնս մտանել ընդդէմ ձեր և այլոց ազգաց»: Հեղինակն իր շարադրանքը կոչում է «դիւրաւ և աշխարհաբար»: Իրեն հասած ծերության օրերին բանավեճով զբաղվելը անհարկի է նկատում, բայց «Բազում անգամ նեղեալ հարկեցաք յայլոց աղաչանաց»: Ընդ որում, նա այդ կատարում է «ի վերջին ամի կենաց իմոց» (այսինքն մահից մեկ տարի առաջ՝ 1122 թ.), երկրորդելով իր նախորդ շարադրանքը:*

Հարկավ, Պողոս Տարոնացին մեզանում այդ խնդիրների շուրջ խոսող առաջին մատենագիրը չէ, ուստի կարելի է չկասկածել, որ նա ծանոթ է հայրենի մատենագրության մեջ եղած նյութերին՝ «Գիրք թղթոցին», «Կնիք հաւատոյին», Հովհ. Օձնեցուն վերագրված «Սակս ժողովոցին», Խոսրովիկի, Դրասխանակերտցու և այլ հեղինակների ջատագովական ժառանգությանը, մանավանդ բյուզանդական նորօրյա հալածումների դարաշրջանում երևան եկած հակաճառություններին[10]*:*

9 Անդ, էջ 188: Երուսաղեմի Սրբոց Յակոբյանց N 1272 ձեռագրում այս միտքը ավելի հստակ ու որոշ է արտահայտված: Քաղումը տես **Նորայր եպս. Պողարեան,** Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 208-209:

10 Պողոս Տարոնացու ժառանգությանը նվիրված ուսումնասիրություններ ունեն **պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը** (տես նրա «Պատմա-բանասիրական պրպտումներ», Ս. Էջմիածին, 2010, էջ 39-54), **Ն. եպս. Պողարյանը,** նշվ. աշխ., էջ 207-209, **Մեսրոպ քահանայ Արամեանը,** նշվ. աշխ., էջ 298-330, **Հ. Գ. Մանուչարյանը** («Պողոս Տարոնացի», Երևան, 1982): Մ. Արամյանը Տարոնացուն պատկանող 10 անուն գործերից բացի մատնացուցում է երկբայական մի քանի աշխատություն ևս (էջ 300-301):

3. ՀԱԿՈԲ ՍԱՆԱՀՆԵՑԻ ԿԱՄ ՔԱՐԱՓՆԵՑԻ

Դավանության շուրջ ծավալվող հայ-հունական կամ հայ-վրացական քննարկումները, անկախ նրանց ընդգրկումից ու սրության աստիճանից, դրսևորման երկու եղանակ ունեին՝ բանավիճել հրապարակայնորեն, խնդրով շահագրգիռ մարդկանց ներկայությամբ, և կամ ջատագովել մատենագրական եղանակով՝ պատասխանելով հակառակ կողմի վաղուց կատարած կամ նոր ի նորո բորբոքած հարցադրումներին:

Առանձին փոխառնչությունները հույն և վրացի եկեղեցականության հետ, առավել ևս Բյուզանդիայի կամ Վրաստանի տիրապետության շրջանակներում ապրող հայ հոգևորականությանը ստիպում էին «լիազէն դաւանաբանական» ունենալ և երբ հարկը պահանջի՝ պաշտպան կանգնել ազգային եկեղեցու որդեգրած դավանությանը: Միջնադարյան մատենագրության էջերը պահպանել են բանավոր կամ գրավոր բանավիճումների բազում վկայություններ:

Պատմիչ Մատթ. Ուռհայեցին բավական հանգամանորեն պատմում է, ի մասնավորի, Սանահնի վանահայր Դիոսկորոսի (ընդհատումներով 1037-1063 թվականներ) աշակերտ Հակոբ (կամ Հակոբոս) Սանահնեցու կամ Քարափնեցու ունեցած դավանական-քրիստոսաբանական քննարկումների մասին Բյուզանդական կայսր Կոստանդին Տուկիծի (Դուկասի) օրոք (1059-1068): Վասպուրականի Սենեքերիմ թագավորի որդիներ Ատոմն և Ապուսահլը Սեբաստիայից հրավիրվում են Կոստանդնուպոլիս և, կռահելով կայսեր դավանաքննական մտադրությունը, «առեալ ընդ ինքեանս զՅակոբոս վարդապետն՝ ըստ աւելի անուանեն Քարափնեցի, այր գիտնական գրոց բանից, և գնացին ի Կոստանդնուպօլիս»: Այստեղ նրանց հայտնում են, թե «Հրաման է թագաւորութեանս մերում, զի դուք և ամենայն իշխանք Հայոց աշխարհին առնուք յանձինս ձեր զկնունք հաւատոյ ազգիս Հոռոմոց»: Սենեքերիմի որդիները փորձում են հրավիրված տեսնել նաև Աշոտի որդի Գագիկին, որ «այր հզօր էր յիմաստասիրական ջոկսն և անյաղթ ի պատասխանիսն, զի սա ի սուրբ Սոփի ի յամբիոնն նստէր ընդ ամենայն վարդապետսն Հոռոմոց»:

Հակոբ Սանահնեցին հաջողությամբ է վարում բանավեճը, ընդգրկելով բազում հարցումների, «բայց սակաւ մի վասն երկրնութեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց դարձաւ»[1]: Սրան հետևում է «գիր միաբանութեան գրել ընդ Հայք և ընդ Հոռոմք», որ Կ. Պոլիս հասած Գագիկը «պատառեաց զնա առաջի թագաւորին յերկուս ծուէնս և ընկեց զնա յերկիր»[2]:

Անկախ իրականում այդպես թե այլ կերպ լինելուն, պատմիչը Գագիկի բերանով երկար ներկայացնում է Հայոց դավանությունը և միադավանության գալու անհնարությունը: Թե ինչ վրդովմունք է առաջ բերել Հայոց միջավայրում այս «այր հզօր և կորովի», «ուսեալ և հասեալ սորա ի վերայ հռետորական իմաստութեանցն և տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանցն» հասած Սանահնեցու ցուցաբերած քրիստոսաբանական գիջողությունը, կարելի է հավաստիանալ նրա կենաց դավադրական վախճանով, որ տեղի է ունեցել 1085 թ.[3], ինչն ինքնին վկայություն է դավանական պայքարի ահագնացող սրության և Հակոբ վարդապետի արած քայլի ծանրության՝ դավանակիցների գնահատությամբ:

Ուռհայեցին, Գագիկի ցուցաբերած գիտելիքն ու համարձակությունը ներկայացնելուց հետո, թվարկում է հայոց լուսավոր վարդապետներին, որոնց հավասար իմացություն է դրսևորում Գագիկը, և այդ վարդապետներն են՝ Տիրան Կապանեցին և Սայլահանն և կամ Լասդիվերցին, և Ատոմ Անձավացին, Անանե և Գրիգոր Նարեկացիքն, Սարգիս Սևանցին, Հովսեփ Ընծայեցին, Գևորգ Ուծեցին, Դեոսկորոս Սանահնեցին, Անանե Հաղբատացին, Յակոբոս Քարահատայ որդին, Անտոն և Տիմոթեոս, Հովհաննես Կոզեռն, Պողոս և Հովսեփ, Գևորգ վարդապետ և Թումռեցին և Պարճակ «և այլ այսպիսիք անյաղթք, որք կային լցեալք աստուածային շնորհօքն, որք երևեցան յաշխարհս Հայոց յայսմ ժամանակիս»[4]:

Ցավոք, համահայկական ճանաչում ունեցող այս հեղինակություններից շուրջ կեսի մատենագրական վաստակը անծանոթ է մերօրյա հայագիտությանը: Սակայն պարզ է, որ նրանք ներկայացնում են Հայոց կրթական առավել ճանաչված կենտրոնները, այդ թվում և «հիւսիսային կողմանց» վարդապետանոցները: Հետաքր-

[1] **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 161-162:
[2] Անդ, էջ 162:
[3] Անդ, էջ 226-227:
[4] Անդ, էջ 179:

քիր է, որ Դիոսկորոսի և Անանե Հաղբատացու կողքին պատմիչը չի զլանում հիշատակել «Յակոբոս Քարահատայ որդուն», որ նույն Հակոբոս Սանահնեցին կամ Քարափնեցին պիտի լինի[5]:

Մատթ. Ուռհայեցու տված գնահատությունները արդարացված չէին լինի՝ եթե Հակոբ վարդապետի կարողությունները ամփոփվեին վերոհիշյալ բանավեճով, մանավանդ որ Քրիստոսի բնության հարցում նա չի պաշտպանել ազգային եկեղեցու սկզբունքային դիրքորոշումը: Ուրեմն նա հեղինակած պիտի լիներ «ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանց» որակումը արդարացնող այլ աշխատություններ: Տակավին դժվար է կռահել, թե ձեռագրերի աշխարհում հիշատակվող Հակոբներից որի հետ պիտի նույնացնել Սանահնեցի-Քարափնեցուն[6]: Հայագիտության մեջ վարկած է եղել Սանահնեցի համարել Հայոց չարականներից մեկի սկզբնատառերի կազմած «Յակոբ»-ին, որ Լ. Մելիքսեթ-Բեկի արդարացի դիտարկմամբ «ոչ հաստատել կարելի է, ոչ էլ մերժել»[7]:

Սակայն Սանահնեցու կամ Քարափնեցու մատենագրական իրական վաստակը հայտնի դարձավ Լ. Խաչիկյանի «Յակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի» հոդվածի հրատարակմամբ[8]: Պարզվեց, որ նա ունեցել է «Ժամանակագրութիւն» վերտառությամբ ԺԱ. դարի անցուդարձերը ներկայացնող պատմական աշխատություն, որից օգտվել են Մատթ. Ուռհայեցին, Արիստ. Լաստիվերտցին, Պողոս Տարոնացին և ուրիշներ: Լ. Խաչիկյանը քննում է մատենադարանի N 9832 ձեռագրում պահպանված Հակոբ քահանայի «Ժամանակագրութեան» չորս ինքնուրույն հատված՝ դրանք համադրելով Կոզեռնի, Ուռհայեցու և Սմբատ Սպարապետի համապատասխան դրվագների հետ: Հակոբ քահանա պատմագիրը այս նույն Հակոբ Սանահնեցին է:

[5] Քարափնեցի և Քարահատայ որդի տեղանուն-անձնանունը, հեշտացնում է Ախքալայի արձանագրության «Հողհատ» տեղանվան ընկալումը:
[6] Չմոռանանք, որ ամենևին ոչ բոլոր եղած «Յակոբ»-ները ճանաչող Հր. Աճառյանը թվարկում է այդ անձնանունը կրող 290 անձնավորության (տես նրա Հայոց անձնանունների բառարան, հ. Գ., Երևան, 1946, էջ 481-516):
[7] ლეონ მელიქსეთ-ბეგი. "ჩრდილო მხარეთა ხომეხთა მოძღვარნი" და მათი ვინაობა, ტფ. 1928, გვ. 99.
[8] **Լևոն Խաչիկյան,** Հակոբ Սանահնեցի ժամանակագիր XI դարի.- տես նրա «Աշխատություններ», հատոր Ա., Երևան, 1995, էջ 128-155:

4. ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ

Բյուզանդական, ապա և վրացական հոգևորականության ու իշխանությունների գործադրած դավանական ճնշումներին ընդդիմացող հայ եկեղեցականների ներկայացուցիչներից է նաև Սանահնի միաբան և Դիոսկորոս առաջնորդի աշակերտ Անանիա Սանահնեցին: Նրան երբեմն հիշատակում են Հաղբատեցի անվամբ ևս, որ պարզապես այս երկու վանական կենտրոնների մերձության, միասնական դավանական-մատենագրական կեցվածքի արտահայտություն է: Ապրած ժամանակն ու ունեցած ճանաչումը սահմանելու վստահելի աղբյուր է նրա «Հակաճառություն» խորագիրն ու ավարտի հիշատակարանային շարադրանքը: Գործը նա ձեռնարկել է «հրամանաւ տեառն Պետրոսի Հայոց վերադիտողի» և ավարտել, երբ Հայոց կաթողիկոս էր նստել Խաչիկ Անեցին, ուրեմն պատվեր է ստացել 1058 թվականից առաջ, երբ Լուսավորչի աթոռի գահակալը Պետրոս Գետադարձն էր, և գլուխ բերել այդ թվականից հետո: Դժվար չէ այստեղից մակաբերել, թե գրված պիտի լինի Կոստանդին Թ. Մոնոմաքոսի (1042-1054) օրոք տեղի ունեցող դավանական քննարկումների ու հալածանքների թելադրությամբ, երբ քաղկեդոնականության նկրտումները հայկական միջավայրում ավելի շոշափելի էին դառնում: Ոչ պատահականորեն Սանահնեցու «Հակաճառության» ներածական մասում սահմանվում է գրության նպատակը. «Առ որ հրամայեցիք սուղ ինչ տրամաբանել ընդդէմ երկաբնակացն՝ ոչ առ յաւգուտ ինչ նոցայն ընդդիմութեան, այլ առ ի հաստատութիւն մերոյս ճշմարիտ հաւատոց, և ծանուցանել ուղղոցն սրտիւ զթիւրութիւն ժողովոյն Քաղկեդոնի, զորս իբրև ի հայելւոջ յայտնի ցուցցուք եւ ի գրոց սրբոյ հոգելիր վարդապետաց...»[1]: Ուրեմն հիմնական նպատակը ազգային եկեղեցու քրիստոսաբանության հիմնավորումն է, հարձակումներից պաշտպանելը: Երկի կառուցվածքն էլ այդ թելադրանքով է պատճառաբանված. սուրբգրային աղբյուրների վկայությունների վերլուծությունը հեղինակին իրավունք է տալիս ասելու. «Եւ ահա, լուծաւ ամենայն դաւանութիւն երկաբնակացն, զի ոչ Աստուծոյ արեամբն սրբին, այլ մարդոյ, և ոչ Աստուծոյ չարչարանաւքն փրկին, այլ՝ մարդոյ, և ոչ Աստուծոյ խաչի երկիր պագին, այլ՝ մար-

1 Տե՛ս **Հակոբ Քյոսեյան,** Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 192:

դոյ, և ոչ մահուամբ Որդոյն Աստուծոյ հաշտեցան ընդ Աստուծոյ, այլ մարդոյ մահուամբ, և ոչ մահ լուծաւ Աստուծոյ մահուամբն, այլ տակաւին թագաւորեալ է ի նոսա: Եւ ընդ որո՞ւմ թաղին մկրտութեամբ՝ ի մահն ընդ Աստուծո՞յ, թէ՞ ընդ մարդոյ»[2]:

Անանիա Սանահնեցին նույնպես ապավինում է սուրբ հայրերի գործերից քաղված ասույթներին, որպեսզի իրավունք ունենա ամփոփելու. «Եւ արդ, հայեա՛ց յուղղափառ վարդապետացդ վկայութիւն՝ որպէս միաբան զմի և զնոյն խոստովանին ի վերայ տնաւրէնութեան Բանին՝ մի բնութիւն խոստովանելով՝ միացելոյն ի մարմնի ըստ մարգարէիցն և առաքելոցն դաւանութեան»[3]:

Սանահնեցին, հարկավ, ծանոթ է իրեն նախորդած հայ մատենագիրների ջատագովական ժառանգությանը: Այդ ապացուցող «Վասն պատկերապաշտից» ենթաբաժինն է. Է. դրվագներից մեկը դարի սկզբներին Վրթանես Քերթողի՝ պատկերահարգությանը տրված բացատրությունն այստեղ կրկնված ենք գտնում. «ոչ ահա սկիզբն կռապաշտութեան դոյն իսկ եղև, զի առաջինն ոչ վասն պաշտաման ստեղծին, այլ վասն յիշատակի փարաժամ մանկանց մեռելոց...»[4]: *Կարծում ենք՝ այս քաղումը պայմանավորված պիտի լինի Վրթանեսի հետևյալ ասությամբ. «Ոչ է արժան, ասեն, նկարս և պատկերս յեկեղեցիս առնել, և բերեն վկայութիւն ի Հին կտակարանաց, զոր վասն կռապաշտութեան հեթանոսացն էր ասացեալ, վասն որոյ և ամբաստան լինէին մարգարէքն: Բայց մեր ոչ նմանի նոցա որ յաղագս Քրիստոսի և ընտրելոց իւրոց...* Եւ մեք պատկերաց նկարուք զնոսա յիշեմք եւ զառաքողս նոցա. եւ *ոչ ասեմք թէ իսկ է Աստուածն, այլ յիշողութիւնն Աստուծոյ և ծառայից նորա...»[5]:*

Արդեն վաղուց նկատված է, որ Սանահնեցին «Վասն բաժանման Վրաց», «Պատճառ բաժանման Վրաց» ենթագլուխները շարադրելիս օգտվում է Ուխտանեսի Պատմութիւնից, իսկ «ի յԱղուանից պատմութենէն»-ի դեպքում՝ Մովսես Կաղանկատվացու երկից[6]: Անանիայի օգտագործած աղբյուրների ցանկն առավել ընդարձակվեց Հ. Քեոսեյանի մենագրության հրատարակությամբ[7]: Նկատելի

2 Անդ, էջ 200:

3 Անդ, էջ 281:

4 Նույն տեղում, էջ 289:

5 Տե՛ս **Սիրարփի Տեր-Ներսեսյան,** Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 11-12, 13:

6 *ლ. მელიქსეთ-ბეგი, "ჩრდილო მხარეთა...", გვ. 110-120.*

7 **Հ. Քեոսեյան,** նշվ. աշխ., էջ 82-85:

նորույթներից մեկն այն է, որ հետագոտողի կռահմամբ Սանահնեցու «Հակաճառութիւնը» կրում է Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» ազդեցությունը, բայց թե այդ բանաքաղումները ինչ ընդգրկում ունեն՝ դժվար է ասել, քանի որ «Հաւատարմատը» դեռ ամբողջությամբ հայտնաբերված չէ[8]: Նորույթ է նաև «Հակաճառության» Հ. Անասյանի ենթադրած երեք խմբագրությունների գոյությանը[9] տրված բացատրությունը. ըստ Հ. Քեոսեյանի «Հակաճառութիւն» Գ. խմբագրություն համարվածը քաղվածք է հենց «Հաւատարմատից»[10]: Ավելին, Մխ. Գոշի «Առ Վրացիսն» թղթի Զ. և Է. գրվածները գրեթե նույնությամբ քաղված են Սանահնեցու երկից (էջ 292-294):

Հայոց եկեղեցականության միջավայրում Անանիա Սանահնեցու սույն «Հակաճառութիւնը» պատշաճ ճանաչում է ունեցել: Հայտնի է, որ Հովհաննես Երզնկացին կամեցել է ջատագովական-դավանական երկերի առձեռն մի ժողովածո ստեղծել՝ մեկ կազմի մեջ հավաքելով «մերոց նախնի երանելեաց երից արանց գերիմաստից և հմտագունից՝ նախ Անանիայի վարդապետի Զորագեացւոյ յաւուրս հայրապետութեան տեառն Պետրոսի Գետադարձի, երկրորդ՝ Խոսրովկայ Թարգմանիչ քաջ հռետորի, [որ առաջ է ժամանակաւ քան զԱնանիա վարդապետն], երրորդ՝ Յովհաննէս վարդապետ Սարկաւագ կոչեցելով Հախպատացւոյ» հակաքաղկեդոնական երկերը[11]:

Սարկավագի գործի մասին մենք առիթ կունենանք խոսելու, իսկ ինչ վերաբերում է Ը. դարում ապրած Խոսրովիկ Թարգմանչին, ապա Գ. Հովսեփյանը վաղուց պարզել է, որ նա բավական հետևողականորեն դիմումներ է կատարում Հովհ. Օձնեցի կաթողիկոսի անունով հայտնի ճառերին, երբեմն ընդարձակելով կամ համառոտելով նախօրինակը: Գ. Հովսեփյանի եզրակացությամբ «Խոսրովիկ որպէս Օձնեցու ժամանակակից և նորա ձեռքի տակ գործող անձն, բնական էր,

[8] Նույն տեղում, էջ 94:

[9] **Հակոբ Անասյան**, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ. դդ., հատ. Ա., Երևան, 1959, էջ 775: Շարունակության մեջ ներկայացված են Սանահնեցու երկի ձեռագրերն ու նրան վերաբերող ողջ գրականությունը:

[10] **Հ. Քեոսեյան,** նշվ. աշխ., էջ 92:

[11] Աշխատությունը ամբողջության մեջ տակավին անտիպ է, նախադրության վկայակոչությունը տես **Գարեգին Վ. Յովսէփեան,** Խոսրովիկ թարգմանիչ (Ը. դար), Վաղարշապատ, 1899, «Երկասիրութիւնք Խոսրովկայ Թարգմանչի, էջ [1-2] : ლ. მელიქსეთ-ბეგი, նշվ. աշխ., էջ 104, **Հ. Անասյան,** նշվ. աշխ., էջ 779: Ա. Սրապյանը հղում է Մատենադարանի երեք ձեռագիր 657, 2751, 6453 (տես նրա Հովհաննես Երզնկացի Պլուզ, Երևան, 1993, էջ 220, ծան. 73): Սակայն կան նաև այլ ձեռագրեր, այդ թվում և ուրիշ հավաքածոներում: Որքան մեզ հայտնի է Մեսրոպ քահ. Արամյանը ժողովածուն պատրաստում է հրատարակության:

որ հակառակորդին նման արտայայտութիւններով և պատճառաբանութիւններով ջրեր... երկուսն էլ նոյն հակառակորդի գրւոր կամ բերանացի վարդապետութեան դէմ են գրում»[12]:

Ինչպես տեսնում ենք՝ Հայոց եկեղեցու դավանությունն ու ծիսակարգը հարձակումներից պաշտպանող մեր մատենագիրները ըստ ամենայնի ճանաչում են իրենց նախորդների ստեղծած արժեքները և առ ի հարկի դիմում նրանց՝ մերթ կրկնելով, մերթ էլ զարգացնելով նախորդների գրույթները, ճիշտ ինչպես որ այդ կատարվում էր Հայոց եկեղեցու դեմ գրված տրակտատներում:

Անանիա Սանահնեցին փաստորեն հիշյալ ավանդույթը փոխանցող միջին օղակ է ներկայացնում: Թերևս տեղին է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի ենթադրությունը, թե «միանգամայն հեշտ ենթադրելի է, որ նա (իմա՛ Անանիան- Պ. Մ.) անմիջականորեն առնչվել է ճիշտ Ղրտիլայի (Ջավախքում) 1046 թվի բանավեճին և մի տեսակ նրա արձագանքն է ներկայացնում»[13]:

***

Հույն-վրացական դավանական սերտաճումը խորապես անհանգստացնում էր հայոց ավանդապահ վարդապետներին. Նրանք օր-օրի ականատես էին դառնում բյուզանդացիների աչքում վրաց ուղղադավան հոգևորականության դերակատարության մեծացման, որը արտահայտություն էր գտնում նաև նորօրյա տիտղոսների կիրառությամբ: Հովհան Դ. Օքրոպիրի (Ոսկեբերան) կաթողիկոսը (980-1001) Պարխալի արձանագրություններից մեկում մեծարված է իբրև «Քարթլիի և ամենայն արևելից պատրիարք», իսկ նրա գահին հաջորդած Մելքիսեդեկ կաթողիկոսը (1010-1033) ըստ «Քարթլիի մատյանի» այցելում է Կայսրության մայրաքաղաք (թերևս ոչ մեկ անգամ) և վերջնականապես սեփականում «Կաթողիկոս-պատրիարքի» պատիվը[14]: Այս ամենը չէր կարող վրիպել Բյուզանդիայի ու Վիրքի հետ բազում աղերսներ ունեցող հայ հոգևորականության ուշադրությունից և դավանական զգաստության չկոչել նրանց: Անանիա Սանահնեցին այդ մատենագրերից մեկն էր:

[12] **Գարեգին Վ. Յովսեփեան**, նշվ. աշխ., էջ 96:

[13] ლ. მელიქსეთ-ბეგი, նշվ. աշխ., էջ 105, հմմտ. էջ 112:

[14] Տես რორ. უცრძველი, ქართველ მეფეებ და კათოლიკოსები, თბ., 2010, გვ. 37:

5. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ

ԺԱ-ԺԲ. դարերի խոշորագույն հոգևոր հեղինակություններից ու մատենագիրներից է Հովհ. Սարկավագ Հաղբատացին: Նրա ժառանգության ուսումնասիրությամբ զբաղվել են հայագետներ Ղ. Ալիշանը, Գ. Զարբհանալյանը, Մ. Աբեղյանը, Հ. Ոսկյանը, Ե. Տեր-Մինասյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը և այլք[1]: Անցյալ դարի կեսերին փորձ արվեց ի մի հավաքելու և հրատարակելու միջնադարյան այս երևելի հեղինակի անունով պահպանված երկերը, սակայն ժամանակի ոգով կատարած ընտրությունը հնարավորություն չտվեց աշխատասիրողին ամփոփել իսկապես նրա հեղինակությանը պատկանող բոլոր գործերը[2]: Մասնավորապես հատորից դուրս մնացածներից մեկը եկեղեցու քրիստոսաբանական և ծիսական-արարողական առանձնահատկությունները ներկայացնող «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիական ՅԺԸ.-իցն» աշխատությունն է, որի գիտական բնագրի պատրաստությանն ու հրատարակությանը վերջին տարիներին ձեռնամուխ եղավ Մեսրոպ քահ. Արամյանը[3]:

Հայագիտության մեջ ընդունված է Սարկավագի մատենագրական վաստակները խմբավորել ժանրային ինը միավորների սահմաններում՝ աստվածաշնչագիտություն, մեկնաբանություն, ներբողագրություն, պահեցողություն (ասկետիկա), դավանաբանություն, քնարերգություն, տիեզերագիտություն, տոմար, ժամանակագրություն:

«Վարք սրբոց»-ում ավանդված «Հանդէս բանի վասն երանեալ առնն Աստուծոյ Սարկաւագին կենաց և մահուն և այլոց հուպ յայն ժամանակս» վարքային երկում, ցավոք, ավելի նրան վերաբերող դիպվածների մասին է խոսվում, քան իրական տեղեկություններ հաղորդվում: Սակայն մեզ զբաղեցնող հարցերի առումով այստեղ կարևոր մի վկայություն կա. «Որպէս և վարդապետն Պօղոս ի Տարօն

[1] Սարկավագին նվիրված աշխատությունների թվարկում տես **Մեսրոպ քահ. Արամեան**, Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս Նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ.-իցն» ժողովածուն.- «Գանձասար», Զ., Երևան, 1996, էջ 45, ծան. 1: Նաև ლ. მელიქსეთ-ბეგი, *"ჩრდილო მხარეთა სომეხთა მოძღვარნი" და მათი ვინაობა სომეხ-ქართველთა ურთიერთობის საკითხებთან დაკავშირებით. ტფილისი, 1928, გვ. 121-162.*

[2] Նկատի ունենք **Ա. Գ. Աբրահամյանի** «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» հատորը, Երևան, 1956:

[3] Տես նրա խմբագրած «Գանձասար» աստվածաբանական հանդեսի Զ. և Է. հատորները (Զ. էջ 44-78 և Է. էջ 332-370):

և աշակերտք նորա՝ Սարգիս Հարքացին և Ստեփաննոս և այլք բազումք, սա գրեաց գիր հաւատոյ ի Հռոմ և սանձեաց զբերանս հերձուացողացն»[4]: Ամենայն հավանականությամբ խոսքը վերաբերում է Սարկավագի «Յաղագս նշանակի հաւատոյ...» երկին, որ, ինչպես երևում է, հայ հոգևորականության միջավայրում լայն ճանաչում ու հնչեղություն է ունեցել: Եվ հիրավի, դրա ապացույցներից մեկը Խոսրովիկ Թարգմանչի և Անանիա Սանահնեցու համաբնույթ աշխատությունների հետ Սարկավագի հիշյալ երկը Հովհ. Երզնկացու կազմած հակաճառությունների ժողովածո ընդգրկելու փաստն է: Ընդգրկված գործերը Երզնկացին կոչում է «Հիմունք հաւատոյ ուղղափառութեան», որոնցից յուրաքանչյուրը գտնել-կարդալը կազմողի խոսքով «բարեբախտութիւն մեծ և փարթամութիւն անկշիռ համարիմ նմա»[5], իսկ Սարկավագ վարդապետը «մեծ իմաստասէր» է[6]: Ինչ վերաբերում է նրա հակաճառական երկին, ապա հրատարակչի ընդգրկուն գնահատմամբ «Յովհաննէս Սարկաւագ վարդապետի «Յաղագս նշանակի հաւատոյ... ժողովածուն եզակի արժէք ունի հայ դաւանական մտքի օրինաչափութիւնները վեր հանելու տեսանկիւնից: Մշակութաբանական, գիտական-պատմական լայն անդրադարձները ժողովածուն դարձնում են ընդհանրապէս ԺԱ-ԺԲ. դդ. արեւելաքրիստոնէական մշակոյթի կարևորագոյն կոթողներից մէկը»[7]:

Եթե Գ. Հովսեփյանի հիմնավորումներից հետո դեռևս կարելի էր կասկածել, թե արդյո՞ք Հովհ. քահանայի անունով պահպանված բոլոր դրվագները նույն հեղինակի՝ Սարկավագի գրչին պատկանող գործեր են, ապա Մեսրոպ քահ. Արամյանի լրացուցիչ ապացույցներից հետո խնդիրը արդեն լուծված կարելի է համարել[8], որովհետև «բոլոր թղթերը փոխադարձ շաղկապւում են, և ակնյայտ է դառնում, որ նրանց հեղինակը Յովհաննէս Սարկաւագն է»:

Բնական պիտի համարել, որ Սարկավագը ևս առանձնակի կարևորություն է տալիս բնութենական խնդիրներին՝ երբ երեք անձերը նույնանում են բնությամբ և համագոյակից են, թեև ունեն իրենցից յուրաքանչյուրին հատկորոշ տնօրինական կողմեր:

[4] **Գարեգին Ա. կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա. Անթիլիաս, 1951, էջ 341:

[5] «Գանձասար», Զ., էջ 46:

[6] Վերջին գնահատության հիմնավորումը տրված է **Կ. Միրումյանի** «Յովհաննես իմաստասերի աշխարհայացքը» գրքում (Երևան, 1984):

[7] «Գանձասար», Զ., էջ 45:

[8] Անդ, էջ 54-59:

Հայ եկեղեցու քրիստոսաբանական համակարգը ներկայացնելիս Սարկավագը հանգամանորեն մանրամասնում է անապականության խնդիրը՝ չեչտելով նրա փրկարանական կոչվածությունը: Այս կապակցությամբ նա ստիպված է անդրադառնալ դավանական դրույթներին, որոնք հանգեցրին երկաբնակության գաղափարին: Ժողովածոյի հրատարակչի համոզմամբ «փաստորէն այս ժողովածուն անապականութեան վարդապետութեանը նուիրուած մի հիմնարար և եզակի երկասիրութիւն է հայ դաւանական գրականութեան մէջ»[9]: Ասել է թե՝ մեր եկեղեցու այդ վարդապետությունը զերծ է սևերիոսական և հուլիանոսական ծայրահեղություններից, չի ժխտում անմեղ կրքերը, որոնք փրկական են:

Սարկավագը ցավ է հայտնում, որ Քրիստոսի եկեղեցին միասնական չէ, և առկա թևերը ամբաստանում են միմյանց, ուստի կոչ է անում իրար նկատմամբ անաչառ լինել, արդար դատաստանով դատել, «մի՛ թշնամիս զմեզ, այլ սիրելիս և յոյժ մանաւանդ փափագողս սիրելիութեան ընկալարուք»[10]: Նրա համոզմամբ դավանական համաձայնությունները անկարելի են, բայց և նրանք կռվի ու խռովության առիթ չպիտի դառնան. «Այլ թէպէտ և ոչ լռել է արժան, յորժամ ի հարկէ ձգիցիմք տալ պատասխանի և զհակառակորդսն կշտամբել, սակայն և ո՛չ կռուել դառնութեամբ սրտին չարժեցելոյ, վասն զի ծառայք Տեառն եմք»[11]: Սարկավագը անպատասխան չի թողնում ազգային եկեղեցու քրիստոսաբանության դեմ եղած հակաճառությունները, բայց և, ինչպես համոզվում ենք, չի փակում երկխոսության ճանապարհն ու դուռ բացում մերձողության: Պիտի ենթադրել, թե մատենագրի հանդուրժողականության կոչը արձագանքն էր հայ-վրացական քաղաքական-մշակութային այն վերաբերումների, որ Վրաց Դավիթ Շինարար թագավորի իշխանության տարիներին թելադրվում էր վիրահայկական զինակցությամբ, երբ Դավթի գլխավորությամբ ազատագրվում էին սելջուկների գրաված հայկական գավառները, այդ թվում և Բագրատունյաց մայրաքաղաք Անին: Տեղին է վկայակոչել «Վրաց տարեգրության» միջնադարյան հայերեն թարգմանության այն ընդմիջարկությունը, որը մասնավորաբար բնութագրում է Հովհաննես Սարկավագի և Վրաց արքայի առնչակցությունը. «Այլ ինքն (իմա՛ Դավիթ արքան – Պ. Մ.) սիրէր զազգն

9 «Գանձասար», Ձ., էջ 70:

10 «Գանձասար», Է., էջ 338:

11 Նույն տեղում, էջ 355:

Հայոց և զեկեղեցիսն և զոմն հռետոր վարդապետ ի Հաղբատ՝ Սարկաւագ անուն. խոստովանէր նմա զյանցանս իւր և կորացուցեալ զպատուական գլուխն, աւրհնիւր ի նմանէ: Եւ նստէր ընդ նմա և փարէր զպարանոցաւ նորա, և նա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութենէս, ի բաց գնա՛ յինէն, զի մի՛ աշխատ լիցիս»: Եւ թագաւորն համբուրէր և ասէր. «Անպակաս լիցի հոտս այս յինէն, հա՛յր պատուական»: Եւ պարգևեաց նմա գեաւղ առընթեր վանացն՝ ի ծառայութիւն նմա: Եւ յաւրհնելն զթագաւորն զայն ասէր եղեալ գձեռս ի վերայ գլխոյն. «Գտի զԴաւիթ ծառայ իմ և եւղով սրբով իմով աւծի զնա» մինչև ցտասներորդ տունն: Եւ զուարճանայր արքայն և գովէր զգեղեցկակերպ թարգմանութիւնն Հայոց»[12]:

Այստեղ նշված գեթ երկու իրողություն փաստահաբար հաստատվում են նաև այլ աղբյուրներով. Դավիթ Շինարարի կողմից Հաղբատին տրված գյուղի և այգու մասին խոսվում է վանքի Ս. Նշան եկեղեցու արևմտյան մուտքի գլխին արտաքուստ (գավթի մեջ) եղած արձանագրության տեքստում: Այն բավական վատ է պահպանված և, հակառակ ունեցած բազում հրատարակությունների՝ տակավին կարոտ է նոր վերծանության[13]: Լ. Մելիքսեթ-Բեկը այն թվագրում է 1123/5 տարիներով, Կ. Ղաֆադարյանը՝ «1110 թվականին կամ քիչ հետո»: Կարևորը սակայն այն է, որ վրաց թագավորը ի պատիվ Սարկավագի Հաղբատն ու Սանահինը «քաղցր և բարեսէր աստուածպաշտութեամբ... ի մթութենէ աւերութեանն ազատեաց, գրով և վճռով ընծայեաց ի սուրբ եկեղեցիս զայգիս...» (Մ.-Բ.-ի ընթերցում):

Ինչպես երևում է՝ «Քարթլիս ցխովրեբայի» թարգմանության ընդմիջարկությունը կատարվել է իրողությունը մոտիկից ճանաչող ժամանակակցի կողմից: Նա համառոտել, բայց չի վլացել թարգմանելու ընդմիջարկությանը նախորդող բնագրային այն տեղեկությունը, թե «Այլ եւս [Դաւիթ] կամեցաւ միաւորել զՀայս և զՎիրս և կոչեաց զՅովհաննէս կաթողիկոսն Քարթլայ և զԱրսենիոս Քարթլեցի՝ զեպիսկոպոսս և զվարդազթարգմանն Վրաց և Յունաց լեզւոյն, և քննէին յառաւաւտէ մինչև ցերեկոյ պետս Հայոց և արար ժողով: Եւ

12 ქართლის ცხოვრების ძველი სომხური თარგმანი. ქართული ტექსტი და ძველი სომხური თარგმანი გამოკვლევითა და ლექსიკონით გამოსცა ილია აბულაძემ, თბ., 1953, გვ. 255.

13 Վերջին հրատարակությունը կատարել է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը («Հաղբատ», 1963, էջ 144-145): Եղծումները մասամբ վերականգնելու փորձ կատարել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը («ნრ-დილი მხარეთა... , 1928, გვ. 136-137):

և ոչ հաւանէին միմեանց: Ապա ասէ Թագաւորն. «Մեք անվարժ եմք ի խորագոյն բանսդ, զոր արկեալ էք առաջի, և [ոչ] կարէք դուք ելանել դուրս: Եւ ինքն պարզ և յայտնի բանիւ խաղաղացուցեալ զերկոսին կողմանսն՝ արձակեաց զժողովն»[14]*: Այստեղ անվանապես հիշատակված Արսենիոս Քարթլեցին նույն Արսեն Իղալթոյեցին է, որ վրացերեն է թարգմանել Հայոց դավանության դեմ գրված հունական տրակտատները և ներկայացրել իր կազմած «Դոգմատիկոնում»:*

Հարկավ, ժողով հրավիրված հայ հոգևորականների թվում առաջիններից մեկը պիտի լիներ Հովհ. Սարկավագը: Ժողովի հրավիրման ժամանակը ստուգապես հայտնի չէ, բայց կարելի է համաձայնել Լ. Մելիքսեթ-Բեկի հետ, թե այն տեղի կարող էր ունենալ 1123-1125 թվականների միջակայքում, այսինքն՝ Թիֆլիսը ազատագրելուց հետո և Թագավորի մահից առաջ: Հայերենի թարգմանող անձնավորությունը ակներևորեն մեղմում է վրացերեն բնագրի կոշտ արտահայտությունը հայոց հոգևորականների վերաբերմամբ, որով մատնում է իր լուսավորչադավան լինելը: Բացառված չէ կարծել, թե ժողովին մասնակցող հայ վարդապետներից ու եպիսկոպոսներից առավել անվանին ու վրաց միջավայրում ճանաչում ունեցողը՝ Հովհ. Սարկավագը, «Յաղագս նշանակի հաւատոյ» դավանաբանական երկը կարող էր գրած լինել Դավիթ Շինարարի հրավիրած դավանաքննական այդ ժողովի առթած հանգամանքներում: Պետք չէ բացառել մեկ այլ պարագա ևս. 1103 թվականին Դավիթ Շինարարի նախաձեռնությամբ ու հորդորով Ռուիս-Ուրբնիսի բնակավայրերի միջակայքում հրավիրվեց վրաց եկեղեցու պատմության մեջ առավել նշանավոր ժողովներից մեկը, որի ընդունած որոշումներից երկուսը (հոդված 12 և 13) վերաբերում են հայերին, ուր վերջիններս կոչվում են «խաչեցարք», և պահանջվում է ուղղափառության դառնալիս «լիարժեք վերակնքում», ինչպես վարվում է Անտիոքի պատրիարքական աթոռն ու նրան հետևող «ողջ արևելքի բոլոր եկեղեցիները»: Հաջորդ հոդվածով, ուր «յուրաքանչյուր ուղղափառ Աստծո տաճար» է հռչակվում, արգելում է միաբնակների հետ ամուսնությունն ու խնամությունը: Հնարավոր է, որ Սարկավագի երկը պատասխան է այս սահմանումներին[15]*:*

14 ქ. ც.-ის ძველი სომხ. თარგმანი, ი. აბულაძის გამოცემა, თბ., 1953, გვ. 254-255.

15 Տես ქართული სამართლის ძეგლები, ტ. III, ტექსტები გამოსცა, შენიშვნები და საძიებლები დაურთო ი. დოლიძემ, თბ., 1970, გვ. 119-120. *Չմմտ.* **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները..., Ա., Երևան, 1934, էջ 124-125:

Քանի դեռ Սարկավագի այս աշխատությունը ամբողջությամբ հրատարակված չէ, դժվար է ասել նրա անունով հայտնի հակաճառական «Ի խնդրոյ Գագկայ կրօնաւորի Յաղագս քաղկեդոնականացն» երկը «Յաղագս նշանակի հաւատոյ»-ի հատվածների՞ց է, թե առանձին միավոր: Բայց որ խորագրում հիշվող «Յովհաննէս քահանայն» նույն Սարկավագն է՝ որևէ կասկած չկա նաև առկա հիշատակարանի հաղորդմամբ. «Այս բանք քերդողականք ասացեալ մեծի պուէտիկոսին Սարկաւագին, որ ի տիեզերահռչակ ուխտին Հաղբատ գտի ես՝ նուաստ ոմն ի մանկունս եկեղեցւոյ»[16]*:*

Հովհաննես Սարկավագի ունեցած լայն ճանաչման ապացույցներից մեկն էլ վրաց եպիսկոպոսի հարցումն է նրան. «Եթէ զի՞արդ ունի երգ սաղմոսին ասացեալ՝ «Դու փշրեցեր գլուխս վիշապաց ի վերայ ջուրց: Դու փշրեցեր գլուխ վիշապին և ետուր զնա կերակուր զաւրացն Հնդկաց»: Խոսքը Սաղմ. ՁԲ. 14-րդ տան մեկնությանն է վերաբերում: Սարկավագը առանց որևէ հանդիմանության ու դավանական խնդրի հանգամանորեն պատասխանում է երկու հարցին էլ և ամփոփում. «Եւ եթէ ընդէ՞ր բարիք ընդ չարս մեռանին և անմեղք՝ ընդ մեղաւորս, ի բանէ անտի ուսցիս, զոր արարեալ է մեր ըստ կարողութեան յաղագս մեծի և սաստկական արևմըտեայ շարժմանն: Եւ զայդ բաւական համարեալ, թող դուք զերկայնամտութիւն բնախօսութեան»[17]*:*

Որ հարցը կարևոր է նկատվել՝ կարելի է վստահանալ պատասխանի համառոտ և ընդարձակ տարբերակներով ավանդված լինելու փաստով[18]*: Նկատենք նաև, որ այս մեկնաբանության հետքերը ԺԲ. դարի վրաց մատենագրության մեջ դեռևս երևան բերված չեն: Հետաքրքիր կլիներ ճշգրտել՝ հարցումն ու պատասխանը եղել են միայն հայերենո՞վ, թե՞ նաև թարգմանությամբ:*

Հովհ. Սարկավագը Հաղբատում ու Սանահինում ուներ ոչ քիչ շնորհալի ժամանակակից հոգևորականներ ու աշակերտներ, որոնք կարող էին հաղորդակից լինել նրա ժառանգությանը կամ անգամ աշխատել նրա հովանավորությամբ: Աղբյուրներում հիշատակվողներից նույն միջավայրի գործիչներ են գոնե երկուսը՝ Դավիթ Ալավ-

16 ლ. მელიქსეთ-ბეგი, նշվ. աշխ., էջ 157:

17 Տես **Լևոն Մելիքսեթ-Բեկ,** Պատմա-բանասիրական պրպտումներ, աշխատասիրությամբ Պ. Մուրադյանի, Երևան, 2010, էջ 67:

18 Նրանց մասամբ սրբագրյալ վերջին հրատարակությունը տես **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 54-68:

կա որդին (մահ. 1130/1 թվին) և Գրիգոր վրդ. Թուքակերի որդին (մահ. 1139 թ.), ընդ որում, ըստ Կիրակոս Գանձակեցու տեղեկության՝ երկուսն էլ «յաշխարհէն Գանձակայ, ուստի և ես»[19]: Նրանցից Ալավկա որդին հայտնի է իր «Կանոնական օրինադրութեամբ», որ «Դատաստանագիրքը» կազմելիս Մխ. Գոշի ձեռքի տակ եղած աղբյուրներից մեկն է: Ընդ որում, Դավիթը քաղկեդոնականների հանդեպ նույնքան մերժողական վերաբերում ունի, ինչքան վերջիններս հայոց դավանության վերաբերմամբ. նա նույնիսկ վրացիների մորթած մսից օգտվելն անկարելի է համարում՝ կանոնական հոդվածի վերածելով Աբրահամ կաթողիկոսի շրջաբերականի պահանջը[20]:

[19] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 116:

[20] Հմմտ. ლ. მელიქსეთ-ბეგი, նշվ. աշխ., էջ 167-168: Հ. Հ. Տաշյանը Դավիթ Ալավկաորդու որոշ սահմանումներ, օրինակ, «վասն մկան լինելոյ» և նմանիք որակում է «մեծ մասամբ խենթական բաներ». տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց հրատարակեալ ի Մխիթարեան միաբանութենէ, հատոր Ա., Աւստրիա, գիրք Բ. Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց, ի Վիեննա, կազմեց Հ. Յակոբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 656: Ժ-ԺԲ. դարերի հայ-ասորական եկեղեցական խնդիրներին անդրադառնալը անտեղի նկատեցինք, որովհետև այդպիսիք հանգամանորեն քննության են առնված պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ» գրքում (Ս. Էջմիածին, 1908, էջ 232-270): Եթե թվարկելու լինենք այն աղբյուրները, որոնց հաղորդումները ուրվագծում են այդ հարաբերությունները, ապա հիշատակելի են Գրիգոր Մագիստրոսի մի քանի անդրադարձումներ, Հայոց կաթողիկոս Գեորգի (Լոռեցի՞) 1064-1072 թվականների միջև գրած և «Գիրք թղթոցում» ավանդված «Տեառն Գէորգայ Հայոց վերադիտողի և հոգեշնորհ փիլիսոփայի պատասխանի թղթոյն Յովհաննիսի, Ասորւոց պատրիարգի» գրությունը և ասորի պատրիարք Բար-Շուշանի (Յովհաննես Ժ.) թուղթը այլոց կողմից կատարված շարունակությամբ: Հիմնական խոսակցությունը «մի քանի ատելի, եկեղեցու կանոններին հակառակ սովորությունների մասին» է (տես **Ե. Տեր-Մինասեան,** նշվ. աշխ., էջ 241-258):

ՂՐՏԻԼԱՅԻ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ «ԺՈՂՈՎԸ»

Թիֆլիսի ամիրա Ջաֆարի մահից հետո, քաղաքի ավագանու ոռոշմամբ ու կոչով Քարթլի շտապող Բագրատ Դ. (1027-1072) թագավորը տիրացավ քաղաքին, բացառությամբ Կուրի ձախ ափին գտնվող Իսանիի: Հաշտություն կնքելու առաքելությամբ նրա մոտ եկան Կախքի մեծավորները՝ Ջորագետի ու Սամշվիլդեի տիրակալ Կյուրիկեի քեռորդի Գագիկ թագավորի գլխավորությամբ: Թռեղքի Կլդեկարնիի տեր իշխան Լիպարիտի[1] հետ մեկ-երկու տարի առաջ Բագրատի ճանաչած հաշտությունը այս ընթացքում, մանավանդ Աբուսեր Էրիսթավիի և նրա պաշտոնյաների նորանշանակ կառավարիչ Աբուսեր Էրիսթավիի և նրա պաշտոնակիցների՝ Լիպարիտի կողմից ննեգաբար ձերբակալումից հետո, խախտվեց, և Իսանիին տակավին չտիրացած Բագրատը գերադասեց թողնել Թիֆլիս քաղաքն ու Ջավախք անցնել[2]: Թե ինչքան ժամանակ նա մնաց այստեղ, Ղրտիլայում, աղբյուրը չի ճշտում, բայց հայտնի է, որ թագավորի խույս տալուն տեղեկացած Լիպարիտ զորավարը չվարանեց օժանդակ ուժեր հավաքել, այդ թվում «կախերն հիրենց զորքով և Դավիթ Հայոց թագավորը յուր զորությամբ»[3] և հետապնդել թագավորական բանակին: Լիպարիտի հաստատվելը նույն Ջավախքի Փոկանի բնակավայրում և հատկապես մեսխերի առաջնորդ Ածղուրեցու անցումը Լիպարիտի կողմը հարկադրեցին թագավորին «ձմեռվա սարսափելի բուքին անցնել Շավշքն ու Քարթլի իջնել»[4]:

Ներքին հակամարտությունների ու քաղաքական վերուվայրումների այս շրջանում Բագրատ թագավորի՝ Ջավախքի Ղրտիլա (այժմ Իխտիլա) գյուղում գտնվելու օրերին 1046 թ. աշնանը գումարվում է հայ-վրացական Է. դարի սկզբի բաժանումից հետո միադավանության հասնելու անդրանիկ բանավեճը, որ մասնագիտական գրականության

[1] Լիպարիտյան կամ Բաղուաշյան տոհմի կազմավորման պատմությունը տես **Ս. Տ. Երեմյան,** Լիպարիտ զորավարը և նրա նախորդները.- Ն. Մառի անվան Կաբինետի աշխատություններ, N 2, Երևան, 1947, էջ 103-149:

[2] ქ. ც., I, 300. Հմմտ. ივ. ჯავახიშვილი, თხზულებანი თორმეტ ტომად, ტ. II, თბ., 1983, გვ. 144-145.

[3] ქ. ც., I, გვ., 300-301:

[4] Անդ:

նության մեջ ընդունված է «ժողով» կոչել[5]: Եթե հետևելու լինենք այդ բանավեճի մասին պատմող վրացական միակ աղբյուրին, որ է՝ «Հակաճառություն ընդդեմ Սոսթենես Մարմաշենցու»[6], արդարացի պիտի լինի այն «զինվորական ժողով» անվանել:

Որքան էլ զարմանալի է՝ ԺԱ. դարի հայկական պահպանված աղբյուրները (մանավանդ Արիստակես Լաստիվերցին) այդ բանավեճի մասին ոչինչ չեն հաղորդում[7]:

Սպասելի էր նաև, որ Մարմաշենի վանահայր Սոսթենեսի ունեցած դավանական վեճի մասին խոսք կարող էր լինել Գրիգոր Մագիստրոսի՝ Սոսթենեսին հասցեագրված երկու թղթում: Սակայն այստեղ գերազանցապես տրամախոհական-փիլիսոփայական արծարծումներ են, և նման քննարկում չկա[8]:

Ակադ. Կ. Կեկելիձեի գնահատությամբ վրացական «ձեռագրերում հաճախ հանդիպող»[9] «Հակաճառություն Հայոց վարդապետ Սոսթենեսին» բնագիրը առաջինը ուշադրության առնվեց ու հրապարակվեց, ինչպես արդեն հիշեցինք, Մ. Սաբինինի կազմած ու խմբագրած «Վրաստանի դրախտ» ժողովածույում[10], ապա և համառոտ տարբերակով՝ Թ. Ժորդանիայի նշանավոր «Քրոնիկներում»[11]: Վերջինիս նախնական ենթադրությամբ Եփթուիմիոս Երկայնը (վրաց. Գրձելի) Բագրատ Գ.-ի ժամանակակից գործիչ է, բազում գրքերի թարգմանիչ և Խախուլի վանքում եղած ժամանակ հակաճառել է հայոց վարդապետ Սոսթենեսին: Սակայն 1923 թվականին Կ. Կեկելիձեի հանգամանալի հոդվածի հրատարակմամբ պարզվեց, որ գրականության մեջ շփոթված են երկու Եքութիմե (Եփթուիմե)՝ Սուրբսարեցին (Աթոսացին) և Երուսաղեմացին (Երկայնը): Ընդ սմին, այս վերջինը

[5] Լ. Մելիքսեթ-Բեկը նախընտրում է «բանակռիվ» տերմինը (տես նրա Վրաց աղբյուրները... Ա., էջ 105-109):

[6] Տես **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 105-110:

[7] კ. კეკელიძე, ორი ექვთიმე ძველ ქართულ ლიტერატურაში, «ეტიუდები...», ტ. IV, გვ. 90-104.

[8] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը. բնագիրն յառաջաբանով և ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց **Կ. Կոստանեանց**, Ալեքսանդրապօլ, 1910, էջ 101-104:

[9] კ.კეკელიძე, նշվ. աշխ., էջ 95, ծան. 3:

[10] «საქართველოს სამოთხე», სრული აღწერაჲ ღუაწლთა და ვნებათა საქართუჱელის წმიდათა, შეკრებილი ხრონოლოგიურად და გამოცემული პეტერბურღის სასულიერო აკადემიის კანდიდატის იჱრიელის გობრონ (მიხაილ) პავლეს ძის საბინინის მიერ», პეტერბურღი, 1882, გვ. 615-621.

[11] ქრონიკები და სხვა მასალა საქართველოს ისტორიისა, შეკრებილი... თ. ჟორდანიას მიერ, ტფ. 1892, გვ. 126-127.

հայտնի է Ղրտիլայի եկեղեցական ժողովին վերաբերող նյութերից՝ իբրև Սոսթենեսի հետ բանավիճող: Հետևաբար նա Բագրատ Դ.-ի ժամանակակիցն է[12]: Կ. Կեկելիձեն պատմաբանասիրական այլ կռվաններով ևս հիմնավորում է Գրձելիի անձնավորությանն ու ժամանակին վերաբերող իր եզրակացությունները: Նրա դիտարկմամբ այս Եփութիմեոսը հակում է ունեցել դեպի ջատագովական գրականությունը, ուստի պատահական չէ, որ նրա ընդօրինակությամբ է պահպանվել Հովհան Դամասկացու «Վարդապետությունը»[13]: Եփթուիմիոս Երկայնը հիշատակված է 1103 թ. Ռուիս-Ուրբնիսի եկեղեցական ժողովի արձանագրություններում ևս:

«Հակաճառության» առաջին իսկ պարբերությունից հայտնի է դառնում, թե մինչև Եփթիմիոսի գալը վրացի այլ վարդապետներ փորձել են առարկել եկվորին և, հայոց գրութուններին անտեղյակ լինելու պատճառով, անհաջողության են մատնվել: Այստեղից ու «Հակաճառության» տեքստում հայ հեղինակների երկերին հղումներ կատարելուց պարզ է դառնում, որ Եփթիմիոս Երկայնը բավաբար հայագիտական ծանոթություն է ունեցել, հմուտ եղել Հայոց եկեղեցու վարդապետությանը՝ նրա քրիստոսաբանական և ծիսական դրույթներին:

Ինչ վերաբերում է Սոսթենեսին, ապա նրա մասին եղած տեղեկությունները բավական շատ են ու հավաստի: Գրիգոր Մագիստրոսի նամակներում նա կոչված է «ձերդ միեղէն և համակրօն մաքուր և աստուածահաճոյ վարուց...», «քանզի բոլորին բաւական էք և ամենայն աստուածեղէն պատգամացն տեսնօղ և յարդարօղ»[14]: Ինչպես երևում է Մագիստրոսի «Առ հայր Սոսթինէս յաղագս ոսկի մատանւոյն» երկրորդ նամակից[15], Մարմաշենի վանահայրը ճանաչում է ունեցել նաև հույն գրագետների շրջանում. «Զայս առեալ տրամախոհականացն ի սինկլիտոսին վարկան արքայի գրել, զոր առաքեաց սուրբն այն և բարերարն Կոստանդինոս արքայ Մանուամախն անուանեալ, այսինքն՝ միամարտիկ, ուխտիդ սուրբ և մայրաքաղա-

[12] Այս տարիներին տեղի ունեցած անցքերի ժամանակագրությունը կարելի է գտնել Իվ. Ջավախիշվիլու «Վրաց ժողովրդի պատմություն» երկրորդ հատորում (տես ივ. ჯავახიშვილი, თხზულებანი...) ტ. II, თბ., 1983, გვ. 143-145.

[13] Խոսքը Քութայիսի թանգարանի N 91 ձեռագրի մասին է (տես კ.კეკელიძე, նշվ. աշխ., էջ 97, ծան. 4):

[14] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 101-102:

[15] Անդ, էջ 103-104:

քիդ Մարմաշինոյ, քեզ սրբոյդ Սոսթէնէսի, արի և առաքինասէր առն, յոյժ զօրաւոր բանս հանդերձ կնքովն ոսկեղինաւ ի հրամանէն աստուածեղէն զօրութեան»[16]: Որքան էլ Մագիստրոսի բնութագրումները մթին լինեն, ակներև է, որ վանահայրը «արի և առաքինասէր» է եղել, զորավոր խոսքի տեր, և թերևս նման ճանաչումն է նրան իրավունք ու համարձակություն տվել կանգնել Բագրատ Դ. թագավորի ու նրա իշխանների առաջ և բանակռվի մտնել: Իհարկե, Ղրտիլայի բանավեճի ընթացքն ու նկարագրությունը խիստ կողմնակալ շարադրանքով են ներկայացված և, այնուամենայնիվ, կռահելի է, թե Բագրատ Դ.-ի առաջ ներկայանալն ու ի վերջո նրա ներողամտության արժանանալը, թե իսկ հավատանք շարադրանքին, նախապատմությամբ պայմանավորված հիմքեր է ունեցել:

«Հակաճառության» մեջ եղած որոշ արտահայտություններ թույլ են տալիս վարկած առաջադրել, ինչպես այդ արել է Թ. Ժորդանիան, որ մինչև Ղրտիլայի այս կիսազինվորական և կիսադավանական ժողովը Սոսթենեսը կամ նրա դավանակիցներից մեկ ուրիշը մինչև 1046 թ. էլ առիթ են ունեցել վրաց հոգևորականների հետ նման քննարկում կատարել. Համենայնդեպս «վերստին» (კუალად) և «ըստ սովորության» (ჩუეულისაებრ) արտահայտությունները նման ենթադրության օգտին են խոսում: Ուշագրավ է, որ Բագրատի արքունիքում հանձին դպրապետ (մծիգոնբարթ-ուխուցեսի) Եփթուիմեի Սոսթինեսին դավանական առումով համակիր մարդ է գտնվում, որը քաջալերական խորհուրդներ է տալիս նրան: Եթե այս դրվագը հակագրությունը մեծացնելու գրական հնարանք չէ, ապա կարելի է մտածել, թե վրաց արքունիքում Բագրատ Դ.-ի մայր Մարիամ Արծրունուց բացի կային կամ կարող էին լինել լուսավորչականություն դավանող այլ անձինք ևս: Թե ով էր նա էթնիկական պատկանելությամբ՝ չգիտենք, բայց ժամանակի ընկալումների համաձայն նրան կարող էին «Հայ» կոչել, ինչպես այդ վկայված է «Եքութիմեոս Աթոնացու վարքում», գրառված գրեթե նույն տասնամյակներին: Այս պարագային բնավ երկրորդական չէ Մարիամ Արծրունու հասարակական գերակատարությունն ու նրա՝ Մարմաշենի վանքի հովանավոր ճանաչումը: Սոսթենեսի առաջնորդության տարիներին Մարմաշենի գլխավոր եկեղեցու հարավային պատին արտաքուստ գրված

արձանագրության մեջ կարդում ենք. «Շնորհիւն Աստուծոյ ես Մարիամ Ափխազաց եւ Հայոց թագուհի, դուստր մեծին Սենեքերիմա եւ թոռն Գագկա Հայոց արքայի, որ եկու զՏարուս ի սուրբ եւ ի փիեզերական ուխտիս Մարմաշէն առաջնորդութեամբ հայր Սոսթենիսի վասն Գագկա՝ իմ պապոյն մեղաց թողութեան եւ Կատրային՝ իմ հանկանն, եւ հաստուցումն բարի ընկալա ի սրբոցս զսեանն եկեղեցին զսուրբ Պետրոս ի Քրիստոս պատարագաւ զպարին ողջոյն Կատրային՝ իմ հանկանն մինչեւ ի գալուստն Քրիստոսի: Արդ, եթէ որ ի մեծամեծաց կամ ի փոքունց ի Հայոց կամ ի Վրաց որ այս գրոյս հակառ կա եւ զիմ զեւղն զՏարուս ի յայս ուխտէս հանէ...»[17]:

Ե՞րբ պիտի գրված լինի այս արձանագրությունը. Հարկավ 1045 թվականից ոչ վաղ՝ քանի որ Մարիամն իրեն կոչում է նաև Հայոց թագուհի: Վրաց «Քարթլիի մատյանից» տեղեկանում ենք, որ Գագիկ Բ.-ին Բյուզանդիա կանչելուց հետո, ինչպես երևում է, Անին որոշ ժամանակ Բագրատ Դ.-ի թագավորությանն է միացվել՝ դառնալով Մարիամի տիրույթ[18]: Այլ կերպ Լիպարիտը չէր կարող թագուհուց (իմա Մարիամից) Անիում գերել Արտանուջի էրիսթավ Աբուսերին և Իվանե էրիսթավին և այլոց, և ստիպել Բագրատին՝ լքել Թիֆլիսն ու անցնել Ջավախք, ուր և տեղի է ունենում նկարագրվող վճարանությունը:

Կ. Կեկելիձեն հիշատակարանային աղբյուրի հիմամբ դիտարկել է նաև, որ թեև «Հակաճառության» վերջում ասված է, թե թագավորը Եփութիմիոս Երկայնին մեծ պատվով «ուղարկեց իր անապատ», սակայն իրականում նա հաստատվել է Ծղարոսթվիի (Աղբերակունքի) վանքում, ինչպես այդ վկայում է նրա աշակերտ («ոտքերի առաջ մեծացած») գրիչ Էգնատեն[19]:

* * *

Արսեն Սափարացու երկով սկսվող հակամիաբնակ վրաց ինքնուրույն գրականության անդրանիկ հուշարձաններից է այս «Հակաճառությունը», որի շարադրանքը առանձնակի խորքային քրիստոնէությունը»,

[16] Նույն տեղում, էջ 104: Սոսթենեսին վերաբերող համառոտ տեղեկաք կարելի է գտնել ակադ. Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում», հատ. Գ., Երևան, 1948, էջ 572:

[17] **И. А. Орбели**, Избранные труды, Ереван, 1963, стр. 444.

[18] Հայկական աղբյուրները չեն մանրամասնում այս եղելությունը: Լաստիվերտցին անցողիկ հիշատակում է, թե Անիի գլխավորները Գագիկի «ի Յոյն» մնալը տեսնելով երկմտում են քաղաքը Դավիթ Դվնացուն հանձնել, թե Բագրատ Ափխազաց թագավորին (Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 62): Ուրեմն մինչև Պետրոսի տեղեկացմամբ հույների գալը Անին կարճ ժամանակ հանձնված է եղել Ափխազաց թագավոր Բագրատի մորը՝ Մարիամին: Ավելի հանգամանորեն տես **Ս. Տ. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 130-132:

[19] კ. კეკელიძე. նշվ. աշխ., էջ 98, ծան. 3:

սաբանական բովանդակություն չունի, բայց հավաստիորեն արտացոլում է վրաց եկեղեցական շրջանների վերաբերումը՝ վրաց-բյուզանդական քաղաքական լարված հարաբերությունների շրջանում իսկ շարունակելով հայոց դավանության մերժումը:

Բնականաբար, այն չէր կարող դուրս մնալ հայերին ու Հայաստանին վերաբերող վրաց աղբյուրների Լ. Մելիքսեթ-Բեկի համահավաքից, մյուս նյութերի նման տեղ-տեղ համառոտվելով ու ծանոթագրվելով[20]: Հուշարձանը ամբողջության մեջ հայերեն ունենալու դրդումը մեզ ստիպեց ի նորո թարգմանության դիմել, թեև վրացերեն բնագիրը տակավին կարոտ է քննական հրատարակության: Եթե հանգամանքները թույլ տան, մենք մտադիր ենք առաջիկայում «Պատմությինների» բնագրերի հետ գիտական հրատարակության պատրաստել և այս «Հակաճառության» բնագիրը, իսկ մինչ այդ տողերիս հեղինակն էլ օգտվում է Միխ. Սաբինինի միակ ամբողջական հրատարակությունից:

20 Պրոֆ. դր. **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա. (Ե-ԺԲ. դար), Երևան, 1934, էջ 105-110:

ԵՓԹՈՒԻՄԻՈՍ ԳՐՁԵԼԻԻ (ԵՐԿԱՅՆԻ) ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՍԹԵՆԵՍԻՆ

Աստծու ծառա Բագրատ թագավորի ժամանակներում արդեն վերստին ժողով եղավ Ղրտիլյում՝ ոչ թե քահանայական, այլ առավելաբար զինվորական: Ազգությամբ հայ ոմն վանական կար՝ վարդապետ և իրենց հավատքի առաջնորդ, Սոսթենես անունով: Լեզվով ճարտար մարդ էր և հույժ գիտակ Գրոց ու իրենց անհավատ և խոտոր դավանության: Սա այլևս ըստ սովորության եկավ Բագրատ թագավորի մոտ և սկսեց պարծանքով ու ամբարտավանությամբ գովել իր հավատքը և պարսավել ու պախարակել մեր դավանանքը: Եվ այն ժամանակ չգտնվեց պատասխան տալու կարող ոչ մեկը, թեև ոմանք խորհեցին սակավ ինչ, ոմանք հանդիպեցին՝ Մելքաձե Ծուրծղաբելին, Սանանո Ղվելելին, Գրիգոր Աբվխսերիձեն, ոմն Գաբրիել Ուկլիաձե: Սակայն նրանց գրություններին անտեղյակության պատճառով չկարողացան ընդդիմանալ: Այն ժամանակ երանելի Դավիթ Բիձխաձեն թագավորին ասաց. «Ով ամրակուռ տիրակալ թագավոր, այս իմացիր, որ ամենևին անզոր է մեր կողմից հակաճառությունը Սոսթանեսին՝ եթե այստեղ չհրավիրես Եփթուիմեոս Երկայնին:

Թագավորը Դավթին ասաց. «Այլևս ո՞ւր է նա այժմ՝ իմ թագավորության մեջ»:

Դավիթը վեստին պատասխանեց թագավորին. «Լսել եմ, որ հենց այժմ է նա եկել Երուսաղեմից և գտնվում է արքեպիսկոպոսի կացարանում՝ Անչայում»:

Իսկ երբ թագավորը այս իմացավ՝ հույժ ուրախացավ և անմիջապես կանչեց եպիսկոպոսապետին, որպեսզի իրենց առաջ բերի աբեղային:

Եվ եպիսկոպոսապետը աբեղայի հետ անմիջապես եկավ թագավորի առաջ: Երբ պալատ հասավ՝ իրիկնաժամ էր, սակայն տեղեկացած թագավորը անհապաղ ապարանք կանչեց: Այն ժամանակ աբեղան թագավորի յուրայիններից Արշուշա անունով ինչ-որ մեկին, որ եպիսկոպոսապետի եղբայրն էր, հարցրեց, թե՝ ի՞նչ է այս իմ կանչի [առիթը]: Իսկ նա պատմեց.

«Հայքի մեծ վարդապետ Սոսթենեսը իր քրոջ որդու հետ եկել է և թագավորի առաջ քննություն է կատարում մեր ու իրենց հավատքի

վերաբերյալ, և ոչ ոք կարողացավ ընդդիմանալ նրան, այլև այդ
պատշաճությամբ եղավ քո կանչը՝ հուսալով քո հաղթանակը:

Իսկ աբեղան այս կապակցությամբ փոքր-ինչ սարսեց՝ նախ ան-
ծանոթության և ապա առանց գրքերի՝ անպատրաստության համար
և խաչակնքեց իր երեսն ու սիրտը և մատբերեց Տիրոջ թուղթը, որ
գրել էր իր ձեռքով Աբգար իշխանավորին, և երկինք հառեց մտքի
աչքերը: Հոգով շունչ քաշեց ու ասաց.

«Տեր Հիսուս Քրիստոս Աստված մեր, համագո և համահավասար
Հոր և քո Սուրբ Հոգու, որդ անպատմելի քո նախախնամությամբ
մարմին առնելով վարեցիր մեր կյանքը, որդ հրամայեցիր քո քարո-
զիչներ սուրբ առաքյալներիդ և իշխանավորաց՝ Վասն իմ անվան
նախապես մի վարժեք, թե ինչ ասել կամ ինչ խոսքով պատասխանել,
«զի ես տաց ձեզ բերան և իմաստություն, որում ոչ կարիցեն կալ հա-
կառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր»
(Ղուկ. ԻԱ. 15): Եվ ահա, ես միջամուխ եմ խոսքով հակաճառելու
այս ատյանում և չգիտեմ ինչ ասեմ կամ ինչ բարբառեմ, այլև դու
ուսուցանիր ինձ, ո՛վ բարետես ըստ քո անսուտ ուխտի, և մի՛ լիցի
որ իմ անգիտության աղագավ մերժվի քո արդար խոստովանության
հաստատությունը անհավատների առաջ:

Այս էր աղերսում ընթացող աբեղան ու մտավ թագավորի առաջ:
Իսկ թագավորը ըստ պատշաճի բարևեց ու հրամայեց նստել ըստ
կարգի: Այն ժամանակ Սոսթենեսը բացեց իր բերանն ու թագավորին
ասաց. «Ա՞յս է այլևս, որին բերիր ինձ պատասխան տալու»:

Թագավորը պատասխանեց. «Այո՛, անկասկած այդ է»:

Սոսթենեսը դարձյալ ասաց. «Քո թագավորության մեջ ովքեր
կան՝ կանչի՛ր այլևս քո բոլոր հավատիմացներին, որպեսզի բոլորը
միասին, ինչպես որ ավելով, մաքրեմ, և այնժամ դու իմանաս մեր
հավատքի զորությունը և ձեր անզորությունը: Եվ դարձյալ նաև
այս եմ խնդրում Ձերդ թագավորությունից, որպեսզի հրաման տաս
այսպես. եթե ես հաղթվեմ քո հավատիմացներից՝ թող ինձ մերկան-
դամ հանեն քո ապարանքից, իսկ թե նրանք ինձնից պարտվեն՝ որ-
պեսզի նրանց մերկանդամ տկլոր հանես քո պալատից:

Թագավորը ամենայն հանդստությամբ նրան ասաց.

Աստվածային հավատքի և ճշմարիտ դավանության հակաճառու-
թյունն արդեն ոչ թե խեղկատակների և մերձավորաց արժանի գործ
եմ համարում, այլև ամենայն հանդարտությամբ վայել է մեզ քննել

աստվածային կրոնն ու արդար դավանությունը՝ տարբերելու հա-
մար հերձվածողության որոմից:

Այն ժամանակ թագավորի դպրապետ մեկը կար՝ Եփթուիմե անու-
նով, նա ևս նրանց չար աղանդի խոստովանող և մեր հավատքի
մատնիչ էր: Սա հուշեց Սոսթենեսին այսպես, թե աբեղային մինչ
գրոց հակաճառությունը աշխարհական և անփույթ ինչ-որ խոսքով
վախեցրու և նվաստացրու աբեղային, քանզի անապատներում է մե-
ծացել, և նրա կյանքն այնտեղ է, մարդավարի հակաճառության ո-
չինչ գիտե: Այս էին Սոսթենեսի ականջին ծածուկ խորհուրդ տալիս
դպրապետն ու [յուր] քրոջ որդի Իորամը:

Այն ժամանակ Սոսթենեսն սկսեց աբեղային ասել այսպես. «Նախ
կամենում եմ [հարցնել], հա՛յր, թե ինչպե՞ս հասար այստեղ, կամ
ո՞ր ճանապարհն անցար, կամ ճանապահ ընկնելու առաջին օրը ի՞նչ
ուտելիք ընդունեցիր, կամ օրվա ո՞ր ժամին կամ ո՞ւր իջևանեցիր,
կամ հաջորդ օրը, ինչպե՞ս ընդունեցին քեզ, կամ քանի՞ տեսակ ու-
տելիք դրեցին առաջդ, կամ գիշերվա ո՞ր ժամին քնեցիր, կամ ո՞ր
ժամին արթնացար, կամ օրվա քանի՞ ժամը գնալուն տվեցիր, կամ
ինչքան՝ հանգստի, կամ թե ի՞նչ էր քո մտքի վարժանքը, կամ ըն-
թացքի ժամանակ ի՞նչ էիր հիշում, կամ որքա՞ն ավելի ժամանակ
խլեց մտքի հոգնությունը՝ քան թե ընթացքն ու ցրումը, կամ թե
ի՞նչ խոսք արտասանեցիր ամենից առաջ՝ երբ եկար քո բարեկամաց,
կամ թե նրանք ի՞նչ պատասխանեցին քեզ, ի՞նչ հարցուփորձ արի»:

Այն ժամանակ աբեղան ասաց. Պողոս առաքյալն ասում է. «Երբ
մանուկ էի՝ արտահայտվում էի իբրև մանուկ և համարվում մանկանց
հետ, իսկ երբ կատարյալ տղամարդ դարձա, թողի այդ մանկականը»,
ինչպես այժմ դու ես ասում՝ Մանկությանս իսկ վեգով խաղալը թող-
նել տվեցին, և այժմ տեսնում եմ քեզ կատարելահասակ, սակայն
խոսքն ու միտքը՝ մանկական: Իսկ ես ոչ քեզ պես խոսք ու խենթա-
խառն բառ կասեմ, այլև իմը ըստ ճշմարտության է. ես արդեն առա-
ջին անգամ եմ գալիս սուրբ քաղաք Երուսաղեմից՝ տիրոջ կացարա-
նից, սուրբ առաքյալ Հակոբ տեառնեղբոր աթոռից և այնտեղից՝ Ան-
տիոքից ու Հռոմից՝ հենց սուրբ Պետրոս առաքյալի տաճարից և ապա՝
Ալեքսանդրիայի սուրբ Մարկոս ավետարանչի աթոռից, ապա և Կոս-
տանդնուպոլսից ու սուրբ Հովհաննես ավետարանչի աթոռից. այս
պատրիարքական աթոռներից եմ գալիս, [ուր] վեց սուրբ ժողովների
արդար խոստովանություն ընդունել տվեցին ու հաստատ և ճշմարիտ
հավատ սովորեցրին: Եվ արդ, եկել եմ որպեսզի ցույց տամ ձեր չա-

րափառությունը: Իսկ դու չգիտես ուր ես եկել, Արգինայից ու Մարմաշենի՞ց ես եկել և քեզ հետ բերել Նեստորի և Սևերիոսի ու Պետրոս Թափիչի աղանդը և հանդգնում ես հանդիմանել Աստծո ժողովրդին ու ընդդիմանալ սուրբ արդար հավատքին»:

Այն ժամանակ թագավորներն ու իշխանները ուրախությամբ լցվեցին, և թե ինչպես առաջին իսկ [պատասխանից] հաղթանակի ուրախություն և հույս տրվեց: Իսկ այն անմիտները նվաղեցին ու իրենց իսկ սրերով բռնվեցին և հույժ մեղադրեցին իրենց հղացումը և մի տեսակ բարկության փոխեցին խոսքը:

Սոսթենեսն աբեղային ասաց. «Ողորմա՛ծ եղիր այլևս, հա՛յր, բարկությամբ ասված սույն խոսքի համար: Այժմ այլևս վե՛ր կաց, գոտեպնդվի՛ր և պատրաստվի՛ր, ես արդեն հարցումս անեմ, և դու՝ պատասխանես ինձ:

Աբեղան պատասխան տվեց ու ասաց. «Արդեն աստվածային ճշմարտությունը այդպես չի կամենում, որպեսզի ուղղափառներս աղանդավորների առաջ կանգնենք, այլ դու ավելի մոտ կանգնի՛ր՝ իբրև հարցաքննող և դատապարտող, քանզի այսպես է կարգը, որ ձեր թագավորները մեր թագավորների և քահանայապետերը՝ քահանայապետերի ու իշխանները՝ իշխանների առաջ ահ ու դողով են ներկայանում և խոնարհումով երկրպագում, իսկ եթե չես ուզում՝ նստենք այստեղ, և դու ինձ հարցեր տաս, իսկ ես քեզ պատասխանեմ: Սկսենք Սուրբ Գրքից, սկսենք Ադամից մինչև Նոյ և Նոյից մինչև Աբրահամ, իսկ Աբրահամից մինչև Մովսես ու Մովսեսից մինչև Քրիստոս, և բոլորը հայտնեմ քեզ: Սկսեմ Սուրբ Երրորդության միությունից և միաստվածության Սուրբ Երրորդությունից, Քրիստոս Աստծու մարդեղությունից և նախախնամությունից ու հրաշագործության մասին՝ երկու բնությամբ, երկու արարքով, աստվածային հոգու մարդեղացմամբ, ինչպես այն քարոզվեց մարգարեների կողմից, ու առաքյալների կողմից իմացանք հայտնությամբ, հավաստվեց աշխարհին և սուրբ քահանայապետերին, հաստատվեց տիեզերական ժողովներով, որոնց հետ դուք էլ խոստովանեցիք մինչև չորրորդ ժողովը: Իսկ երբ ձեր թագավորն ու երկիրը հանձնեցիք պարսիկներին և հեռացաք հույներից ու միացաք պարսիկներին՝ Խոսրովի և նրա որդի Շապուհի օրերում, Դվինում ժողով գումարեցիք և Հակոբ Բրտանեցու հետևորդ Աբդիշոյի խորհրդով բռնված, որը Պարսից թագավորի գործակալն էր, կախարդվեցիք խոտոր դավանության, քանզի այսպես հուշեց Պարսից թագավորին, որ թողնի կրակապաշտությունը, իսկ

Հայերը թողնեն Հույների կրոնը, ինչը և մորուքը ոսկով ներկող ձեր կաթողիկոս Ներսեսի խորհրդով այսպես էլ կատարվեց և նրա տնտես Սարգսի կամակցությամբ, որը նույն աղանդով էր բռնված: Եվ այսպես կատարեցիք սատանայի կամքն ու ի շնորհ զինականաց ազատեցիք պասուց շաբաթ-կիրակիները կաթնեղենով, իսկ բարեկենդանը մսով դարձրիք և այսպիսով միացաք Պարսիկներին:

Եվ նորից ձեր գրքերից հայտնեմ ձեզ՝ ինչպես գրված է Գրիգոր Լուսավորչի Տեսիլքի մեջ, որին հայտնվեց Աստված, շտապ դարձի եկաք որպես հավատի ոչխարների, ջրի մեջ ընկած սևացած տեսքով խարխափող այծերի վերածվելով: Եվ դարձյալ ըստ Սուրբ Սահակի տեսիլքի, որը աղերսում էր Աստծուն իր տոհմի համար, թե երբ իր ողորմածության լույսը սփռի և հավաքի աղանդի խավարը, որին արծվի կողմից գիր տրվեց, [ուր] և գրված էր տարիների թիվը, որի ընթացքում տիրելու է աղանդների խավարը, և ապա կպայծառանա հյուսիսափայլը: Դավթի տոհմի հայտնությամբ և Աստծո Հոգով կվերածնվի ու կվճռի ամենայն լավը ըստ ձեր Պատմության:

Սոսթենեսն ասաց աբեղային. «Անիծյալ լինի ով քեզ սովորեցրեց Պատմությունը և դրանով զինեց կռվելու մեր դավանության դեմ:

Աբեղան պատասխանեց. «Անիծյալ լինի Պետրոս Թափիչը, որը քեզ սովորեցրեց խաչեցարը և չարչարեց Երեքսրբյան էության երգը»:

Սոսթենեսը ասաց. «Այդ ինչպե՞ս է տվյալ բառով այլևս չարչարվում Երեքսրբյան էության երգը:

Աբեղան պատասխանեց. «Չեք կարողանում ընկալել գրվածների զորությունը և շատ սխալվում եք անընկալությամբ»:

Աբեղան դարձյալ պատասխանեց. «Այդու տեղեկացնեմ քեզ Սուրբ Գրոցից, նախ արդեն սուրբ ժողովներից, որոնք տեղի ունեցան ձեր դարձից հետո, և այնուհետև սուրբ հայրերը հույժ հանդիմանեցին այդ խոսքն ու հայհոյություն համարեցին, որը չորրորդ դեմք հավելեց և իրենով Աստծո մարմնավոր Որդուն բաժանեց Հոր կարողությունից և ինքյան խաչյալի վերածեց, որպես այլ էր կարողությունից դուրս կամ այդ չարը Որդու հետ չարչարելի համարեց Հորը և Սուրբ Հոգին: Վանի՛ր նրա այդ հայհոյիչ խորհուրդը և անիծի՛ր: Իսկ մենք «Սուրբ Աստված» Հորն ենք ասում, ոչ թե նրան վերագրում աստվածության անուն, այլև ճշմարիտ Աստված ենք ճանաչում նաև Որդուն և Սուրբ Հոգին ու սուրբ հզոր Որդու հանդեպ ենք ասում՝ ոչ թե հզորությունից առանձնացնում ենք Հորն ու Որդուն, Սուրբ անմահ Հոգու վերաբերմամբ ենք ասում՝ ոչ թե անմահությու-

*նից անջատում ենք Հորն ու Որդուն, մի՛ արասցե, այլև Աստուծով
զարդարյալ այդ երեք անձերն ենք կատարելապես ընկալում և Պո-
ղոս առաքյալի վարդապետության հետևում, որ մեզ ասում է. Մեկ է
Հայրը, որից են բոլորը, և մեկ է Տերը՝ Հիսուս Քրիստոսը, որից են
բոլորը, և մեկ է Սուրբ Հոգին, որի զորությամբ են բոլորը: Այդպես է
ուսուցանում նաև Գրիգոր Աստվածաբանը աստվածաբանության
մեջ, և այլևս իմացի՛ր ինչ նա Հոր վերաբերմամբ է ասում՝ որից են
բոլորը, և Որդու մասին՝ որով բոլորը, և Սուրբ Հոգու մասին՝ որի զո-
րությամբ են բոլորը. բնությամբ չի բաժանում, ինչպես դուք եք ա-
սում, այլ այդպես և բազմակի փոփոխում է առաքյալը: Այն խոսքը
և որ այժմ Հոր համար ասաց, այլուր Որդու մասին կասի ու Հոգու, և
ինչ որ Որդու մասին է ասել՝ այլուր կասի Հոր վերաբերմամբ, և ինչ
Սուրբ Հոգու մասին ասաց՝ այլուր կասի նաև Հոր ու Որդու մասին, և
այսպիսով կարտացոլի մեկ բնությունը և անխառն առանձնություն-
ները: Եվ այս իմանալի է, ինչպես սուրբ Գրիգորն է ասում, թե ի մի
են հավաքվում անձերը: Այսպես, և ինչպես ինքը առաքյալն է ա-
սում՝ միասնությամբ ով իմացավ Տիրոջ միտքը կամ ով խորհրդակից
եղավ նրան, և քանի որ նրանից է ամենայն ինչ, նրա կողմից ու նրա
հանդեպ, նրան է փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:*

*Այսպիսով այլևս հայտնի է, որ ոչ միայն Որդուն է ասվում Ե-
ռասրբություն, այլ Սուրբ Երրորդության հանդեպ, ինչպես որ վկա-
յում են մեծն և աստվածազարդ Աթանասը և երանելի Բարսեղն ու
Գրիգորը և ամենայն սուրբ հայրերը՝ այսպես են վկայում, որ Ե-
րեքսրբյան երգով Սուրբ Երրորդության անձերն են պատկերում մեզ
սուրբ սերովբեները, իսկ տիրություն միասնությամբ՝ Սուրբ Երրոր-
դություն մեկ էություն, արքայություն ու աստվածճանաչություն
են սովորեցնում մեզ: Աստվածաբան Գրիգորն ասում է. «Մեկն է
այն սրբություն սրբոցը, որին սերովբեքը հովանի են, և ահով փա-
ռաբանում են հավատքով, որը ի մի է ժողովում՝ տիրելու և աստվա-
ծության»: Եվ այս երգը սկզբնապես էլ սուրբ հայրերի կողմից այս-
պես է կարգված. Սուրբ Աստված, ով սուրբ հզոր, սուրբ անմահ, ո-
ղորմյա՛ մեզ: Այս երգին հրաշագործ Դավիթը Սուրբ Հոգով նախա-
պես էլ տեղյակ էր, թե սույն նոր եկեղեցուն և Աստծուն ծառայող
ժողովուրդը պիտի կատարի, ուստի ասում էր. «Ծարաւի է անձ իմ
առ քեզ, Աստուած հզօր և կենդանի» (Սաղմ. ԽԱ. 3), և կենդանին
ու անմահը նույնն է: Տեսնո՞ւմ ես, ինչպես բարվոք է ուսուցանում
«Սուրբ Աստվածի» կարգը Հոգով մարգարեն և ցանկանում լսել այս*

*երգը: Սակայն երկնի զորաց հրաշքների հայտնությամբ էլ երեքսրբ-
յան այս երգը, ինչպես գրված է եկեղեցական հիշատակարաններում,
թե ինչպես կոստանդնուպոլսեցի պատրիարքների օրոք մեծ երկրա-
շարժ եղավ, և ամբողջ օրը շարժվում էր արքայական քաղաքը, և
ողջ ժողովուրդը դուրս եկավ աղերսելու և աղոթքի: Այդ ընթաց-
քում ժողովրդի միջից հափշտակվեց փոքրիկ տղա և հրեշտակների
խոսքից այսպես սովորեց Երեքսրբյան սույն երգը. Սո՛ւրբ Աստված,
սո՛ւրբ հզոր, սո՛ւրբ անմահ, ողորմյա՛ մեզ: Եվ այսպես՝ երբ վերա-
դարձավ մանուկն ուսած, սովորածն ասաց պատրիարքին ու ժողովր-
դին, իսկ պատրիարքը ու ողջ բազմությունը ձայն տվեցին այս Ե-
րեքսրբյան երգը, և երկրաշարժն անմիջապես դադարեց:*

*Այժմ այլևս հույժ զավեշտական չէ՞, եթե մեկը այն երգը փոփո-
խի, որը սերովբեներն են երգում, և հրեշտակների ձայնով է լսվել ու
այդ հրաշքով հավաստի դարձել, մարգարեների կողմից քարոզվել,
առաքյալներից հաստատվել և ամենուր հայտնի դարձել սուրբ քա-
հանայապետերի ու գնդերի կողմից: Եվ այս բոլորի հետևանքով մե-
գանում այսպես է հաստատվել, թե Սուրբ Երրորդություն է ուսու-
ցանում և Նրա վերաբերմամբ ասվում:*

*Արդ, այլևս ո՛վ կլինի այնքան գիտակցությունից շեղյալ, որ այս
բոլորի կարգն ու ուսմունքը թողած, հետևի Պետրոս Թափիչի վար-
դապետությանը: Վայ այս լպիրշությանն ու անմտությանը, իսկ
մենք այդպիսիներին, ովքեր Սուրբ Աստծու հետ խաչեցար ասեն
կամ Երրորդությանը չորրորդություն ավելացնեն, հույժ անիծում
ենք և սատանաների հետ համարում, իսկ այս երգը ուղղափառ լեզ-
վով-մտքով այսպես ասում. Սուրբ Աստված, սուրբ հզոր, սուրբ ան-
մահ, ողորմիր մեզ»:*

*Այն ժամանակ Սոսթենեսի քեռորդի Երեմիան ասաց. «Թերևս
գնանք, քանզի պարտվեցինք»: Իսկ Սոսթենեսը դարձյալ սկսեց վի-
ճել աբեղայի հետ և գովել Պետրոսի վարդապետությունը: Իսկ աբե-
ղան ասաց. «Արդարև արդեն, և ըստ պատշաճին հալածվեց ու մերժ-
վեց և պատվազրկվեց եկեղեցու քահանայության ծառայության խո-
րանից անարժան զոհաբերության ժամանակ, քանզի պապանձվեց
էությամբ և չխոստովանեց ամենայն սուրբ և կույս Մարիամին իբ-
րև Աստվածածին, որովհետև անհավատ Նեստորից էր սովորել նեն-
գությունը և հետո, երբ եկավ ձեր երկիր, լցրեց չար աղանդով և մո-
լորեցրեց անտեղյակ ժողովրդին: Կարծես թե Աստված զինեց Քարթ-
լիի Միքայել կաթողիկոսին, ինչպես երբեմնի Դավիթ մարգարեին*

Գողիաթի հանդեպ, նրա բյուրավոր և հազարավոր հետևորդաց մեջ, քարով հալածեց նրան, և ոչ ոք չհամարձակվեց սատարել նրան, ոչ իսկ ձեռք շարժել ուղղափառների վրա: Այսպիսի խոշոր սարսափ և ամոթանք ու արհամարհանք սփռեց բազմության և Պետրոս Թափիչի հետևորդների վրա: Եվ սրանց արդարացի էր համարում, ինչպես երբեմնի դատավոր Փինեհեսի և մեծն Սամուելի ու նախանձորդ Եղիայի, քանզի մեկը Զամբրին և Բոաբիտի հարուստի հետ պոռնիկին տիգահարեց, իսկ մյուսը Ագավ թագավորին սպանեց, և երրորդը կեղծիքի քահանաներին վերացրեց:

Այդպես էլ երանելի Միքայելն ու նրա աստվածային դասը այդ չարիքը քարկոծեցին, որի հիշատակը ջնջվեց հավիտյանս:

Այն ժամանակ վեր կացավ Սոսթանեսն ու ուզեցավ դուրս գալ, իսկ աբեղան ասաց. «Քեզ բաց չեմ թողնի՝ մինչև լիովին անբարբառ չդարձնեմ»: Եվ ընդունեց իր անզորությունը, քանզի այսքան տարի լռելով՝ հրապարակավ և թագավորների ու իշխանների առաջ ստիպեցիր ինձ խոսել: Ապա սկսեց աբեղան պատվական պատկերների երկրպագության մասին սուրբ գրքերի վկայությամբ և խիստ մեղադրեց սուրբ Պահոց շաբաթ-կիրակի չփոթի և Առաջավորաց պահոց համար և բարեկենդանին միս, ձուկ ուտելու և գինու համար, կաթնեղենի հանդեպ հակումի համար՝ մինչև անբարբառ դարձրեց այդ ամենայն դժբախտին:

Իսկ թագավորն ասաց Սոսթենեսին. «Որևէ բան ունե՞ս մեզ ասելիք, թե՞ լիովին պարտվեցիր»: Սոսթանեսը թագավորին պատասխանեց. «Ես ոչ թե մարդուց պարտվեցի, ոչ իսկ հաղթված եմ, այլև՝ ճշմարտությունից: Թագավորը նորից հարցրեց Սոսթանեսին. «Ինչո՞ւ դարձի չես գալիս»: Սոսթենեսը պատասխանեց. «Մարմաշենը ինչպե՛ս թողնեմ»: Իսկ թագավորն ասաց. «Նրա տեղ փոխարենը մեզնից ստացիր»: Սոսթանեսը պատասխանեց. «Մարմաշենը իմ կողմից թողնելն այդքան դյուրին չէ»:

Այն ժամանակ աբեղան Սոսթենեսին ասաց. «Այժմ կատարիր քո բերանով ասված խոստումդ և մերկ դուրս արի մարմնավոր պատսպարումից, քանզի արդար հավատքի պատսպարում չունես»: Իսկ թագավորն ասաց աբեղային. «Ինձ շնորհիր այդ պատիվը և բավական նկատիր ամոթը, որը պատել է նրան»:

Այն ժամանակ վեր կացավ բոլորովին պարտված Սոսթենեսը՝ ամենքի առաջ ջարդված ու ամոթահար, և դուրս եկավ:

Աստվածախոս աբեղայի ասած վերահասու այլ խոսքեր էլ եղան՝ անգետներին ամոթահար անող և անմիտ հայոց բերանը փակող, որոնք այստեղ գրված չեն, այլոք նույնպես գիտեն՝ գրավոր ու բանավոր: Իսկ քանի դեռ աբեղան կար, ով ինչ-որ գործի համար Բագրատ թագավորի մոտ եկան հայաստանյան բոլոր իշխաններն ու կրոնագետները՝ իսկ աբեղան գնաց նրանց վրանի մոտ: Սոսթենեսը տեսավ նրան և ընկավ աբեղայի ոտքերը և ասաց. «Մի քիչ սպասեք ինձ, հա՛յր, մինչև գամ»: Եվ բերեց հայոց բոլոր ավագանիներին և կրոնի վարդապետներին և նրանց բոլորի առաջ աբեղային ասաց. «Գիտեմ մեր տոհմի ամբարտավանությունն ու մեղավորականությունը. այլևս մարդ առ մարդ իրար մեջ չասեն, թե ինչ-որ պարապ և հասարակ աբեղայից է պատվել Սոսթենեսն ու փակել բերանը: Այժմ արդեն սա այն միայնակյացն է, որից հաղթվեցի, և դուք բոլոր հավատքի գիտակներդ այստեղ եք, ով-ինչ գիտեք՝ խոսք արեք, և երբ մեր վանք գնանք՝ ինձ չմեղադրեք»: Իսկ նրանք ամոթով լցվեցին և խոսքը փոխեցին և ողջունեցին աբեղային ուրախությամբ ու գնացին: Եվ հույժ մեղադրեցին Սոսթենեսին՝ աբեղայի կողմից ամոթահարության և պարտության ու լիակատար կործանման համար:

Այսպես փառաբանվեց այս սուրբ և աստվածախոս աստվածաշնորհ հայր Եփթուիմեոս Գրձելիի կողմից մեր ուղղափառ կրոնն ու սուրբ հավատքը, որը դարձավ արդար հավատքի արձան: Իսկ մեծ պատվով ու ամենայն լիարժեք ողորմածությամբ և ճշմարիտ աստվածծառայությամբ ու արդար խոստովանության և հավատքի հանդեպ ամուր կանգնած և հաստատուն թագավորը այս սուրբ աբեղային ուղարկեց յուր վանք, իսկ բոլոր քահանայապետերը, աթոռակալները և անապատական սուրբ հայրերը ուրախացած և շնորհակալ սուրբ Ավետարանին Հոր և Որդու և ամենասուրբ Հոգու՝ Աստվածային մեկ էության արդար հավատքի խոստովանողները դիմավորեցին այս սուրբ աբեղային և խոնարհությամբ հարցափորձ արին և օրհնություն ու համբույր առան նրանից: Եվ իբրև մեծ ու աստվածաշնորհ պարգև և ընտիր զեն ընդունեցին: Եվ շնորհով ու ուրախությամբ լեցուն օրհնում էին և փառաբանում Աստծուն, որին վայել է փառք և մեծապես վայելչություն, պատիվ ու եռյակ պաշտառ երկրպագություն ամենայն հավատացելոց՝ Հոր, Որդու և ամենայն սուրբ լուսավորյալ և կենդանարար Հոգու, արդ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՐՍԵՆ ԻՂԱԼԹՈՅԵՑՈՒ «ԴՈԳՄԱՏԻԿՈՆԸ»

ԺԱ. դարի ավարտի և ԺԲ.-ի առաջին տասնամյակների վրա ապրած երևելի մատենագիր է Արսեն Իղալթոյեցին (Իղալթոն Կախեթում գտնվող բնակավայր է և հոգևոր-մշակութային կենտրոն) կամ Արսեն Վաչեսձեն (հմմտ. հայ. Տուտեորդի), որ նրա հայրանունն է կամ տոհմանունը: Ավելորդ չէ նկատել, որ այս հեղինակը ճիշտ մեր Հովհ. Սարկավագ Հաղբատացու ժամանակակիցն է ու թերևս նաև Դավիթ Շինարար թագավորի հորդորով հրավիրված հայ-վրացական դավանական քննարկման մասնակիցներից մեկը՝ Սարկավագի հետ միաժամանակ:

Արսեն Իղալթոյեցու կյանքն ու մատենագրական ժառանգությունը, վկայությունների հնարավոր լիարժեք ամփոփումով, ուսումնասիրել, ժամանակագրել ու բնութագրել է Քրիստոնյա Արևելքի մատենագրության խոշորագույն գիտակ ակադ. Կորնելի Կեկելիձեն[1]: Ըստ այդմ՝ ենթադրվում է, որ Իղալթոյեցին հիմնավոր փիլիսոփայական ու իրավաբանական կրթություն է ստացել Կ. Պոլսի Մանգանի ակադեմիայի Ս. Գևորգ վանքում: Ավանդույթը Արսենին է վերապահում վրացական նշանավոր Իղալթոյի ակադեմիայի հիմնարկությունը: Իբրև Եփրեմ Կրտսերին աշակերտող-ժամանակակից ուսումնառության է մեկնել Սև լեռ և հմտացել թարգմանության բնագավառում (նրա թարգմանությամբ է պահպանվել «Գորիայի, Շմոի և Աբիբոյի վարքը» (այս վարքի հայերեն թարգմանությունը, ինչպես Գ. Տեր-Մկրտչյանն է պարզել, կատարվել է հայոց մատենագրության արշալույսին և աղբյուր ծառայել պատմագրությանը[2]): Մանգանից Վրաստան է վերադարձել, նույն Կ. Կեկելիձեի ենթադրությամբ՝ Դավիթ Շինարարի հրավերով, երբ բացվել է Գելաթի նորաստեղծ դպրոցը, և Դավիթը կարող ուժեր էր հավաքագրում նրանում դասավանդելու համար: Հավանաբար վերադարձը տեղի է ունեցել 1114 թվականին՝«Սուրբ Գրիգոր Պարթևի վարքը» հունարենից թարգմանող Թեոփիլոս կրոնավորի (խուցեսմոնազոնի) հետ միասին:

[1] კორნელი კეკელიძე, ქართული ლიტერატურის ისტორია, ტ. I, ძველი მწერლობა, თბ. 1960, გვ. 273-284. Իղալթոյեցու ինքնության ու ժառանգությանն է նվիրված Իվ. Լոլաշվիլու մենագրությունը «არსენ იყალთოელი», თბ., 1978.

[2] **Գալուստ Տեր-Մկրտչյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա., Երևան, 1979, էջ 326-339:

Հիմքեր կան ենթադրելու, որ Արսենը մի քանի տարի մնացել է Գելաթում և այստեղ գլուխ բերել բյուզանդական «Մեծ կանոնագրքի» թարգմանությունը[3]: Հեղինակն է Դավիթ Շինարարի չափածո քառատող տապանագրի (ուրեմն մահացել է 1125 թվականից հետո):

Մանգանի Ս. Գևորգ վանքում եղած տարիներին թարգմանական արդյունավոր գործունեություն է ծավալել. մասնագետները այս տարիներին են ենթադրում Գեորգի Ամարտոլի «Ժամանակագրության» համառոտ խմբագրության թարգմանությունը[4]: Թերևս այստեղ գտնվելու ժամանակ է նա ձեռնարկել և գլուխ բերել այսօր գիտության «Դոգմատիկոն» («Դավանականք») անունով հայտնի ժողովածուն, որ վերջին տարիներին վրաց միջնադարագետ-ձեռագրագետների ուշադրության կարևոր նկատված հուշարձաններից է՝ թեև ամբողջության մեջ տակավին կարոտ գիտական հրատարակության: Կ. Կեկելիձեի համոզմամբ Արսենի սկզբնական թարգմանությունը ընդգրկել է ինը հայտնի և տասներկու անանուն հեղինակների երկեր: Ըստ բովանդակության երկերը նա խմբավորում է հետևյալ կերպ. 31 ջատագովական (պոլեմիկ) հուշարձան, որոնցից վեցը ընդդեմ նեստորականների, վեցը՝ հակոբիկների կամ սորի միաբնակների դեմ, երեքը՝ հայոց, վեցը՝ հրեից, ինը՝ մահմեդականների կամ սարակինոսների, երկուսը՝ օրիգինեսյանների դեմ: 16 երկ դավանական-փիլիսոփայական բնույթի է, 5-ը՝ բարոյախրատական: Գիտնականի դիտարկմամբ թարգմանիչը ձեռքի տակ այս բովանդակության ժողովածու չի ունեցել, այլ ինքն է նյութերն ընտրել և թարգմանաբար ի մի բերել, նույնիսկ նախապես եղած թարգմանական դրվագները ի նորո թարգմանելով[5]: Որ նա խորապես գիտակցել է նորաստեղծ ժողովածույի տեղն ու դերը վրաց իրականության մեջ՝ մանավանդ գործնական առումով, շատ հստակ երևում է Անաստաս Սինայեցու «Վարդապետություն» (წინამძღვარი) ձեռնարկի կապակցությամբ տրված բնութագրումից

[3] Խոսքը բյուզանդական 14 տիտղոսով նոմոկանոնի վրացերեն թարգմանության մասին է: Վրացական խմբագրության գիտական հրատարակության առաջաբանում թարգմանության ժամանակ է համարվում մինչև Ռուիս-Ուրբնիսի ժողովը (1103 թ.): Տե՛ս დიდი სჯულისკანონი, გამოსაცემად მოამზადეს ე. გაბიძაშვილმა, ე. გიუნაშვილმა, მ. დოლაქიძემ, გ. ნინუამ, თბ., 1975, გვ. 16-23.

[4] Հրատարակությունը կատարել է ակադ. Ս. Ղաուխչիշվիլին *(ტფ., 1920):* Հմմտ. კ. კეკელიძე, *ქართული თარგმანი ამარტოლის ხრონოგრაფიისა.- «ეტიუდები...», ტ. I, თბ., 1956, გვ. 250-265.*

[5] Կ. Կեկելիձեն հանգամանորեն հիմնավորում է այս դրույթը, կատարում առ այդ անհրաժեշտ վկայակոչումներ (նշվ. աշխ., էջ 278-279):

(...այն դիտելու աչք է, դատելու բերան, լսելու ունկն, հոտոտելիք՝ աստվածային գրոց բույրը վայելելու... և այլն): Իբրև Եփրեմ Կրտսերի որդեգրած մատենագրելու եղանակի շարունակող և նախորդը Իոանե Պետրիծոնիի թարգմանության մեթոդի մշակման, Արսեն Իղալթոյեցին լուսանցագիր մեկնաբանությամբ հաճախ լրացուցիչ տեքստաբանական բացատրություն է տալիս, ինչը վկայում է նրա բնագրագիտական աշխատանքի և տերմինների ընտրության ու բնագրի համարժեք գնահատության մասին: Այսպես, օրինակ, Նիկիտա Ստիթատոսի կամ Վանականի հակահայ (իմա՛ հակամիաբնակ) հինգ «Ճառն» ուղեկցվում է հետևյալ բացատրությամբ. «Այս թղթի հունարեն բնագրում այսպես էր գրված, ինչպես որ այստեղ ես եմ գրել. ոչ թե կամ հունարենը չեմ հասկացել, կամ թղթի բառը չեմ հիշել: Ներեցեք ինձ՝ արդարանալուս համար»[6]: Ճառերի թարգմանության առիթով հիշում է Դավիթ Պետրիծոնեցուն, ինչը նշանակալի է երկու առումով. Պետրիծոնեցի կարող էր կոչվել Գ. Բակուրյանի վանքի հիմնադրումից (1083 թ.) հետո, ուրեմն «Դոգմատիկոնի» թարգմանությունը թվագրելի է ԺԱ. դարի վերջով կամ հաջորդ դարի սկզբով: Թարգմանության մեջ կան ոճական միավորներ և բառաբարդումներ, որոնք հատկորոշ են պետրիծոնյան դպրոցի վաղ շրջանի գործերին[7]: Հարկավ ամենևին բացառված չէ, որ թարգմանությունը կարող էր տեղի ունենալ կամ շարունակվել Շիոմղվիմի վանքում միաբանելիս կամ Իղաթոյի դպրոցում: Կ. Կեկելիձեն հնարավոր է համարում նաև, որ «Դոգմատիկոնը» կարող էր և հետագայում լրացվել այլոց թարգմանություններով:

Դատելով «Դոգմատիկոնի» ընդօրինակությունների քանակության առկա փաստից (23 ձեռագիր միավոր), ժողովածուն միջնադարյան Վրաստանում լայն ճանաչում է ունեցել: Մասնագետները եղածների մեջ հնագույն են համարում S-1463 ձեռագիրը և թվագրում ԺԲ. դ. ավարտով կամ հաջորդ դարի սկզբով: Հակառակ հիշատակարանների ու հիշատակագրությունների առկայության, ձեռագրի գրիչը, գրչության վայրն ու ժամանակը ստուգապես հայտնի չեն[8]: Նուսխուրի գրչություն, երկսյուն, մագաղաթյա ձեռագիր է: Ընդգրկում է (ըստ նկարագրության) 72 միավոր-բնագիր, իսկ ենթախորագրումով՝ 75[9]: Խորագրերը կարմրադեղ են, լուսանցագրությունները՝ գործնական[10]: Վերջերս կատարված ուսումնասիրությամբ կասկածի տակ առնվեց S-1463 ձեռագիրը եղած ընդօրինակությունների մայր օրինակ կամ գաղափար օրինակ համարելու կարելիությունը. նրանում արձանագրվեցին բնագրական բացթողումներ, որոնք լրացվում են ուշ թվագրվող ընդօրինակություններով[11]: Ժողովածուն, ինչպես ասվեց, հիմնականում տակավին անտիպ է[12], իսկ նրանում մեկտեղված թարգմանական հուշարձանները վրացագիտականից բացի արևելագիտական (բյուզանդագիտական, հայագիտական) լայն հետաքրքրություն են ներկայացնում, ուստի անհրաժեշտ ենք համարում բերել հայոց դավանությանը վերաբերող երկերի ցանկը՝ խորագրերի մասնակի պարզեցումով:

22. Հայոց աղանդի երեսուն դրվագ, էջ 224r-226r.

26. Սուրբ և անբիծ հավատքի թուղթ՝ տրված Երուսաղեմի պատրիարք երանելի Թումայի կողմից Հայաստանյան աղանդապաշտ վորաց առթիվ, գրված արաբերեն Թեոդորեի՝ խարանցի Աբուկուր կոչեցյալ եպիսկոպոսի կողմից և իմ՝ անպիտան Միքայել աբեղայի և Երուսաղեմի Առաքելոց աթոռի սինկելոսի կողմից հունարեն թարգմանած, որից հայտնապես երևում է, թե միայն Քաղկեդոնում հավաքվածները..., էջ 252r-254v:

28. Նիկիտա միայնակյացի և աբեղայի՝ Ստուդիացվոց (Ստուդիոնի) վանքի ստիթատոսի՝ Բան առաջին ի հերքումն Հայոց հայհոյական աղանդի, էջ 256r-264v:

---

6 ԿՉ. ԿԵԿԵԼԻԾ— see below

7 Այս դպրոցի լեզվաքերականական ինքնատիպությունների և դավանական շահագրգռությունների ու մղումների մասին տես մեր «Եվթիմիոս Զիղաբենոսի «Լիազեն դավանաբանական» երկի հին վրացերեն թարգմանությունը» – «Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 266-295:

8 Վերջին հանգամանալի նկարագրությունը տես ქართულ ხელნაწერთა აღწერილობა, S-II, შედგენილია და დასაბეჭდად დამზადებული ა. ბაქრაძის, თ. ბრეგაძის, ე. მეტრეველისა და მზ. შანიძის მიერ ე. მეტრეველის რედაქციით, თბ. 1961, გვ. 213-222.

9 Հմմտ. ნანა ჩიკვატია, «დოგმატიკონის» ხელნაწერი კრებულები (S 1463 ნუსხასთან მათი მიმართების ცხრილი).- «მრავალთავი», XX, თბ. 2003, გვ. 81-85.

10 Տողերիս հեղինակը խորապես շնորհակալ է ինստիտուտի տնօրեն դոկտ. Բուբա Կուդավային ձեռագրի անհրաժեշտ էջերի թվային ընդօրինակությունը սիրալիր ընձեռնելու համար:

11 დავით შენგელია, *ისევ «დოგმატიკონის» ნუსხების, «გამოკრებანი წამებათანის» ავტორისა და არსენ იყალთოელის შესახებ.- «მრავალთავი», 22, თბ., 2007, გვ. 106-121.*

12 Եղած հրատարակություններից կարևոր ենք նկատում Մ. Ռափավայի աշխատասիրությամբ լույս տեսած Հովհ. Դամասկացու *«დიალექტიკა»*-ն *(თბ. 1976)*՝ Եփրեմ Մցիրեի թարգմանության հետ զուգադիր, Սիմեոն-Պղնձահանեցու հայերեն թարգմանության բնագրական հաշվառմամբ և հունարեն-վրացերեն հանգամանալի բառարանի առկցմամբ:

Ծան. *Բովանդակում է հինգ բան (ճառ): Գելաթի ձեռագիրը (K. 24) հիշատակարանում ասում է. «Աղոթեցե՛ք, ո՛վ հայրեր, Արսեն Թարգմանի և Պետրիծոնի վանական աբեղա Դավթի համար, որի ստիպողությամբ հունարենից վրացերենի են փոխադրվել Հայոց պսակազերծող (քակտող) այս հինգ ճառերը: Հավիտենից լինի Արսենի հիշատակը: Ամեն»*[13]*:*

70. Նզովք Հակոբիկյանց և ամենայն միաբանակաց, որոնց հետ են նաև հայերը, էջ 306v-307v.

Այն իրողությունը, որ «Դոգմատիկոնի» տարբեր ձեռագրերում առկա են նյութերի բազում փոխատեղումներ (այդ վերաբերում է և մեզ հետաքրքրող համարակալումներին, օրինակ՝ S-1463-ի N 22-ին համապատասխանում է A-205-ի, N 11, A-65-ում N 8 և այլն), իսկ մի քանի գրչագրում առհասարակ ընդգրկված չէ (K-23, S-312, A-269 և այլն), վկայում է կատարված ընդօրինակումների գործնականում տարբեր թելադրությունների մասին[14]*:*

«Դոգմատիկոն» ժողովածոյի անդրանիկ և անաչառ գնահատողը դարձյալ ակադ. Կ. Կեկելիձեն էր: Վրաց մատենագրության պատմության հին շրջանին նվիրված նրա հիմնարար աշխատության երկրորդ բաժնում եկեղեցական դպրության հուշարձանները ներկայացվում են ըստ թեմատիկայի և լայն ընդգրկմամբ՝ անկախ քննարկվող հուշարձանի ինքնուրույն կամ թարգմանական լինելուց: Եվ ահա, «Դոգմատիկա և պոլեմիկա» ենթավերնագրումների հատվածում կրկին անդրադարձ է կատարվում Արսեն Իղալթոյեցու կազմած ժողովածուին[15]*: Ջատագովական գրականության մասին խոսելիս Կ. Կեկելիձեն իրեն հատուկ խորքով ու հմտությամբ ներկայացնում ու վերլուծում է վրացերենով ստեղծված կամ վրացերենի թարգմանված հակամիաբնակ ջատագովական ողջ ժառանգությունը*[16]*: Ընդ որում, նա այդ կատարում է Քրիստոնյա Արևելքում ծավալվող քրիստոսաբանական զարգացումների և ի մասնավորի հայ-վրացական եկեղեցադավանական հարաբերությունների պատմության ընթացքը լիովին անաչառ ներկայացնելով: Գիտնականը ու-*

---

[13] Հիշատակարանը քաղում ենք՝ კ. კეკელიძე, Նշվ. աշխ., էջ 279:

[14] Այս փոփոխությունները արձանագրելիս օգտվում ենք Ն. Չիկվատիայի կազմած համապատասխանության ցանկից (Նշվ. աշխ., էջ 84-ի և 85-ի միջև):

[15] კ. კეკელიძე, Նշվ. աշխ., էջ 467-473, 474-496:

[16] Նշվ. աշխ., էջ 487-496:

շադրության է առնում երկու պարագա. Նախ այն, որ բյուզանդա-
կան եկեղեցու հետ քրիստոսաբանական մեկ թե ներկայացնող վրաց
հոգևորականությունը անվերապահորեն ընդունելի պիտի նկատեր
ուղղափառությունը (քաղկեդոնականությունը) հաստատող և մյուս
բոլոր դավանությունները աղանդ հայտարարող կեցվածքը, ուստիև
թարգմաներ և գործածության դներ քրիստոնյա աշխարհում, մանա-
վանդ հունական վանականության միջավայրում շրջանառող «լիա-
գեն դավանաբանական» ճանաչվածները՝ հարկավ հայ-վրացական
եկեղեցական բաժանումից․հետո եկող դարերում կամ այլ կերպ ա-
սած՝ վրաց ազգային մատենագրության երկրորդ շրջանում: Մյուս
պարագան քաղաքական անդիպությունների բերումով, ազգային
պետականության կորուստի հետևանքով Հայաստանից արտագաղ-
թող զանգվածների հաստատումն էր դրկից և երկար ժամանակ
պատմամշակութային նույն ոլորտում ճակատագրակից վրաց միջա-
վայրում: Այս շրջանում Վրաստանի կազմ ընդգրկված հայկական
շատ գավառներ վարչականորեն վրաց Բագրատունիների կամ
նրանց ստորականների տիրույթ էին համարվում: Միասնական պե-
տականության սահմաններում, բնականաբար, միասնական էր և
բանակը, իսկ դավանական տարաձայնությունները նկատելիորեն
դժվարացնում էին համատեղ հաղթական գործողությունները: Ուս-
տի պատահական չէ, որ Բագրատ Դ.-ի, Դավիթ Շինարարի, Թամար
թագուհու իշխանության տարիներին հայ-վրացական եկեղեցական
քննարկումներ էին կազմակերպվում՝ փորձելով համադավանության
հասնել: Ընդ որում, ինչպես Ն. Մառն էր շեշտում, պայքարը հայ և
վրաց հոգևորականության ու աշխահականների մեջ ազգային հողի
վրա չէր, այլ դավանական: Վրաց քաղկեդոնականությանը հարած
հայոց վանական որոշ կենտրոններ պակաս ակտիվություն չէին
ցուցաբերում: Ուրեմն վրացերենով ու հայերենով համապատասխան
գրականություն ունենալն ու առձեռն գործածումը օրախնդիր իրո-
ղություն էր: Կ. Կեկելիձեն այս բաժնում վերստին անդրադարձ է
կատարում վրացի հեղինակների ստեղծած դավանաբանական գրա-
կանությանը՝ Արսեն կաթողիկոսի (Թ. դար) հայ-վրացական եկեղե-
ցական բաժանմանը վերաբերող պատմադավանական երկից սկսած
մինչև Անտոն Ա. կաթողիկոսի (ԺԸ. դար) «Մզամետղվելեբա»
(«Պատրաստ ասելիք») երկը[17]*:*

---

[17] Ի դեպ՝ վերջին տարիներին հայկական միաբնակների վարդապետության հակաճառության

Վրացագիտական գրականության մեջ մեզ զբաղեցնող հարցի կապակցությամբ նշանակալի նորույթ բերեց պրոֆ. Ի. Աբուլաձեի «Մխիթար Գոշի «Առ վրացիսն» տրաքտատը և նրա գրական աղբյուրները» հոդվածը, որ լույս տեսավ Թբիլիսի պետհամալսարանի աշխատությունների VII հատորում (1938 թ., էջ 97-100)[18]*:*

Պրոֆ. Ի. Աբուլաձեն լիովին համերաշխ էր հայ քաղկեդոնականության Ն. Մառի տված բնութագրմանը և հոդվածի ելակետային մոտեցումը սահմանելիս գրում էր. «Հայաստանի տարածքում այս շրջանում քիչ «վրացական» վանքեր չեն հիշատակվում: «Վրացի» տերմինը, ինչպես ակադ. Ն. Մառը հաստատեց, սույն ժամանակի համար երկաբնակ է նշանակում՝ անկախ նրանից, թե այն բաղկացած է միայն վրաց կամ հայ տարրերից: Նրանց միջոցով էր տեղի ունենում ճիշտ այն պարսավանքի ու հանդիմանության, այսինքն՝ վրաց դավանական-ջատագովական գրականության թափանցումը հայոց միջավայր՝ թարգմանության տեսքով»[19]*:*

Գոշի տրակտատը հրահրող աղբյուրներ պրպտելիս Ի. Աբուլաձեն, ինչպես և սպասելի էր (մանավանդ Կ. Կեկելիձեի զույգ քննարկումներից հետո), դիմեց «Դոգմատիկոն» ժողովածույում առկա «հայկական» նյութերին, որպիսիք նրա հաշվումներով ութն են (3+5)[20]*:*

Ակնարկելով հանդերձ, որ վրաց մատենագրության մեջ հայոց խոստովանած դավանությունը նզովող ուրիշ շատ գրվածքներ էլ կան, Ի. Աբուլաձեն ի մասնավորի «Առ վրացիսի» առիթով իբրև արձագանքի աղբյուր մատնացուցում է «Դոգմատիկոն» ընդգրկված երկու անհեղինակ երկ՝ «Հայոց աղանդի երեսուն դրվագ» և «Նզովումն հակոբիկյանների և ամենայն միաբնակաց, որոնց հետ են նաև հայերը»: Այս երկրորդի վերջում տրված է դարձի եկողի ար-

վրաց մատենագրական հուշարձանների ամփոփ տեսությամբ հանդես եկավ վրացագետ-հայագետ դոկտ. Մայա Ռափավան (მაია რაფავა, სომხური მონოფიზიტების წინააღმდეგ ქართულ მწერლობაში არსებული ნაწარმოებების სტილისტიკა.- "ბიზანტინოლოგია საქართველოში", თბილისი, 2009, გვ. 615-624)՝ հիմնական շեշտադրումը կատարելով «Դոգմատիկոնում» եղած հակամիաբնյա նյութերի վրա:

18 Վերահրատարակությունը տես ილია აბულაძე, შრომები, ტ. IV, თბ. 1985, გვ. 5-28:

19 *ი. აბულაძე*, შრომები, IV, გვ. 10. Այս ապացուցված և ողջամիտ պարագան մեր օրերի բանավիճական գրականության մեջ գրեթե լիովին անտեսվում է, ուստի «վրացի» և «վրացական» միջնադարյան հասկացությունները ընկալվում են միայն բուն էթնիկական նշանակությամբ, ինչպես որ կատարվում է աղբյուրների «աբխազ» և «աղվան» տերմինները մեկնելիս:

20 Այստեղ վերստին հիշեցնենք, որ գիտնականը ուշադրության է առնում «հայ» եզրի դավանական իմաստով գործածությունը ևս («քանզի այն ժամանակ հայ անունը միայն ժողովուրդ նշանակող անվանում չէր, այլև այն գործածվում էր նաև կոնֆեսիոնալ ընկալմամբ»):

տասանելիք աղոթքի տեքստը, որ մասնակի փոփոխություն-սրբագրումներով առկա է նաև Մխ. Գոշի երկի ավարտին: Նրանց զուգադիր վկայակոչումը անվերապահ է դարձնում գիտնականի եզրակացությունը[21]*, ըստ որի «Առ վրացիսն» պատասխան թուղթը շարադրելիս Գոշը կետ առ կետ պատասխանում է վերոհիշյալ ջատագովական երկերին, ըստ երևույթին ձեռքի տակ ունենալով նրանց՝ վրացերենից կատարված հայերեն թարգմանությունը, որպիսին է հայ քաղկեդոնականների միջավայրում շրջանառված, ձեռագրերով ու*
«Լույս» հանդեսում Բ. Կյուլեսերյանի հրատարակած «Նորին Յով-
հաննու Դամասկացւոյ՝ Պատասխանիք առ Հայս» գրվածքը: Ընդ ո-
րում, Ի. Աբուլաձեն ուշադրության է առնում այն պարագաները, ո-
րոնք Հովհ. Դամասկացուն վերագրելու առիթ են դարձել (նրա եր-
կերի ժողովածո մուծված լինելը և «համազգի ասորներին խրատելու
համար աշխատասիրելը»)[22]*:*

Ինչ վերաբերում է «Պատասխանիք առ Հայսի» կառուցվածքին,
նա երեք մասից կազմված աշխատանք է տեսնում՝ Ներածություն,
Պատասխանի հիմնական դրույթների շարադրանք և դրույթների
ընդարձակ բացատրություն: Առաջին և երկրորդ հատվածները
ընդարձակ բացատրություն: Առաջին և երկրորդ հատվածները
թարգմանություն են «Դոգմատիկոնի» «Երեսուն դրվագի» (հայե-
րեն հրատարակության մեջ 26 պարբերության բաժանված), իսկ եր-
րորդ մասը հայերենով գրված ինքնուրույն գործ է, որի քաղկեդո-
նական հայ հեղինակը ծանոթ է հայոց միաբնյա ջատագովական
գրականությանը: Ի. Աբուլաձեն հակված է կարծելու, թե վրացերե-
նից թարգմանիչը Սիմեոն Պղնձահանեցին պիտի լինի, որի անունը
կարդում ենք «Պատասխանիք առ Հայսի» վերջում դրված հիշատա-
կագրության մեջ, իսկ որ վերջինս հմուտ էր վրացերենին և թարգ-
մանություններ էր կատարում՝ հայտնի է վստահելի աղբյուրներից[23]*:*

21 Անդ, էջ 11-13:

22 Ի. Աբուլաձեն ծանոթ է նաև Հ. Ներսես Ակինյանի դրույթին, թե Դամասկացու անվան տակ թաքնված է ոմն հայ-հոռոմ հեղինակ: Բայց քանի որ գիտնականը մատնացուցում է հունարենից կատարված վրացերեն թարգմանության բնագիր լինելը, այլևս ավելորդ է հայ-հոռոմ որոնելը:

23 Տես **Հ. Ներսէս Վ. Ակինեան**, Սիմէոն Պղնձահանեցի և իր թարգմանութիւնները վրացերէնէ, Վիեննա, 1951: Հմմտ. **Պարույր Մուրադյան,** Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 208-213: Սիմեոնի ձեռքով է գրված Մատենադարանի N 1013 ձեռագիրը՝ 1227 թ.: Այլ հիշատակարանով 1248 թ. նա 60 տարեկան է եղել, ուրեմն ծնված 1188 թվականին: Ի. Աբուլաձեն այս թվականը վերանայելի է համարում (տես նշվ. աշխ., 16, ծան. 4): Սակայն այժմ պարզ չէ, թե կասկած-հայտնող և անկյունավոր փակագծերի մեջ առնված նախադասությունը աշխատության հեղինակին է պատկանում, թե՞ գրքի խմբագրին:

Այսպիսով, այլևս պարզված էր վրացերեն աղբյուրը, որից թարգմանված էր «Պատասխանիք առ Հայս» երկի կարճառոտ միջին մասը՝ «Երեսուն դրվագը»: Պարզելիք էր մնում այն հարցը, թե «Դոգմատիկոնը» կազմող Արսեն Իղալթոյեցին որտեղից է քաղել այդ անհեղինակ գործի հունարեն բնագիրը:

Սակայն մինչ այդ անհրաժեշտ էր «Դոգմատիկոնի» առկա հիմնական ձեռագրերում ներկայացված «Հայոց աղանդի երեսուն դրվագ» երկի վրացերեն բնագրի հրատարակություն գլուխ բերել, որին հանձնառու եղավ վրացագետ-հայագետ պրոֆ. Զ. Ալեքսիձեն՝ համեմատության առնելով Ձեռագրերի ինստիտուտում պահպանված յոթ գրչագիր, հարկավ S-1463 ձեռագրի հիմքով[24]: Ձեռագրերի թվարկումից հետո հեղինակը վերհիշում է Ի. Աբուլաձեի հոդվածի դրույթները և վրացերեն և հայերեն բնագրերի մի ընդարձակ հատվածի (վրաց. 24, հայ. 19) համադրությամբ վերստին հավաստում նրանց բնագիր-թարգմանություն հարաբերակցությունը: Զ. Ալեքսիձեն ևս դիտարկում է՝ «Պատասխանիք առ Հայս»-ի «հայը» դավանական կիրառություն է և որ կարևոր է՝ հայերենի թարգմանիչը, անկախ իր՝ դավանական «վրացի» լինելուց, գիտակցաբար մեղմում կամ բաց է թողնում վրացերեն բնագրի գործածած և «հայերին» հասցեագրված խիստ արտահայտությունները[25]: Հայոց եկեղեցու քրիստոսաբանության և ծիսակարգի դեմ հարուցված մեղադրանքների դասդասումից ու ժամանակագրելուց հետո հեղինակը եզրակացնում է, թե «Հայոց աղանդի երեսուն դրվագը» ստեղծված պիտի լինի Ը. դ. կեսերին, կամ ավելի ստույգ՝ 726-787 թվականների միջև՝ այսինքն Մանազկերտի ժողովից հետո և Է. տիեզերական ժողովից առաջ[26]:

Ինչ վերաբերում է «Պատասխանիք առ Հայսի» ներածական և մեկնաբանական հատվածների գոյացման ժամանակին ու հեղինակային պատկանելության հարցերին, Զ. Ալեքսիձեն ընդունում է Ի. Աբուլաձեի դրույթը, թե ընդարձակ մեկնաբանության հեղինակը ինքը վրացերենից թարգմանող Սիմեոնն է և մի քանի փաստար-

[24] Հրատարակումը զետեղված է «Մռավալթավի» (հայ. Ճառընտիր) տարեգրքի Ի. Աբուլաձեի հիշատակին ձոնված առաջին հատորում. ზაზა ალექსიძე, არსენი ყაჩენსძის «დოგმატიკონში» შესული ანტიმონოფიზიტური ტრაქტატი და მისი გამოძახილი ძველ სომხურ ლიტერატურაში.- "მრავალთავი", I, 1971, გვ. 133-158.

[25] Նշվ. աշխ., էջ 137-138:

[26] Նշվ. աշխ., էջ 142: Տեքստաբանական կարգի դիտարկումների շարքում կարևոր ենք համարում Ագաթանգեղոսի հունարեն վարքային խմբագրության Սեղբեստրոսին վերաբերող դրվագի արձագանքը «երեսուն դրվագում» (էջ 143):

կումներով (մանավանդ Կաթոլիկե եկեղեցու հետ բաղարջակերության ընդհանրության հիմամբ, որ կարող էր ձևավորվել 1058 թվականից հետո, երբ Լևոն Թ. պապը կանոնակարգեց այն) հուշարձանի երևան գալու ժամանակը համարում է ԺԲ. դարի վերջերը, կամ ավելի ստույգ՝ «վերջերից հետո» հավանաբար մինչև Մխ. Գոշի մահը (1213 թ.), ինչպես Ի. Աբուլաձեն էր մասնավորում:

Արսեն Իղալթոյեցու թարգմանաբար կազմած «Դոգմատիկոնի» «Երեսուն դրվագի» հետ կապված աղբյուրագիտական խնդիրները ի վերջո լուծում ստացան պրոֆ. Ժ. Գարիտի փոքրիկ մի հոդված-հրապարակմամբ[22]: Պարզվում է նա վաղուց է ուշադրության առել հունարենով պահպանված և Կաթողիկոս Սահակին վերագրվող Հայոց դավանությունը դատափետող մի բնագիր (հրատ. Մինի 132-րդ հատորում, սյունակ 1217-1237, նշանավոր Narratio-յին նախորդող էջում), որը փաստորեն Իղալթոյեցու վրացերեն թարգմանության բնագիրն է[23]: Գիտնականը բնագիր-թարգմանություն հարաբերակցությունը վկայող հատվածներ է վկայակոչում, ինչպես նաև ցույց տալիս թարգմանության մեջ եղած համառոտումների մի քանի օրինակ: Հուշարձանի առավել հանգամանալի քննությունը Ժ. Գարիտի այս հրապարակման նպատակից դուրս է: Ցավոք, Ժ. Գարիտի և Վ. Գրյումելի հրապարակումները ժամանակին դուրս են մնացել հարցով զբաղված մասնագետների ուշադրությունից, ուստի նրանց արձագանքը չենք գտնում դ-ր Մայա Ռափավայի նույնիսկ ամենավերջերս «Հայ միաբնակների դեմ վրաց դպրության հուշարձանների ոճաբանությունը» բնագրագիտական ուշագրավ հոդվածում[24]: Ի լրումն նախորդների կատարած քննությունների ու մեկնաբանությունների, Մ. Ռափավան անհամեմատ հանգամանորեն է ներկայացնում Նիկիտա Ստիթատոսի[25] հինգ դրվագների թեմաները. առաջին երկը (S-1463, 256r-258r) զուտ քրիստոսաբանական է՝ մեկ մարմնի մեջ երկու բնության գոյությունը՝ ըստ Գրիգոր Աստվածաբանի

[22] **Gérard Gaitte,** La source grecque des "Trent articles" géorgiens contre les arméniens.- «Հանդէս Ամսօրեայ», 1976, սյունակ 111-116:

[23] Այդ բնագրի նախնական քննությունը գիտնականը կատարել է Les écrits antiarméniens dist du catholicos Isaac հոդվածում («Revue d'Histoire Ecelésiastique», 45 (1950), p. 711-715. Նույն խնդրին է նվիրված V. Grumel-ի հոդվածը «Revue des Etudes Byzantines», 14 (1956), p. 174-194.

[24] «ბიზანტინოლოგია საქართველოში-2», თბ. 2009, გვ. 615-624. Հարցի մասնավորեցման համար տե՛ս **B. Outier**, Le Dogmgticon d'Arsene d'Iqalto et ses modeles Greces, Le Muséon, t. 114, fasc. 1-2, 2002, pp. 217-226

[25] Ստիթատոսի ինքնության և աշխատությունների մասին տես **Karl Krumbacher,** Geschichte der Byzantinischen Literatur, Munchen 1897, S. 154-155.

«Վասն Ծննդեան» և «Վասն Մկրտութեան» ճառերի (Or. 38 և Or. 39), ապա ըստ Դամասկացու «Վասն երկու բնութեան» (առանձին 47-րդ գլուխ է նրա «ვარდამოცემა» երկում): Երկրորդ երկը (S-1463, 258r-260v) վերաբերում է երկու տերունական տոների՝ ծննդյան և մկրտության, մեկնությանը՝ պենտարքիայի արծարծմամբ (կաթողիկե և առաքելական եկեղեցիներից օտար հայտարարելու համար): Երրորդը վերաբերում է (S-1463, 260v-261r) «որ խաչեցար վասն մեր» հայոց հավելումին, չորրորդը (S-1463, 261r-262r)՝ սուրբերյա խուլթերի հայոց մեկնաբանությանը: Այստեղ է քննության առնվում հավատքի և գործի հարաբերակցության տեսությունը: Վերջին՝ հինգերորդ դրվագը վերաբերում է անթթխմոր հացի գործածությանը, ընդ որում հունարեն բնագրի խորագրում այն միաժամանակ հասցեագրված է նաև լատիներենին, իսկ տեքստում «ֆրանկներին», որոնք չկան վրացերենում: Մ. Ռափավան հնարավոր է համարում, որ հունարենում հիշյալ տերմինները ավելացված լինեն ԺԲ. երկրորդ կեսին, Լևոն Թ. պապի օրոք կանոնականացվելուց հետո (1049-1054 թթ.): Հեղինակի բնութագրմամբ Նիկիտա Ստիթատոսի «Ջատագովության ոճը հստակ է, բանավեճը ընթանում է չափավոր քննադատության շրջանակներում: Հեղինակը ոչ մի դեպքում չի դիմում քամահրական բառերի և ձգտում է հիմնավորված դատողությամբ ցույց տալ հայ գործիչներին նրանց խոստովանության սխալները և ուղղափառ հավատքի ճշմարտացիությունը»[26]: Նկատենք, որ բանավեճի այդ խոհեմ եղանակը, ցավոք, ամենևին հատկորոշ չէ «Դոգմատիկոն» ընդգրկված մյուս հակամիաբնակ տրակտատներին և ոչ իսկ նրանց վրացերեն թարգմանություններին:

Ինչպես և սպասելի էր, Նիկիտա Ստիթատոսի հիշյալ շարադրանքներին առաջինը անդրադարձավ հայ-վրաց-բյուզանդական խնդիրներ ուսումնասիրող պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը: Տակավին 1917 թ. նա արձանագրեց այդ գործերի վրացերեն թարգմանությունների ներկայությունը Իղալթոյեցու «Դոգմատիկոնում» (ըստ չորս ձեռագրի տվյալների) և մեկ առ մեկ (A, B, C, D ձեռագրերի էջերի հղումով) թվարկեց միավորները՝ տալով նրանց խորագրերի

վրացերեն և ռուսերեն թարգմանությունները[27]: Նա արձանագրեց քրիստոսաբանական և ծիսական ավանդական առարկությունները միաբնակ դավանության դեմ և խոստացավ հետագայում վերադառնալ նրանց հրատարակությանն ու քննությանը: Վերջին առումով խոստումը հիմնականում կատարված է[28], իսկ բնագրերի հրապարակումը մնում է կատարելիք:

Այսպիսին է «Դոգմատիկոնում» եղած հակամիաբնակ նյութերի ճանաչման ու ուսումնասիրության պատմությունը:

***

Բացատրության կարոտ է այն հարցը, թե ինչու մեր աշխատության մեջ, ուր «Պատասխանիք առ Հայս» քաղկեդոնական շարադրանքը հրատարակվում է ամբողջությամբ ու իր բնագրական բոլոր տարընթերցումներով, անհրաժեշտ նկատեցինք նրա թարգմանական առաջին մասը՝ վրաց մատենագրական աղբյուրում ստացած վերտառությամբ «Հայոց հերձվածի երեսուն դրվագ»-ը վերստին վրացերենից կատարված նոր թարգմանությամբ ներկայացնել: Խնդիրն այն է, որ մեզ հասած վրացերենն ու նրա միջնադարյան հայերեն թարգմանությունը հաճախ իրար չեն ծածկում ոչ միայն շարադրման հերթականությամբ, այլ նաև բովանդակային ընդգրկմամբ ու մանրամասնություններով, թեև բնագիր և նրա թարգմանություն հարաբերակցությունը հավաստի է՝ սկսած Ի. Աբուլաձեի առաջին կռահումներից: Կան խրար չհամապատասխանող խտացումներ, ակներև այլ հաջորդականություն և նույնիսկ հայերենում առկա պարբերության (Զ. Ալեքսիձեի համարակալմամբ N 25) պակաս վրացերենում: Եթե այդ ամենին ավելացնենք թարգմանչի գեղչումներն ու շարադրական անկաշկանդությունը, ապա կունենանք թարգմանական բնագրի խմբագրական տարբերակ: Ուստի անհրաժեշտ էր նախ ներկայացնել «Հայոց հերձվածի երեսուն դրվագ»-ի վրացերեն բնագիրը (թարգմանաբար), ապա այն, որ մաս է կազմում «Պատասխանիք առ Հայս»-ի:

[26] მაია რაფავა, նշվ. աշխ., էջ 621: Հեղինակը պարզել է նաև, որ «Դոգմատիկոնում» Նիկիտա Ստիթատոսի գործերի վերջում «Նորին» հղմամբ եղած երկը իրականում պատկանում է Ստիթատոսի ուսուցիչ Սիմեոն Նոր Աստվածաբանի գրչին, որ ԺԱ. դարի բյուզանդական նշանավոր հեղինակություններից է (տե՛ս *«ისტორიულ-ფილოლოგიური კრებული», თბ., 1997, გვ. 45-49)*.

[27] **Л. М.-Б., Никита Стифата**, иеромонаха Студийского, "Опровержение армянской ереси" (грузинская версия).- "Христянский Восток", т. VI, вып. 1 (1917), стр. 92-93.

[28] Նկատի ունենք **Л.М. Меликсет-Бек,** К вопросу о датировке Псевдо-Исааковых памфлетов в греко-византийской литературе.– "Византийский Временник", т.VIII (1956), стр. 208-222. Վերահրատարակությունը տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Պատմա-բանասիրական պրպտումներ, աշխատասիրությամբ **Պարույր Մուրադյանի,** Ս. Էջմիածին, 2010, էջ 398-399:

Ասացինք, թե Ժ. Գարիտի կռահումից հետո «Դոգմատիկոն» ընդգրկված այդ բնագրի հունարենից թարգմանված լինելը այլևս քննարկելի խնդիր չէ (եթե Զ. Ալեքսիձեն հատուկ անունների գրադարձության և աղբյուրներ փնտրելու ճանապարհին այդ անում էր՝ պատճառը Գարիտի հրապարակումից առաջ լինելն էր): Սակայն նույնիսկ հունարեն տեքստի հայտնի դառնալու պարագայում էլ լուծման կարոտ է հունարենի երևան գալու ժամանակը: Միակ վստահելի կռվանը՝ թե այն չէր կարող ստեղծված լինել 726 թվականից առաջ այն է, որ բնագրում երկու անգամ հիշատակվում է Մանազկերտի ժողովը: Ինչ վերաբերում է գրության վերջնաժամկետին, ապա Զ. Ալեքսիձեն փորձում է այն զետեղել Զ-Է. տիեզերական ժողովների միջնամասում, ուրեմն Մանազկերտից հետո, բայց մինչև 787 թ.: Նրա կարծիքով օժանդակ կռվաններ են հետևյալ պարագաները. ա) Ժ-ԺԲ. դարերում բյուզանդավրացական աղբյուրներում վկայվող և Հայոց եկեղեցուն հասցեագրված որոշ մեղադրանքների բացակայությունը արծարծվող բնագրում, բ) «Հայոց հերձվածի երեսուն դրվագ»-ում բացակայում է Էքվթիմե Աթոսացու խմբագրած «Համառոտ կանոնագրքում» եղած Հայոց եկեղեցուն հասցեագրված ութ հոդվածների արձագանքը:

Այս կարգի պատճառաբանությունները հիմնավոր չենք կարող համարել, որովհետև այդ հուշարձաններից մեկը առանձին վերցրած Հայոց եկեղեցու դեմ գրված մեղադրանքների համահավաք կազմելու հավակնություն կամ կարելիություն չունի, ուստի այս կամ այն մեղադրանքի բացակայությունը ժամանակագրելու ամուր կռվան չէ: Ավելին, «Համառոտ կանոնագրքի» հայոց եկեղեցուն վերաբերող դրվագների մեծ մասը սկսվում է «Լսել ենք, թե Հայոց երկրում» կամ «Լսել ենք նաև» վերապահ արտահայտությամբ, ինչը կոմպեդիում կազմել չի նշանակում[29]*:*

Ընդ որում, մենք չգիտենք հայերին վերաբերող այդ հոդվածները Էքվթիմե Աթոսացին թարգմանում է իր ձեռքի տակ եղած հունարեն բնագրերից, թե գրառում ի լրո լսածները[30]*: Գրեթե նույն տարակուսանքը պիտի հայտնենք միակամության քարոզիչների հիշատակության, պատկերամարտությանը առնչվող ակնարկների վերաբեր-*

29 Տես «მცირე სჯულისკანონი , გამოსაცემად მოამზადა ელგუჯა გიუნაშვილმა, თბ., 1972, გვ. 33, 34, 46, 47, 48, 63, 77.

30 Աշխատության երևան գալու ստույգ ժամանակը հայտնի չէ, բայց այդ տեղի է ունեցել մատենագրի հայր Հովհանի (Իոանեի) ողջության օրոք (մահ. 1005 թ.):

յալ: Այդպիսիք իբրև անդրադարձ կարող էին տեղի ունենալ Ը.-ին հաջորդող դարերում ևս: Թերևս ավելի նկատառելի է բաղարջակերության կապակցությամբ Հռոմի եկեղեցու հիշատակված չլինելը, որ անշուշտ Թ. դարի կեսից առաջ գրված լինելու ապացույց է: Այնուամենայնիվ Զ. Ալեքսիձեի դիտարկումներից շատերը ուշագրավ են նոր պրպտումներ խթանելու առումով՝ իբրև հարցադրումներ:

Առաջարկվող թարգմանությունը համարակալ դրվագներով ներկայացնելու թելադրանքը պայմանավորված է վրացերեն բնագրի խորագրի «Երեսուն դրվագը» հրատարակության մեջ կիրառելու փաստով: Ընդ որում, խորագրի თავი*-գլուխ արտահայտությունը գերադասեցինք «դրվագ» թարգմանել, այլապես նման հուշարձաններում ընդունված է «հոդված» գործածել:*

«ՀԱՅՈՑ ՀԵՐՁՎԱԾԻ ԵՐԵՍՈՒՆ ԴՐՎԱԳ»

1. Նախ արդեն ամենայն չար հայերն ասում են, թե մարմին առնելուց հետո ևս Աստծո Որդին մեկ բնություն, մեկ կամք և մեկ ներգործություն ունի խառնյալ, որը Սերգոսի, Պիռոսի ու Պողոսի և նրանց այլ ժողովեյոց դավանությունն է, ինչը Կոստանդնուպոլսում Հուստինիանոս կրտսերի հայր Կոստանդին թագավորի օրոք համրյուր յոթանասուն աստվածահաճո սուրբ հայրերի գումարած վեցերորդ սուրբ ժողովը մերժեց:

Սույն հերձվածը հերքում է նաև Գրիգոր Աստվածաբանը՝ այս ասելով. «Հավատում եմ Որդուն և Աստծո Բանին երկու բնությամբ՝ հոգի և մարմին, չարչարելի և անչարչարելի»: Եվ աստվածային Կյուրեղն է ճայնակցում, թե. «Նրանցից մեկը վնասվեց ու մահացավ, իսկ մեկն անվնաս ու անմահ մնաց»: Սրանց հետ է նաև երանելի Եփրեմը, ըստ որի «Երկու բնություն ի մի եկան, սակայն աստվածությունը մարմին չդարձավ, և մարմին առած Տերը աստվածության հավելում չեղավ»:

2. Նրանց երկրորդ չարիքն է, քանզի մեծապես մոլորվում են, երբ երեքսրբյան հրեշտակական երգում այս են հավելում, թե՝ «որ խաչեցար [վասն մեր]», ակներև է՝ Պետրոս Թափիչի վարդապետության հետևողությամբ: Ուստի այս առթիվ էլ նրանց մոլորությունը այլ սուրբ հայրերի հետ մատնացույց է անում Գրիգոր Աստվածաբանը՝ ասելով. «Այլև սրբությունք սրբոց են, որոնք սերովբեապես հովանի են երեք սրբությանց միասնաբար, երբ ի տիրություն ու աստվածություն են միավորվում»:

Իսկ եթե անիծյալները պատճառաբանում են և ասում, թե ոչ Սուրբ Երրորդության, այլ սոսկ միայն Որդու հանդեպ ենք ասում այսպիսի երգը, անմիջապես Սաբելիոսի խորհրդավորությունն է հանդիմանվում՝ ոչ թե երեք, այլ մեկ դեմքի աստվածության հավատք: Եվ դարձյալ, եթե հավելումն էլ հանեն՝ թե Սուրբ Երրորդության աստվածության վերաբերմամբ է երգը, սակայն առ Որդու խաչելությունն են ձոնում, հավատամքն է խաթարվում՝ երրորդության փոխարեն չորրորդություն խոստովանելով:

3. Երրորդ չարիքը՝ քանզի երեք խաչը [ի մի] միավորում ու կանգնեցնում են իրենց սատանայական ժողովարաններում՝ երկուսը արդեն միաչափ և տեսքով հավասար, իսկ մեկը՝ պակասավոր ու փոքր, և նրանց Սուրբ Երրորդություն կոչում: Սակայն այս գործով երկու մեծ հերձվածողություն են միասին կատարում, քանզի Սուրբ Երրորդությունը իբր նյութեղեն են պատկերում երկրի վրա և երկրորդը՝ Սուրբ Երրորդությունից մեկը պակասավոր են ընդունում:

4. Չորրորդը՝ քանզի առաքելական հինգ սուրբ աթոռներից օտար են և ձեռնադրություն ոչ ոք ունի, քանզի փոխվեցին սուրբ հայրերի ձեռնադրության կարգերից և հանդիմանության արժանացան իրենց գրքերում գրվածով և օր-օրի իրենց կողմից ընթերցվող խոսքերով: Ուստի Մեծ Հայքի մեծ ու առաջին եպիսկոպոս Գրիգորը ապավինեց Կապադովկյան Կեսարիայի եպիսկոպոսապետին՝ որպես հայերի ամենայն չար կամքի տեղյակ, Տրդատ թագավորին գրավոր հայտնելով հետևյալը. «Ով թագավոր, ինձանից և իմ աթոռում ընդունած՝ մեր այս մայրաքաղաքում ստացած քահանայությունը անդարձ անփոփոխ պահե՛ք՝ հավիտյանս հավիտենից»:

Այս առնչությամբ համաձայնող Տրդատ թագավորը գրեց այսպես. «Սույն պայմանի կապակցությամբ, որի մասին գրել ես ինձ, ով ամենայն երանելի տերդ, խոնարհություն եմ հայտնում քո մեծ սրբության բարձր աջի և պատվական խաչի առաջ, որի վրա Քրիստոսը մեզ համար համբարձվեց, և սուրբ մկրտություն առանք հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, որ առանք, և հանուն Քրիստոսի չարչարյալ սրբերի մահվան, թե անխաթար կպահպանենք նրա այդ խոստովանությունը»: Այս է Տրդատը գրել այն ժամանակ իր մոտ գտնվողների հետ, իսկ այժմյան հայերը արհամարհող ու հայհոյիչ և փոխյալ են այսպիսի խորհրդից:

5. Ուստի թյուր է նրանց պատարագը և չունեն խորհրդավոր զոհ, որը Քրիստոսն ասաց Ավետարանում, թե. «Ածէ՛ք զեզն պարարակ, [Ղ.–կ. ԺԷ. 23]: Այլև ուրիշ սազենէ՛ք, կերիցուք և ուրախ լիցուք» [Ղ.–կ. ԺԷ. 23]: Այլև ուրիշ սատանայություն, որ կբացահայտենք հաջորդ խոսքերի մեջ, քանզի խորհրդավոր զոհի և պարարակ զվարակի մասին Ոսկեբերանն ասում է. «Սուրբ է Հայրը, որը խորհրդավոր զոհ կամեցավ, սուրբ է Որդին, որը մշտապես զոհվում է և երբեք չի սպառվում, սուրբ է սույն զոհին ավարտի հասցնող Սուրբ Հոգին»: Միաժամանակ Գրիգոր Աստ-

վածաբանն էլ է ասում. «Քրիստոս հեղումթյան և առաջին սովական զգեցման համար է գառ անվանվում, ուստի այժմյան այս խորհրդավոր զոհն էլ սեղանի խորհրդավորության հանդեպ՝ անաղարտության զգեցում և սրբության կապոց է մեզ դարձնում»:

6. Քանզի անխմոր և մեռելոտի զոհ մատուցանելով հրեաների պես անամոթ երեսով են զոհաբերության կանգնում Աստծո առաջ, որի մասին մեծն Պողոսը բազում պատկերներով այսպես է գրում առ Կորնթացիսն. «Փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ» [Ա. Կորնթ. Ե. 6]: Եվ դարձյալ. «Զի եթէ առաջին անարատ էր, ապա երկրորդին տեղի ոչ խնդրէր» [Առ Եբր. Ը. 7]: Եվ վերստին առ Գաղատացիս, թե՝ «Խափանին ի Քրիստոսէ, որքան օրինօքն արդարանան և անկանին ի շնորհաց անտի» [Հմմտ. Առ Գաղատ., Ե. 4]: Եվ դարձյալ՝ «Եթէ ոք կամեսցի առնել զմի ինչ օրինացն, նզովեալ է՝ եթէ ամենայն ոչ արասցէ»: Եվ Տերը վերնատանը, երբ խորհրդավոր ընթրիք կամեցավ և իր աշակերտներին խորհուրդ հայտնել՝ ոչ բաղարջ, այլև կատարյալ հացով կատարեց, քանի որ հրեական օրենքի համաձայն այլևս բաղարջի ժամ չէր: Ինչպես Հովհաննես Ավետարանիչն է բացորոշ բարբառում, թե՝ «Սակայն յառաջագոյն քան զտօնն զատկին» [Յովհ. ԺԳ. 1]: Եվ դարձյալ, թե՝ «Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յապարանս... Եւ նոքա ոչ մտին, զի մի՛ պղծիցեն, այլ զի ուտիցեն զզատիկն» [Յովհ. ԺԸ. 28]:

7. Քանզի ջրով չեն խառնում աստվածային խորհրդի [բաժակը], և այդու Հովհաննես Աստվածաբանը խոսուն գրում է, թե «Սոյնպէս և հոգւով և արեամբ և ջրով, և երեքինն սոքա վկայեն և երեքինն մի են» [Հմմտ. Ա. Թուղթ Յովհ. Ե. 8]: Եվ քանի որ պատվական Խաչը այլևս սեղան կոչվեց, իսկ Տիրոջ մարմինը՝ կենաց հաց, և ջուրն էլ աստվածային խորհուրդ ունի, առանց ջրի կատարած աստվածային պատարագը սոսկ մարդ է ուսուցանում:

8. Քանզի առանց աղի է նրանց ընծայած խորհուրդը, և չի լսվում Տիրոջ խոսքը առ աշակերտները. «Դուք էք աղ երկրի» [Մատթ. Գ. 13], և թե՝ «Ամենայն աղիւ աղիցի» [Հմմտ. Մարկ. Թ. 49]:

9. Քանզի Աստվածամոր ավետում չգիտեն, ոչ իսկ ողջունում են՝ իբրև վերստին ազատության ծանուցումն ու հետևողը:

10. Քանզի անտեղյակ են և անհասկացող մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյանը և ոչ իսկ սուրբ Գրիգոր Աստվածաբանի սույն ասույթին են հավատում. «Քրիստոս ծնիցի, փառաւորեցիք»:

11. Քանզի կարգազանցությամբ ավետմանը հունվար ամսի հինգն են հատկացնում՝ ոչ ի պատիվ Աստվածածնի, այլ ավելի իբրև անպատվություն, որովհետև մեր Տիրոջ մարդեղության խորհուրդները ըստ կարգի տարվա հետ են բոլորում:

12. Քանզի լուսավորությունը հունվարի վեցին չեն տոնում, ոչ էլ այդ տոնը ինչպես նշելու հրահանգ ունեն, այլ միայն ձևականորեն սոսկ գետ են գնում: Սակայն նրանց հանդիմանում է Գրիգոր Աստվածաբանը՝ տոնելի է այն օրը, երբ կնքվի «Դարձյալ Հիսուս իմ և դարձյալ խորհուրդ»:

13. Քանզի հունվարի իննին այլ ավետիս են տոնում, որ մեծ չարչարանք է, ու ավետյաց չարականներ են կատարում և ավետման աչարանք է, ու ավետյաց վետարան կարգում: Սակայն անհրաժեշտ է գիտենալ, որ ողջ ապրիլ ամիսը ավետիս են կատարում, իսկ Քրիստոսի ծնունդը՝ հունվար ամսին, երեկոյան արդեն Քրիստոսի ծնունդն են տոնում, իսկ նույն ամսի վեցի լուսաբացին՝ կնունքը:

14. Քանզի հունվարի տասներկուսին Քրիստոսի մկրտությունն են տոնում և լուսաբացին երգում ամենայն հայտնություն նախախնամության, որ մեծ խախտում է:

15. Քանզի մեռոն չունեն, ոչ էլ նրան խառնելու նյութ, այլ քունջութի (բալասանի) ձեթը իբրև մեռոն են գործածում և ծախում այն մեծ գնով:

16. Քանզի մկրտության ժամանակ նորակնունքներին չեն օծում ձիթով, այլ հերձվածողների պես անտես են առնում՝ իբրև նզովյալ ձիթով, այլ հերձվածողների պես անտես են առնում՝ իբրև նզովյալ մասունք, մինչդեռ այս Գրով է տրված և եկեղեցու կարգ հաստատված, որը Դիոնիսիոս Արեոպագացին նույնպես առակի տեսքով հավաստում է, մինչդեռ վատալի է դարձնում՝ ասելով, թե. «Ընթացքի ժամանակ սպասենք, քանզի փորձության գնացողները իրենց անձերը օծում են ձիթով, այդպեսզի դյուրությամբ չբռնվեն հակառակորդների կողմից: Այդպես էլ մկրտվածները ձեթ են օծում, որպեսզի որևէ կերպ չենթարկ-

վեն նախադատ դևին, այլ ագատվեն ձեթ օծանելով ու սուրբ մկրտությամբ Սուրբ Հոգու օժանդակությամբ»:

Այլև Մեծ Հայքի առաջին եպիսկոպոս Գրիգորը ևս, երբ նա տասնինը բյուր [մարդկանց] Եփրատ գետում մկրտեց, նրանց վրա այնքան ձեթ ցանեց, որ ամբողջ գետը գրեթե լցվեց ու պատեց նրանց: Հանդիմանում է Սեղբեստրոս մեծ պապը նմանապես, որը երբ Մեծն Կոստանդիանոսին էր մկրտում՝ նախ ձեթ օծեց, քանզի գրված է, թե՝ «Ձեթ օծանողը մկրտեց նրան»:

17. Քանզի հեռացել են Քրիստոսի պատվիրաններից, որովհետև նա իր աշակերտներին «Հայր մեր, որ յերկինս»-ը իբրև աղոթք հայտնեց, այնինչ սրանք ոչ մի աղոթքի մեջ այն ասելը իբրև հավատ չեն պահպանել:

18. Քանզի մկրտության ընթացքում մկրտյալների վրա չեն փչում, թեև Գրիգոր Աստվածաբանն ասում է. «Երեք փչմամբ Սարեփթացու որդուն կկենդանացնեմ ի մեռելոց»: Եվ այլուր գրված է, թե՝ «երեք փչմամբ կենդանագործում է հոգին, սպանում մեղքը և մկրտյալին Քրիստոս զգեցանում»:

19. Քանզի Քրիստոսի ու Աստվածածնի և ամենայն սրբոց պատվական ու սուրբ պատկերները չեն երկրպագում, թեև նորին Հռոմի մեծ պապ Սեղբեստրոսի առնչությամբ իրենց գրքերում գրված է, թե մեծն արքա Կոստանդինը Պետրոսի և Պողոսի սուրբ պատկերներով ճանաչեց ճշմարտությունն ու փրկությունը:

20. Քանզի սուրբ Հաղորդության ժամանակ ոչ իսկ եկեղեցի են մտնում, նույնիսկ ոչ էլ Խաչին երկրպագում:

21. Քանզի կարգ է, թե՝ «Ով ոք շաբաթ կամ կիրակի պահքը միասին կհաշվեն, սակայն առանց հայտ առնելու՝ նզովյալ լինեն»: Ուստի այսպիսի անեծքի ահով սրբոց մեջ ու մեծ պահքի շաբաթը և կիրակին կաթ ու ձու և յուղ են ուտում՝ ոմանք բացորոշ, ոմանք ծածուկ:

22. Քանզի նրանք սրբերի հիշատակը չեն կատարում, ուստի օտար են նրանց, ոչ իսկ ունկնդիր են Ոսկեբերանի խոսքին, թե՝ «Յոյժ համարձակութեամբ գոն սուրբք յառաջի Աստուծոյ»:

23. Քանզի Աստվածածնի ննջումը և պատվական խաչի բարձումը թեև տոնում են, սակայն ինչպես գողունի՝ երբեմն այլ տեղ են նշում և երբեմն՝ ուրիշ:

24. Քանզի հուշակումով նրանց քարոզած Առաջավորաց պահքը, որ ընդունեցին այդ անաստվածներն ու պիղծերը՝ Մանազկերտում և Թեոդոպոլսում ժողոված հերձվածողներից, որոնք հեռացան ուղղափառ դավանությունից և կարգեցին լիովին պիղծ այսպիսի պահք՝ նման Եզաբելի պահքին, քանզի նրանք ևս քարոզեցին ոչ արդարության ու սրբության պահք, այլև արյունահեղություն ունեցող: Եվ այդ պահքի պատճառով սպանեցին Նաբովթին, ինչը բազմիցս բազում գրքերում անդրսնում է աստվածային Ոսկեբերանը և ասում. «Վայ պահք, բաժին նենգութեան, տուն ագահութեան, ա-
ման արեան հեղման և աստվածային բարկութեան չարժիչ»:

Այդ հերձվածող հայերը ևս նման պահք քարոզեցին՝ ոչ հանուն սրբության, այլ իրենց անձերը ուղղափառ հավատքից բաժանելու համար: Եվ այսպես պնդեցին ու հաստատեցին այն և նրանից այնպես են երկնչում, ինչպես Աստծո բարկությունից: Բայց եթե նրանցից ինչ-որ մեկին հարցնես այդպիսի պահքի մասին՝ կանպատվի քեզ սուտ ու պատիր խոսքերով, իսկ եթե դարձյալ ուրիշին՝ այլ պաղ և անմիտ ու վնասակար բաներ կասի: Եվ այսպես՝ ոչ միմյանց համավկա, այլ առավելապես հակադիր են իրար սույն պահքի հանդեպ: Իսկ առակագիրը գրում է, թե. «Որ յուսայ ի ստութիւն, նա զհողմունս արածէ և գնայ ընդ անապատն ու անջրդի և անպտուղ վայր» [Հմմտ. Առակք, Թ. 12]:

25. Քանզի սուրբ Սեղբեստրոսից ու սուրբ Կոստանդինից քրիստոնյաների առած, իսկ հետագայում աստիճանաբար բոլոր սուրբ հայերի ընդունած պանրուտիքը, [որ] սուրբ Բարսեղը հաստատեց ու անդառնալի դարձրեց, այս անաստվածային հերձվածողների հիմնադիր հետևորդները պղծեցին:

26. Ուստի մերժում են աստվածային ժամասացությունը և ոչ իսկ համդերձավորվում, ոչ էլ պատարագի հանդերձանք ունեն, որ կանոնով սահմանեց մեծն Սեղբեստրոսը և նրա խորհուրդը պարզեց՝ այսպես ասելով, թե. «Փիլոն շրջապատէ իբրև պարիսպ զամենայն անդամս մարմնոյն քահանայի՝ նշանակէ ի ներքուստ մտաց պահել երկիւղին Աստուծոյ, և անդ խորհուրդ ընդ Աստուծոյ»: Իսկ նրանք՝

յուրաքանչյուրն իր հանդերձով, որով կենցաղավարում են, գործում ու դառնում, նրանով էլ խորան են մտնում: Սակայն նրանց եպիսկոպոսներն ու կուսակրոն քահանաները ևս, վանքերի առաջնորդները ոչ միայն գլուխը ծածկած են պատարագում, այլև նույնիսկ ուրիշ գլխարկ էլ են հագնում և երկու գլխարկով ժամ մտնում:

27. Քանզի ավագ հինգշաբթի մեր Տեր Հիսուս Քրիստոսի Խորհրդավոր ընթրիքի ժամին և նոր ուխտի սկզբում, երբ որ բոլոր քրիստոնյաները հաղորդվում-են, սրանք ամենևին չեն կատարում, այլև լիովին անտես են առնում:

28. Քանզի գրեթե և հրեաների նման են խորհում նրանք ևս՝ երբ հարության պասեք են կատարում տարևոր գառով և [արյունը] ճակատներին քսում և իրենց անձանց պահպանության սրբություն համարում:

29. Քանզի Հրեից հավատի նմանողությամբ այսպիսի պիղծ զոհ են մատուցում. բերում են արջառ, խոյ և զարդարում կարմիր նարոտով, նրանց եղջյուրների միջև կապում գույնզգույն պտուղներ և տանում եկեղեցու դուռը. նախ արջառի և խոյի անդամներին յուղ են օծում և զոհում նրանց եկեղեցու դռների առաջ և այդ անվանում են տերունական զոհ՝ մատաղ:

30. Քանզի անտեղյակ և անհասկացող են, անհավատ այն բանի, որ Քրիստոսի արյունը հեղվեց համնուն աշխարհի փրկության, այլ ասում են՝ եթե կենդանու զոհողություն չլինի և կովի կամ ոչխարի արյուն չհեղվի՝ հանգուցյալի [համար] պատարագ կատարելիս, նրա հոգուն հանգստություն չի լինի:

«ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԱՌ ՀԱՅՍ»-Ի ՁԵՌԱԳՐԵՐԸ

Հայկական ձեռագրերում այս երկի ներկայությունն առաջինը արձանագրեց Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցու քարոզիչ և տեղիս ձեռագրական հավաքածոյի մատենադարանապետ Բաբգէն ծ. վ. Կյուլեսերյանը՝ 1900-1905 թվականներին հավաքածոյի ցուցակը կազմելիս[1]*: Իբրև «մեր եկեղեցական պատմութեան տեսակէտով շահեկանութիւն մը» ունեցող աղբյուր նա շտապեց այն հրատարակել իր իսկ խմբագրած «Լոյս» հանդեսի 1905-1906 թվականների համարներում՝ չարունակաբար և «Հին էջեր» վերտառությամբ: Ներածական մասում Բ. Կյուլեսերյանը լիովին պատճառաբանված վերապահություններ է կատարում մեկ ընդօրինակությամբ ավանդված բնագրի հրատարակության շուրջ՝ «ուղղելով շատ յայտնի սխալներ թէ՛ ուղղագրութեան և թէ՛ կէտադրութեան տեսակէտով»: Եվ ապա՝ «Պատասխանիքը այսպէս հրատարակելով՝ կ՚փափաքինք մեր կարգին առիթ մը ընծայած ըլլալ մասնաւոր ուսումնասիրութեան մը նիւթ ընեն զայն, մանաւանդ բաղդատելով բնագրին հետ»*[2]*: «Ցուցակի» և «Լոյսի» ունեցած նկարագրությունները նույնական են և ըստ այդմ՝* Ազգ. մատենադարանի ձեռագիրը կրել է 77 համարը *(հավանաբար նույն համարի տակ է այժմ պահվում է Պոլսո Հայոց պատրիարքարանի ձեռագրաց հավաքածոյում):*

Գրչությունը նոտրգիր է, հիշատակարան չունի, գրված է «հաստ, աժուր, տողաշարուած բամպակ թուղթ»-ի վրա: Ձեռագիրը Հովհան Դամասկացու հեղինակած յոթ երկերի ժողովածու է: Մեզ զբաղեցնող «Պատասխանիք առ Հայս» երկը զբաղեցնում է 209-277 երեսները, վերջում կա հիշատակագրություն. «Թէ ով իցէ այս Յովհաննէս Դամասկացի՝ ոչ գիտեմ, զի սուրբն այն չէ, որ գովի յեկեղեցւոյ Կաթողիկէ»:

Երևանի Մատենադարանի N 5859 ձեռագիրը *ըստ համառոտ ցուցակի*[3] *ԺԷ. դարի ընդօրինակություն է, գրիչ՝ Պողոս, ստացող՝ Վարդան Բաբուդարի (Բաղիշեցի՞): Բովանդակությամբ ժողովածո է, հիմնականում Դամասկացու երկերն են, վերջում՝ այլ նյութեր: 374r-440v էնապետ*

[1] **Բաբգէն արքեպիսկոպոս Կյուլեսերյան**, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1961, էջ 521-524:

[2] «Լոյս», 1905, էջ 1011:

[3] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի, հատ. Բ: Կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան: Ցանկերը և համեմատական տախտակները Օ. Եգանյանի: Խմբագրությամբ Լ. Խաչիկյանի և Աս. Մնացականյանի: Երևան, 1970, էջ 198:

ջերը հատկացված են «Նորին Յոհաննու Դամասկացոյ Պատասխանի առ Հայս» թղթին՝ «Համառօտեալ» առգրութեամբ: Այս բնութագրմանը հանդիպում ենք նաև «Յաղագս էութեան և գոյութեան և պատահման» խորագրում (2r-5r) և հիշատակարանում (207r): Մյուս ձեռագրերի համեմատությամբ խնամյալ ընդօրինակություն է: Հիշատակարաններից կարևոր են երկուսը. «Զստացող գրոյս զՎարդան րաբունապետն յաղաւթից յիշատակելոյ մի՛ յապաղեր, նաև՝ զՊօղոս գրչակս, աղաչեմ» (9r) և «Կատարումն փաստակոց Յովհաննու Դամասկացոյ՝ կոչեցելոյն Մանսուր համառօտս ասացեալ նորին շնորհաց աւանդութիւնք, և թարգմանեալ Սիմովնէ ի վրաց լեզուէ ի հայ բառ» (էջ 207r): Հիշատակագրություն կա 440v էջում. «Յորժամ հանդիպիք յայսմ տառիս, Աստուած ողորմի ասացէ՛ք ինձ մեղաւորիս, որ եմ տեղեաւս Մոկացի Յովհաննէս ողբալի յաքիղայու»:

Երեւանի Մատենադարանի N 5495 ձեռագիր. *ընդօրինակված է Ս. էջմիածնում (էջ 25r) 1696 թ., գրիչն է Ղազար վրդ. Համթեցին, որը միաժամանակ իր որդու (Իգնատիոս) հետ նաև ստացող է: Նոտրգիր է: «Պատասխանիք առ Հայս»-ը ժողովածոյի նախավերջին երկն է, որին հաջորդում է Վարդան վրդ.-ի Աշխարհացոյցը: Մեզ զբաղեցնող բնագիրը, ցավոք, կիսավարտ է և առ այդ որևէ բացատրություն չունի (էջ 107v): Կարելի է մտածել, թե այդպիսին է եղել նախօրինակը: Գրիչը թերևս չի էլ անդրադարձել կիսավարտությանը: Հիշատակարաններն ու հիշատակագրությունները մի քանիսն են, նրանցից առավել կարևորն այս է. «Գրեցաւ թուին ՌՃԽԵ., ի յամսեանն ի Յունիսի Ե. օր, ի դուռն սբ. Էճմիածնայ» (էջ 25)[4]:*

Երեւանի Մատենադարանի ձեռագիր N 63. *ԺԸ. դարում գրված, բոլորգիր գրչության ժողովածու է: Հովհ. Դամասկացու անունով հայտնի երկերը ներկայացված են երեք խմբավորմամբ. էջ 9r-28v, 29r-110v, 111r-229v: Երրորդ խմբում են Դամասկացու ջատագովական երկերը, այդ թվում և «Պատասխանիք առ Հայս» խորագրվածը (էջ 198r-229v)[5]: Եթե վերնագրերով դատենք ընդգրկման շուրջ, ապա նրանում առկա է ԽԹ+Ճ+Է=156 միավոր: 212r էջի ստորին լուսանցում գրչի հիշատակարան է եղել, որից պահպանվել է միայն առաջին տողը («Ցուցակի» ընթերցման մեջ կան վրիպումներ): Ընդօրինակությունը կատարված պիտի լինի Հայոց արևմտյան կողմերում, քանի որ կան հնչեղ և խուլ բաղաձայների փոխարինման դեպքեր: Գրչությունը*

4 Նկարագրությունը տես «Ցուցակ...», Բ, էջ 118:

5 Նկարագրությունը տես «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատ. Ա, Երևան, 1984, էջ 255-268:

*մանրատառ է, հարուստ ճանաչելի հապավումներով: Գրիչը կամ
խմբագիրը վերընթերցել է տեքստը և կատարել շատ ուղղումներ: Կե-
տադրությունը կանոնավոր չէ: Կարելի է նույնիսկ ենթադրել, թե
մայր օրինակը անցման շրջանի ուղղագիծ երկաթագրով է եղել: Ըստ
գրչության ԺԶ. դարով թվագրելը կարելի է արդարացի նկատել:*

Երեւանի Մատենադարանի ձեռագիր N 103. *ժողովածու է, որին կարելի է
տալ «Մատենագրութիւնք Յովհաննու Դամասկացւոյ» վերտառութ-
յունը: Սկզբում (1rv) բերված է Դամասկացու գրոց ցանկ՝ 50 անուն,
այնուհետև ամփոփում է. «Այսոքիկ յարտաքնոցն արամակեալ (՞)
զկարևորն դրոշմելով: Եւ ստուստ ի գրոց այ (ստուծո՞յ) սկսեալ»:
Տրված է 52 խորագիր, ապա դրանք նոր ժամանակներում համարա-
կալված են մատիտով՝ 47 անուն: Առանձնացված են վերջին 7 խո-
րագրերը: Էջ 97v-ում կարդում ենք. «Կատարումն փաստակոց Յով-
հաննու Դամասկացւոյ՝ կոչեցելոյն Մանսուր. յամառօտ ասացեալ նո-
րոյ շնորհաց աւանդութիւնք: Եւ թարգմանեալ ի Սիմէոնի ի վրաց լե-
զուէ ի հայ բառ»[6]: Սրան այլ գրչությամբ հետևում է մեկ ուրիշը, որ
կարևոր է.* «Բանքս, որք զկնի հեպեւին եւ մակագրի ի նոսին անուն Ս. Յովհաննու Դա-
մասկացւոյ, ոչ համարիմ թէ նորա իցեն, այլ՝ այլոց: Բայց ընդ նորին բանից օրինակեցի որ-
պէս գտից արեւելս (՞), զի կարիցեմք եւ յայնց առնուլ զնպաստ ճշգրութեան հաւատոյս մե-
րոյ»:

*«Պատասխանիք առ Հայսը» սկզբում ունի Ա-ԻԶ. համարակալում:
Հավանաբար շարունակություն կազմող մեկնությունը ևս համարա-
կալված է եղել (190v-191r լուսանցքում կա Ը. և Թ. համար):
Էջ 199r հիշատակագրողը հարկ է նկատել նորից արձանագրել. «Թէ
ո՞վ իցէ այս Յովհաննէս Դամասկացի, ոչ գիտեմ, զի սուրբն այն չէ
(որպէս համարիմ), որ զովլի յեկեղեցւոյ կաթողիկէ»: Վերջինս գրված է
ձեռագրից տարբեր գրչությամբ և նույնական է 209r-ում եղածին, ուր
ավված է. «ի վայելումն Աբրահամ վարդապետի Կրետացւոյ՝ ընծայեալ
ի Յովհաննէս արհիեպիսկոպոսէ Լեհաց ի թվին Հայոց ՌՃՀԸ.»:*

***

*Քանի որ «Պատասխանիքի» բնագիրը բաժանվում է երկու ինքնա-
կա անհավասար հատվածի, անհրաժեշտ նկատեցինք նրանցից յուրա-
քանչյուրը ինքնուրույն պարբերացման ենթարկել և ըստ այնմ հա-
մարակալել: Նրանց քանակային համապատասխանեցումը միմյանց
անկարելի նկատեցինք այն պարզ պատճառով, որ, ինչպես ուսումնա-
սիրության մեջ ենք մասնավորեցրել, առաջինը՝ թարգմանություն է*

6 Սույն հիշատակարանը (ճիշտը՝ հիշատակագրությունը) կատարված է նույն ձեռքով, ինչ 199v և 209r էջերում եղածը:

վրացերենից, ուր նա կրում է «Հայոց աղանդի երեսուն դրվագ» *խորագիրը, իսկ ձեռագրերում իբրև նրա շարունակություն ներկայացվող ընդարձակ երկրորդ մասը հայ թարգմանչի կողմից հայերենով գրված քաղկեդոնական ջատագովություն է, որի հեղինակը առաջնորդվում է ինքնուրույն շարադրանքի ընձեռած լայն հնարավորություններից: Այն փաստորեն երկաբնակ հայոց միջավայրում ստեղծված մատենագրության հազվագյուտ պահպանված էջերից է: Հեղինակը թեև իրեն հեռու է պահում «հայ» կոչվելու «վտանգից», բայց քաջագիտակ է մայրենի լեզվով եղած մատենագրությանը: Ժամանակագրորեն նրա ճանաչած հայ վերջին հեղինակը «Մաթիոսիկն պատմողն» է (էջ 117), այսինքն՝ Մատթեոս Ուռհայեցին, ուստի «Պատասխանիք առ Հայս»-ը գրված պիտի լինի ԺԲ. դարի առաջին տասնամյակներին:*

Բնագիրը կազմելիս նկատի ենք առել ԺԱ-ԺԲ. դարերի գրաբարի բառագանձային, քերականական ու մասամբ նաև շարահյուսական նորաբանությունների հնարավորությունը՝ խուսափելով գրաբարի դասական նորմերին ենթարկելու արխայիզացիայից, ուստի.

ա) Որոշյալ հոդի այլազանությունը տարընթերցումներում չենք արտացոլում, աննշան բացառություն կազմելով բարեհնչյունական նկատառումով:

բ) Չենք արտացոլում նաև թէ/եթէ տարբերակումը, իսկ սեռական հոլովի ոյ/ոյ ցուցիչի միօրինակացումը ավելորդ նկատեցինք, քանի որ հուշարձանիս գոյացման շրջանում արտասանական տեղայնացումը խորթ չէր հայերենին:

գ) Տարընթերցումներում անտեսեցինք բառավերջում ա *և* ո *ձայնավորներից հետո* յ *կիսաձայնի ներկայութուն-բացակայությունը, ինչպես նաև հրամայական եղանակի պարագայում նրա անհարկի լինելը:*

դ) «Լոյս» հանդեսի տպագրած օրինակում, հարկավ գրաքննության թելադրանքով, կան առանձին տերմինների ու անձնանունների բացթողումներ՝ դրանք փոխարինելով գծիկներով ու կետերով (այդպիսիք են իշխան, թագաւոր, Տրդատ *են): Հրատարակիչը, բնականաբար, զգուշացել է այդ բացթողումները մեկնաբանելուց, բայցև բարեխղճորեն տեղն ազատ թողել: Նա Ղալաթիո N 77 ձեռագիրը «ընտիր օրինակութիւն» չի համարում, ուստի ուղղում է միայն «շատ յայտնի սխալներ՝ թէ ուղղագրական և թէ կէտադրութեան տեսակէտով»:*

Բնագիրը համեմատության առնելիս գործածել ենք հետևյալ ցուցիչները.

Ձեռ. ՄՄ N 5859 = Ա	*Ձեռ. ՄՄ N 63 = Գ*
Ձեռ. ՄՄ N 5496 = Բ	*Ձեռ. Ղալաթ. N 77 = Դ*
Ձեռ. ՄՄ N 103 = Ե	

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ
ԱՌ ՀԱՅՍ

[ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ]

Եւ արդ, իմ մինչեւ ցարդ եւս ընդ համազգեացն իմոց խօսելով Ասորւոց, ցաւօք[1] սրտի, սիրով, աղաչանօք խրատել[2] աշխատասիրեցի: Եւ զոր ի նոսա տնկեալ որոմն էր ի թշնամւոյն[3], խլել կամելով դեգերեցի՝ ի բանս յայտնի առնելով նոցա զարկածս չարին եւ զսերմանիս նոցա յայտնելով, թերեւս[4] դառնայցեն եւ կեցցեն, եւ այլոց՝ զի զգուշասցին եւ պատրաստեսցին[5]: Եւ զի առ նոսա այսպէս եմուտ խոտորումն, չորից գոլ մերձաւոր եւ համաշխարհիկ լեալ ազգացն. եւ ըստ որոց[6] կողմամբ ուրոյն[7] մերձ գոլով՝ ի նոցանէ ընկալան պատիրս ինչ. Հրէից գոլ մերձաւոր[8] յոյժ լեզուաւ[9] նման եւ գրով գոլով, եւ խառն բնակելով ընդ նոսա. երբեմն ընդ ձեռամբ լեալ ուրուք եւ երբեմն ի ձեռն անկանելով[10]: Իսկ ըստ միւս կողմանցն Արաբացւոցն խառնեալք գոլով[11] եւ լեզուաւ եւ գաւառաւ, իսկ ըստ միւս կողմամբն[12] Պարսից լեալ բնակակիցք ի նոսա: Եւ թէպէտ եւ ընկալան հաւատ ի քարոզութենէ առաքելոցն, եւ մերձակայ գոլով Հոռոմոց[13] եւ ընդ լծով նոցա: Եւ զի ի մարմնանալն Քրիստոսի սկսեալ էր եւ[14] տէրութիւնն Յունաց, այլ յիւրաքանչիւր[15] ազգաց, յորոց մերձն էին, ընկալան ինչ ի նոցա խառնակութեանց՝ ի Հրէիցն եւ ի Պարսից եւ յԱրաբացւոցն առեալ: Իսկ նեստորականքն լոկ մարդ ասեն զՔրիստոս եւ յետոյ[16] շնորհօք Աստուած լեալ: Եւ ընդ սոցա հակառակեալ այլոց, զի մի բնութիւն ասացին լեալ յերկուցն խառնեալ, եւ զայն Աստուծոյ եւ զայն մարդոյ[17] լեալ: Եւ զԱստուած ասացին խաչեալ եւ մեռեալ, զԵրրորդութիւն միանձն եւ մի բնութիւն լեալ եւ այնիւ խաչեալ եւ մեռեալ[18]: Եւ զայս ասացեալ՝ բայց զկարգ եկեղեցւոյ ոչ փոխեցին եւ ոչ լուծին:

Իսկ Հայք՝ վասն զի սոցա ամենեցուն խառն գոլով եւ համաշխարհիկ, գիտելով զլեզու նոցա եւ զգիր, եւ ընդել գոլով նոցայն[19] կարգացն: Եւ ապա[20] ընդ ձեռամբ անկեալ Պարսիցն՝ ստրուկ նոցա գոլով, եւ Ասորւոցն որ դպիրք եւ իշխանք էին արքային Պարսից Աբդէշ եւ Սիմոն, նոցա հնազանդեալ առին ի նոցանէ զայս ինչ, զոր նոցայն էր կարգ, նախ վասն հաճելոյ զնոսա, եւ երկրորդ՝ յաղագս անգիտութեան ազգին: Նախ զի հեռիք էին[21] յառաքելական եկեղեցեաց եւ զի ոչ ունէին գիրք եւ[22] դպրութիւն կատարեալ. երկրորդ[23] զայն սակաւ զոր ունէին եւ զայն եւս[24] թիւրեալս ունելով եւ այլանդակս: Եւ է՛ ինչ զոր յԱսորւոց[25] առեալ՝ զնոցայն[26] ունելով հերձիք: Եւ է՛ ինչ զոր ի Յունաց, եւ զայն՝ ի հերձուածողաց: Զի նախ յուղղափառութիւն յոյն գիր ունին եւ զայլն իւրեանց գրիչք[27] եդին առ միանս զբանս[28] Ասորւոց հերձուածոյն[29] եւ որք ի Յունաց էին հերձուածողք, եւ զնոսա ի միանս յարեալք[30], յաւելին[31] ի վերայ եւ զիւրեանց[32] մտաց բանս: Եւ այնպէս յերկոցունց[33] կողմանցն[34] զվատն Ասորւոց եւ Յունաց, եւ իւրեանց մտաց բանն[35] ի մի բարդեալ՝ արարին իւրեանց դպրութիւնս, գրեանս զնոսա կոչելով, եւ նովին[36] վարժեալ՝ ընկան ի յետս յամենայն եկեղեցւոյ, եւ ոչ իւրեանցն հաւասարեցին օրինադրացն Ասորւոց, այլ եւ ի նոցանէ թիւրեալս[37] եւ թեքեալս[38], առանձին դնան ըստ կամաց իւրեանց:

Եւ այս են բաժանմունքն, որով որոշեալ յամենայն քրիստոնէից. ոմանք ընդ ոմանս յարին իւիք ինչ եւ դարձեալ բաժանին:

Ա. *Առաջին զա՛յս ասեն, թէ Որդին[1] Աստուծոյ զկնի մարմնանալոյն մի[2] բնութիւն եւ մի կամք եւ մի ներգործութիւն է[3], յերկոցունց խառնելոց մի եղեալ: Եւ ա՛յս է խոստովանութիւն Սարգսի, Պիռոսի, Պօղոսի[4] Սա-*

[1] ցաւովք ԱԲԳ
[2] խրատելի Դ
[3] տնգեալ էր թշնամւոյն Ա
[4] թէրեւս Ա
[5] պատրաստին ԱԲԳ
[6] որոցն Ա
[7] որոյն ԲԳ
[8] մերձ ԴԵ
[9] լեզւաւ ԱԳ, լեզուով Դ
[10] ականելով ԴԵ
[11] գոլով] Ա
[12] կողմամբ ԲԴ
[13] Հռովմոց ԱԲ
[14] եւ] Դ
[15] իւրաքանչիւր ԳԴ
[16] յետ Բ
[17] մարդոց ԱԳԴԵ
[18] զերրորդութիւնն... մեռեալ] ԲԴ

[19] նոցայն] նոցա այն Բ
[20] ապա] Դ
[21] էին] են ԱԳԵ
[22] եւ] ԲԴ
[23] երրորդ ԱԲԳ
[24] եւ ԴԵ
[25] յԱսորոց ԱԳ յԱսորոցդ Դ
[26] նոցա Բ
[27] գրիչք] գտիչք ԳԴ
[28] զբան ԲԳԴ
[29] հերձուածող Ա
[30] յարեալ ԱԲԳ
[31] յաւելի Դ
[32] զիւրեանցն ԳԵ
[33] երկուցունց Բ
[34] կողմանց ԲԳԴԵ
[35] բանն] ԱԳԴԵ
[36] նովաւ ԳԴ
[37] թիւրեալ ԱԲԳ
[38] թեքեալ Ա

Ա [1] Որդի Դ
[2] մի] ի Դ
[3] է] ԲԴԵ
[4] Պողոս ԴԵ

մոստացւոյ, Եւտիքէի, Դիոսկորոսի[5], Սեւերոսի, Սուտ Եպիփանու, Պարսումի[6], Աբդիշու, Յակոբ Ծանծալոսի եւ յայլոցն[7] չարախումբ նոցա ժողովոյն, զոր եհատ եւ որոշեաց Կոստանդնուպոլսոյ[8] երկրորդ ժողովոյն ճՀ Սրբոց Հարցն[9] յաւուրս Կոստանդիանոսի սուրբ Թագաւորին, հօրն Յուստիանոսի Փոքուն, զորոց հերձուածն յանդիմանէ Գրիգոր Աստուածաբանն՝ ասելով. Հաւատամ զՈրդին Աստուծոյ յերկուս կատարեալ բնութիւնս՝ Աստուծոյ եւ մարդոյ, հոգի եւ մարմին, չարչարելի եւ անչարչարելի, մահկանացու եւ անմահ: Եւ Կիւրեղ ասէ. Մինն[10] մնաց անչարչարելի եւ անմահ: Եւ Եփրեմ ասէ. Եթէ երկու բնութիւնքն ի մի ժողովեցան, այլ Աստուած ոչ փոխեցաւ ի մարմին, եւ զմարմինն առնելով՝ ոչ յաւելաւ ինչ յաստուածութիւնն:

Բ. *Երկրորդ մոլորութիւն նոցա, զի ի հրեշտակական օրհնութիւնս, յԵրիս սրբասացութիւնս Սուրբ Երրորդութեանն հասարակաց ասեն* զխաչեցարն, *զոր առեալ [է] ի Պետրոսէ Անտիոքացւոյ, զոր ուսեալ յԱսորւոց, ասէր մի բնութիւն եւ մի անձն գոլով զԵրրորդութիւնն, եւ այն՝ խաչեալ եւ մեռեալ, զոր յանդիմանեն ամենայն գիրք[1]՝ Երրորդութեան ասելով զԵրեք սրբասացութիւնն: Եւ նոքա պատճառեն, եթէ Մեք ի դէմս Որդւոյ միայն ասեմք: Որք կամ զՀայր եւ զՀոգին հանեալ[2] ի կարգէ հրեշտակական երգոյն[3] եւ ոչ երեք յիշելի ասեն. կամ զերիս սուրբն երիցն, եւ զխաչեցարն Որդւոյ միայն՝ չորս ցուցանեն անձինս, կամ զերիսն միանձն ասեն՝ իբրեւ Սաբելիոսի[4], եւ զԱստուածն եւ զհզօրն եւ զանմահն եւ զխաչեալն նմա ասասցեն:*

Գ. *Եւ վկայ[1] այսորիկ երիս խաչս լծակցեալ կանգնեն ի ժողովարանս իւրեանց՝ երկուս միաչափս և մինն[2] փոքր եւս, եւ Սուրբ Երրորդութիւն կոչեն: Եւ են սոքա երկուս հերձուածս. մինն[3] զի զԵրրորդութիւն խաչեալ ասեն, եւ մին՝ զի զՈրդի փոքր կացուցանեն ի միջի քան զերկուս գոլով:*

---

[5] Դէոսկորոսի ԲԴ
[6] Պարսոմի ԲԳԴԵ
[7] այլոցն ԲԳԴԵ
[8] Կոստանդինոպօլսու Ա
[9] Սուրբ հարքն ԱԲԳ
[10] մին Դ

Բ [1] Գիրգ Ե
[2] հանել ԱԲ
[3] երգոցն ԲԴԵ
[4] Սաբելիոս ԲԳԴԵ
Գ [1] վկայ] վասն ԳԴԵ
[2] մին ԴԵ
[3] մին Դ

Դ. *Չորրորդ՝ վասն զի ի հինգ[1] համաշխարհական եւ առաքելական եկեղեցեացն օտար են եւ ոչ ուստեք[2] ունին ձեռնադրութիւն: Վասն զի յանցաւոր[3] եղեն աւանդութեանց նոցին եւ յանդիմանին յիւրեանց[4] գրոցն, զոր օր ըստ օրէ ընթեռնուն: Վասն զի Գրիգոր Պարթեւն Հայոց ի Կեսարի Կապադովկացւոցն[5] էառ զձեռնադրութիւն եւ զմեռոնն ի Լեւոնդիոսէ արհիեպիսկոպոսէ[6]: Վասն զի եւ Լեւոնդիոս, որպէս կանխագէտ լեալ մտաց նոցա, դաշինս[7] եդ[8] նոցա անտի ձեռնադրիլ[9] եւ գրեաց առ Տրդատ[10] այսպէս. Ո՛վ թագաւոր[11], զքահանայութիւն եւ զհաւատն, զոր առեալ ձեռօք իմովք յայսմ եկեղեցւոյ, անփոփոխադրելի պահեա առ սա մինչեւ յաւիտեան: Զոր ընկալեալ Տրդատ[12] գրեաց առ նա այսպէս. Զոր գրեցեր առ մեզ երրորդ երանելի Տէր Լեւոնդիոս[13], երաշխաւոր տամ սրբութեանդ քում զաջն արարչին բարձրելոյն եւ զպատուական խաչն, յորոյ[14] վերայ խաչեցաւ Քրիստոս Աստուածն մեր, եւ զՍուրբ Մկրտութիւնն, որով մկրտեցաք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եւ զմահն, որոց վասն Քրիստոսի չարչարեցան զսրբոցն. զի ոչ երբեք խոտորեսցուք ի խոստովանութենէ եկեղեցւոյդ[15] քումմէ: Զայս Տրդատ[16] եւ իշխանքն[17] գրեալ: Եւ մինչեւ ցՍահակ Պարթեւն անդ ձեռնադրեցան:*

Ե. *Եւ այլ՝ զի թիւրեն ի պատարագին[1] խորհուրդն, ոչ ունելով եկեղեցի հասարակաց, եւ ոչ զգեստ[2] քահանայական կարգին եւ ոչ զսպաս[3] նորին, եւ ոչ զկարգ եւ զաղօթս պատարագին, այլ[4] այլանդակս ինչ: Եւ ոչ ի մի մատուցանեն պատարագն սարկաւագօք եւ դպրօք, եւ ոչ ի միմեանց հաղորդին, եւ ոչ ուրախակից լինին, որպէս ի զենումն պարարեալ զուարակին՝ հայրն եւ որդիքն եւ ծառայքն (Հմմտ. Ղուկ. ԺԵ. 23): Որպէս Ոսկեբերանն[5] ասէ ի Մեկնութեանն[6] սորա. Սուրբ*

Դ [1] հինք Ա, հինկ ԲԳ
[2] ուստեք] ուրեք ԴԵ
[3] անցաւոր Դ
[4] իւրեանց ԴԵ
[5] կապադոկացոցն Ա
[6] արշիեպիսկոպոսէ ԱԳԴԵ
[7] դաշինք Բ
[8]ետ ԲԳԴԵ (Ա-ն նախապես ունեցել է **եդաւ**, ապա սրբագրել **եդ**)
[9] Տրդատ] Դ
[10] ծեռնադրել ԱԴԵ
[11] թագաւոր] Դ
[12] Տրդատ] Դ
[13] Լեւոնդիոս ԲԴԵ

[14] որոյ ԲԴԵ
[15] եկեղեցւոյն ԲԴ
[16] Տրդատ] Դ
[17] իշխանքն] Դ
Ե [1] պատարագի ԴԵ
[2] սգեստ Դ
[3] սպաս ԱԴ
[4] այլ] Ա
[5] Ոսկիբերան Գ
[6] Մեկնութիւն ԱԲԳԵ

է Հայր, որ կամեցաւ զխորհրդական պատարագս: Սուրբ է Որդի, որ միշտ զենանի եւ ոչ հատանի: Սուրբ է Հոգին, որ կատարող եւ լրումն է[7] այս պատարագիս:

Զ. *Եւ զի բաղարջ եւ մեռելոտի առնեն զպատարագն ըստ Հրէից կարգի, զոր անամօթ երեսօք բերեն կալ[1] առաջի Աստուծոյ եւ յանդիմանին բազում օրինակօք[2] յառաքելոց՝ որպէս գրէ առ Կորնթացիսն, թէ՝ Մի խմորն՝ զամենայն զանգուածն խմորէ. ի բա՛ց արարէք զհին խմորն (Ա. Կորն. Ե. 6-7): Եւ վարձեալ եթէ՝ Առաջինն անարատ էր, երկրորդին տեղի ո՛չ տայր: Եւ առ Գաղատացիսն գրէ, եթէ՝ Խափանիին[3] ի Քրիստոսէ, որք օրինօքն արդարանան և անկանին[4] ի շնորհաց նորա (Գաղ. Ե. 4-5): Եւ դարձեալ՝ Եթէ ոք կամեսցի առնել զմի ինչ զօրինացն, նզովեալ է ի Քրիստոսէ՝ եթէ զամենայն ոչ արասցէ: Եւ Տէրն ի Վերնատանն[5] մինչ զխորհուրդն յայտնէր աշակերտացն՝ ոչ բաղարջ ետ նոցա, այլ հաց կատարեալ ետ՝ վասն զի ոչ էին աւուրք բաղարջակերացն, այլ առաջին աւուրքն, որպէս ասեն աւետարանիչքն[6], եւ Քրիստոս զօրինօքն[7] ոչ էանց երբեք՝ որպէս Յովհաննէս ասէ, թէ Յառաջագոյն քան զտօն Զատկին (Յովհ. Գ. 3) եւ Ղուկաս՝ Մերձեցաւ տօն բաղարջակերացն (Ղուկ. ԻԲ. 1), եւ Մատթէոս եւ Մարկոս[8] Յառաջնում աւուր բաղարջակերացն (Մատթ. ԻԶ. 17): Եւ նոքա ոչ մտին յապարանսն յուրբաթու՝ զի մի՛ պղծիցին, այլ զի կերիցեն զԶատիկն:*

Է. *Եւ[1] վասն զի ջրով ոչ խառնեն[2] զբաժակն, Սողոմոն ասէ, Խառնեաց ի խառնելիս զգինի իւր (Առակ. Թ. 2): Եւ Յովհաննէս[3] Աւետարանիչն ասէ, եթէ՝ Այսպէս հոգւով եւ արեամբ եւ ջրով, եւ[4] երեքինն սոքա են, որ վկայեն, եւ երեքինն մի են, եւ երեքին՝ ի հաղորդութիւն, եւ երեքին ի մկրտութիւն:*

Եւ զի խաչն Քրիստոսի սեղան կոչեցաւ, եւ[5] մարմինն իւր՝ հաց կենսաբեր, եւ ջուր՝ զխորհուրդ աստուածութեանն բերէր[6]: Եւ աստուածային պատարագն՝ եթէ առանց ջրոյ է, ապա լոկ մարդոյ է: Եւ ի կողահոս աղբերացն[7] ծարաւելոցն ըմպելի[8] ջուր եւ արիւն բղխեաց կենսատու:

---

7 է] Բ

Զ 1 կալ] Բ

2 յօրինօք Բ, օրինօք Գ

3 խաբանին ԲԳ

4 անգանին ԱԳ

5 Վերնատունն ԱԲԳ

6 Աւետարանքն ԱԲ

7 զօրինօք ԴԵ

8 եւ Մարկոս] Դ

Է 1 եւ] ԳԵ

2 խառնեն] առնեն Դ

3 Յոհաննէս Բ

4 եւ] Ա

5 եւ] ի ԱԴ

6 բերէ ԲԳԴԵ

Ը. *Այլ եւ առանց աղի ընծայեն[1] եւ ոչ լսեն Տեառն՝ ասելով ցառաքեալսն. Դուք էք աղ երկրի (Մատ. Ե. 13). եթէ կալարուք յանձինս ձեր զաղն, եւ թէ ամենայն[2] պատարագ աղիւ յաղիցի. եւ եթէ ոչ յաղիցի՝ ո՛չ յերկիր եւ ո՛չ յաղբ է պիտանի:*

Թ. *Վասն զի զաւետիս Կուսին ոչ ընդունին եւ ոչ զմարմնաւոր ծնունդ[1] Տեառն ընդունին եւ ոչ տօնեն, բայց միայն ի Զ-ն Յունվարի[2] երեկոյեան[3] աւետիք[4] եւ[5] գիշերն ծնունդն եւ յայգուն[6] մկրտութեան ասեն տօնել:*

Որպէս եւ զմարդկային բնութիւն[7] զկամս եւ զներգործութիւն[8] ընդ աստուածայինն մի եւ խառնեալ ասեն, նոյնպէս եւ զերիս զայս խառնակեն եւ ուրանան ոչ գոլ կամ առաջօք[9] իբրեւ ընդ խողովակ անցեալ[10] կամ զմկրտութիւն միայն ասեն, որ ձայն Հօր եւ Հոգի[11] երեւեցան եւ շնորհօք որդի Աստուծոյ լեալ ասեն եւ յանդիմանին ի[12] Ղուկասու, որ Զաքարիայի[13] պապանձումն ի մուտ տօնին քաւութեան ասէ լեալ (Համմտ. Ղուկ. Ա. 23-24), եւ յամսեանն վեցերորդի՝ զԿուսին յղութիւնն: Եւ իբրեւ լցան աւուրք ծննդեանն ինն ամսեան՝ զծնունդն ասեն եւ զմկրտութիւն, եւ Յիսուս էր ամաց երեսնից սկսեալ, յորոց կարծիւր[14] որդի Յովսէփայ[15]: Եւ յանդիմանին յԱստուածաբանէն, որ ասէ. Քրիստոս ծնեալ լինի. եւ արդ՝ Քրիստոսի յայտնութեան[16] տօն է. զի երեւեցաւ Աստուած մարդ ծննդեամբ. եւ արդ զծննդեանն[17] վայելչականս տօնեցաք ընդ այս: Իսկ զմկրտութենէն դարձեալ այլ Յիսուս եւ այլ խորհուրդ. եւ լուսաւորութիւն կոչէ եւ ոչ ծնունդ:

Ժ. *Զի ոչ ունին մեռոն[1] եւ ոչ զնիւթ խառնման նորա, այլ իւղ[2] կնճթեայ[3] ոչ ինչ խառնելի[4] ունե-*

---

7 աղբիւրացն Գ

8 ըմբելի Գ

Ը 1 ընծաեն Գ

2 ամենայն] Ա

Թ 1 ծնունդն Ա, զծնունդ Բ, զծնունդն Գ

2 Յունվարոյ ԱԲԳ

3 երեկոն ԱԲ, երեկոյն Գ

4 աւետիք] աւուրս ԲԴԵ, աւետիս Ա

5 եւ] ԴԵ

6 այգոյն Ա

7 բնութիւնս են Դ, են] եւ Ե

8 ներգործութիւն ԱԲԴԵ

9 առաջօք Բ

10 անցեալ] անել Գ

11 Հոգւոյն ԱԴԵ

12 ի] Բ

13 Զաքարիային ԱԲԳ

14 կարծէր ԱԲԳ

15 Յովսէփու ԱԲԳ

16 յայտնութեանս ԱԳԴԵ

17 զծննդեանս ԱԴԵ

Ժ 1 մեւռոն ԱԳԴԵ

2 եղ ԱԲԳ

3 կնչթեա Ա, կնճթեա Գ, կնչթեայ Ե

4 խառանելի Ա

լով[5], եւ ոչ հրաման ունելով յեկեղեցեաց[6] օրհնել զնա: Եւ յանդիմանին ի հնոցն ամենեցունց, զի ճէթ ձիթենեաց էին օծելիք թագաւորաց եւ քահանայից եւ զոհից, եւ խառնորդն իւր, որ կոչիւր[7] Նարդոս, եւ ի նորուս ամենայն առաքելական եկեղեցիք զնոյն ունին, բաց ի[8] նոցանէ, որ[9] որոշեալ են յամենեցունց:

ԺԱ. *Նոյնպէս եւ ի մկրտելն ոչ օծանեն նախ ձիթով զմկրտեալն, այլ անփոյթ առնեն. եւ յանդիմանին յառաքելոցն, որք կարգեցին, որպէս գրէ մեծն Դիոնէսիոս, օծանել ձիթով. այսպէս ասէ. Կացցուք ի ժամ ընթացիցն, զի փորձ ընթացողքն օծանին ձիթով. զի մի՛ դիւրըմբռնելի լիցին[1] ի հակառակորդացն[2], այլ զերծանին ի նոցանէ օծմամբ ձիթոյն և մկրտութեամբ շնորհօք Սուրբ Հոգւոյն[3]: Նոյնպէս[4] եւ Սուրբն Գրիգոր, առաջին եպիսկոպոսն Հայոց յորժամ[5] զիննեւտասն բիւրն եւ զերկոտասան բիւրսն մկրտէր ի գետն Եփրատ, այնչափ ճէթ օծ զնոսա, մինչեւ զգետն ի ներքս փակեաց: Ունին եւ յանդիմանիչ զՍեղբեստրոս հայրապետն, որ զԿոստանդիանոս մինչ մկրտէր, նախ[6] օծ եւ ապա յաւազանն մկրտեաց:*

ԺԲ. *Եւ զի անցանեն պատուիրանօքն Քրիստոսի. զի ուսոյց զառաքեալսն աղօթել Հայր մեր, որ յերկինս[1] եւ սոքա եւ ոչ ի մի աղօթս կարգեցին զսա ասել[2]:*

ԺԳ. *Զի ի մկրտութիւնն իւրեանց ոչ փչեն ի մկրտեալսն, եւ յանդիմանին ի Քրիստոսէ, որ փչեաց յառաքեալսն զՀոգին Սուրբ: Եւ Եղիայ[1] փչմամբ զմանուկն Սարեփթացւոյն[2] կենդանացոյց: Եւ Դիոնեսիոս[3], որ ասէ. Եթէ երիս փչմունս զհոգի կենագործէ, զմեղս սպանանէ եւ զՔրիստոս զգեցուցանէ մկրտելոցն:*

ԺԴ. *Վասն զի եւ պատկերաց պատուականից[1] Քրիստոսի եւ Աստուածածնին եւ ամենայն սրբոց ոչ երկրպագանեն, այլ*

[5] ունել ԱԲԳ
[6] եկեղեցեաց Ա
[7] կոչէր Բ
[8] բայց ԲԳ
[9] որ] Գ

ԺԱ [1] լինիցի Բ, եղիցին Գ
[2] hակառակորդացն] դիւացն Դ, + նոյնպէս եւ որք մկրտին նախ օծանին ձիթով Բ
[3] այլ զերծանին... Սուրբ Հոգւոյն] Ա
[4] + եւ որք մկրտին նախ օծանին ձիթով, զի մի դիւրըմբռնելի լինիցին ի նոցանէ օծութեամբ ձիթոյն և մկրտութեամբ և շնորհօք Սուրբ Հոգւոյն Ա
[5] յոյժամ] Դ

[6] նախ] ԱԴԵ

ԺԲ [1] յերկինս] ԲԳԴԵ
[2] ասել զսա ԱԲԳԵ

ԺԳ [1] Եղիա ԱԳ
[2] Սարեփթացւոյն] Արեփթացոյն Բ
[3] Դիոնէսիոս Ա

ԺԴ [1] պատկերաց պատուականից] պատուական եւ զսուրբ Ա, պատուական եւ սուրբ պատկերացն ԲԳ

կուռս կոչեն զնոսա: Եւ յանդիմանին ի նոյն ինքն ի Քրիստոսէ, որ զիւր պատկերն ետ Աբգարու[2] եւ Աստուածամայրն զիւր՝ Թովմայի ետ, եւ Ղուկաս առաքեալն եւ աւետարանիչն զՔրիստոսին[3] նկարագրէր[4] եւ դնէր յամենայն եկեղեցիս. եւ արդ[5] Սեղբեստրոս, Մեծն Կոստանդիանոս զպատկերս սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի տեսեալ՝ ի նոցանէ առ[6] զհաւատ եւ զմկրտութիւն[7]:

ԺԵ. *Եւ զի ի ժամու[1] աղօթիցն կամ հաղորդութեանն յեկեղեցիս ոչ մտանեն. այլ փակեալ են բնաւ եկեղեցիք նոցա. մինն[2] միայն մտանէ ի նմա յերիցանցն եւ գաղտ պատարագէ:*

ԺԶ. *Զի օրինադրեալ ոչ բնաւ պահէ զշաբաթ կամ զկիրակէ[1], բայց միայն ի Կաղանդին[2] պահոցն. եւ յայս[3] սակս զՄեծի պահոցն զշաբաթս[4] եւ զկիրակէսն[5] լուծանեն, ուտեն կիթ՝ ոմանք յայտնի եւ ոմանք՝ ի թագստի:*

ԺԷ. *Զյիշատակս սրբոց վկայիցն ոչ պատուեն, այլ օտարք գոն ի նոցանէ:*

ԺԸ. *Եւ զծննդեանն Աստուածածնին եւ զբարձրութիւն խաչին թէպէտ եւ տօնեն, այլ ոչ յիւրում աւուրն, այլ երբեմն[1] յետոյ կամ յառաջ փոփոխելով:*

ԺԹ. *Եւ զի հռչակելի է նոցա պահքն, որ կոչեն Առաջաւոր, զոր կարգեաց մեծ ժողովն Մանծկերտի[1] եւ Թէոդուպոլսոյն[2] վասն զի անդ ժողովեալ քարոզեցին զայս[3] պահս եւ զկնի պահոցն հերձեցան յամենայն եկեղեցեաց Աստուծոյ եւ յուղղափառ[4] հաւատոյ, եւ ի նախնեացն իւրեանց[5] ի Սրբոյն[6] Գրիգորէ[7] եւ յայլոցն, որք ԴՃ. եւ Կ. ամ ուղղափառք էին, և եղեւ պահս այս ոչ ի միաբանութիւն, այլ ի քակտումն[8] նոցա հաւատոյ. իբրեւ զպահք Եզաբէլի, որ կարգեաց պահս առ[9] ի*

[2] Աբգարու] Արջամայ Դ
[3] զՔրիստոսի Ա
[4] նկարագրէր] նկարէր ԲԳԴ
[5] արդ] ԱԴԵ
[6] էառ ԱԴԵ
[7] զմկրտութիւն] զփրկութիւն ԳԵ

ԺԵ [1] ժամ Դ
[2] մին Դ

ԺԶ [1] զկիրակէի Ա
[2] Կաղանդէն Ա
[3] այս Դ
[4] զշաբաթն Դ
[5] զկիրակէն Բ, զկիրակին Դ, զկիրակիսն Ե

ԺԷ.

ԺԸ [1] երփեմն Բ

ԺԹ [1] Մանազկերտի Դ
[2] Թէոդուպօլսոյն ԱԲԳ, Թէոդուպոլսին Դ
[3] այս Բ
[4] ուղղափառ ԱԴԵ
[5] իւրոց ԱԴ
[6] սրբոյն] Բ
[7] Գրիգոր Լուսաւորչէ Բ
[8] քատումն Բ
[9] առ] Ա

հեղուլ զարիւն[10] Նաբրովթայ ի տարապարտուց, զոր հայհոյէ ի բազում[11] գիրս Յոհան Ոսկեբերան[12], ասելով. Ո՜վ պահք, բաժին նենգութեան, տուն ագահութեան: Նոյնպէս եղեւ այս պահք ազգին Հայոց. ոչ յաղագս սրբութեան պահեալ եղեւ, այլ յաղագս հերձման[13] յամենայն ուղղափառաց զանձինս: Եւ այնպէս պնդապահ[14] սահմանեցին, որպէս զի անձինք անմեղաց այնպէս երկնչին ի նմանէ, որպէս ի բարկութենէ Աստուծոյ: Այլ եթէ[15] հարցանէ ոք զնոսա[16] յաղագս այնմ պահոց, թէ զի՞նչ խորհուրդ է, այլք այլ ինչ ասեն, եւ այլք՝ այլ. եւ ամենեւին սուտք եւ օտարք են ի միմեանց բանք նոցա, եւ հակառակ միմեանց գոլով, ոչ ամաչելով ի Սողոմոնէ, որ ասէ. Եթէ որ յուսայ ի[17] սուտթիւն, նա զհողմունս արածէ:

Ի. *Զի զպանրուտոյն, զոր առին[1] քրիստոնեայք ի Սեղբեստրոսէ յաղագս նախասրբութեան[2] պահոցն, եւ ամենայն հարք եւ ժողովք ընկալան եւ հաստատեցին, սոքա ի նոյն ժողովն Մանծկերտի[3] լուծին[4]:*

ԻԱ. *Եւ զի արհամարհեն[1] զաստուածային պատարագն եւ ոչ ունին հանդերձ պատարագի[2] խորհրդականս, ընդ հնոյն նորոյ[3] աւանդութեանցն քահանայական զգեստիցն, զոր սահմանեաց Մովսէս. առին առաքեալքն զերկնաւորացն գօտի օրինակ, որպէս ասաց Սեղբեստրոս հայրապետն. Եթէ փիլոն շրջապատէ իբրեւ պարիսպ զամենայն անդամս մարմնոյն՝ նշանակել ի ներքուստ պահել զխորհուրդս մտացն երկիւղին Աստուծոյ եւ ի միտս խօսել ընդ Աստուծոյ: Իսկ սոքա իւրաքանչիւր[4] իւրովք[5] հանդերձիւքն, որով քաղաքավարի եւ ննջէ, եւ գործէ, նովաւ[6] մտանէ ի խորանն պատարագել. և եպիսկոպոսք, եւ առաջնորդք, եւ վարդապետք նոցա ոչ միայն զի ոչ բացաւ գլխով[7], ըստ առաքելոյ, այլ երիս[8] դնելով զգտակս ի գլուխն՝ այնպէս պատարագեն:*

[10] զարիւնն Բ
[11] բազումս + եւ Բ
[12] Ոսկեբերանն Ա, Ոսկիբերանն Բ
[13] հերձուման Ա
[14] պնդապահս ԱԲԳԴ
[15] թէ Ա
[16] զնոսա] ընդ ԲԳ
[17] ի] Ա

Ի [1] առնեն ԴԵ
[2] նախսրբութեան ԴԵ
[3] Մանազկերտի Դ
[4] լուծան ԱԲԳ

ԻԱ [1] արհամարհին Բ
[2] պատարագին ԱԲԳ
[3] նորս Ա
[4] իւրաքանչիւր սոքա Բ
[5] իւրով ԱԲԳ
[6] նովին ԱԲԳ
[7] բացագլխով ԱԳ
[8] երեսս Դ

ԻԲ. *Վասն զի ի[1] Մեծի Եշաբաթին, ի ժամու ընթրեաց Տեառն, ուր[2] հաղորդութեան[3] կարգ է ամենայն քրիստոնէից, սոքա[4] ոչ հաղորդին[5]:*

ԻԳ. *Եւ զի բոլորովիմբ[1] Հրէից նման են, զի կատարեն զպասեք իւրեանց Զատկին տարեւոր գառամբ. զսեամս տանն եւ զճակատս արեամբ օծանելով[2] խորովեալ ուտեն նախ զայն ի Զատկին եւ ոչ հաղորդին ի մարմնոյն[3] Քրիստոսի:*

ԻԴ. *Եւ զայս եւս առնեն ըստ օրինացն Հրէից գարշելի զոհս. զի բերեն զարջառս կամ զոչխարս եւ զարդարեն կարմիր եւ սպիտակ բուրդս ներկեալս, կապելով յեղջիւրս նոցա եւ միրգս[1] զանազանս՝ կախեն ի նմա եւ մոմեղէնս ի մէջ եղջերացն եւ շուրջառ ձգեն ի վերայ[2] եւ բերեն ի դրունս[3] եկեղեցւոյն եւ տան նմա աղ օրհնեալ յօրինակ մտաց եւ օծանեն իւղով[4] զանդամս նոցա[5] եւ այնպէս զենեալ կերիցեն[6] եւ այնիւ ասեն ունել[7] զթողութիւն մեղաց կենդանեաց եւ մեռելոց. եւ վասն որոյ ոչ զենցի՝ ոչ ունի թողութիւն, եւ ոչ թողեսցի[8] օրհնութեամբ եւ ոչ նմա պատարագ լինելոյ հնար է:*

ԻԵ. *Եւ վասն զի կենդանեացն ոչ առնեն պատարագ եւ յանդիմանին ի Քրիստոսէ, որ յաղագս կենդանեացն[1] եւ որ դեռ եւս լինին եւ լինելոց են, մատոյց զիւր անձն պատարագ եւ հրամայեաց մատուցանել վասն ամենեցուն ի թողութիւն մեղաց:*

ԻԶ. *Եւ զի անհաւատք գոլով այսորիկ՝ եթէ արիւնն Քրիստոսի հեղաւ վասն թողութեան մեղաց աշխարհի, ասեն՝ Եթէ[1] ոչ հեղցի արիւն անասնոց յաղագս հոգւոցն[2] հանգուցելոցն[3], ոչ լինիցի[4] թողութիւն մեղաց նոցա[5] եւ ոչ մտանեն[6] ի հանդիստն պատարագաւն մարմնոյն եւ արեանն Քրիստոսի:*

ԻԲ [1] ի] Բ
[2] ուր] որ ԴԵ
[3] հաղորդութիւն Ա
[4] նոքա ԱԳԴԵ
[5] հաղորդին] ունին հաղորդութիւն Բ

ԻԳ [1] բոլորովին Բ, բոլորովիմ Գ
[2] արեամբ օծանելով] ԱԲԳ
[3] զմարմինն ԱԳ, զմարմնոյն Բ

ԻԴ [1] միրքս ԱԲ
[2] եւ շուրջառ ձգեն ի վերայ] ԱԳԴԵ
[3] դրունս] դուրս ԴԵ
[4] եղով Ա
[5] նորա ԱԲ
[6] կերիցեն] ուտեն ԴԵ
[7] ունել] լինել Ա
[8] թողցի ԴԵ

ԻԵ [1] կենդանեաց Դ

ԻԶ [1] թէ ԴԵ
[2] հոգւոյն ԱԳԴԵ
[3] հանգուցելոյն ԲԴԵ
[4] լինի ԴԵ
[5] նորա ԱԲԳԴԵ
[6] մտանէ ԱԲԳԴԵ

* * *

Զայսորիկ զամենայն օրինադրեցին [ի] ժողովն Մանծկերտոյ[7]. զոմանս ի սոցանէ[8] առեալ ի Հրէիցն՝ օրէնս գրեցին, զոմանս ի Նեստորական Ասորեաց[9], եւ զոմանս ի[10] Յակոբիկ Ասորեաց, զոմանս ի Պարսից եւ զոմանս ինքեանք չար մտածելով՝ կարգեցին[11] իւրեանց կարգս նորս եւ խոտորնակս՝ հեռի եւ օտար յամենայն գրելոցն օրինաց եւ կարգացն Աստուծոյ:

Այլ մեր յառաջին բանսն եկեալ գլուխս, առ իւրաքանչիւր ի սոցանէ ասացեալ բանս պատասխանի արասցուք առ իւրաքանչիւր ի նոցանէ[12], զոր խնդրելով ոք ընթեռնու եւ հասու լեալ գիտասցէ:

[ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ Ի ԹԱՐԳՄԱՆՉԷ]

Ա. Եւ արդ՝ ընդ հասարակաց այսու ամենայնի դարձեալ ասացից բանս, ոչ օտարս կամ նորս մտածելով, եւ ոչ զիմոց[1] մտացս[2] ծնունդ կամ զհաճելի ինչ, այլ զամենայն հնոց եւ նորոց ընտրելոց հարցն զմտածութիւնս համառօտաբար յիշատակեալ[3] փոքր ի շատէ կարգեցից:

Առ որս խառնակութեամբ միացեալս զերկու[4] բնութիւնս Քրիստոսի ասելով դաւանեն[5] հայհոյիչ ազգն Ասորւոց եւ Հայոց առ առաջինսն յառաջագոյնս[6] ասացեալ բանս. եւ այն սոցա երկուցն հասարակաց[7] դիմադրութիւն է: Իսկ առ սոսա[8] արդեօք իբրեւ առ դժնդակ հիւանդութիւնս ինչ յորժամ կամեցայ հրապարակագոյժ[9] առնել եւ յանդիմանել, պարտ վարկայ պատերազմակից[10] ինձ առնելով զբանս մեծանուն եւ հռչակելի հօրն Գրիգորի Աստուածաբանի՝ առ ի քակտումն այսպիսի[11] չար հերձուածոյս: Վասն զի են նոքա ընդունողս սորա աստուածախօս բանիցն եւ ուսանին զնոսա, որպէս եւ ասեն նոքա:

Եւ արդ՝ այսպէս որպէս զի զերկու[12] տէրունական տօնս Քրիստոսի՝ զԾնունդն ասեմ եւ զԼուսաւորութեանն, որպէս զեր-

7 Մանազկերտոյ Դ
8 նոցանէ Ա
9 Ասորւոց Դ
10 ի] ԳԴԵ
11 կարգին ԴԵ
12 Առ իւրաքանչիւր ի նոցանէ] ԴԵ

Ա 1 զիմոցս Ա
2 մտաց Դ
3 յիշատակել ԲԳ
4 զերկուս ԱԳ
5 դաւանին ԴԵ
6 յառաջագոյն ԳԴ
7 հասարակաց] Բ
8 սոցա Դ
9 հրապարակագուժ ԳԴԵ
10 պատերազմակից] պարզամտից ԴԵ
11 այսպիսի] սոցա ի ԲԴԵ
12 զերկուս ԱԲԳ

կու[13] բնութիւնս նորա, նոյնպէս եւ զնոսա խառնակեն, որպէս զմի եղեալս, եւ ոչ ինչ օրինակս[14] բաժանման ունելով յանձինս իւրեանց, զորս ի մի կատարեն՝ միանգամայն անմտաբեր տօնելով. եւ վկայ բերեն զսուրբ հայրն զԱստուածաբան[15], իբրեւ թէ եւ նա միաբանի ընդ մեզ այսպէս[16] ասելով՝ ի բանս տօնականս: Այլ մեք զի ցուցցուք[17] նոցա զԲանին Աստուծոյ մարմնական տնտեսութեանն ոչ բարւոք[18] գիտել[19] զխոստովանութիւն եւ զխորհրդոցն[20] նոցա թիւրալուրն տօնախմբութիւն: Եւ ոչ զայսոսիկ[21] միայն, այլ բազում մասամբք ի բազում կողմաց իբրեւ ի բազում գլորեալ եւ գթեալ ի հերձուածս գոլով՝ զամենայն նոցա առաջի դնէ զյանդիմանութիւն: Եւ այսուհետեւ բարձր քարոզութեամբ սկիզբն արասցուք՝ բանս ընդ նոսա[22] խօսելով:

Պարտ էր ձեզ, ո՛վ իմաստունքդ Հայոց, միաձայն լինել[23] համաշխարհական միոյ կաթուղիկէ եւ առաքելական Քրիստոսի եկեղեցւոյն, որ ի ծագաց երկրէ[24] մինչեւ ի ծագս նորա շինեալ է, եւ ի մի եւ ի նոյն նոցա ուղղափառութիւնն Բանին Աստուծոյ տնտեսութեան եւ մարմնաւորութեան համակամ ընդ նոսա գոլով, եւ ըստ բնութեանցն նորա՝ անխառնակելի զնա խոստովանիլ ըստ[25] աստուածութեանն և ընդ[26] մարդկութեանն, եւ ոչ բաժանմամբ նոցա՝ հերձումն նոցա ի միմեանց, եւ ոչ միաւորութեամբն խառնակումն եւ լուծումն ի միմեանս՝ նմանութեամբ Եւտիքեայ[27] եւ Սաբելլիոսի[28] ասել, այլ ճանաչել զՔրիստոս կատարեալ աստուած եւ կատարեալ մարդ գոլով: Նոյնպէս եւ երկու բնութիւնս ներգործականս[29] յետ միաւորութեանն ունել. վասն զի անփոփոխելի միաւորեցան բնութիւնքն իւր ընդ միմեանս, եւ ոչ մի ոք ի նոցանէն եթող ինքնութիւն, կամ յոչ էութիւն դառնալով կամ՝ յերկուցն, որպէս դուք ասէք, մի խառնեալ բնութիւն լինելով. վասն զի խառնեալ բնութիւն, որպէս Աստուածաբան հայրն ասէ. Եւ ոչ միոյ ի նոցանէ, յորոց խառնեցաւ, կարող է հա-

13 զերկուս ԱԲԳ
14 օրինակս] Ա, օրինակս] օրէնս Բ
15 Աստուածաբան ԲԴ
16 այսպէս] այս սոսա Ա
17 ցուցուք Բ
18 բարիոք ԱԳ
19 գիտել] գտեալ Ա
20 զխորհրդոյն ԲԳԴԵ
21 զայսոքիկ ԱԳ
22 նոցա ԲԳԴԵ
23 լինիլ Դ

24 երկրի ԴԵ
25 ըստ] ընդ ԴԵ
26 ընդ] Գ
27 Եւտիքի Ա
28 Սաբէլիոսի Ե
29 ներ զաստուածականս Բ

մագոյ լինել, որպէս յայլոց ա՛յլ լեալ կատարելութիւն: Եւ որպէս մարմինն ի չորից նիւթոց խառնեալ գոլով՝ յայլոց այլ իմն ծանուցաւ եւ ոչ ումեք ի նոցանէ համագոյ է, զի ոչ միայն երկիր է կամ ջուր միայն եւ[30] կամ օդ կամ հուր միայն, այլ յայլոց այլ իմն է, նոյնպէս եւ Քրիստոս եթէ մի խառնեալ բնութիւն է, ոչ Հօր է համագոյ եւ ոչ մեր: Եւ զի որպէս դուք ասէք, մի խառնեալ բնութիւն եղեւ Քրիստոս յետ միաւորելոյն ի պարզ բնութենէն փոխեցաւն[31] ի խառնեալն բնութիւն, եւ յայնմ հետէ ոչ Հօր համագոյ է, զի Հայր[32] պարզ է եւ ոչ է համագոյ խառնեալն, եւ ոչ[33] մօր է համագոյ, վասն զի խառնեալ է. եւ մայր ոչ է խառնեալ, այլ մարդ է բնութեամբ: Եւ այսպէս ըստ ձեր ոչ ճանաչի Աստուած եւ ոչ մարդ, որպէս ոչ համագոյ[34] նոցա լեալ բնութեամբ, այլ Քրիստոս միայն. եւ լինիցի անունն Քրիստոսի՝ ոչ անձինն, այլ բնութեան նորա անուն:

Եւ արդ՝ եթէ համագոյ Հօր է Քրիստոս իւրն մի խառնեալ բնութեամբն, ապա եւ Հայր խառնեալ է բնութեամբն եւ համագոյ է մարմնոյն Քրիստոսի, զոր եւ մտածել անկա՛րծ[35] է. զի եթէ մարմնոյն նորա համագոյ է Հայր[36], եւ ամենայն մարդկան համագոյ է[37], եւ մի գոյութիւն է Աստուծոյ եւ մարդկան, եւ թէ այս ոչ է, ապա որպէս կարող է որդի միով բնութեամբ Հօր եւ մեր համագոյ լինել, կամ որպէ՞ս կարող է միեւնոյն բնութիւն անեղ եւ եղական լինել, անմահ եւ մահկանացու, անպարագրելի եւ պարագրելի:

Եւ արդ՝ որք[38] մի բնութիւն ասէք զՔրիստոս[39] կամ[40] պարզ ասէք զնա եւ կամ[41] սոսկ Աստուած խոստովանիք եւ առ աչօք համարիք[42] զմարդկութիւն[43] նորա եւ կամ լոկ մարդ ասէք ընդ[44] խելագարին Նեստորի եւ որպէ՞ս ճանաչել կարելի է զմի եւ զնոյն անձն կատարեալ աստուածութեամբ եւ կատարեալ մարդկութեամբ: Եւ կամ երբ ասէք երկու[45] բնութիւնն Քրիստոսի, որք մի խառնեալ բնութիւն[46] ասէք յետ միաւորութեանն եւ եթէ նախ քան զմիաւորելն մի

30 եւ] ԴԵ
31 փոխեցաւ ԱԲԳԵ
32 Հօր ԱԲԳԴԵ
33 ոչ] ԲԴ
34 համագոյն ԱԳ
35 անկարծ] անկար Ա
36 Հօր Դ
37 + Հայր ԲԳ
38 որք] Բ
39 ի Քրիստոս Դ
40 կամ] Ա
41 կամ] ԲԳԴԵ
42 համարիք] համարժէք ԳԴ
43 մարդկայնութիւն Ա
44 ընդ] ըստ ԴԵ
45 երկուս ԱԳ
46 բնութիւնս ԱԳԴ

բնութիւն էր Քրիստոս, այս յայտ է, իսկ զկնի միաւորութեանն երկու բնութեամբ[47] ծանուցեալ եղեւ եւ միով անձնաւորութեամբ. այլ անձն եւ նո՛յն բնութիւն[48] ոչ միեւնոյն են. զի այլ է բնութիւն եւ այլ[49]՝ անձն: Վասն զի էութիւն եւ գոյութիւն [եւ][50] բնութիւն մի է. զի ե՛ւ նոյն են, ե՛ւ անհատք են. ոչ ընդ նուազելն նուազին, այլ մի կոչի ի վերայ ազգին: Իսկ սեռ եւ անձն եւ տեսակ առանձինն է եւ իւրաքանչիւրոյն ի բնութիւն այլ եւ այլ ասին[51] եւ թուին:

Եւ արդ[52], զբնութիւն ամենայն մարդկան մի ասեմք[53], որ ի հոգւոյ եւ ի մարմնոյ խառնի. իսկ զանձինս նոցա եւ սեռն՝ բազումս. եւ ի թուել անձանցն[54] ոչ թուի բնութիւն, զի անհատ է. եւ զի թէպէտ եւ ի մի բնութենէ, ի հոգւոյ եւ ի մարմնոյ խառնեալ են Պետրոս եւ Պօղոս, որպէս ասացեալ է, այլ եւ այլ են անձամբ, զի այլ է Պետրոս եւ այլ է Պօղոս, ի բաժանմունսն անձնաւորութեանցն վասն հասարակաց գոլ տեսակին՝ մի բնութիւն լինել տեսանին: Երկու բնութիւնս զՔրիստոսն Աստուած մեր եւ մի անձնաւորութիւն խոստովանելի է, զի ոչ է կարողութիւն հասարակաց ունողաց զտեսակն: Եթէ զնոցա միաւորութիւն ասի ունել Քրիստոսի՝ վասն զի այլ Քրիստոս ո՛չ է եւ ոչ եղեալ է եւ ոչ լինիցի այլ յաստուածութենէ եւ ի մարդկութենէ. զի յաստուածութեանն եւ ի մարդկութիւն Աստուած կատարեալ է, նոյն եւ մարդ կատարեալ. եւ ոչ ասելի է մի բնութիւն զՔրիստոս, այլ մի անձ: Վասն զի յերկուց կատարեալ բնութեանց, յաստուածութենէ եւ ի մարդկութենէ եղեւ ի նմա միաւորութիւն. ոչ խառնակութեամբ եւ ընկղմամբ եւ չփոթմամբ[55], որպէս Դէոսկորոս եւ Սեւերիոս ասեն. եւ ոչ[56] դիմօք եւ ինքնութեամբ կամ պատուելութեամբ կամ խորհրդով միութեամբ, կամ[57] պատուակցութեամբ եւ համանունութեամբ եւ հաճոյութեամբ, որպէս ասէ Նեստոր եւ Դիոդորէ եւ Թէոդորէ Մոպսուեստացի[58], այլ միաւորութեամբ, այսինքն մի անձնաւորութեամբ, անփոփոխելի եւ անխառնակելի, անշրջափոխելի եւ անբաժանելի եւ անխզելի: Եւ զի Որդւոյն[59] Աստուծոյ մարմնաւո-

47 բնութիւն ԴԵ
48 բնութեամբ ԳԴ
49 + է ԱԲ
50 եւ] ԱԲԳԴԵ
51 ասեն Դ
52 արդ] այդ ԴԵ
53 ասէք Դ
54 ի թուել անձանցն] Բ
55 չփոթութեամբ ԴԵ
56 ոչ] Բ
57 կամ] եւ ԳԴ
58 Մէմփուստացի Դ, Մոպսուեստացի] ԱԲԳԵ
59 Որդին Դ

րութիւնն՝ միաւորութիւն յերկու կատարեալ բնութիւնս ի մի անձնաւորութիւն միաւորեալս պարտ է խոստովանել[60], զի զմի[61] եւ զնոյն անձն ասելով աստուածութեան եւ մարդկութեան նորա: Եւ ոչ այսու միայն, այլ և զերկու[62] բնութիւնս ամբողջ պահելով զինքն[63] զկնի միաւորութեանն, այլ[64] ուրոյն եւ բաժանեալս դնելով զիւրաքանչիւր, այլ՝ առ միմեանս միաւորեալս յանձն իւր աստուածային եւ մի անձն Որդւոյ, որ գոյութեամբ միաւորեցաւ ընդ մարմնոյն ճշմարտութեամբ եւ ոչ առ աչօք:

Իսկ գոյութեամբ ասելով՝ ոչ թէ զերկու[65] բնութիւնս ի մի խառնեալ բնութիւն յեղեալ եւ խառնակելով մի լեալ ասեմք, այլ իբրեւ ընդ միմիեանս սքանչելապէս եւ ճշմարտութեամբ միացեալս, ի մի խառնեալ անձն Բանին[66] Աստուծոյ եւ անխառնակելի պահեալ էական ինքնութեանց եւ բաժանմանց նոցա:

Բ. *Զայսպիսի նոր եւ զանճառելի միաւորութիւն եւ զխառնումն Աստուածաբան Գրիգոր զարհուրեալ ասէր. Եւ եկեալ Աստուած հանդերձ առեցելովն, այսինքն մարմնով, այսինքն միանձն յերկուց ընդդիմակացն, ի հոգւոյ ասեմ եւ ի մարմնոյ, յորոց[1] մինն աստուածացոյց եւ մինն աստուածացաւ: Եւ աստ Աստուած ասէ եւ առեալ[2] եւ մի յերկուց, եւ աստուածացուցիչ եւ աստուածանալի[3]: Վասն զի աստ չորս անգամ երկուս ասէ, եւ մի անգամ՝ մի: Վասն որոյ սոսկացեալ ասէ. ո՞վ նոր[4] խառնմանս, ո՞վ սքանչելի խառնուածոյս: Նոր եւ[5] սքանչելի անուն է. նոր՝ զմիանալն անձին բանին ընդ թանձրութիւն անդամոց մարմնոյն, եւ լինելի[6] սքանչելի նո՛ր մի խառնեալ անձն: Եւ զսքանչելիս զպահեալն ասէ. գոյութիւն եւ բնութիւն իւրաքանչիւրոցն, աստուածութեանն եւ մարդկութեանն, անշփոթելի եւ անխառնակելի եւ մի խառնեալ անձն, որով ծանուցեալ եղեւ Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ, մի եւ նոյն: Եւ արդ՝ նոր եւ[7] սքանչելի կոչեաց իբրեւ զանխառնակելիս, վասն զի ո՛չ իբրեւ[8] գինի եւ ջուր ընդ միմեանս խառնեալ, այնպէս խառնակեցան բնութիւնքն, նոյնպէս խառնակեցան աստուածային եւ մարդկային բնութիւն Բանին, այլ իւրաքանչիւր բնութիւնն ի նոր եւ սքանչելի խառնումն ընդ բաժանմանն եւ զինքնութիւնն իւր[9] պահելով: Եւ վասն այսորիկ եղականն կաց եւ մնաց եղական, եւ անեղն՝ անեղ, մահկանացուն՝ մահկանացու, եւ անմահն՝ անմահ, պարագրելին՝ պարագրելի, տեսանելին՝ տեսանելի եւ անտեսանելին՝ անտեսանելի, որով եւ մինն փայլատակէր սքանչելագործութեամբ, իսկ երկրորդն զանարգանս եւ զարհամարհանս կրէր: Եւ յայսմանէ Տէրն խաչեալ ասի, ոչ ինքն ինքեամբ չարչարելով եւ մեռանելով ըստ ձերում կարծեացդ[10], այսինքն անչարչարելի եւ աստուածային, անսկիզբն եւ անսահման բնութեամբն: Վասն զի որպէ՞ս չարչարելի լինիցի Աստուած, զի անմարմին եւ անմերձենալի է: Վասն զի եթէ ոք ասիցէ, եթէ կարելի՛ է զճառագայթս արեգական[11], որ ի վերայ տնկոյ[12] ծագեալ է, ընդ տնկոյն հատանել, կամ զգրեալն բան ի վերայ թղթոյ՝ ընդ թղթին բեւեռել[13], նոյնպէս եւ ոչ բեւեռել կարող էր ընդ անապական մարմնոյ Բանին Աստուծոյ եւ զանըմբռնելի բնութիւն աստուածութեան նորա: Վասն զի գրեցաւ Բանն Աստուծոյ ի մարմինն՝ իբրեւ ի նոր իմն տոմս[14], այսինքն ի մագաղաթի, եւ խոցեսցի աստուածային բնութիւնն ընդ մարմնոյն խառնեալ[15]:*

Եւ արդ՝ եթէ կարողութիւն է հատանել զճառագայթ արեգականն ընդ տնկոյն[16], կարող է զի եւ անտեսանելին եւ անմարմինն հատցի: Իսկ եթէ ճառագայթն ոչ հատանի, անմարմինն ոչ ըմբռնի ընդ մարմնոյն: Եւ եթէ ընդ խոցեալ մարմնոյն հոգի բանական ո՛չ խոցանիցի[17], Աստուած որպէ՞ս խոցեսցի: Եւ եթէ ի հատանել ջեռեալ երկաթոյ՝ հուր ոչ հատանի, այլ կործանեսցի չարն եւ խցցի բերանն հայհոյիչ[18]. զի անչարչարելի է աստուածութիւնն, եւ ո՛չ չարչարիցի[19] ընդ մարմնոյն իւրոյ: Այլ չարչարեցաւ՝ բայց իբրեւ զմարդ. վասն զի կրկին էր, որպէս ասէ Գրիգոր Աստուածաբան: Վասն զի վաս-

[60] խոստովանիլ ԴԵ
[61] մի ԱԲԳԴԵ
[62] զերկուս ԱԲԳ
[63] ինքն ԱԳ
[64] այլ] ոչ այլ Դ
[65] զերկուս ԱԲԳ
[66] Բանին] Բ

Բ [1] որոց ԲԳԴԵ
[2] առեալ] առաւել ԲԴ
[3] աստուածանալի] աստուած անիմանալի Բ
[4] + եւ Ա
[5] եւ] ԳԴ
[6] լինել ԱԳ
[7] եւ] ԲԳԴ
[8] իբրեւ] որպէս Բ

[9] + մահկանացու եւ անծն անմահ, պարագրելին պարագրելի և անտեսանելին անտեսանելի Բ, վասն այսորիկ... եւ անեղն անեղ] Բ
[10] կարծեաց Ա
[11] զճառագայթ արեգականն Ա
[12] տնգոյ Ա, տնկոյն Բ, տնգոյն Գ
[13] բեւեռեալ Ա
[14] տոմս] տոմն ԱԲԳ
[15] + ընդ մարդկութեանն ԱԲԳ
[16] տնգոյն ԱԳ
[17] խոցեսցի ԱԲ
[18] հահոիչ Գ
[19] չարչարեսցի ԲԴ

տակեցաւ եւ քաղցեաւ եւ ծարաւեցաւ, երկեաւ եւ հոգացաւ[20] եւ արտասուեաց օրինօք մարմնոյն, այսինքն բնութեամբ: Իսկ եթէ իբրեւ զաստուած զի՞նչ այս հաճութիւն Հօր զառաքումն իմասցիս, առ որ[21] վեր առաքէ զիւրսն, եւ իբր սկիզբն պատճառէ[22] զանժամանակն: Եւ զի մի՛ հակառակ Աստուծոյ[23] կարծեսցի վասն զի մատնեալ ասի. այլ եւ ինքն զինքն մատնեաց, գրեալ է. եւ յարեաւ ի Հօրէ եւ համբարձաւ դարձեալ, այնոքիկ՝ հաճութեան եւ ասոքիկ՝ իշխանութեան: Եւ զի չարչարեցաւ կարծես դու եւ զի կամաւ ոչ յաւելուս: Եւ զկնի սորա ասէ. Եւ կալեալ տեսանես եւ խաչեալ եւ խաչակցեալ զիմ մեղս, որպէս [զ]գառն[24] տարեալ լինի եւ իբրեւ զքահանայ[25] տանող գոլով. որպէս մարդ թաղեալ եւ որպէս Աստուած յարուցեալ եւ համբարձեալ, եւ դարձեալ գալոց է փառօք:

Գ. Այսոքիկ Աստուածաբանի[1], որ ոչ չարչարելի զաստուածային բնութիւն ցուցանել աստուածաբանէր: Իսկ մեք որպէս մի զանձնաւորութիւնն[2] իւր գիտեմք եւ ճանաչեմք՝ նոյնպէս զբնութեանցն գոյական բաժանմունսն[3] պահել գիտեմք. այլ որպէ՞ս պահեալ լինէր բաժանմունքն, եթէ ոչ պահեալ լինէին առ միմեանս այնոքիկ, որք զբաժանմունս ունէին, այսինքն՝ բնութիւնքն: Վասն զի բաժանումն բաժանելոց է բաժանումն. և վասն զի համագոյ է Ինքն աստուածութեամբ Հօր և Հոգւոյ[4], իսկ մարդկութեամբ՝ մօ՛ր և ամենայն մարդկան, վասն զի միաւորին բնութիւնքն իւր ի մի եւ[5] նոյն անձն իւր, որով բաժանի նա ի Հօրէ եւ[6] ի Հոգւոյ, եւ ի մօրէ եւ յամենայն մարդկանէ, վասն զի բաժանի ի Հօրէ եւ ի Հոգւոյ անձինն ինքնութեամբ եւ մարմնոյն բնութեամբն, զոր էառ յինքն՝ զի Հայր եւ Հոգի ոչ մարմնացեալ են: Բաժանի[7] ի մօրէ եւ ի մէնջ, զի նա աստուած եւ անեղ գոլով իւրն անապական մարմնովն, եւ մայրն եւ ոչ այլ մարդ եղեւ այսպէս:

Եւ արդ՝ մեր յաղագս երկուց[8] բնութեանցն միոյ աստուածային

20 հոգաց ԴԵ
21 որս Դ
22 սկիզբն պատճառէ] սկզբնապատճառ պատուէ ԱԳԵ, պատճառէ] պատճառ պատուէ Բ
23 Աստուծոյ] Բ
24 գառն] դառն Բ
25 քահանայ ԱԴԵ
Գ 1 Աստուածաբանին Դ

2 զանձնաւորութիւն ԲԳԴ
3 բաժանմունս Դ
4 Հոգոյ] համագոյ Ա
5 + ի ԱԲԴԵ
6 եւ] ԱԲԴԵ
7 բարժանի Գ
8 երկու ԴԵ

անձին Տեառն Յիսուսի Քրիստոսի, որովք համագոյ Հօր և մեր էր, և երկուց ներգործութեանցն, որովք ներգործեաց զամենայն աստուածավայելուչսն եւ զմարմնաւորսն զոր գործեաց եւ կրեաց զամենայն զմերս. եւ վասն երկուց կամացն, զոր ունէր եւ կամէր մի եւ նոյն Քրիստոս, բաւականապէս խօսեցեալ յառաջին բանս մեր[9] եւ [յ]երկրորդն[10] եւ յերրորդն, եւ ի[11] չորրորդն:

Յայսմ հետէ փոխեսցուք[12] յերկրորդ մոլար բանս նոցա[13], որ յաղագս մի ասելոյ[14] զբնութիւն եւ զներգործութիւնն գոլ[15] ի Քրիստոս, եւ զայն Աստուածոյ միայն, ի բաց ջնջելով զմարմնոյ բնութիւն եւ զներգործութիւն. եւ վասն այնորիկ զբնութիւն Բանին ասացին չարչարեալ եւ մեռեալ, եւ յԵրրորդութիւնն առդրեցին[16] զչարչարանս՝ ասելով. Սուրբ, Սուրբ, Սուրբ անմահ, որ խաչեցար. զոր առդրեցին[17] իւրեանց օրէնս Թէոդոսեցիքն եւ Գայիանեցիքն եւ Սեւերիանոսեանքն եւ՛ Պետրո-Դիոսկորոսեանքն, Անգլուխքն: Եւ զայս ունին վկայութիւնս ի գրոց մերոց զմերս հակառակ դնելով մեզ պատերազմին զՊօղոսի[18] առ Կորնթացիսն. «Այլ ասեմք զիմաստութիւն[19] աշխարհիս այսորիկ ծանեաւ, զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զտէրն փառաց ի խաչ հանէին»: Իգնատիոս[20] Աստուածազգեացն ասէ. «Թոյլ տուք ինձ նմանիլ[21] չարչարանաց աստուծոյն իմոյ»: Յուլիոս[22] Հռովմայ եպիսկոպոսն [ասէ][23]. «Հրէայքն, որք[24] խաչեցին զմարմինն, զԲանն խաչեցին»: Եւ մեր առ այս. եթէ զԲանն խաչեալ Հրէիցն, եւ՝ Բանն մեռաւ եւ թաղեցաւ, ապա զերիս աւուր[25] ոչ էր Երրորդութիւն յերկինս, այլ երկու մինչեւ յարեաւ Բանն. ապա թէ մարմնով մեռաւ եւ յարեաւ Բանն, եւ ինքն ի Հօրէ ոչ պակասեաց[26], ապա երկու բնութիւն է ստուգիւ»: Մելի եպիսկոպոսն ասէ. «Մի՛ խոցոտիր մտօք, մինչ արիւն եւ չարչարանք Աստուծոյ լսես»: Կիւրեղ ասէ[27]. «Աստուած խաչեցաւ աջով[28]

9 բան մեր] բնութիւնս մեր Բ
10 երկրորդն ԱԲԳԴԵ
11 ի] ԲԳԴԵ
12 փոխեցաք Բ
13 մոլար բանս նոցա] մի չար բանս նոցա Բ
14 ասելով ԱԲԳ
15 գոլ] ԴԵ
16 առադրեցին ԲԳԴԵ
17 առադրեցին ԳԴԵ

18 Պօղոսի ԱԴԵ
19 + եւ ԱԴԵ
20 Իգնատիէ ԱԳԴԵ
21 նմանել ԲԳԴԵ
22 Յուլիս Ա
23 ասէ] ԱԲԳԴԵ
24 որ ԱԲԵ
25 աւուրս ԱԴԵ
26 պակասեցաւ ԲԴԵ
27 ասէ] ԱԳԴԵ
28 աջով] աջող ԱԲԳԴԵ

իսրայէլականաւ»[29]: Եւ Աստուածաբանն Գրիգոր ասէ[30]. «Փոքր կաթք արեանն Աստուծոյ զամենայն աշխարհիս գնեաց, եւ Աստուծոյ է չարչարանքս[31], Աստուծոյ է խաչն, Աստուծոյ է մահն, Աստուծոյ է յարութիւնն»: Եւ վկայ զայս դնեն զԱստուածաբանին, որ ասէ. «Եթէ ուրացողք Քրիստոսի աստուածութեանն են, եւ կարգին նոքա ընդ աստուածասպան Հրեայսն»:

Եւ զայս ամենայն զմեր հաւատալիս եւ զհարցն մերոց պատասխանիս[32], որ ընդդէմ նեստորականացն[33] ասացեալ է, ի մեզ ձգեն: Ոչ զի կամիմք մեք՝ ոչ ընդունեմք[34] զայն, եւ կամ խրատեն զմեզ, այլ զի խարբալեն[35] բանիւք, զիւրեանց խառնեալ բնութիւնն ծածկել կամելով: Եւ զոր աստուածութեանն դթեն չարչարելի ասելով, զայն ուզեն[36] ծածկել[37] վասն զի ասեն. «Սուրբ Աստուած, Սուրբ[38] հզօր, Սուրբ անմահ, որ խաչեցար, որ մեռար, որ թաղեցար», զի այս յայտնեն, եթէ Աստուած հզօր անմահ, որ խաչեցար եւ մեռար վասն մեր: Վասն զի Բանն Աստուած կոչեն անմահ, որպէս է իսկ անմահ: Նոյնպէս եւ զԲանն որ ասէ, թէ Աստուծոյ է չարչարանքն եւ խաչն, բազում զգուշութեամբ պարտ է իմանալ, վասն[39] զի կարէ քո, որ[40] չար լիցի[41] կամօք, Հօր եւ Հոգւոյ առնուլ զնա. վասն զի Աստուած՝ եւ անմահ են Հայր եւ Հոգի իբրեւ զԲանն: Եւ զայս եւ այլ բազումս բերեն մեզ վկայութիւնս որպէսզի չարչարելի ցուցցեն զաստուածութիւնն Քրիստոսի, լռեցուցանելով զմարմնոյն բնութիւն, զոր Սեւերիոս եւ Թէոդոտոս[42] եւ Գայիոս[43] եւ Դէոսկորոս խորհրդաբանեն, զորոց մեք յանդիմանելոյ աղագաւ զծածկեալ թոյնս[44] դրոշմեսցուք զխաչելութիւնն Քրիստոսի ի թուղթ[45], որպէս եւ տեսի մտօք, եւ գրեսցուք առընթեր. Աստուած Բանն ի վերայ խաչին՝ եւ հոգի բանական եւ մարմին, եւ ապա հարցցուք[46] ցնոսա. Ահա Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ, անապական ասելի անձնաւոր Բանն Աստուծոյ ի վերայ խաչին, եւ որ առանձնաւորութեամբ միայնա-

[29] իսրաելական Բ
[30] ասէ] ԱԲԳԴԵ
[31] չարչարանքն ԱԴ, չարչարանք Գ
[32] պատասխանիքն ԱԲԳ
[33] նեստորականին Բ
[34] ընդունիմք ԱԳԴԵ
[35] խալբալեն Ա, խալբանին Բ
[36] ուզեն] սուղեն Ա
[37] ծածկեալ Ա
[38] + եւ Բ
[39] վասն] ԳԴԵ
[40] որ] Բ
[41] չար լիցի] չարչարիցի Ա
[42] Թէոդիտոս Բ, Թէոդուրոս Դ
[43] Գաիոսս Գ
[44] թոյնս] թիւնս ԱԲԳ, թունս, Դ + նոցա ԳԵ
[45] թուխթ ԱԲԳ
[46] հարցուք Ա

ցեալ էր ընդ ինքն հոգի բանական եւ մարմին, երեքին[47] սոքա ի խաչին են: Արդ՝ ո՞ր ոք ի[48] սոցանէ մեռեալ եղեւ եւ անգործ եւ անշարժ: Եւ քննէ՛ ստուգութեամբ. ոչ զայս հարցանեմ, թէ ո՞ ոք խաչեցաւ. զի Բանն Աստուած է ի խաչին հոգւով եւ մարմնով, այլ զայս հարցանեմ, թէ ո՞ ոք մեռաւ յերի՛ցն, որ ի մի Քրիստոս էր, եւ մեռեալ եկաց զերիս աւուրս: Եւ զայս իբրեւ լսեն ի մէնջ[49] զամօթի հարեալ ասեն պատկառանօք. եթէ մարմինն մեռաւ, եւ մեք ասեմք. միթէ՞ մեռաւ կամ խոցեցաւ կամ հատեալ եղեւ կամ խոցեալ, կամ բեւեռեալ հոգի նորա: Նոքա ասեն՝ Քա՛ւ լիցի: Իսկ մեք ասեմք. Ապա ընդէ՞ր ոչ ամաչէք. վասն զի Հոգի, որ արարած իւր կոչէր[50] եւ համագոյ մե՛ր էր, մնաց անչարչարելի եւ անմահ, իսկ զարարիչն նորա եւ զԲանն Աստուած[51] ասէք. Սուրբ անմահ, որ մեռար վասն մեր, եւ առաւել քան զարարածն նուաստացուցանէք զարարիչն: Զհրեշտակսն ասէք գոլ անչարչարելի եւ անմահ, եւ ոչ ամաչէք զամենեցուն սոցա զարարիչն՝ զա՛յն որ միայն բնութեամբ անչարչարելի է կոչեալ եւ քան[52] զարարածս, զարարիչն տկար եւ արհամարհելի ասել:

Դ. Եւ արդ՝ քննեցէ՛ք զոր ասեմս. հինգ ինչ էին ի վերայ խաչին մինչ բեւեռէին զՔրիստոս: Վասն զի անդ էր[1] արեգական լոյս ի վերայ նորա, որ նախ զբեւեռս եւ զգեղարդն ընդունեցաւ եւ մնաց անմեկնելի ի խաչէն, եւ անչարչարելի մնաց[2] ի բեւեռացն: Է՛ր և ամենասուրբ մարմինն Քրիստոսի եւ բանական հոգին նորա. է՛ր եւ Բանն Աստուծոյ անպարագրելին. է՛ր[3] և փայտ խաչին. չորեքեան սոքա ստեղծուածք գոլով, եւ Բանն Աստուծոյ միայն անստեղծ եւ ստեղծիչն[4] նոցա, եւ[5] մնացին սոքա երկոքեան[6] ստեղծուած գոլով՝ անչարչարելի եւ անմահ. զարեգակն ասեմ եւ զհոգի բանական Քրիստոսի: Եւ եթէ սոքա մնացին անմահ, ապա ո՞րպէս աստուածութիւն[7] նորա մեռանէր, եւ որ չարչարել անհնար էր. վասն զի երկու տեսակաւ[8] անմահ է Քրիստոս, եւ միով տե-

[47] երեք են Բ
[48] ի] Ա
[49] ի մէնջ] Բ
[50] կոչիւր Դ
[51] Աստուծոյ Ա
[52] եւ քան] նք (?) ԴԵ

Դ [1] էր] Բ, էր] է ԳԴԵ
[2] մնաց] Ա
[3] էր] Ա
[4] ստեղծիչն] արարիչ ԲԳԴԵ
[5] եւ] ԳԵ
[6] երկոքին սոքա Ա
[7] աստուածութիւնն ԴԵ
[8] տեսակս Բ

սակաւ մահկանացու, այսինքն մարմնովն:

Եւ արդ՝ եթէ հաւատարիմ համարեալ է քեզ Պետրոս եւ Պօղոս, որք էին սիւնք եւ գլուխք եւ լուսաւորիչք աշխարհի վերագոյն քարոզքն հաւատոց, մի՛ իբրեւ[9] զոք Պետրոս Ծանծալոսն երգես, եթէ Սուրբ անմահ Բանն Աստուած, եւ Հոգի Սուրբ, որ խաչեցար եւ մեռար, այլ՝ իբրեւ զվէմն հաւատոյ Պետրոս ձկնորսն ասա եթէ՝ Քրիստոս չարչարեցաւ վասն մեր մարմնով: Եւ մի՛ զՊօղոս Սամոստացի[10], այլ իբրեւ զՊօղոս Տարսոնացի զՔրիստոս քարոզէ[11] մեռեալ մարմնով եւ կենդանի հոգւով, զի մարմնով մահկանացուաւ[12] եւ հոգւով անմահիւ[13] մեռաւ Քրիստոս. իսկ աստուածութեամբն՝ անմահ գոլով ընդ Հօր եւ Հոգւոյ: Իսկ որք ասեն, եթէ Սուրբ անմահ, որ խաչեցար եւ մեռար վասն մեր, կամ զԲանն Աստուած զանմահն մեռեալ ասեն եւ կամ զանմահ հոգին իւր, այլ յանդիմանէ զնոսա գերեզմանն Քրիստոսի, ո՛չ զԲանն Աստուած մեռեալ ունելով յինքն եւ ոչ զհոգի բանական Քրիստոսի զանմահն նոցա, յորս ուրանան ասել ի Քրիստոս զերկու անբաժանելի եւ զանխառնակելի բնութիւնս: Իսկ մեզ առաջադրեալ[14] պատուական խաչն եւ որ ի նմա գրեալ երիս անուանս, անյաղթելի[15] հալածի՛չ նոցա չար հերձուածոյն լինիցի[16]: Վասն զի հարցեալ մեր, եթէ ո՞վ այսպիսիք, որք պատճառէք զպատճառս թիւրս եւ[17] զպտուղս[18] հերձուածողացն ձերոց բանիցն անուամբ հարցն որոգայթ դնէք անմեղաց, ասացէ՛ք. ո՞ ոք երիցն ի սոցանէն զի՞նչ կրեաց: Յայնժամ թողեալ զամենայն ասեն, եթէ զկնի անճառ միաւորութեանն՝ աստուածացաւ մարմինն, եւ ոչ եւս[19] բնութիւն նորա: Վասն զի այնպիսի եղեն՝ որպէս զայն, որ աստուածացոյց զնոսա Բանն Աստուած. եւ ոչ են յայնմհետէ յիւրն ինքնութիւն, այլ զօրութեամբ վերագոյն զօրաւորին[20] յաղթեցաւ, եւ ամենեւին մի բնութիւն եղեւ Քրիստոս: Վասն զի ընդ նմին խառնեցաւ մարմինն ի խորս մեծութեան աստուածութեանն, որով եւ ինքն աստուածանալով Աստուած եղեւ: Եւ ընդէ՞ր մեզ այ-

9 իբր Բ
10 Սամիստացի Ա
11 քարոզեա ԴԵ
12 մահկանացու Բ, մահկանացուով ԳԵ
13 անմահ ԲԳԴԵ
14 առաջնորդեալ Բ
15 յանյաղթելի Բ
16 լիցի ԱԴԵ
17 եւ] որ ԲԳԴԵ
18 զպտուղս] զպտոյս (զպտոյտս ?) ԲԳԴԵ
19 + կոչեսցին ԱԳԴԵ
20 զօրավարին Բ

սոքիկ, եւ այսպիսիք, ի վերոյ[21] եւ ի ներքոյ եւ այսր եւ անդր քարշեալ լինին բանք, որք բարուք[22] ասացան ի հարցն, եւ չարաչար ի ձէնջ իմացեալ եղեն: Նայեցարուք յառաջի եդեալ խաչն եւ երիս անուանս՝ գրեալս[23] ի վերայ նորա Քրիստոսի, եւ ասացէ՛ք մեզ. մի՞թէ եղեւ Բանն համագոյ մարմնոյն յետ միաւորութեանն. կամ թէ մարմինն Բանին համագոյ եղեւ, մի՞թէ պակասեցաւ մի յերիցուցն[24] յայնցանէ յիւրն ինքնութենէ. մի՞թէ պակասեաց[25] հոգին իւր[26] յիմանալի[27] ինքնութենէ հոգւոյն. եւ կամ թէ եղեւ անպարագրելի մարմինն իւր, կամ մահկանացու եղեւ իմանալի հոգին Քրիստոսի, կամ չարչարելի եւ ցնդելի[28] եղեւ Աստուած Բանն. - եւ ո՛չ երբեք:

Եւ արդ՝ եթէ զկնի միաւորութեանն անփոփոխելի եւ անխառնակելի մնացին նոքա ի Քրիստոս, երկուքն անմահք մնալով, եւ մինն մահկանացու՝ մարմինն նորա: Եւ արդ՝ մի բնութիւն կարող է ասել զնոսա, եւ առ որ ասի խաչեալ, նոյն ի՞նքն ասի մեռեալ լեալ, թէ՞ ոչ: Եւ նա ասէ, այո՛. զի մի է Քրիստոս եւ ոչ երկու. եւ մեք ասեմք՝ բարւո՛ք է[29]: Եւ արդ՝ մինչ ասէք, եթէ Սուրբ անմահ, որ խաչեցար վասն մեր եւ մեռար, ո՞ւմ ասէք, անմահին մեռեա՞լ լեալ. զի թէպէտ եւ զԲանն ասէք, չարաչար ասէք. վասն զի ե՛ւ Աստուած, ե՛ւ անմահ է Բանն. զի թէ զհոգին իւր ասէք անմա՛հ եւ մեռեալ, չարաչար ասէք. զի մահ բաժանումն է հոգւոյ, եւ ոչ մահ: Եւ եթէ զմարմինն իւր ասէք Սուրբ անմահ, եւ մեռեալ լեալ ի խաչին, չարաչար ասէք. զի ոչ անմահ էր ի վերայ խաչին մարմինն. եւ թէպէտ հասարակաց ի մի վասն Քրիստոսի ասէք Սուրբ անմահ եւ մեռեալ, չարաչար ասէք՝ վասն զի անմահ կոչէին զմարմին նորա նախ որպէս ասացաւ: Իսկ մահ օտա՛ր է յանմահ[30] Բանէն, յիմանալի[31] հոգւոյն իւրմէ, իսկ մարմնոյ ոչ է օտար, զորոյ դուք ուրանայք Քրիստոս գոլ բնութիւն: Եւ վասն այսորիկ յամենայն կողմանց հայհոյութիւն է ձեր երգդ[32] եւ ընդ ձեզ հայհոյող են[33], որ գտակ եղեն[34] դմա:

21 ի վերայ ԴԵ
22 բարի ոք Ա, բարիօք Գ
23 գրեալ ԱԳԴ
24 յերիցն ԲԳԴԵ
25 պակասեցաւ ԲԴԵ
26 իւր] ԴԵ
27 իմանալի ԱԳ
28 (բառի տեղը բաց է թողած) Բ
29 բարի ոք ԱԳ
30 անմահ ԴԵ
31 իմանալի Բ
32 երքդ Բ
33 հայհոյողին Դ
34 եղեւ Դ

Ե. Պարտ էր[1] ձեզ հաւատալ ընդ ամենայն եկեղեցեաց զերկու[2] բնութիւնսն Քրիստոսի ի մի աստուածային անձն Բանին միաւորեալս, անխառնակելիս եւ անբաժանելիս, ամբողջ պահեալ[3] ըստ իւրեանցն ինքնութեանցն եւ զնոցա ներգործութիւնս, որովք երեւի Քրիստոսի չարչարելի եւ անչարչարելի, մահկանացու եւ անմահ եւ այնպէս[4] հասու լինել նորա անհասանելի խորհրդոցն[5], եւ ոչ ուրանալ ձեզ մարդկային բնութիւնն, եւ այնպէս յիմարաբար երբեմն Երրորդութեանն դնել զչարչարանս, երբեմն Բանին աստուածութեանն, եւ երբեմն Հոգւոյն Սրբոյ, երբեմն բանական Հոգւոյ: Եւ յորոց ի նոցանէ քննեցի, այլանդակս տալով զպատասխանին յայլ ինչ վազէք բանս:

Այլ զայս գիտել պարտ է, զի Երեք սրբասացութիւն յառաքելոցն և ի հարցն ասին[6] աւանդեալ զսա եկեղեցւոյն Քրիստոսի երգել, զոր մարգարէն ի սրբոցն[7] ընկալաւ, եւ յերկնաւոր զօրացն ի սերովբէիցն եւ ի քերովբէիցն ասացուած, որք ասէին, «Սուրբ, սուրբ, սուրբ, տէր սաբաւօթ[8] լի են երկինք եւ երկիր փառօք քո»: Վասն զի աստուածային զօրութիւնք տէրութեանց եւ իշխանութեանց զսա այսպէս երգեն Աստուծոյ. վասն զի երեք սրբասացութեամբ՝ զերիս վերագոյ աստուածութեանն զանձնաւորութիւնսն[9] ուսուցանեն մեզ, որպէս Աթանասիէ, Վասիլիէ եւ Գրիգոր ասեն: Իսկ միով տէրութեամբ զմի աստուածիշխանական երրորդութեան զգոյութիւնն եւ զթագաւորութիւնն յայտնեն ըստ[10] Աստուածաբանին, որ ասէ, եթէ՝ Այսպէս են սրբութիւնք սրբոցն, զոր սերոբէքն ծածկեն եւ փառաւորեն Երեք սրբասացութեամբ, ի մի աստուածութիւն եւ տէրութիւն ժողովին[11]: Եւ այսորիկ սրբասացութեան հաւատացեալ եկեղեցի Աստուծոյ երգէ հաւատով զՍուրբ Աստուածն Հօր ասելով, այլ ոչ նմա միայն դնելով զանուն աստուածութեան, վասն զի Աստուած քարոզէ զՈրդի եւ զՀոգի Սուրբ: Իսկ զՍուրբ հզօրն Որդւոյ վեր առաքէ՝ ո՛չ պակասեցուցանելով ի զօրութենէն զՀայր եւ զՀոգին Սուրբ: Եւ զՍուրբ անմահն Հոգւոյն Սրբոյ

առդնէ, ո՛չ արտաքոյ անմահութեան կարգեալ զՀայր եւ զՈրդի, այլ ընտանի[12] Հոգւոյն է անմահն. այլ ի վերայ իւրաքանչիւր անձնաւորութեանցն Սուրբ Երրորդութեանն զամենայն[13] անունսն[14] աստուածայինսն պարզաբար եւ ազատաբար բերելով զԱստուած հզօր եւ զանմահն: Եւ այսպէս ասէ ըստ առաքելոյ. «Այլ մի է Աստուած հայր՝ յորմէ ամենայն, եւ մեք ի նմանէ, և մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն եւ մեք նովաւ. եւ մի Հոգի Սուրբ, յորում[15] ամենայն եւ մեք ի նմա»[16]: Զնոյն եւ Գրիգոր Աստուածաբան ասէ[17] եւ յաւելու զայս ինչ, եթէ՝ Յորմէն եւ որովն եւ յորումն ոչ զբնութիւնսն բաժանեն, այլ ի բնութենէն բաժանին: Վասն զի ոչ փոխէր առաջդրութիւնք[18] ու կարգ անուանցն, այլ նշանագրեն զմիոյ անխառնակութիւն բնութեան ինքնութիւնսն. եւ այս յայտ է ի մի ժողովելոյն.

Եւ դարձեալ՝ եթէ ոչ դատարկաբար ընթերցցի[19] զառաքելոյ[20] ասացեալն, որ ասէ. «Եթէ ի նմանէ եւ նովաւ, եւ ի նոյն ամենայն, եւ նմա փառք յաւիտեան»: Եւ արդ՝ դուք եթէ[21] ի վերայ Սուրբ Երրորդութեան ասէք զսա[22], խաչեալն յիշել ի վերայ Երրորդութեանն բնաւ[23] անտեղի է, իսկ եթէ զՀոգւոյ Սրբոյ ասէք յանմահն, զխաչեալն, եւ այն անտեղի է: Եթէ զՈրդւոյ ասէք, ապա Որդի միջի է նաեւ թէ զանմահ բնութիւն Որդւոյ ասէք, ստէք: Եւ թէ զերեք սուրբ, սուրբ, սուրբ՝ Երրորդութեան ասէք, եւ յետոյ զՈրդի ասէք, դարձեալ այդ չորս անձինք են. եւ թէ զերրորդն Որդւոյ միայն ասէք, դուք զՀայր ու զՈրդի[24] որոշեցիք[25] ի հրեշտակաց, զոր երգն, եւ յաստուածային[26] անուանցն եւ այլ ոչ ոք ընդ բնաւ աշխարհ խորհեցաւ զայդ: Վասն զի այսպէս ունին ամենայն եկեղեցիք Քրիստոս զայս[27] երգ ի ծագաց երկրի մինչև ի ծագս նորա. «Սուրբ Աստուած, Սուրբ հզօր, Սուրբ անմահ, ողորմեա մեզ»:

Եւ դուք մոլիք՝ ընդունելով զաւելեալն բան ի կատաղելոյն

Ե [1] էր] է Բ
[2] զերկուս ԱԲ
[3] պահել Դ
[4] եւ այնպէս] նոյնպէս Դ
[5] խորհրդոյն Բ
[6] ասեն ԴԵ
[7] սրովբէիցն ԱԳ, սրովբէից Բ
[8] սաբաւօթ] զօրութեանց Ա, + զօրութեանց Գ
[9] անձնաւորութիւնսն ԱԲ
[10] ըստ] որպէս Բ
[11] ժողովեն ԴԵ
[12] ընդանի Ա
[13] + զամենայն Բ
[14] անուանսն ԱԲԴԵ
[15] որում Ա
[16] եւ մի տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն... եւ մեք նմա] Բ
[17] + զսա ԱԲԳԴԵ
[18] յառաջադրութիւնք ԲԴԵ
[19] ընթերցայց Դ
[20] առաքելոյ Բ
[21] եթէ դուք ԴԵ
[22] + բնաւ ԴԵ
[23] բնաւ] ԴԵ
[24] զՈրդի] զՀոգի Ա, + դուք Բ
[25] որոշեցէք ԱԲ
[26] աստուածային Բ
[27] զայն ԲԴԵ

Պետրոսէ ասացեալն, որ[28] իբրեւ զչորրորդ դէմս յաւել զՈրդին Աստուծոյ, զկնի Երրորդութեանն, ա՛յլ զհզօրն ասելով, եւ ա՛յլ՝ զանմահն, խաչեալ եւ մեռեալն, որպէս Նեստոր, որ խաչեցեալ քարոզեաց զԵրրորդութիւնն: Այլ փախերո՛ւք յայսպիսի օրինաց, զի Հայր եւ Հոգի ոչ մարմնացեալ են, եւ ոչ չարչարեալ, այլ Որդի միայն, որ անձնաւոր զօրութիւն Աստուծոյ Հօր:

Եթե պարտ էր ձեզ յաւելուլ ինչ զխաչէն, ապա ի միջինն, ի հզօրն պարտ էր, թէ սուրբ հզօր որ խաչեցար. եւ թէպէտ եւ դժպիհ[29] է, այլ ունէր ձեզ տեղի[30] պատասխանւոյ: Իսկ զանմահն զՀոգին Սուրբ խաչեալ ասել բնաւ աններելի է. զի Հայր եւ Որդի ընդ նմա չարչարելի ասի, զորոյ յիշելն հայհոյութիւն է: Այլ դուք սրբեցէ՛ք զորոմն չար հերձուածոյն եւ ընդ ամենայն աշխարհս[31] միաբանեալ[32] ասացէք. «Սուրբ Աստուած, Սուրբ հզօր, Սուրբ անմահ, ողորմեա՛ մեզ», զի ծանիցեն զիւրեանցն երգ վերին զօրքն, զոր անդադար երգեն անլռապէս Սուրբ Երրորդութեանն միոյ տէրութեան եւ երգակից լինիցին[33] ձեզ յայս աստուածային երգաբանութիւն:

Զ. Ի բաց ձգելով ձեզ զամենայն հերձուածս, որով ըմբռնեալ էք, եւ որում մարտակից լինիք, հերձեալ լինելով յամենայն Աստուծոյ եկեղեցեաց, դուք միայն եւ Յակոբիկ Ասորիք ունելով զսոսա, զամենայն հերձուածս դուք ի նոցանէ առեալ, ոչ էք ճշմարտիւ[1] մկրտեալ ի Քրիստոս, այլ թիւրք: Այլ վկայ այսպիսի հայհոյութեան, նոքա ստուգիւ ասեն խաչեալ զԵրրորդութիւնն, մի մատամբ դրոշմելով զխաչն, ասեն այս մատն օրինակ Երրորդութեանն է՝ երեք յօդ եւ մի թիւ է: Իսկ ձեր ի ծածուկ ասելով՝ գործով[2] եւ երիս կանգնէք խաչս, մի աստի, եւ մի անտի եւ մի փոքր ի միջի, եւ դնէք յերկրպագութիւն ժողովոյն ձեր, եւ կոչէք Սուրբ Երրորդութիւն:

Եւ արդ՝ զի՞նչ քան զայս յայտնեսցուք ձեզ, որ զԵրրորդութիւնն խաչեալ ասէք: Արդ՝ ասացէք մեզ ո՞ աւանդեաց ձեզ զա՛յդ՝ երիս[3] խաչս կցել[4] և Երրորդութիւն կոչել[5]. յառաքելոցն

---

28 որ] Ա
29 դժպհի ԴԵ
30 տեղի] Բ
31 աշխարհ ԲԴԵ
32 միաբան Բ
33 լինիցեն Բ

Զ 1 ճշտիւ Ա
2 + որով ԲԳԴԵ
3 երից ԱԲ
4 կցեալ Բ
5 + առնել Ա

ոչ է, հայրապետացն ոչ է, ի ժողովոցն ոչ է[6] եւ ոչ յումեքէ[7] ի քրիստոնէից բնաւ լսեալ[8] է, եւ կամ առ ի՞նչ խորհուրդ առնէք, ցուցէք մեզ, եթէ որպէս եւ առնէքդ յանուն Սուրբ Երրորդութեանն կոչէք, զորս եւ խաչեալ ասէք. ապա ոչ երիս[9] մարթի[10] խաչս. մի՞թէ անձն մի եւ բնութիւն մի ասէք զնա. ապա մինն բաւական է խաչ միոյ անձնաւորութեան եւ այն երկուքն զի՞նչ[11] է. մի՞թէ ընդ Քրիստոսի ասէք գոլ զՀայր եւ զՀոգի ի խաչին եւ վասն այնր կցէք: Ստէք, զի Քրիստոս ի միոյ խաչի[12] կախեցաւ, եւ այն[13] բաւական է մի անձանց՝ եթէ մի են երեքն: Եւ[14] ապա՝ թէ[15] Որդւոյ միայն ասէք խաչեալ, եւ զայն աստուածային բնութեամբն, եւ վասն այն լծակցէք[16] զխաչսն, երիս ընդէ՞ր առնէք: Իսկ եթէ զՔրիստոսին եւ զաւազակացն ասէք լծեալս՝ բնաւ ստէք: Նախ՝ վասն այնորիկ[17], զի աւազակաց խաչն ոչ երկրպագելի է, զի մահապարտաց եւ անօրինաց սպանիչ է, եւ Քրիստոսի խաչն մի էր: Եւ դարձեալ՝ աւազակաց փայտին առ ի՞նչ կոչելի է Սուրբ Երրորդութիւնն, զի նոքա ոչ համագոյ Որդւոյ, այլ սպանողք եւ գողք, եւ վատ քան զմարդիկ[18]:

Եւ դարձեալ՝ երկնայինքն եւ երկրայինքս[19] ի մի ժամու[20] հոգւոյն աւանդելոյն Քրիստոսի, միոյ խաչի երկրպագանեն. երկինք սարսելով, արեգակն եւ լուսին խաւարելով, երկիր շարժելով, հարիւրապետն հաւատովն ընդ մի երկիր պագին, եւ աւազակն, զխաչն Տեառն ունելով ի դրախտի անդ, երկիր պագին[21] ի նմին ժամու: Նոյնպէս եւ տէրունական հոգին ի դժոխս[22] խաչիւն էջ, եւ սանդարամետականքն[23] անդ երկիր պագին[24] եւ ձեզ ո՞[25] նշանակեաց եւ Պետրոսի ձերոյ զԵրրորդութեան[26] խաչս, կամ ո՞ ետ ձեզ երկրպագելի զնոսա: Իսկ եթէ զհին օրինակ խաչին ասես, նոքա մի - մի էին,

---

6 է, ի ժողովոցն (ժողովոյն Ա) ոչ է] ԴԵ
7 յումեք ԱԳԴԵ
8 լսել Բ
9 երեք ԴԵ
10 մարդի Բ
11 + ինչ է ԱԲԳ
12 խաչէ ԳԴԵ
13 այդ ԴԵ
14 եւ] Բ
15 թէ] Ա
16 լծակցեմք Ա
17 այնորիկ] ԱԴԵ

18 Եւ դարձեալ... քան զմարդիկ] Բ
19 երկրայինք Բ
20 ժամոյ Բ
21 երկրպագին Գ, երկրպագեն Դ, երկինք սարսելով... ընդ մի երկիր պագին] Բ
22 դժոխսն ԱԲ դժողսն Գ
23 սանդարամետք ԴԵ
24 երկրպագեն ԴԵ
25 ո] ոյ Գ
26 զԵրրորդութիւն ԱԲ

եւ ոչ երիս[27]: Ծառն գիտութեան, որ ի մէջ դրախտին տուողն[28] կենաց եւ մահու, որոյ[29] օրինակ խաչն էր՝ մի էր գաւազանն Մովսէսի, որ գծովն հերձեաց եւ կցեաց դարձեալ, եւ զվէմն աղբիւրացոյց՝ մի էր:

Գաւազանն Ահարոնի, որ ծաղկեցաւ, մի էր: Գաւազան Յակոբայ, որոյ վե՛րայ երկիր եպագ Յովսէփ[30], մի էր, զձեռն իւր, որ օրհնեաց զթոռունսն իւր՝ մի էր: Փա՛յտն[31], որով զտախտակն եհան Եղիսէ՝ մի էր[32]: Փայտն, ուր կախեալ կայր օձն պղնձի, մի էր[33]: Խաչն, յորում խաչեցաւ Որդին Աստուծոյ, մի էր: Եւ եթէ այս ամենայն մի գոլով օրինակաց եւ ճշմարտութեան, ձեզ զի՞արդ պարտ էր մոլար[34] եւ թիւրեալ վարդապետութեամբ զանսահմանելի անուն եւ զբնութիւն Սուրբ Երրորդութեանն ի խաչս եւ ի խաչեալ դրոշմել:

Եւ դարձեալ՝ սուտապատիր[35] խարբալմամբ[36] պատասխանիս եւ դիմադրութիւնս վասն այսորիկ գրել, եւ զանձինս անմեղաց խաբել եւ մոլորեցուցանել ընդունայն: Այլ իմ զայսորիկ կարճ ասելով՝ յառաջադէմն գնացից, զի յաղագս այսորիկ աւանդութեանց զի մի՛ խառնեալ և այլայլեալ բնութիւնս եւ ներգործութիւնս ասելով զՔրիստոս: Եւ այսու աղագաւ զԵրրորդութիւնն խաչեալ ասացին, վասն զի մի բնութիւն է Սրբոյ Երրորդութեանն, եւ զՈրդի հանդերձ մարմնովն մի բնութիւն ասացին. եւ յաղագս այնորիկ զԵրրորդութիւնն ասացին խաչեալ, որոյ նշանակելով զերիս խաչս լծակցելս արարելով, Երրորդութիւն կոչեցին[37], եւ այսպէս ելեալ՝ յամենայն եկեղեցեաց արտաքսուեցան[38], ոչ ունելով ձեռնադրութիւն եւ ոչ մեռոն, եւ ոչ միաբանութիւն[39] ընդ ումեք յառաքելական եկեղեցաց:

Է. *Եւ յաղագս այնորիկ փոքր ինչ ասացից. վասն զի մարմնանալն Բանին Աստուծոյ եւ առնուլն զծառայի կերպարան եւ զբնութիւն նորա՝ նախ քան զխաչելութիւնն իւր մկրտեաց զառաքեալսն իւր ի ջուր եւ Հոգին Սուրբ, եւ ետ նոցա աղօթ զզօրութիւնս[1] եւ զներգործութիւն Հոգւոյն Սրբոյ, եւ առաքեաց զնոսա, զի գնացեալ վարդապետէին զամենայն հիւանդս. եւ ապա դարձեալ յետ յարութեանն իւր ի մեռելոց, մինչ դրօքն փակելօք եմուտ փչեաց ի նոսա անապական իւր եւ յարուցեալ մարմնովն, եւ ասէ. Առէ՛ք զՀոգին Սուրբ, զոր եւ առին տպաւորականաբար, եւ ապա յետ համբառնալոյն իւրում[2] յերկինս, զկնի աւուրց տասանց, առաքեաց զՀոգին Սուրբ հրեղէն լեզուօք, եւ եկեալ նստաւ ի վերայ նոցա բնականաբար, եւ օծ[3] զնոսա եւ աստուածացոյց շնորհօք, եւ իշխանս կարգեաց զնոսա ընդ ամենայն աշխարհս: Պատուիրեաց նոցա՝ սփռել տալով նոցա ձեռնադրութեամբ զՀոգին Սուրբ ընդ ամենայն աշխարհս: Եւ զի Պետրոսի յառաջագոյն ի լերինն յաւուրն խոստովանութեան եւ երանութեան, յորում խոստովանեցաւ զնա գոլ Որդի Աստուծոյ կենդանւոյ եւ երանեցաւ[4] յայն սակս, զի Հօր յայտնութեան արժանի եղեւ, եւ առ 475*
զփականս արքայութեան, եւ հիմն և հաստատութիւն եղեւ եկեղեցւոյ Աստուծոյ եւ առ[6] հրաման կապելոյ եւ արձակելոյ, յայնմհետէ սա՛ ձեռնադրեցաւ[7] ի Քրիստոսէ առաջին եպիսկոպոս ի վերայ ամենայն երկրի: Իսկ առաքեալքն՝ սպասաւորքն Բանին, որք էին առաքեալք նորա եւ վիճակեալ զամենայն աշխարհ, իշխան կարգեցան նմա ի Քրիստոսէ եւ քարոզք եղեն ճշմարիտ հաւատոյն, զորս՝ մինչ առաքէր ի քարոզութիւն, ասէ ցնոսա. «Գնացէք աշակերտեցէք զամենայն հեթանոսս, եւ մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ուսուցէք նոցա պահել զոր միանգամ պատուիրեցի ձեզ»:

Սոքա ամենեքեան զկնի երանելոյն եւ քարոզելոյն բանին[8] ի հեթանոսս, իբրեւ ընկալան զբանս[9] նոցա՝ ժողովեցան միանգամայն[10] յԱնտիոք եւ արարեալ կոչեցին զամենայն որ ի Քրիստոս հաւատացեալն էին քրիստոնեայս: Եւ յայնժամ կարգեցին եկեղեցւոյ կանոնս ՁԵ. ի ձեռն Կղեմէնդիոսի[11] գրեալս, եւ զԱղօթս պատարագին եւ զՄկրտութիւն[12] եւ զՁեռնադրութեանց, զԵկեղեցի օրհնել, եւ զՄեռոն, եւ զամենայն միանգամայն կարգա-

[27] երեք ԴԵ
[28] տւօղն ԴԵ
[29] որ] որոյ ԴԵ
[30] Յովսէփու ԱԳ, Յովսէփ] Բ
[31] զփայտն Ա
[32] փայտն] մի էր փայտն Բ
[33] մի էր] Բ
[34] մոլոր ԱԳ
[35] + ըստ ԱԲ
[36] ախարբալմամբ ԱԲԳ
[37] կոչեցին] անուանեցին ԱԲԳ
[38] արտաքսեցան ԲԳԴԵ
[39] միաբանութիւն] մի բնութիւն ԴԵ

Է [1] զօրութիւնս Դ

[2] իւրոյ Դ
[3] էօծ Դ
[4] երանեցաւ] երևեցաւ ԱԳ
[5] էառ ԱԳԴԵ (Բ-ն բնագրի ընդհատման պատճառով այլևս չի մասնակցում ընթերցումներին)
[6] էառ ԴԵ
[7] ձեռնադրեցաւ սա Ա
[8] բանի Դ
[9] զբանն Դ
[10] միանգամ ԳԴԵ
[11] Կղեմէնդոսի ԳԴԵ
[12] զՄկրտութեան ԴԵ

ւորութիւնս եկեղեցւոյ, զկարգ աղօթից եւ զՏէրունական տօնս, եւ զամենայն սահմանս աւանդեցին: Եւ ապա ձեռնադրեցին եպիսկոպոս յաշակերտացն՝ առաքել յամենայն աշխարհն. եւ առաջին եպիսկոպոս[13] յառաջին եկեղեցին ամենայն աշխարհի, որ է Երուսաղէմ, Տէրն ինքն ձեռնադրեաց զՅակոբոս եղբայր[14] իւր, երկրորդ՝ Պետրոս ձեռնադրեաց զԵւոստոս յերկրորդ համաշխարհական եկեղեցի Անտիոքայ, երրորդ՝ Պօղոս ձեռնադրեաց զԼինոն եպիսկոպոս ի Կլօդիայ ի համաշխարհական եկեղեցին Հռոմայ, չորրորդ՝ զՄարկոս ձեռնադրեաց Պետրոս ի մեծ եկեղեցին Աղէքսանդրիոյ[15], եւ Մարկոս ձեռնադրեաց զԱնիանոս: Հինգերորդ՝ ի համասփիւռ[16] եկեղեցին Եփեսացւոց զՈնէսիմէ[17] ձեռնադրեաց Անդրէաս:

Եւ սոքա ընդ ամենայն աշխարհս իւրաքանչիւր քաղաքի եւ գաւառի ձեռնադեալ եպիսկոպոս, մեռոնիւ առաքեցին ընդ ամենայն աշխարհս՝ Ոստոս[18] ընդ արեւելս մինչեւ իսպառ, Լեւոն ընդ արեւմուտս մինչեւ իսպառ, Անանիոս՝ ընդ հարաւ եւ ի Հնդիկս, Ոնէսիմէ՝ ընդ հիւսիս ի բուն, որով ի Հայս եւ յԱսորիս կարգեցին եպիսկոպոս՝ ի Սեւաստիա, ի[19] Մելտինիաս, ի Սամոսատ եւ ի Կամախ, ի Կելծինիայ[20], յԵդեսիայ, ի Սելեւկիայ եւ[21] ի Տարսուս[22]: Սոքա յառաքելոցն սկսեալ ոմանք յԵփեսոսի[23], որք եւ պահողք եղեն զճշմարիտ հաւատն բազում նեղութեամբ եւ չարչարանօք զամս ՅԼ., խոնարհեալ ընդ ձեռամբ չորից համաշխարական պատրիարգաց, յորս միանգամ եւ մի[24] ճշմարիտ հաւատ ուղղաձեւ:

Ը. Ապա զկնի այնչափ[1] ժամանակաց Գրիգորիոս Պարթեւ Մեծն Հայոց, ուսեալ եւ սնեալ ի Կեսարիայ, հմուտ եղեալ առաքելական աւանդիցն[2] գնացեալ ընդ Տրդատայ[3] ի Մեծ[4] Հայս, ուր ոչ բնաւ լսեալ էր անուն Աստուծոյ և ոչ հաւատոյն Քրիստոսի, եւ անդ բազմազան չարչարանօք, եւ անբաւելի սքանչելեօք, առաւել քան զաւուրս առաքելոցն զորս[5] առնէին, դարձոյց զթագա-

13 առաջին եպիսկոպոս] Ա
14 զեղբայր ԴԵ
15 Աղէսանդրեայ ԱԳ
16 համասփիւռ] Համասիայ Ա
17 զՍէսմէ ԴԵ
18 Վոստու Ա, Վոստոս ԳԴԵ

19 ի] ԱԳԵ
20 Կելիծինիս ԱԳ
21 եւ] ԳԴԵ
22 Տարսոս Ա
23 Եփեսոսի ԱԳ
24 մի] ի ԳԴԵ
Ը 1 անչափ ԱԴԵ
2 աւանդութեանցն ԴԵ
3 ընդ Տրդատոյ] - -Դ
4 Մեծ] Դ
5 զոր] Ա

ւորն[6] եւ զաշխարհն Հայոց[7] ի մոլորութենէ կռոց ի լոյս աստուածգիտութեանն: Եւ դարձեալ եկեալ ի Կեսարիայ Կապադովկացւոց[8], ուր[9] որ էր մի արքեպիսկոպոս Եփեսոսի, ձեռնադրեցաւ ի նմանէ, այսինքն՝ ի Մեծէն Լեւոնդիոսէ, եպիսկոպոս, եւ առեալ ի նմանէ ուխտիւք եպիսկոպոսունս և քահանայս՝ արս[10] ընտրեալս աւելի քան զչորեքհարիւրս. առ[11] եւ մեռոն, եւ գիրքս[12], եւ[13] կարգս, եւ սահմանս աղօթից, տօնից եւ պահոց եւ զամենայն սահմանադրութիւնս եկեղեցւոյ անպակաս բերեալ յարեւելս. եւ եդ դաշինս ընդ եկեղեցին եւ ընդ եպիսկոպոսապետն, երդումն եւ միջնորդ ետ[14] զաջն հօր եւ զտնօրէնութիւնն Քրիստոսի եւ զմկրտութիւնն իւրեանց, եւ զՀոգին Սուրբ, եւ զխաչն տէրունական եւ զչարչարանսն Քրիստոսի, որպէս զի ոչ թուլասցին կամ փոխիցին յաւանդիցն, զոր առին, եւ ոչ հատցին ի ձեռնադրութենէ եւ յորդիութենէ այնմ եկեղեցւոյ: Եւ եկեալ յարեւելս՝ հաստատեցին զամենայն կարգաւորութիւնս Հայոց[15] եկեղեցւոյ կատարելապէս եւ զհաւատսն Քրիստոսի: Եւ պահեալ զնոյն կարգ եւ զնոյն աւանդութիւն ի Սրբոյն Գրիգորէ մինչև ցՍուրբն Սահակ՝ կաթողիկոսք եւթն[16] մեծաշուք պատուով երթեալ ի Կեսարիայ ձեռնադրէին, ի մի էին, եւ ո՛չ դրին ուխտ սոցա[17] Պարթեւեանք մեկնիլ[18] ի հնազանդութենէ այնր[19] եկեղեցւոյ: Նոյնպէս եւ յԵզրայ մինչեւ ի ցՄանծկերտոյ[20] ժողովն պահեալ զմիաբանութիւն: Վասն զի Ներսէս Միջի եւ Յոհան Մայրագոմեցի ուխտադրուժ եղեն յերկիւղէն Պարսից սարսեալք[21] զի ընդ ձեռամբ էին: Իսկ ժողովն Մանծկերտի[22], յայտնապէս ընկեցեալ զձեր կարգ եկեղեցւոյն Աստուծոյ, զամենայն նոր արարեալ ձեր Յոհաննու Օձնեցւոյ[23] եւ Մաշտոցի եւ այլոցն օժանդակացն[24] նոցա:

Թ. Արդ՝ ասացէք մեզ, յառաքելոցն ոչ ունիք, եւ ոչ որք[1] զկնի նոցա էին, և ոչ ի Սրբոյն

6 զթագաւորն] - - Դ
7 Հայոց] - - Դ
8 Կապադոկացոցն Ա Կապադովկացւոց ԴԵ
9 ուր] ԱԳ
10 այրս Ա
11 էառ ԱԳԴԵ
12 գիրք ԴԵ
13 եւ] ի ԴԵ
14 ետ] եդ Ա

15 Հայոց] ԳԴԵ
16 եօթն ԱԴԵ
17 սոքա ԱԳԴԵ
18 մեկնել Ա, մեկնեալ Գ
19 այնր] այնու ԱԳ
20 ցՄանծկերտի ԱԳ, ի Մանածկերտոյ ԴԵ
21 յերկիւղէն Պարսից սարսեալք] - - Դ
22 Մանծկերտի ԱԳ
23 Օձնեցւոյ] Մանդակունւոյ Ա, Մանդակունւոյ ԳԴԵ
24 օժանդակցացն ԳԴԵ
Թ 1 որք] ուրեք Ա

Գրիգորէ, եւ ոչ որք յետ նորա էին հարքն եւ կաթողիկոսք զամս չորեք հարիւրս[2], իբրեւ թէ դուք ձեզէն ուրոյն միայն եկեղեցի լեալ[3], ո՛չ կաթողիկոս ձեռնադրեալ, ո՛չ մեռոն կամ եկեղեցի օրհնեալ[4] եւ զամենայն կարգս[5] եւ զսահմանս[6] նորա առնել, եւ զառաքելադիրն, եւ զՍրբոյն Գրիգորի ընդունեալն[7] եւ դրեալն ի բաց ընկենուլ: Եւ արդ՝ ուստի՞ ունիք զայս[8], յո՞ր գրոց կամ յումմէ[9] աւանդէք ցուցէք[10]: Ասէք, գիտեմ, եւ ոչ երբեք յումեքէ[11] առիք[12] զայդ[13]: Եւ արդ՝ եթէ զայդ ոչ ոք եդ ձեզ օրէնս, ասացէք, որո՞յ եկեղեցւոյ էք [յ]առաքելադիր եկեղեցեացն եւ կանոնացն որդիք եւ հնազանդք[14] եւ միաբան էք դուք: Վասն զի ոչ միաձայնիք եւ ոչ միաբանիք կամ հաղորդիք եւ ոչ իւիք եւ ոչ ընդ մի եկեղեցի Աստուծոյ: Եւ արդ՝ զի նախնին ձեր Գրիգորիոս առաջին եպիսկոպոսն ի Կեսարիայ պրոտոթրոնէն[15] Լեւոնդիոսէ[16] ձեռնադրեալ ընդ նա[17] միանալով միացաւ եւ ընդ նմա ամենայն եկեղեցի Քրիստոսի, նոյնպէս եւ յետ նորա էին ազգն նորա, եւ որ յառաջին ժողովն որ ի Նիկիայ ԳՃԺԸ. հարցն, որդւովն իւրով խօսեցաւ ընդ նոսա եւ միախոհ եղեւ, զորոյ զյիշատակն կատարեն ամենայն ազգք իբրեւ[18] զմի ոք[19] յառաքելոց Աստուծոյ: Իսկ դուք արդեօք ո՛չ միաբան էք[20] եւ համաձայն ձերոցն եպիսկոպոսաց[21], զորս[22] յիշեցաք, որոց համաձայն էք[23] առաքելոց եւ նոցայն[24] կարգաց եւ կարգելոց եպիսկոպոսաց. եւ ոչ միաբանիք վարդապետութեան Սրբոյն Գրիգորի, եւ ոչ՝ որոց զկնի նորա[25] հայրենատուր աւանդ պահեցին, զոր առին ի Կեսարիայ զկարգ եւ զաւանդ[26] եւ զհաւատ:

Արդ՝ ո՞ր եկեղեցւոյ[27] կամ եպիսկոպոսի էք հետեւողք եւ միաբանք[28]: Հռոմայեցւո՞ց, եւ ոչ

[2] հարիւր ԳԴԵ
[3] լինել ԳԴԵ
[4] օրհնել ԱԴԵ
[5] կարգ ԳԴԵ
[6] սահմանս ԱԴԵ
[7] ընդունել Գ, ընդունիլ Դ
[8] զայս] զայտ Ա
[9] յումմէ] յորմէ ԱԴԵ
[10] աւանդեցուցէք Ա
[11] յումեքէ երբեք Գ
[12] առաք Գ
[13] զայս Գ
[14] հնազանդ ԳԴԵ

[15] պրոտոթրոնէն ԴԵ
[16] Լեւինդիոսէ Ա, Լեւոնցիոսէ Դ
[17] նոյն] նայն Դ
[18] իբր ԴԵ
[19] զմիոյ Ա
[20] միաբանիք Ա
[21] եպիսկոպոս ԱԳ
[22] զոր ԱԳ
[23] համաձայնք է ԴԵ
[24] նոցա Դ, նոցա + այն Ե
[25] նորա] նոցա +որք ԱԳ
[26] զաւանդս Ա
[27] եկեղեցոյս Ա
[28] միաբան Գ

ընաւ. զի ոչ ունիք զնոցա զոչինչ եւ ոչ ունէիք[29] արդեօք: Ապա Աղէքսանդրո՞յ[30] էք. եւ ոչ ընաւ լեալ էք եւ ոչ լինիք եւ ոչ ունիք կամ հաղորդ էք նոցա: Անտիոքա՞յ, երբեք, եւ ոչ երբեք լեալ էք եւ ոչ ունիք: Երուսաղեմի՞, եւ ոչ երբեք. զի ընաւ ոչ ունիք ինչ զնորա, եւ ոչ ընդունի զձեզ: Եփեսոսի՞ էք, եւ ոչ ընաւ. վասն զի էիք, այլ յետ ընկեցեալ[31] ուրացաք[32] զդաշինս եւ զխոստովանութիւն, եւ զհաւատ եւ զամենայն կարգս նոցա, զոր առեալ պահեցին նախնիքն ձեր:

Որո՞յ էք, ասացէ՛ք, յառաքելական եկեղեցացն, որոց ամենայն ծագք երկրի հնազանդ և մի են, եւ դուք ոչ ումեք: Գիտեմ, զի ասէք՝ Մեք ուրոյն եմք յառաքելական[33] եկեղեցւոյ, այլ ասէք. զի զայս ոչ առաքեալքն ետուն ձեզ աւանդ ուրոյն լինել, եւ ոչ նախնիքն ձեր: Ապա ասէք. Սալմասթոյ եկեղեցւոյն որդիք եմք եւ Թադէոսի[34] Առաքելոյն, եւ յոյժ ստէք: Զի այդ անուն եւ ոչ երբեք լուեալ[35] է յառաքելոց կամ ի հարց, եւ ոչ նախնին ձեր Սուրբն[36] Գրիգորիոս գիտէր, և ոչ ասաց զայդ:

Ապա ասէք, գիտեմ, թէ մեք Ասորեաց եկեղեցւոյն եմք, զի եւ նոքա մեծ և առաջին թագաւորութիւն եւ[37] ազգ են. եւ զայս[38] յիրաւի ասացիք, զի ի նոցանէ և նոցա եւ ի նոսա էք, եւ ունիք առ ձեզ զհնգից նոցա ազգիցն զխոստովանութիւն եւ զաւանդ եւ զկարգ եւ զմիաբանութիւն՝ զոմանս յայտնի եւ զոմանս անյայտս: Վասն զի կարգ ձեր եւ գիրք եւ աւանդութիւնք լի են նոցայնոց[39] բանիւք, եւ դուք եւ նոքա մի էք եւ միանգամ մեկնեալ յամենայն եկեղեցեացն Քրիստոսի:

Եւ արդ՝ ասացէք, Սուրբն Գրիգորիոս ունէ՞ր գիրս, ունէ՞ր եւ կարգս եկեղեցւոյ, ունէ՞ր եւ[40] պատարագի աղօթս, ունէ՞ր եւ եկեղեցի օրհնելոյ կարգս, ունէ՞ր եպիսկոպոսաց օրհնութիւնս եւ քահանայից, եւ սարկաւագաց, եւ դպրաց, եւ կրօնաւորաց, ունէ՞ր եւ թաղման կարգս քահանայից եւ կրօնաւորաց. այո՞, ունէր ստոյգ եւ այնու կացին[41] զամս չորեքհարիւր:

[29] ունիք Դ
[30] Աղէքսանդրո՞ ԱԳ Աղէքսանդրու Դ
[31] ընգեցեալ ԱԳ
[32] ուրացաք] ստացայք Ե
[33] առաքելական ԱԳ
[34] Թաքէոսի ԳԴԵ
[35] լուեալ] լեալ ԳԴԵ

[36] Սուրբն] ԳԴԵ
[37] թագաւորութիւն եւ] - - Դ
[38] այս ԳԴԵ
[39] նոցայնոցն] նոցա ԳԴԵ
[40] եւ] ԳԴԵ
[41] կացին] կային ԴԵ

Արդ՝ ո՞ւր են այնոքիկ գրեալքն, եթէ ոչ էին ընդունելիք. աստուածարեալքն[42] եւ իմաստունքն այնք հովիւք և վարդապետք եւ վկայք՝ ընդէ՞ր ընկալեալք այնիւ վարեցան. եթէ ընդունելիք էին, եւ նոքա ընկալան[43], եւ ո՞վ լաւ քան զնոսա էր, և զնոցայն առնէր: Եթէ այն ընդունելի էր, զի՞նչ խորհեցաւ Յոհան *Օձնեցի[44], զայս ամենայն նորա առնելով. զի՞նչ եւ Մաշտոց[45] ձեր նոր կարգ, զի՞նչ Յօհան Մայրագոմեցի, զի՞նչ Եպիփան, Կուզն, զի՞նչ Անանէ Շիրակացւոյն գրեալն. զի՞նչ Անաստաս Կաթողիկոսն, զի՞նչ Ուխտանէս, զի՞նչ Տօնապատճառն ձեր. ո՞չ այս ամենայն նոր եւ հակառակ առաքելոցն դրուակի եւ նոցա եկեղեցեացն եւ աւանդից նոցա, և Սրբոյն Գրիգորի իւրոցն հետեւողացն, եւ մինչեւ ցայսօր ամենայն քրիստոնեայք[46] հակառակք են:*

Եւ արդ՝ քանզի այսպէս և յայսցանէ ունելով ձեռնադրութիւն, եւ դուք ձեզէն վկայէք այսց ասացելոց, ապա եւ ոչ յումեքէ[47] ունիք ձեռնադրութիւն, ո՛չ եկեղեցի օրհնել եւ ոչ մեռոն եւ քահանայապետս, եւ ո՛չ կարգս. բայց միայն ի ձերոց Մաշտոցաց[48] գրոց: Եւ վասն զի արտաքոյ քան[49] զայս հինգ համաշխարհական եկեղեցացս իշխանութեանց ոչ են ուրեք այլ բնաւ ուղղադաւան եկեղեցիք Քրիստոսի, ընդ որո՞յ ի սոցանէ իշխանութեամբ էք դուք. յայտ է եթէ եւ ոչ ումեք էք հաղորդ. վասն զի սոքա ամենեքեան մի եկեղեցի Քրիստոսի են[50] եւ ի մի խոստովանութիւն ուղիղ հաւատոցն ժողովին, ոչինչ իւիք բաժանելով ի միմեանց յարդարութիւնս օրինացն: Եւ դուք ի մարմնոյն Քրիստոսի հատեալ էք եւ յիւրում[51] կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցւոյն օտարացեալ՝ ոչ համաձայնելով սուրբ եւ առաքելական եկեղեցեացն:

Ժ. *Այլ զի յայտնի օրինակաւ ցուցից ձեզ մի անձն գոլ զՔրիստոսի եկեղեցին, տո՛ւք ինձ հնազանդ մտօք զլսելիս ձեր: Մարդ՝ երկրորդ աշխարհ ստեղծեալ եղեւ յԱստուծոյ, քան զերեւելի[1] աշխարհս առաւել պատուականագոյն. եւ անձն մարդոյն ի մի*

[42] աստուածացեալքն ԱԳԵ
[43] ընգալան Գ
[44] Օձնեցի] Մանդակունեցի Ա, Մանդակունի ԳԴԵ
[45] Մաշդոց Ա
[46] քրիստոնէ ԱԳ
[47] յումէ Գ

[48] Մաշդոցաց Ա
[49] քան] Դ
[50] են] ԳԴԵ
[51] յիւրոյն ԴԵ
ժ[1] երնելի ԱԳԴ

գլուխ յօդեալ[2] եւ կայ նովաւ ունել զկենդանութիւն, այլ անդամք[3] բազումք են ի մարմնի, և ամենայն անդամք ի ձեռն հինգ զգայարանաց նախախնամին, եւ ոչ գոյ ի մարմին մարդոյ այլ զգայարան[4] վեց կամ տասն կոչեցեալ եւ եդեալ ի վերայ նոցա: Վասն զի ունի յինքն զտեսանելիք, զլսելիք, զհոտոտելիք, զճաշակելիք եւ զշոշափելիք, եւ այլ ոչինչ բնաւ այնպիսի. այլ սոքա միացուցանեն եւ ուղղեն եւ պահեն եւ նախախնամեն զամենայն մարմինն՝ զիւրաքանչիւր յիւր պէտս կալով ի սակս կենդանւոյն:

Այսպիսի[5] եւ ստեղծումն եւ կազմուածս[6] գտանի իմանալի[7] մարմնոյն Քրիստոսի, որ է եկեղեցի հաւատացելոց. զի որպէս յանդամս մարմնոյն իւրաքանչիւր բազմութիւն անդամոցն անձինն իւր ներգործութիւն ունի՝ յոգնականութիւն մարմնոյն ունելով, այլ ի ձեռն հինգ զգայարանցն յարգին եւ կարգին ընդ միոյ գլխոյ գոլով եւ առնելով զկամս նորա, նովաւ եւ ի նմա ունելով զկենդանութիւն. նոյնպէս եւ անդամսն Քրիստոսի, որ են եկեղեցիք, որպէս անդամք ինչ ընդ համասփիւռ աշխարհ գոլով, ունին զիւրեանց գործ, զկարգ հաւատոյ, եւ ի ձեռն հնգիցս այսորիկ[8] եկեղեցեաց, իբրեւ ի[9] զգայարանաց կարգին եւ յարդարին, եւ ի մի գլուխն իւրեանց Քրիստոս յառին եւ միաւորին: Եւ հինգս ասեմ՝ զԵրուսաղէմ, զՀռոմ[10], զԱղէքսանդրիայ[11], զԱնտիոք[12] եւ զԵփեսոս. որով արեւմուտք եւ հարաւակողմն, արեւելք եւ հիւսիսակողմն ամենայն ի մի Քրիստոս միաւորին: Եւ վասն զի յայսմ հինգ աթոռս, որպէս հինգ զգայարանօք Քրիստոսի մարմնոյն, որ է հաւատացելոց եկեղեցի, ամենայն անդամք հեթանոսաց հաւատացելոց եւ տոհմիք[13] նոցա՝ այսինքն իւրաքանչիւր տեղեաց եպիսկոպոս օրինին աստուածավայելչապէս, որպէս ասացաւ, ի մի իւր գլուխն Քրիստոս, ի ձեռն ուղղափառ սուրբ հաւատոյն յօդեալ եւ հաստատեալ ի նմա:

Եւ արդ՝ ազգն ձեր ոչ միաբանի ընդ հինգ Քրիստոսի մարմնոյն զգայարանաց՝ եկեղեցեաց[14], որպէս անդամ Քրիստոսի: Վասն

[2] յօդեալ] եղեալ Դ
[3] անդամս ԱԳ
[4] զգայարանքն ԱԳ
[5] այսպիսի] այս ոսի Դ
[6] կազմածս Դ
[7] իմանալն Դ

[8] այսոցիկ Դ
[9] ի] ԳԴԵ
[10] Հռովմ ԱԳ
[11] Աղէկսանդրիա Ա
[12] զԱնտիոքա ԱԳ
[13] տոհմիւք ԴԵ
[14] զգայարանք եկեղեցիք ԱԳ

զի ոչ համաձայնիք ընդ օրէնս նորա, այլ ըստ առաքելոյն անդամս պոռնկի լեալք, բազում հերձուածովք, ընդ որոց միացեալ էք պոռնկեալ[15] որդիք կորստեան լինել, որպէս ասէ Մովսէս. Մերժեա ի քէն զամենայն պոռնիկ: Եւ ոչ եւս անդամք[16] էք Քրիստոսի. զի եթէ էիք, ապա ձեռամբ եկեղեցեաց իւրոց, որ են զգայարանք իւր, լինէիք որպէս եւ են ամենայն աշխարհ:

Եւ արդ՝ վասն զի ոչ էք մի, վասն այսորիկ այլ[17] ումն էք ի միաբանութենէ նոցա, որպէս փտեալ եւ մեռեալ անդամ, օտար ի ճշմարիտ կենացն Քրիստոսի[18]: Եւ զի՞նչ քան զայս ապացոյց[19] տացէ[20] ձեզ օտար գոլ ձեզ յամենայն եկեղեցեացն Քրիստոսի, յորոց ամենեւիմբ հեռի էք:

Եւ արդ՝ զայսոսիկ ստուգապէս արարեալ ձեր[21] առ ձեզ, օտարացուցիչս ձեր յեկեղեցեացն Քրիստոսի ասասցուք ի նախնեաց ձերոց զշինեալն եւ զհաստատեալսն[22] եկեղեցիսն, ի տունս[23] աղօթից եւ ի ժողովարանս հաւատացելոց դռնափակ[24] արարեալ որջացուցիք, եւ ոչ քահանայք եւ ոչ[25] ժողովուրդք մտանէք ի նմա: Եւ եթէ երբեք ի մեծ ումն եկեղեցի մտեալ՝ մի երէց[26] ունելով ընդ ինքն մի բաղարջիկ և դռնափակեալ զաղտ ուտէ եւ եկեալ ելանէ. եւ զհին մեծամեծ եկեղեցիք բաժանեալ յիւրաքանչիւր անկիւնս[27], ի մթան ուրեք, միոյ միոյ երիցու սեղանս կանգնեալ, ոչ ունելով սպասս խորհրդականս, եւ ոչ հանդերձս քահանայականս, եւ ոչ քահանայք ի միասին պատարագեն, եւ ոչ միմեանց հաղորդին, եւ ոչ ժողովոյն թուլացուցանեն տեսանել կամ հաղորդիլ, ո՛չ սարկաւագունս[28] ունելով եւ ոչ սպասաւորս[29] համաձայնս[30], եւ ոչ պատարագամատոյցս առաքելադիրս եւ ոչ զաղօթամատոյցս նոցա արարեալ, այլ՝ նորս եւ այլանդակս:

Եւ արդ՝ լուարուք մեծին Դիոնէսիոսի[31] ասացելոյն՝ Եկեղեցի տուն է Աստուծոյ, եւ[32] ժողովեալք ի նմա՝ կատարողք եւ կատարեալք են:

15 պոռնկել Ա
16 անդամս ԱԳ
17 այլու ԱԴ
18 Քրիստոսէ ԱԳ
19 ապացոյցս Ա
20 տայ ԴԵ
21 ձեզ ԳԴԵ
22 հաստատեալն Ա
23 տուն ԳԴԵ

24 դռնփակ Ե
25 ոչ] ԳԴԵ
26 երից Ա
27 անգիւնս ԱԳ
28 սարկաւագունք ԱԳ
29 սպասաւորք ԱԳ
30 համաձայնեալք ԱԳ
31 Դիոնէսի Դ
32 + ի ԱԳ

Եւ այս երբեմն, որպէս ունի եւ կայ եւս[33], իսկ որ ի նմա են, չարժին ըստ խորհրդոյ: Այլ՝ է՛ սա պատկեր Աստուծոյ եւ կատարեալ ամենայն աշխարհի եւ միայն զգալւոյ երկրի եւ կատարեալ մարդոյն եւ միայն հոգւոյն առանձին իւրոյ բանին տեսութեանն:

ԺԱ. *Եւ արդ, տուն ըստ ներգործութեան զԱստուած տպաւորէ՝ որպէս պատճառ զսա առ ինքն վերաձգելով ի միջոյ երից եղելոց գոյութեանց՝ անխառնակաբար միացելոյ, վասն զի ի նմանէ եւ նովաւ եւ ի նոյն ամենայն: Այլ եւ տպաւորէ զնա ժողովմամբ առ մի պսակ[1] զբաժանեալսն տեղեաւ կամ ժամանակաւ, կամ ազգաւ, կամ երեսօք, կամ արուեստիւ՝ ըստ միոյ հաւատոյ[2], շնորհաց եւ կոչման: Իսկ զորս յառաքինութիւնս միով հաճութեամբ նոյն գոլով, իսկ ընդ գիտելիսս ընդ այնոսիկ ըստ միաւորութեան [ան]խզելի եւ անբաժանելի գոլով: Իսկ զայլսն տպաւորէ իւրով տեսակաւն բաժանեալ[3] յատկութեամբն առ քահանայագործութիւն, եւ տաճար բաժանմամբ և մի անձնաւորութիւն մտանելով ի մի տեսակի՝ ոչ բաժանելով մասամբք ընդ իւրոցն, այլ զնոսա ընդ ինքն ի միաւորութիւն ածելով, ի կոչեցելոցն ի բաժանմունս[4] ի նոյն լինել միաւորելով, ի տաճարն քահանայագործելով զկնի ամբիոնին[5] քահանային[6] առ Աստուած յայտնեալ աղօթիւքն: Սա յերկրէ[7] երկինք տեղի միաւորութեան Աստուծոյ եւ հրեշտակաց և մարդկան, բնակարան սրբոց, ժողովարան մերժելոց, յարուցանող անկելոց[8], պահապան կացելոց, վերածննդութեան[9] առիթ, աստուածացուցանելոյ[10] պատճառ, ընդ ինքն եւ ընդ Աստուած միացուցանող եւ կապող զհամօրէն էսս առ դնելով զամենեսեան[11] ի մի պատճառն Աստուած: Նախ զմարմին ընդ հոգւոյն եւ ապա զամենայն մարդկանս ընդ միմեանս, և ապա զամենեսեան ընդ Աստուած կապէ եւ միաւորէ: Զսորա նախատիպ օրինակն ի լերինն Աստուած եցոյց[12] Մովսէսի աստուածատեսի ի մրրիկն եւ ի հուրն, զաւուրս քառասուն կալով ի մթի, այլ առանց գիշերոյ իբրեւ զաներեկ օր*

33 եւս] նա ԴԵ
ԺԱ 1 պսակ] տեսակ ԱԳԴ
2 հաւատոց Ա
3 բաժանել Գ

4 բարժանումս Գ
5 ամբոնին Գ, ամպիոնին Դ
6 քահանային ԱԳԵ
7 երկրի ԳԴԵ
8 անգելոց ԱԳ
9 վերածնելութեան ԴԵ
10 աստուածացուցանելով Ա
11 զամենիսեան Գ
12 Աստուածացոյց ԳԴԵ

անցուցանելոյ, եւ ցուցեալ նմա զօրինակ աստուածայնոցն եւ երկնաւորացն անյայտից եւ անճառելեացն խորհրդոցն Աստուծոյ, որչափ հնար էր նմա տեսանել կամ իմանալ ի մարդկանէ: Նոյնպէս եւ զերկրաւոր և զգայական զամենայն առաքինութեան օրինակս, եւ զաստուածային նշանագրութեանց ի դիր, ի կահ եւ ի սպասք[13] եւ ի կատարելութիւն, որ էին ի սրբութիւն սրբոց տապանակին տախտակս եւ սեղանոյն խորհուրդն, սափորոյն, աշտանակին, սեղանոյն, գաւազանին եւ այլ ամենայն ծածկելոյն ի ներքոյ սրբութեան սրբոցն եւ քերովբէիցն: Իսկ զերկնից օրինակն ի ձեւ խորանի, ի սիւնս, ի խարիսխս ի[14] սրահս եւ ի կահս[15] նորա: Իսկ զհրեշտակաց ինն կարգաց կերպարանս եւ զտիպ, յինն կարգ քահանայապետութեանց եւ անօթից[16] եւ զգեստուց նոցա:

ԺԲ. *Իսկ զհասարակաց կարգաւորութիւնս՝ յայլ ամենայն կարգաւորութիւն եւ ի մաքրութիւն եւ յընծայս եւ ի տեսակս նոցա, զոր և ասացեալ է մի ըստ միոջէ ի սրբոց հարցն: Այլ ի վախճան ժամանակիս[1] իբրեւ եկն Տէրն, ո՛չ ելոյծ զօրէնս, այլ ելից, այսինքն՝ զմարմնաւորս նորա ի հոգեւորս փոխելով տեսակս. եւ այսպէս եւ այսու օրինակաւ առաքեալքն Քրիստոսի զամենայն կարգ խորանին հնոյ եկեղեցւոյ ամենայն լրութեամբ իւրով եւ ամենայն նշանիւք եւ դրօշմիւք, օրինադրեցին զնա լինել, նմանապէս ի քարանց պատուականաց ունելով ի սրբութիւն սրբոցն զխորանն եւ ի նմա սեղան սուրբ, զենարան եւ քաւարան, եւ[2] զաշտանակս՝ լուսատուս զխնգոցն, զպասաւորութիւնս մարմնոյն Քրիստոսի եւ զանօթսն եւ զսպաս նորա՝ զնոսա[3] տեղի գոլ խորհրդոցն Աստուծոյ, եւ ի մօտ ի նմա քահանայից միայն լինել: Իսկ եկեղեցի իւրովքն դասիւք, կահիւք եւ կայանիւք, կարգօք եւ ընթերցուածովք, խրատիւք եւ քաւութեամբք՝ սա՛ տեղի գոլ հասարակաց եւ մարդկան հաւատացելոց: Իսկ գաւիթքն եւ երախայանոցն՝ դեռ եւս ընծայելոցն[4] եւ ոչ մկրտելոցն տեղի: Նոյնպէս եւ քահանայիցն երեք երից դասուց՝ պատրիարքաց[5], քահանայապետաց եւ քահանայից՝ յօրինակ ա-*

13 սպաս ԴԵ
14 ի] եւ ԳԴ
15 կահ Ա
16 անօթոց ԳԴԵ

ԺԲ 1 ժամանակին Գ, ժամանակի ԴԵ
2 եւ] ԳԴԵ
3 զնա ԳԴԵ
4 ընծաեցելոցն Ա
5 պատրիարգաց Ա

թոռոցն սերովբէից եւ քերովբէից, իսկ մեծ սարկաւագաց նման[6] իշխանութեանց, պետութեանց, զօրութեանց: Իսկ ընթերցողաց, դպրաց եւ երգեցողաց[7] դասքն տէրութեանց, հրեշտակապետաց եւ հրեշտակաց[8] նմանելով: Նոյնպէս եւ զգեստ եւ նշանք հանդերձից նոցա օտար յաշխարհականաց զգեստուց[9], եօթնատեսակ գոլով, զլրումն ամենայն առաքինութեանց օրինակելով. ոմամբք զմարմինն բոլորովիմբ[10] ծածկել[11] խրատէ. ոմն զմէջս պնդելով՝ զցանկական[12] կապել խրատէ, ոմն զպարանոցն ունի՝ զլուծն Քրիստոսի նշանակելով. ոմն զձեռն զարդարելով զգործս վայելուչս ուսուցանէ գործել. ոմն զոտսն պնդելով, ուղղեալ[13] ունելով զգնացս, ոմն տախտակ ի գօտիս կախեալ՝ զանուանս տէրութեան բերելով. իսկ փիլոն՝ զբոլորումն երկնից դրօշմեալ, զամենայն մարմինն իւրովքն հանդերձ ի ներքոյ կալեալ զգլուխն միայն ի վերոյ[14] ունելով հայել առ Աստուած: Իսկ ի վերայ նորա եմիփորոնն[15] նշանակէ զխաչն բառնալով, նմանեալ մեծի քահանայապետին: Եւ այսպէս քահանայապետն ի սրբութիւն սրբոցն կալով[16] առաջի զենարանին միաւորի խորհրդով ընդ Աստուծոյ: Եւ քահանայքն ի խորանին նմին խորհրդովն ընդ նմա միաւորին: Եւ սարկաւագունքն ի սարկաւագանոցն նոյն խորհրդովն միաբանին եւ ժողովն յեկեղեցւոջն[17], եւ երախայքն յերախայարանս, ամենեքեան առքա մի խորհրդով եւ մի կարգաւ յաւուրն եւթն[18] անգամ միաւորին ընդ Աստուծոյ եւ հաղորդին Աստուծոյ եւ միմեանց: Եւ այսպէս չորրորդ առաքելական եկեղեցիքն՝ ընդ Երուսաղէմի: Եւ ամենայն արարածոցն համասփիւռ եկեղեցիքն ընդ հնգեսին[19] այնոսիկ[20] միով կարգով եւ միով աղօթիւք, միով տօնիւք եւ միով պատարագաւ ի միասին հաղորդին և միաւորին ի մի Քրիստոսի հաղորդութեամբ, եւ ընդ միմեանս միաւորելով՝ ընդ Քրիստոս միաւորին եւ նովաւ՝ ընդ Հօր եւ ընդ[21] Հոգւոյ, որպէս ինքն ասէ,

6 նման] նմանութիւն ԴԵ
7 երգողաց Ա
8 եւ] ի ԳԴԵ
9 զգեստից Ա
10 բոլորովիմ Գ, բոլորովին ԴԵ
11 ծածկեալ Ա
12 զցանկական ԴԵ
13 ուղղել Գ
14 վերայ ԴԵ

15 եմիֆորոնն ԴԵ
16 կալո Ա
17 եկեղեցւոջն Ա
18 եօթն
19 հինգսն ԱԳ
20 այնոքիկ Գ
21 ընդ] ԳԴԵ

եթէ՝ Առ նա եկեսցուք եւ օթեւանս առ նմա արասցուք:

ԺԳ. *Նոյնպէս եւ նախնին ձեր Սուրբն Գրիգոր[1], եւ որք ընդ նմա յետոյ, ամս չորեքհարիւր ընդ նոսա միացեալ էր, մինչեւ ի ժողովն Մանծկերտի[2], որպէս վկայեն եկեղեցիք հին ի նմանէ օրհնեալքն, մեծամեծք[3] յոյժ և մեծախորանս՝ ունելով Սարկաւագանոցս եւ Երախանոցս[4]: Ունի ի խորանին և զաթոռս քահանայակցաց պատարագին, եւ զարդարեալ են պատկերօք տնօրինականացն եւ ամենայն սրբոց: Այս ամենայն վկայեն զմիաբանութիւնն: Իսկ ձերդ այժմ որպէ՞ս է կամ զի՞նչ կոչելի է, հանդերձելոց եւ կացելոց[5] եւ ի բաց մերժելոցն յամենայն եկեղեցեացն[6] եւ ձերոցդ[7] եւս: Ոչ գոյ ձեր եկեղեցի աղօթանոց, այլ փակեալ դրամբք կան, և դուք ժամատունս յորմանց շինեալս կամ բոլորովիմբ[8] ի տունս երիցանց ի գեղի[9], կնաւ եւ աղախնօք[10] եւ որդւովք եւ եզամբ եւ իշօք եւ հաւօք[11] եւ անմտիւք բնակին[12] ի նմին խաւարի, ո՛չ գոլով ոչ մի ի նշանաց Աստուծոյ՝ անդ ժողովեալ ի գիշերի: Ո՛չ ասել նախ զաղօթսն Քրիստոսի, զոր ուսոյց առաքելոցն եւ ոչ զառաքելադիր երգս եւ ոչ զաղօթսն Աստուածածնին. այլ ձեռնադիր[13] երգս Մաշտոցի[14], զոր ի հայհոյութիւն Քրիստոսի եւ եկեղեցեացն նորա շարադրեալ Շարականս կոչեսցես զնոսա, մեծաձայն հնչմամբ, բազում կրկնաբանելով զոչէք[15] մինչեւ ցառաւօտն: Եւ[16] նոյնպէս կատարելով զկանոն ձեր, գնայք ի տեղի իւրաքանչիւր: Ապա թէ[17] մեռելոյ ուրեք բերեալ արծաթ[18] ժամս խնդրեն, յայնժամ յիշէ, եթէ գոյ ուրեմն եկեղեցի[19], և դիմէ ի նա մի յերիցանցն՝ ունելով ի ձեռինն մի բաղարջիկ փոքրիկ[20] եւ փարչ՝ սակաւ[21] գինեաւ[22], եւ գտանէ զնա փակեալ ի[23] բազում աւուրց, եւ մտեալ ի նմա, դնէ զայն բաղարջիկն եւ զգինին ի վերայ սե-*

ԺԳ [1] Գրիգորիոս ԱԳ
[2] Մանածկերտի ԱԴ
[3] մեծամեծ ԱԴԵ
[4] երեխանոցս Գ
[5] կցելոց ԱԳԴ
[6] եկեղեցեացս Դ
[7] + եւ Դ
[8] բոլորովին ԳԴ
[9] գեօղի Ա
[10] աղախնիւք Դ
[11] հաւովք Դ
[12] բնակեն ԱԳԵ
[13] ծեռնդիր ԱԴ
[14] Մաշդոցի ԱԳ
[15] կոչէք ԱԳ
[16] եւ] Դ
[17] + ի ԳԴԵ
[18] արծաթոյ ԳԴ
[19] եկեղեցիս ԱԳ
[20] փոքրիկ] փոքր ինչ ԱԳ
[21] սակաւ փարչ ԱԳ
[22] + եւ դիմէք յեկեղեցի ԱԳ
[23] ի] ԳԴԵ

ղանոյն, մերձ կալով նմա իւրով սովորական զգեստիւն, որ զամենայն աշխատութիւն և զկարիս մարմնոյ կատարէր, և ամբարձեալ զձեռն սկսանի ասել զբանսն, զոր սուտ Եպիփանն շարադրեալ է, և չարժէ փոյթ ընդ փոյթ զմատունսն, եւ այնպէս դողացուցանէ[24] զշրթունս՝ ասելով զբանս՝ երկուցեալ թէ ի մոռացմանէ[25] մնասցէ ինչ ի նոցանէ. եւ զայս փութապէս արարեալ՝ կատարէ զաղօթսն եւ ուտէ զայն բաղարջիկն եւ[26] ըմպէ զգինին, ջնջէ մատամբն զսկիհն[27] եւ լիզէ բերանովն, եւ փոյթ ընդ փոյթ ելանէ առ այրսն[28] դատարկ եւ ոչինչ ունելով նոցա մասն ընդ ինքն, այլ աչօք շարժեցելովք, դնէ ձեռն ի գլուխս ընդ առաջ[29] եկելոցն եւ գնայ փոյթ: Եւ յորժամ նա զայս առնէ ի ներքուստ[30], այլք արտաքոյ ի ժամատանն[31] ընթեռնուն գիրս կամ զՍեւերիոսին, որ շրջեալ զբանս Կիւրղի և Աթանասի այլանդակ մեկնէ, զսուտ Եպիփանու բանս, կամ զկայսերականին զորոշմունս նոցա ազգաց, կամ զասորեացն մուրացեալ բանս, կամ զԱնանէին միաբնակութեան[32] արուեստս, կամ զՈւխտանէսի[33] հայհոյութիւն Վրաց, կամ զՄաթիոսիկն պատմող, կամ զՏօնապատճառսն, եւ սկսանին նզովել զամենայն քրիստոնեայս, զԱստուած եւ զմարդ խոստովանողսն[34], զտօնողսն, զերկրպագողսն սրբոց: Զայս ամենայն նզովեն մինչեւ ելանէ պատարագողն, ապա ցրուին, ոչ ունելով հաղորդութիւն եւ ոչ մասն նշխարաց եկեղեցւոյ, այլ հայհոյեալ զամենայն ազգ քրիստոնէից գնան ի տունս իւրանց:

Արդ՝ զի այս այսպէս է, եւ դուք վկայէք: Արդ՝ ասացէք է՞ այս միաբանութիւն[35] Քրիստոսի եկեղեցեացն[36], թէ ոչ: Զայսպիսի՞ միաբանութիւն ուսոյց Հոգին Սուրբ, զայսպիսի՞ միաբանութիւն քարոզեցին առաքեալքն. վասն այսո՞ւ միաբանութեան մեռան մարտիրոսքն. ո՛չ երբեք, ո՛չ բնաւ, քաւ եւ մի՛ լիցի. այլ դուք ձեզէն ձերով կամօք եւ ակամայ ի Պարսից բռնութենէն[37] առեալ, ձեզէն յետս կացեալ յամենայն եկեղեցեացն Աստուծոյ:

[24] դողացուցանելով Ա
[25] մոռացմնէ Ե
[26] եւ] Ա
[27] սկին ԱԳ
[28] արս Դ, արսն Ե
[29] յառաջ ԳԴԵ
[30] ներքս ԴԵ
[31] ժամատունն ԱԳԴ
[32] մի բնակութեան ԴԵ
[33] + վերայ Գ
[34] +զաստուածաբանողսն ԳԵ
[35] միաբանութիւն] միաձայնութիւն ԱԳԵ
[36] եկեղեցւոյն ԴԵ
[37] բնութենէն] - - Դ

ԺԴ. *Արդ՝ ո՞յր, եւ կամ ո՞ւր[1] եւ կամ որպիսի՞, եւ կամ յորո՞ց ձերդ խոստովանութիւն ասացաւ փոքր ի շատէ: Արդ՝ թէ որպէ՞ս է[2] մեռօն ձեր, եւ կամ ուստի՞, եւ զիա՞րդ օտար յամենայն հնոյ եւ նորոյ[3] աւանդիցն: Այլ եւ[4] կաթողիկոսք եւ եպիսկոպոսք ձեր թէ յորո՞ւմ[5] արարած կարգաւ ձեռնադրի[ն], կամ յորմէ՞ հետէ սկսեալ: Եւ մկրտութեան սահման ձեր թէ ուստի՞ կամ ո՞ւմ արարած է. եւ քահանայաթաղն եւ հասարակաց մարդկան[6] թաղումն եւ աղօթիցն ամենայն սահման, եւ ուր ջուր օրհնելն եւ խաչ օրհնելն, եւ ապաշխարող օրհնելն, եւ սքեմաւորն ձեր եւ կնկուղն եւ փիլոնն, եւ զամենայն զոր[7] ինչ որ ձերդ[8] է այժմ ոչ անփոյթ արարեալ, այլ յետոյ փոքր ի շատէ գրեցից եւ ցուցից ուսումնասիրաց բազում վկայութեամբ գրոց եւ ձերոց գրոց եւ նախնեացն գնացից եւ ամենայն համաշխարհական եկեղեցեաց, թէ որպէս ամենայն աշխարհի է կարգք եւ կրօնք առաքելադիրք, եւ որպէս ձերն մինչեւ ցՄանծկերտի[9] ժողովն էր եւ որպէս զկնի այնորիկ ունիք, եւ ուստի՞, եւ զի՞նչ[10], եւ որպէ՞ս: Եւ ապա զձեզ կոչեցից վկայս եւ զհին գրեանս ձեր, եւ ձեօք դատեցայց[11] ի վերայ ձեր, եթէ մի է անդամ[12] Քրիստոսի, կամ որպէս դուք ասէք, վարշամակ էք ծալեալ ուրոյն ի մի կողմ անկեալ ի գլխոյն ի բաց ոչ միաբանելով ընդ այլ եկեղեցիս:*

Բայց նախ յիշեցից զձերն կատարելութիւն, զոր առիք ի ձեզ օրէնս լեալ հինս, և մի բաղարջս անխմոր եւ առանց աղի մատուցանէք յօրինակ մարմնոյն Քրիստոսի, եւ ասէք զնա անապական գոլ լեալ: Եւ վասն այսորիկ բազում եւ աննման եւ ի նանիր բանիւք հակառակեալ պնդիք իրաւացուցանել զսա: Երբեմն ասէք, թէ ի վերնատանն[13] Տէրն բաղարջ ետ աշակերտացն, զի Բաղարջակերք ասացեալ էին աւուրքն. եւ հաց ասաց. զի բաղարջն եւ հացն մի ոչ են. եւ երբեմն ասէք, թէ ի Ֆռանկաց[14] առաք զսա, զի նոքա յառաքելոցն առին. և երբեմն ասէք, թէ առաքեալն ասաց, թէ Փոքր մի խմոր զամենայն զանգուածն[15] խմորէ. ի բաց արարէք զհին խմորն, այլուր՝ մի՛ ի խմորս[16] հին տօնէք, եւ այլ այսպիսի բանս ասելով՝ շփոթս եւ մոլարս, զորոց փոքր ինչ խօսեցայց:

ԺԵ. *Արդ՝ վասն զի հաղորդեալ[1] բաղարջին՝ Հին օրինացն է հաղորդութիւն եւ ոչ Նոր կտակիս. զի ոչ եթէ բաղարջ էառ Տէրն եւ գոհացեալ եբեկ եւ ետ աշակերտացն, այլ հաց կատարեալ՝ որպէս չորք աւետարանիչքն եւ այլ առաքեալքն գրեալ են, եւ սահմանեցին յամենայն աշխարհս:*

Եւ արդ, դուք ուստի՞ առիք ուտել զբաղարջ փոխանակ հացի, որ օրինակ էր մարմնոյն Քրիստոսի, զի ամենայն եկեղեցիք զհացն ընծայեն մարմին Քրիստոսի[2], Մի՞թէ ի Քրիստոսէ առիք, կամ յառաքելոցն իւրոց: Մի՛ եղիցի: Ոչ ուրեք գրեալ է ի Սուրբ Գիրս նոցա կամ յԱւետարանս, եթէ Տէրն Յիսուս ի գիշերին[3], յորում մատնիւր[4], առեալ բաղարջ գոհացաւ, եբեկ եւ ետ եւ ասէ. Առէ՛ք կերէք, այս է մարմին իմ, որ վասն ձեր բեկանի, զայս արարէք առ իմոյ յիշատակի:

Նոյնպէս եւ Պօղոս նմանաբար Աւետարանին ասէ, եթէ՝ Բաժակն զոր օրհնեմք, ո՞չ ապաքէն հաղորդութիւն է[5] արեան Քրիստոսի[6], հացն, զոր օրհնեմք, ո՞չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի[7], վասն զի[8] մի հաց, մի մարմին եմք բազումքս, զի ամենեքեան ի մի հացէ ճաշակեմք: Եւ դարձեալ՝ եթէ[9] Ես ընկալայ ի տեառնէ, զոր եւ ձեզ աւանդեցի, եթէ Տէր Յիսուս ի գիշերին, յորում մատնիւր[10], առեալ հաց գոհացաւ:

Եւ արդ՝ տեսէք, հաց ասաց լինել զայն օրինակ մարմնոյն Քրիստոսի եւ ոչ բաղարջ. զի եթէ դեռ եւս[11] զբաղարջն ընծայէք[12], ապա դեռ եւս ընդ ստուերիւք[13] օրինացն էք, և ի Հրէիցն[14] սեղանոյն ուտէք եւ ոչ զԱստուածոյ բանին[15] զմարմին զկենդանական[16] եւ զկենսատուն, որ եւ հաւատացելոց իւրոց գոյական եւ համագոյ է, որպէս եւ ուսաք, զգոյականն խնդրել՝ զհացս[17]: Զի

ԺԴ 1 ո՞ւր] ո՞յր ԱԳ
2 է] ԳԴԵ
3 նոր Գ
4 այլեւ] այլ ԱԳԴ
5 որում ԳԴԵ
6 հասարակ մարդկաց (մարդոց Գ) Ա
7 զոր] Դ, որ Ե
8 ձեր Դ
9 Մանածկերտի ԱԵ ցՄանծկերտի Դ
10 ինչ Ա
11 դատեցից ԴԵ
12 անդամք ԱԳ
13 Վերնատուն ԱԳԴ
14 Ֆռանգաց Գ
15 զանկուածն ԱԳ
16 խմորն ԴԵ

ԺԵ 1 հողորդիլ ԳԴԵ
2 զի ամենայն... Քրիստոսի] ԱԴ
3 գիշերն Ե
4 մատնէր ԱԳ
5 է] Ա
6 + է Գ
7 Քրիստոսէ Ա
8 + ի ԱԳ
9 թէ Դ
10 մատնէր Գ
11 դեռեւ Ա
12 ընծայեմք ԱԳԴԵ
13 ստուերիւք] սուսերօք ԴԵ
14 հրեական ԱԳԴ
15 բանն ԴԵ
16 կենդանական ԳԴԵ
17 հացս ԱԳԵ

եթէ զմարմին Քրիստոսի ուտեմք զկատարեալ մարդոյ եւ զկատարեալ Աստուծոյ կենդանւոյ, ապա զի՞նչ նմանութիւն ունի կենդանւոյն Աստուծոյ հոգեւոր մարմինն ընդ մեռելոտի եւ անհոգի եւ անմիտ բաղարջի, որ եւ աստուածասպան Հրէիցն աւանդեալ էր ի բարկութենէ սակս պասեքին, յետոյ՝ կերակուր վտանգիցն, վասն զի հոգեւոր է գոյութիւն զանգուածոյս[18] մերոյ, զոր Բանն Աստուծոյ միաւորեաց եւ անձն նորա եղեւ:

Եւ արդ՝ որ զբաղարջ հաղորդի, ոչ գոյական եւ զհամագոյ մեր ուտէ զմարմինն Քրիստոսի՝ զի բաղարջ առանց հոգւոյ է, որպէս եւ բնութիւն գործոյ նորա յայտնապէս ցուցանէ, վասն զի զանգեալ հայսն ալեր, փոքր ինչ եղեալ ի նմա, ի նախնոյն հայսեն[19] խմոր, եւ խառնեալ ընդ նմա, մի խմոր զամենայն զանգուածն[20] ցուցանէ զնա, եւ կենդանի եւ շարժական առնէ: Որ եւ այս յանխմոր խմորն փարիսեցւոց, յորոց փախչիլ[21] հրամայեաց Քրիստոս, որ է բաղարջ, ո՛չ երբեք եղեւ[22] եւ ոչ լինիցի. վասն զի այսպէս հաղորդեցաւ յառաջմէ ընդ մեզ Քրիստոս. ստեղծ որդի զնախահայրն յերկրէ արիւն և մարմին, եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի[23], եւ միաւորեցաւ ընդ մեզ կերպարան եւ ընդանի[24] առնելով զմեզ: Իսկ մինչ ոչ պահեցաք զկերպարանն մեր, եկն միաւորեցաւ ընդ իւր կերպարանն, եւ առեալ հոգի բանական եւ մտաւոր, եւ զարիւն եւ զմարմին իւր միաւորեաց անձամբ ընդ իւր աստուածութիւնն եւ նորոգեաց զհնացեալն, եւ մինչ գնալ կամեցաւ ի փառս իւր, ետ մեզ կերակուր զհոգեւոր եւ զմտաւոր մարմին իւր, որպէս զի օր ըստ օրէ ուտելով զնա՝ սրբութեամբ[25] նորոգեսցէ ի մեզ զմիաւորութիւն նորա եւ մեր, եւ[26] նախ ի մեզ բնակեսցէ եւ մեք ի նմա: Իսկ Հրէիցն զանբան զառն խորովեալ եւ զմեռելոտի բաղարջն ետ՝ վասն բարեկամութեանն:

Եւ արդ՝ զի՞նչ նմանութիւն սոցա առ[27] միմեանս: Եւ յաղագս այսորիկ, որ ուտէ զբաղարջ ի ստուեր օրինացն շրջի եւ ոչ կարէ հաղորդ լինել Քրիստոսի, որ լոյս բնակեալ է, ի նոր իւր կտակարանս շնորհաց. զի որ ի լոյս շնորհացն են՝ զհացն ուտեն

18 զանկուածն Գ
19 հայսեն] հույսեն ԱԴԵ
20 զանկուածն Գ
21 փախչել ԱԳ
22 եղեւ երբեք ԱԳ
23 + այսինքն զբանական և զմտաւոր հոգի մարդոյ ԳԵ
24 ընդունի Դ
25 + մի Ա
26 եւ] ԳԴԵ
27 առ] ընդ ԱԴԵ

մարմին Քրիստոսի եւ ըմպեն[28] զջուր եւ զարիւն բղխեալ ի կողից նորա, եւ այնպէս միաւորին ընդ միմեանս, եւ ընդ Քրիստոս Աստուածն մեր միաւորեալ ունին հաղորդութիւն՝ սրբեալ յամենայն մեղաց: Իսկ բաղարջ՝ ոչ հաց, զի ոչ կենդանի է. եւ որ ոչ է կենդանի, եւ ոչ է կենսաբեր կամ լինել կարող է, այլ պակաս եւ անկատար՝ եւ մեռեալ եւ անհոգի եւ անմիտք[29] գոլով եւ կարօտ[30] այլում կենդանեցուցանողի, այսինքն խմորոյ, զի նա եւս հաց է: Իսկ հաց անպակաս է եւ կատարեալ, զի[31] եւ կատարող՝ որպէս անձն իւր ունելով զամենայն[32] կատարելութիւն: Եւ արդ՝ բաղարջ հաց ոչ կոչի եւ ոչ նկանակ եւ ոչ այլ ինչ, զոր ի Գրոց կոչեցեալ է, այլ միայն բաղարջ, և զի ոչ հաց բաղարջ կոչեցեալ է և ոչ բաղարջ՝ հաց[33] եւ որպէս ասի բաղարջ եւ բաղարջակերք: Եւ առ Աբրահամու բաղարջ, Մելիքսեդեկին՝ հաց, Ղովտայն՝ բաղարջ, Գէդէոնին[34] բաղարջ, առաջաւորութեան՝ հաց, եւ Դաւթին՝ հաց. եւ այսպէս յամենայն[35] գիր հացին՝ հաց, եւ նմանապէս[36] բաղարջին՝ բաղարջ ասէ. զի յոյժ հեռի ի միմեանց են, եւ ոչ համանունաբար եւ ոչ փաղանունաբար եւ ոչ յարանունաբար միաբանին ի մի: Եւ տե՛ս [զ]զանազանութիւն ի միմեանց. զի բաղարջ եւ ոչ մի ինչ է կենդանական զօրութիւն. վասն զի մեռելոտի իմն[37] է, իսկ հաց, որ է մարմին Քրիստոսի, երեք են[38] կենդանական մասունք, որք[39] կեանս տան հաղորդելոցն զնա. Հաց՝ մարմին, հոգի եւ միտք. բաժակ՝ հոգին եւ ջուրն եւ արիւնն եւ որպէս այն, որ զլանջօք Բանին անկաւ[40] Յովհաննէս, վկայեաց եւ ասէ այսպէս. Եթէ երեք են[41] որ վկայեն՝ հոգին եւ ջուրն եւ արիւնն, եւ երեքեան[42] սոքա մի են, այսինքն մարմին Քրիստոսի: Որպէս եւ ի ժամու խաչելութեանն Քրիստոսի յայտնի եղեւ, յորժամ արիւն եւ ջուր հոսեցաւ յանապական կողից իւրոց, մինչ[43] գեղարդեամբ[44] խոցեցաւ մարմին նորա: Իսկ կենդանի Հոգի Սուրբ կայր յաստուածացեալ մարմինն իւր, զորս ու-

28 ըմբեն Գ
29 անմիտ ԴԵ
30 կարօտ] կիսաւոր ԳԴ
31 զի] լի ԱԲԳ
32 զամենայն ունելով ԱԳ
33 այլ միայն... բաղարջ հաց] եւ ոչ բաղարջ հաց Դ
34 Գէբէոնին Դ
35 ամենայն ԴԵ
36 նմանակ Ա
37 իհմն ԳԴԵ
38 երեքեան Ա
39 որք Ա
40 անգաւ Գ
41 երեքին ԱԳ
42 երեքին ԱԳ
43 մինչեւ Ա
44 գեղարդամբ Գ

տելով ոք ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, փոխեալ լինի նոցա մարմին Քրիստոսի, և կենդանականաւն[45] նովաւ որպէս զճաշակողս կենդանանայ[46] եւ [յ]աստուածացեալ մարմնոյ. նոյնպէս եւ զարիւն նորա կենդանական ընդունելով ըմպեմք զկնի[47] հոսելոյ ջրովն հանդերձ ի կողահոս աղբերէն, եւ սրբիմք յամենայն մեղաց լիապէս անթափելի շնորհօք նորա: Վասն զի կենդանի հոգւովն եւ աստուածացեալ մարմնովն Քրիստոսի Աստուծոյ, յորմէ արիւն եւ ջուր բղխեաց մեզ, որոյ շինութիւն[48] եւ գործոյ ոչ գոյ տեղի առ նոսա, որք զբաղարջն ուտիցեն:

ԺՁ. Եւ արդ՝ վասն զի յորժամ մարմնովն խաչեցաւ մինն ի Սրբոյ[1] Երրորդութենէն, Տէրն մեր Յիսուս Քրիստոս անչարչարելի մնալով աստուածութեան նորա, ետ մեզ կերակուր ի ձեռն հացի զմարմին իւր՝ Հոգւովն Սրբով կենդանի գոլով, եւ ասէ. Առէք կերէք, այս է[2] մարմին իմ: Եւ արդ՝ զի՞ կայ ձեր թէպէտ եւ ոչ ուղիղ դաւանէք զՔրիստոս, որ Քրիստոսիւ խափանեալ է օրինացն վասն[3] զի դեռեւս զբաղարջ ուտէք՝ զհին խմորն նորա, նոր արարածք եմք ի Քրիստոս: Հինն էանց, լուարուք Պօղոսի[4], որ ասէ. Եւ եղեւ ամենայն նոր: Իսկ եթէ զբաղարջ ուտել կամիք, ընդէ՞ր ոչ թլփատիք, զի եւ Քրիստոս թլփատեցաւ. եւ ամենայն որ ոչ է թլփատեալ, մի՛ կերիցէ ի նմանէ, ընդէ՞ր ոչ սրբիք հրէաբար, զի եւ Պօղէ[5] սրբացաւ. ընդէ՞ր ոչ կատարէք զամենայն օրէնս, զի որ առնէ զմի[6] ինչ յօրինացն եւ զամենայն ոչ արասցէ, մահու մեռցի: Վասն որոյ անունն Աստուծոյ հայհոյի ի մէջ հեթանոսաց, որպէս եւ գրեալ է: Իսկ եթէ օրինօք Նորոյ Կտակարանացս հինն լուծեալ եղեւ, ապա աւելորդ[7] է բաղարջ, աւելորդ եւ ամենայն ինչ հնոյն գործ. եւ պարտ է ուղղապէս հաւատալ ի Քրիստոս ըստ օրինադրութեան հարցն, եւ զհաց ուտել մարմինն Քրիստոսի, որպէս եւ գրեալ է, եւ մի՛ բաղարջ: Եւ եթէ մեռաք օրինացն եւ ոչ եմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք, Սրբեցէք զհին խմորն մեղաց, ասէ առաքեալ, եւ բարձէք զայն ի միջոյ ձերմէ, զի եղիցուք նոր զանգուած Քրիստոսի. որպէս էք մկրտեալք անխմոր,

[45] կենդանօն ԱԳ
[46] կենդանն ԱԳ
[47] կենդանական... զկնի] Դ
[48] լինութիւն Ա
ԺՁ [1] սուրբ ԳԴԵ
[2] է] Ա

[3] վասն] զի Դ
[4] զՊօղոսի Գ
[5] Պօլէ ԱԳ
[6] զի մի Ա
[7] յաւելորդ ԱԳ

այսինքն՝ սուրբք եւ մեռեալք յաշխարհէ[8]. վասն զի այս է զատիկ մեր, որոյ[9] ասէ տօնել մեզ ոչ խմորով հին մեղացն եւ ոչ խմորով չար հերձուածոյն[10], այլ անխմոր սրբութեամբ և ճշմարտութեամբ, այսինքն անբիծ կենցաղով եւ ուղղափառ հաւատով, որով եւ ճշմարիտ հաւատացեալք լեալք[11], ճշմարիտ երկրպագուք եղիցուք: Վասն զի հոգի է Աստուած եւ երկրպագեաց նորա, որպէս ասէ Տէր[12], հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկրպագանել[13], այսինքն սրբութեամբ եւ ուղիղ հաւատով:

Եւ արդ՝ եթէ բաղարջիւ[14] կատարել[15] հրամայեալ էր, ո՛չ գրէր առ Կորնթացիսն[16] եւ նոքօք ընդ մեզ, եթէ՝ Սրբեցէք զհին խմորն մեղաց եւ առէք զայս ի ձեզ (հմմտ. Յակ. Դ, 8). զի եղիցուք նոր զանգուած[17] Քրիստոսի, որպէս էքդ մկրտեալք[18] անխմոր: Զի ոչ վասն ձերոյ այժմու բաղարջոյ[19] էին բանք Պօղոսի, այլ վասն սրբութեան եւ այնու պոռնկութեան, որ զկին հօր ունէր իբրեւ թէ մկրտելոցն[20] պարտ է ունել կեանս ի հին հեթանոսաց[21] խառնակմանցն անխմոր գոլով:

Եւ արդ՝ ուստի՞ ունիք դուք զսա. յառաքելո՞ցն ասէք[22], եւ ոչ երբեք, եւ ոչ տուին զայս գլուխք առաքելոցն եւ ոչ ուրեք ունին զսա եւ ոչ մի եկեղեցի ի ներքոյ երկնից, և ոչ Ասորիք, եւ ոչ դուք մինչեւ[23] ցՄանծկերտի ժողովն, ոչ յայտնի տուեալ եղեւ սա եւ ոչ խորհրդաբար ի ծածուկս: Լո՛ւր Պօղոսի, զի՞նչ ասէ. Եթէ ես ընկալայ[24] ի Տեառնէ, զոր եւ ձեզ աւանդեցի. եթէ Տէրն Յիսուս ի գիշերին[25], յորում մատնիւր[26], առ[27] հաց, եբեկ եւ ետ. տեսանես հաց ասէ[28] եւ ոչ բաղարջ, եւ ասէ[29] Այս է մարմին իմ, զայս արարէք առ իմոյ յիշատակի:

ԺԷ. Եւ ե՞րբ եղեւ այս տուեալ ի Տեառնէ, մինչ մերձեցաւ չարչարանք նորա. վասն զի պատկեր

[8] աշխարհի ԱԴԵ
[9] որ ԳԴԵ
[10] հերձուածոցն ԴԵ
[11] լեալ Ա
[12] Տէր ասէ Ա
[13] երկիրպագանել Ա
[14] բաղարջ ԴԵ
[15] կատարեալ Ե + մեզ ԱԳԵ
[16] Կորընթացիսն ԱԳ
[17] զանգուածք ԴԵ
[18] մկրտեալ Դ
[19] բաղարջի ԴԵ

[20] մկրտելոյն ԱԲԳ
[21] հեթանոսական ԳԴԵ
[22] ասէք] առէք ԳԴԵ
[23] մինչ Գ
[24] ընգալա Գ
[25] գիշերն Ե
[26] մատնէր ԱԳ
[27] էառ ԴԵ
[28] տեսանես հաց ասէ] Դ, զոնեա հաց ասէ Ե
[29] ասէ] ԴԵ

նորա[1] յաւուրս պասեքին եւ զենման գառինն, մեռանել գառինն[2] Աստուծոյ: Իսկ զկնի ուրբաթոյն[3] պատրաստեցին առնել զայն[4] Հրեայքն, ի հնգետասան օր ամսոյն, որպէս ասէ Յովհաննէս, եթէ՝ Ուրբաթ էր, եւ թէ ոչ մտին յապարանսն զի մի՛ պղծիցին[5], այլ զի կերիցեն զզատիկն. եւ եթէ էր օր Մեծ Շաբաթ այն[6], որ էր ԵԺ-Ն ամսոյն[7] առաջնոյ Հրէից, ԵՌԵՃԼ Դ. գոլ ամին, որ յԱդամայ թուականին, ԳԺ. գոլով կիկլոս արեգականն եւ հինգերորդ լուսնին: Վասն զի նախ քան զմօտելն զինքն ի մահ, ետ զինքն զատիկ աշակերտաց իւրոց՝ յընթրիսն նստելով Եշաբթի երեկոյին, ի սկսանել գիշերոյն ուտելով զընթրիսն եւ զիւր մարմինն պասեք ետ նոր, նախ քան զտօն բաղարջակերացն երկուց աւուրց: Եւ այս յայտ է՝ զի նստելով ուտէին. իսկ զպասեքն ոչ յայլ կամ յայլ օր, եւ ոչ նստելով, այլ ի միում պահու եւ յոտն[8] կալով, զմէջսն պնդեալ[9], զոտս կօշկեալս, ցուպ ի ձեռինն եւ յոտն ունելով գառն, բաղարջ եւ եղեգի միայն.

այսպէս հրամայէր ուտել օրէնքն Հրէիցն, այլ Տէր լռեցուցանել կամելով զհին պասեքն, զիւր նորն ետ պասեք յընթրիսն: Զայս եւ դուք եւս գիտէք ստուգապէս, եթէ ի Քրիստոսէ եւ յիւրոց[10] առաքելոցն ոչ կերեալ եղեւ բաղարջ եւ ոչ տուեալ եղեւ յայնժամ՝ վասն զի ոչ եկն ի վերայ ժամանակին[11] պասեքին, եւ աւանց ժամանակի առնել զայն մեծ անօրէնութիւն էր. եւ Քրիստոս ոչ երբեք անցեալ զօրինօքն ասի: Եւ թէ կերեալ էր Քրիստոս եւ աւանդեալ[12] զբաղարջն յայնժամ եւ օրինադրեալ մեզ, ապա ոչ էր լուծեալ[13] օրէնքն եւ խափանեալ ի Քրիստոսէ: Նոյնպէս եւ[14] առաքեալքն Քրիստոսի ոչ աւանդեցին մեզ, զոր ոչ առին ի Քրիստոսէ. եւ նոքա ամենեքեան հաց գրեցին տուեալ ի Քրիստոսէ, եւ հաց աւանդեցին ունել[15] զմարմինն Քրիստոսի յամենայն յաշխարհս:

Եւ արդ՝ զի ոչ էր բաղարջակերք յայնմ Հինգշաբթոջ, որ երեքտասան ամսոյն, նախ այսիւ յայտ է, վասն զի ոչ երեքտասան աւուրն[16] ընդ երեկս զենուին

ժէ [1] նորա] ԴԵ, նմա Գ
[2] գառնն ԱԳ
[3] ուրբաթուն ԱԵ, ուրբաթին Գ
[4] զայն առնել Ա
[5] պղծեցին ԴԵ
[6] ան+ այն շաբաթ ԳԴԵ
[7] + այն ԳԵ
[8] ոտն ԴԵ
[9] մէջս պնդեալս ԱԳ

[10] իւրոց ԱԴԵ
[11] ժամանակի ԴԵ
[12] + էր ԳԴԵ
[13] լուծել Ա
[14] եւ] ԳԴԵ
[15] ունիլ ԳԴԵ
[16] օրն ԴԵ

զգառն, եւ յետ գառինն սկսանէր բաղարջակերքն զաւուրս եօթն, ոչ նախ քան զայն համարձակելի էր, եւ ի նմին ժամու զենաւ ի խաչին Քրիստոս գառն Աստուծոյ:

Եւ արդ՝ եթէ կամիս ստուգել, լուր զբանսն Աստուծոյ առ Մովսէս ասացեալսն[17]: Այսոքիկ են, ասէ, տօնք Տեառն քում, եւ աւուրք սրբեալք[18], զոր կալջիք առնել ի ժամանակի իւրեանց. յառաջնում ամսեանն ի չորեքտասան[երրորդ] օր[19] ամսոյն ընդ երեկս պասեք Տեառն է. եւ ի հնգետասան աւուր նոյն ամսոյ ընդ առաւօտն բաղարջակերաց է, զաւուրս եօթ բաղարջ կերիջիք: Ամենայն անթլպատ[20] մի՛ կերիցէ ի նմանէ[21]. եւ որ առաջի[22] կամ յետոյ կերիցէ քան զժամն զայն, մահու մեռանիցի[23]: Եւ արդ՝ յայսմանէ օրինաց է, զի ոչ էին բաղարջակերաց աւուրք, եւ նախ քան զաւուրսն ուտել անօրէնութիւն էր: Եւ եթէ անօրինեցան մահապարտ էին, եւ յիրաւի մեռանէին ի Հրէիցն. եւ ընդէ՞ր խնդրէին սուտ վկայս՝ թէ անօրինեցան: Եւ արդ՝ Հինգշաբթի երեքտասան էր ամսոյն, եւ ուտէին նստելով զընթրիսն, ունելով հաց ու գինի, եւ անտի ետ Քրիստոս զխորհուրդ Նորոյ կտակիս հաց եւ գինի, երկուց աւուրց յառաջ քան զբաղարջակերսն, զի ըստ օրինացն ի հնգետասան ամսոյն տօն բաղարջակերացն էր, եւ Տէրն ի Հինգշաբթի ետ զհացն աշակերտացն, եւ յՈւրբաթի[24] խաչեցաւ. և ի Շաբաթ ընդ առաւօտն սկսաւ բաղարջակերութիւնն, եւ յայնժամ Տէրն ի գերեզմանի երկօրեայ[25] էր:

Եվ արդ՝ զի նախ քան զտօնն ոչ էր օրէն[26] ուտելոյ եւ ոչ գտանիւր[26] բաղարջ, ուստի՞ ետ Տէրն. զի յամենայն տարին եօթ օր միայն ուտէր բաղարջ եւ այլ ոչ համարձակէր[27]: Եւ թէ զԱւետարանին ասես, թէ պատրաստեցին[28] զզատիկն, զատիկ գառն կոչէր[29], եւ զգառն ի տասներորդ օր ամսոյն առնուին, բայց ոչ զենեալ կատարէին եւ ոչ ուտել, այլ այն աւուրք չորք՝ ո՛չ բաղարջակերք, այլ առաջին աւուրք բաղարջակերաց կոչէին: Եւ արդ՝ զի ոչ աւուրք էին եւ ոչ օրէն ուտել բաղարջ, եւ Քրիստոս ոչ անօրինացաւ. ուստի՞ է

[17] ասացեալն ԱԳ
[18] սուրբք ԴԵ
[19] չորեքդասան օր երրորդ Ա
[20] անթլպատ ԳԴ
[21] սմանէ ԴԵ
[22] առաջին ԴԵ
[23] մեռցի Գ

[24] ուրբաթի Դ
[25] երեքօրեայ ԱԴ
[26] օրէն էր ԱԵ
[26] գտանէր ԱԳ
[27] համարձակիւր Դ
[28] պատրաստեցի ԱԳ
[29] կոչիւր Դ

բաղարջն[30], յորժամ զընթրիսն ուտիւր[31] ի Քրիստոսէ, յորոյ զկնի զհացն ետ աշակերտացն:

Արդ՝ ե՞րբ կամ որպէ՞ս էր. արտաքոյ օրինա՞ցն կերին[32], թէ ըստ օրինացն կերաւ մինչեւ ի գերեզմանին էր. Եւ արդ, զի՞նչ ասելի[33] է առ անպատշաճ բանսդ եւ աննմանսդ: Այլ զի հաստատուն հաւատարիմ են այս բանք՝ վկայէ Եպիփան Կիպրացի, որ եւ ինքն ի Հրէից է. այսպէս ասելով ի բանսն, որ Յաղագս հաւատոյ է արարեալ, Եթէ երեք նիւթիւք առնէին Հրեայքն զպասեքն՝ երեք առաքինութեամբք, երեք վկայիւք, եւ երեք նիւթքն այսոքիկ՝ գառն, բաղարջն[34] եւ դառնիճն. իսկ առաքինութիւնքն՝ զմէջսն պնդեալ[35], զոտսն[36] զգեցուցեալ[37] եւ ի ցուպ յեցեալ[38], եւ այսպէս յոտն կալով ուտել: Իսկ երեք վկայքն՝ դպիրքն օրինացն երեք, որ[39] մերձ կալով առ սեղանն՝ ուրեմն ունելով[40] դրեալ[41] ջուր սկաւառակաւ. եւ ընդ ժամ լրման լուսնին շարժիւր[42] ջուրն ի սկաւառակին, զգուշութեամբ նայելով տեսանէին զշարժիլ[43] ջրոյն եւ իմացեալ զլրումն լուսնին մեծաձայն ասէին. Փասկայ Տեառն. եւ լսեալ ի նոցանէ՝ սկսանէին փող հարկանել մեծաձայն, զի լսելով միանգամայն քաղաքն եթէ զատիկ է Տեառն, զենուին զգառն, անտի և սկսանիւր[44] տօն բաղարջակերացն զեօթն օր: Այլ ոչ ումեք էր իշխանութիւնն նախ քան զշարժիլ[45] ջրոյն եւ զգոչել փողոյն, գառին կամ բաղարջի կամ դառնճաց շարժիլ[46] կամ մերձենալ կամ ուտել զնա՝ որպէս և գրեալ էր յօրէնսն ուտել զզատիկն, վասն զի ասէ. Փողեցէք զփող տարեաց, յամիսն առաջին. եւ ի Սաղմոսին՝ Փող հարէք ի գլուխս ամսոց յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց: Իսկ նշանաւորն ասէ շարժումն զջրոյն ի սկաւառակին ի[47] սակս լուսնին:

ԺԸ. *Այլ[1] իբրեւ կամեցաւ Տէրն դադարեցուցանել եւ խափանել զօրէնսն եւ զտօնսն Հրէից, զգառն, զբաղարջն եւ զեղէգն, նոյնպէս եւ զմէջս պնդելով,*

30 բաղարճն ԱԳ
31 ուտէր ԱԳԵ
32 կերաճ ԱԳԵ
33 ասել Գ
34 բաղարճն ԱԳ
35 պնդել Ա
36 զոտն Դ
37 զգեցուցանել ԱԳ
38 յեցեալ] յենալն ԱԳ
39 որ] օր Ա
40 ունէր ԳԴԵ
41 դրեալ] դալար ԱԳԴ

42 շարժէր ԱԳԵ
43 զշարժել ԱԳ, զշարժեալ Ե
44 սկսանէր ԱԳ
45 զշարժել Ա
46 շարժել Ա
47 ի] ԴԵ
ԺԸ 1 Այլ] արդ Դ

զոտս զգենուլ՝ ի ցուպ ունելոյ նախ եւ զերիս դպիրսն, եւ զջուրն շարժել, եւ զփողսն փողեաց[2] զժամն, եւ զկարգ եւ զանօթ նոցա, եւ յերեքտասան աւուրն ամսոյն առաջնոյ, ի չորեքտասան եւ կէս աւուր լուսնին ի Վերնատունն նստելով Քրիստոս Աստուածն մեր, ետ զհաց կտրեալ[3] եւ զբաժակն խառնեալ աշակերտաց իւրոց զատիկ նոր զխորհուրդ Նորոց[4] կտակարանացս եւ զիւրն պասեք առանց գառի եւ բաղարջի եւ դառնճի[5], զի եւ ոչ ժամ էր եւ ոչ օրէնս էր[6] եւ ոչ էր դեռ եւս պատրաստեալ ի Հրէից. եւ որպէս զի փոխադրեսցէ զՀինն ի Նորս ուխտ, այսինքն՝ զհրեական[7] եւ զմարմնաւոր[8] օրէնս, ի հոգեւոր եւ շնորհաց կարգս, զգառն փոխելով զանբան՝ ինքն փոխանակ զենաւ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի որպէս Պօղոս ասէ. Եթէ Զատիկ մեր զենաւ Քրիստոս. զմեռելոտի բաղարջն եբարձ եւ զինքն ետ կենդանի եւ երկնաւոր հաց. եւ ընդ դառնճացն կենսաբեր իւրն չարչարանս, վասն զի զամենայն առնելով՝ զչարչարանս իւր յուշ առնէր նոցա, զոր եւ զատիկ իւր կոչէր:

Այլ վասն զի ոչ ժամ եւ ոչ օրէնք եւ ոչ օր էր զատկին, ոչ արար Տէր զզատիկ գառինն եւ զբաղարջին եւ զդառնճացն. զի առանց իւր ժամու ոչ ընաւ կատարելի[9] էր, զայն եթող ի Շաբաթու առնել Հրէիցն, եւ ինքն ի Հինգշաբթոջ զիւրն ետ մարմին եւ արիւն[10] իւրոց աշակերտացն, եւ նոքօք ամենայն հաւատացելոց ի փրկութիւն եւ ի կեանս յաւիտենից: Ահա՝ ոչ էր եւ ոչ գոյր անդ բաղարջ: Եւ արդ՝ ի Քրիստոնէ եթէ ասէք տուեալ, ահա յայտնի է, որ ոչ էր օրն բաղարջոյ, եւ ոչ օրէն[11] էր տալոյ, եւ ոչ զօրինօքն էանց Քրիստոս, եւ եթէ Քրիստոս օրինօքն[12] գոլով եւ ոչ ելոյծ զօրէնսն եւ զբաղարջն ետ ձեզ, ապա ըստ օրինացն կարգի ետ ստոյգ եւ ոչինչ պակասեցուցանելի է: Եւ ըստ օրինացն այսպէս էր. արտաքոյ Երուսաղէմի որ ուտէր՝ անօրէն էր[13], եւ անթլփատի ոչ էր հնար ուտել՝ եւ[14] քան զեօթն օր ի տարւոջն այլ ոչ համարձակիւր[15] ուտել, եւ զայն եօթ օրն բա-

2 փոխեաց Գ
3 կտրլ ԱԵ կտրել ԳԴ
4 Նորոյ Ա
5 դառնճաց Ա
6 օրէնս էր] օրէն ԱԴԵ
7 զհրէական ԱԳԴԵ
8 մարմնաւոր ԴԵ

9 կատարեալ Ա
10 զարիւն ԱԳ
11 օրէնք ԱԳ
12 զօրինօքն ԳԴԵ
13 անօրին էր ԴԵ
14 + նոքա Ա
15 համարձակէր ԱԳ

զարջն եւ եղեգի միայն ուտել օրէն էր եւ ոչ այլ[16] ինչ:

Եւ արդ՝ եթէ ի Քրիստոսէ է տուեալ, այսպէս ուտելի է ըստ օրինացն, ապա թէ ոչ այնպէս[17], անիծեալ ամենայն որ ոչ կացցէ[18] յամենայն գրեալսն, որ ոչ կատարէ զամենայն գրեալսն ի Գիրս օրինաց: Եւ արդ՝ պարտ է ձեզ զամենայն օրէնս կատարել եւ ոչ զայդ[19] միայն: Ապա թէ զԱւետարանն ասէք ասել, թէ ուտէին զատիկն, չորս աւետարանիչքն ասեն, թէ Յառաջանում աւուր բաղարջակերացն գնացին եւ պատրաստեցին, այսինքն առին զգառնն եւ ունէին ի տան. այլ զգառին եւ զպասեքին ուտելն ոչ ասացին, այլ զընթրիսն ուտէին, զի մինչեւ ի զատիկն[20] ընթրիսն ուտելի էր. եւ լուր Մատթէոսի[21] որպէս[22] ասէ. Եւ յառաջնում աւուր[23] բաղարջակերացն ասեն աշակերտքն՝ Ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք քեզ զզատիկն. եւ գնացին եւ[24] պատրաստեցին. եւ այն զի չորից աւուրց յառաջ օրէն էր պատրաստել՝ սոքա[25] զպատրաստելն ասեն, այլ զնորա զենուլն[26] ոչ ասեն: Այլ ասէ. Իբրեւ երեկոյ եղեւ, կայր բազմեալ ընդ երկոտասան առաքեալսն. եւ մինչդեռ ուտէին, առ Յիսուս հաց, գոհացաւ, եբեկ եւ ետ: Արդ՝ բազմելով ուտելն ի՞նչ նշան զատկին[27] է. եւ կամ հացն տալ եւ զբաժակն զի՞նչ նշան զատկի էր: Ահա՛ զպատրաստելն ասաց զզատիկն[28] եւ զուտելն ընթրեացն: Որպէս զի կերիցեն զզատիկն ասէ, յիւր օրն կերիցեն, եւ ոչ թէ ուտէին: Նոյնպէս եւ Մարկոս ասէ. Յառաջնումն բաղարջակերացն հարցին եւ գնացին պատրաստեցին. եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ գայ երկոտասանիւքն հանդերձ, եւ մինչդեռ բազմէին[29] և ուտէին, առ[30] Յիսուս հաց[31], գոհացաւ եւ ետ: Եւ ի նմին աւուր[32] պատրաստել եւ ուտել ոչ էր օրէն. եւ նստեալ էին եւ ուտէին, եւ հաց ունէին եւ գինի: Այլեւ[33] Ղուկաս ասէ. Եկն օր[34] բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպասէքն, եւ առաքեաց

16 այլ ոչ Ա
17 այսպէս ԴԵ
18 կայցէ Գ
19 զայտ ԱԳ
20 ի զատիկն] ցզատիկն Ա
21 Մաթէ է ԱԳ, Մատթէի Ե
22 որպէս] որ Դ
23 աւուրցն ԱԳ
24 եւ] Ա

25 սոքա] Դ
26 զենեալն Ա, զենելն Գ
27 զատիկ ԴԵ
28 զատիկն ԴԵ
29 բազմեալ Գ
30 առեալ ԱԳԵ
31 հաց] ԱԳ
32 աւուր] առ ի ԴԵ
33 Այլ ԴԵ
34 + աւուր Ա

զՊետրոս եւ զՅովհաննէս՝ Երթայք պատրաստեսջիք զԶատիկն, զի կերիցուք, եւ գնացեալ պատրաստեցին: Իբրեւ ժամ եղեւ՝ բազմեցաւ, եւ երկոտասանքն ընդ նմա. զպատրաստեալն ասէ և զանդ գնալն, այլ բազմիլն՝[35] ոչ պասեք: Նաեւ զոչ ուտելն այսիւ յայտնէ[36], յառաջնորդիւ[37] սորա[38] ասէ. Ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ[39] ձեզ մինչեւ չարչարեալ իցեմ. բայց զայս ասեմ ձեզ, թէ ոչ եւս կերայց[40] ի սմանէ, մինչեւ լցցի արքայութիւնն Աստուծոյ:

Ահա՛, ոչ եւս կերայց ասէ, թէպէտ եւ ցանկամ[41]: Եւ ընդէ՞ր, զի ոչ է ժամ ըստ կարգի օրինացն, եւ արտաքոյ[42] օրինացն ոչ է պարտ: Եւ ընկալեալ[43] բաժակ գոհացաւ եւ ետ, եւ առեալ հաց, եբեկ եւ ետ: Ահա ստոյգ ցոյցն ոչ ուտելոյն: Իսկ Յովհաննէս, զոր զամենայն եւս առաւել քաջ գիտէր, այսպէս ասէ[44]. Յառաջագոյն քան զտօն զատկին, գիտաց Յիսուս թէ հասեալ է ժամ նորա, եւ ի լինել ընթրեացն սատանայի իսկ արկեալ էր ի սիրտն: Ահա յառաջագոյն էր, եւ ոչ զատիկ, այլ ընթրիս. եւ յայն ընթրեացն ետ[45] զպատառն Յուդայի Իսկարովտացւոյ[46]:

ԺԹ. Արդ՝ ո՞ ի չորիցս յայսցանէ աւետարանչացս ասաց կամ զզատիկ[1] ուտել, կամ բաղարջ. այլ միանգամ չորքեանն[2] յառաջագոյն ասեն ուտել, եւ նստել հաց եւ գինի տուեալ, փոխանակ մարմնոյ եւ[3] արեան: Եւ արդ՝ զի՞ ոչ ի Քրիստոսէ լուարուք եւ զի՞ ոչ յառաքելոցն է տուեալ, այս նշանք է, զի որ[4] եւ ոչ մի եկեղեցի առաքելադիր ունի կամ ունեցեալ է զբաղարջդ[5]. եւ ոչ դուք մինչեւ ցԴունայ ժողովն, եւ ոչ Ասորիք, յորմէ զմի բնութիւն առիք եւ զխաչեցարն յԵրրորդութիւնն, եւ ոչ նոքա ունին զայդ: Ապա թէ յառաքելոցն ասես, լո՛ւր Պօղոսի որ ասէ առ Կորնթացիս[6]. Սրբեցէք ի բաց զհին խմորն, զի եղիցուք նոր զանգուած, որպէս էքդ[7] անխմոր (հմմտ. Յակ. Դ, 8). քան զի[8] զատիկ մեր զենաւ

35 բազմելն ԱԳ
36 յայտ է ԴԵ
37 յառաջնորդիւս ԳԴԵ
38 սորա] որ ԳԴԵ
39 ընդ] ԴԵ
40 կերայ] Դ
41 ցանգամ ԱԳ
42 արտաքոյ] ասի ոք Ա, պիոքո (sic) Գ
43 ընգալեալ Գ
44 ասէր ԱԳ

45 ետ] էր Դ
46 Սկարօտացւոյ Ա

ԺԹ 1 զատիկ Ա
2 չորքն ԴԵ
3 եւ] Ա
4 զի որ] զի ԴԵ
5 զբաղարջտ ԱԳ
6 կորընթացիսն Ա
7 էքտ ԱԳ
8 զի ԴԵ

Քրիստոս, այսուհետեւ արասցուք տօնս, մի՛ ի խմորն հին, եւ մի ի խմորն չարութեան եւ անզգամութեան, այլ յանխմորն ստուգութեան եւ ճշմարտութեան: Եւ այլ՝ Բաժակն, զոր օրհնեմք, ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի, զհացն[9] զոր բեկանեմք ո՞չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի. այլ քանզի Քրիստոս խափանելոց էր զհինն: Եւ բայց եթէ ի Քրիստոս նոր արարած իցէ, զի հինն անց[10] եւ արդ նոր եղեւ: Եւ զայս գիտեմ՝ եթէ ոչ արդարանայ մարդ ի գործոց օրինաց, եթէ ոչ ի հաւատոցն Յիսուսի Քրիստոսի: Եւ մեք ի Քրիստոս Յիսուս հաւատացաք[11], զի արդարասցուք նովաւ:

Արդ՝ յայսոսիկ յամենեսեան ո՞ւր ասաց կամ հին ի՞նչ ի փրկութիւն եղեալ, կամ բաղարջ զմարմինն Քրիստոսի: Առ Եբրայեցիսն ասէ, եթէ՝ Կատարումն ի ձեռն Ղեւտացւոց քահանայութեանն (Եբր. Է, 11), ապա այլ ո՞չ էր պարտ այլում քահանայապետի յառնել եւ Մելքիսեդեկի[12] նմանեալ[13] որդւոյ Աստուծոյ ասէ. եւ վասն Քրիստոսի ասէ. Ոչ ըստ կարգին Ահարոնի, այլ ըստ կարգի Մելքիսեդեկի, որպէս եւ ասէ, թէ՝ Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգի Մելքիսեդեկի: Եւ արդ զի՞նչ էր կարգն Մելքիսեդեկի, այսինքն հաց եւ գինի մատուցանել Աստուծոյ. զնա եւ մատոյց հայրապետին, զոր մատուցանէր հօր, եւ օրինակ Քրիստոսի էր: Իսկ կարգ Ահարոնի[14] էր արիւն ցլուց եւ նոխազաց եւ մոխիր երինջուց ցանել[15] զպղծելեօքն, եւ գառն եւ բաղարջ, եւ դառնիճ մատուցանէր Աստուծոյ: Իսկ Քրիստոս ըստ կարգին Մելքիսեդեկի՝ այսպէս. զի զանձն իւր պատարագ մատոյց հօր, եւ զկատարեալ հացն եւ զգինին ետ մեզ ի փրկութիւն: Եւ այսպէս[16] եղեւ քահանայ յաւիտենից: Եւ արդ՝ զի՞նչ նման Մելքիսեդեկի. եւ Քրիստոս է՞ Ահարօնի, կամ ընծայք[17] սոցա՝ նորայն[18] ընծայից[19]: Զի նորայն անբան եւ անմիտ եւ մեռելոտի, սոցայն[20] հոգւոր, մտաւոր եւ բանաւոր:

Եւ արդ ո՞ր օրինակաւ զՔրիստոս[21] ասես բաղարջ լեալ: Ապա եթէ ասես, թէ չընտրեաց[22] ի միջի, այլ բաղարջ հաց գրեցին,

9 հացն ԴԵ
10 էանց ԳԴԵ
11 հաւատասցուք ԱԴԵ
12 Մելքեսեդեկի Ա
13 նմանիլ Դ, քէ] ԳԴԵ

14 Աhարովնի ԱԳ
15 ցանեալ Ա
16 եւ այսպէս] նա Դ, եւ սա Ե
17 ընծայ ԴԵ
18 նորայն] նորոյն ԴԵ
19 ընծայի Դ
20 նոցայն Դ
21 ասես զՔրիստոս Ա
22 չընդրեաց Ա

դիւրագոյն էր թէ բաղարջ էր լեալ, զի բաղարջ[23] էին գրեալ ամենեքեան: Վասն զի սովորութիւն է գրոց ճշմարտապէս զհացն հաց գրել, եւ զբաղարջն բաղարջ: Եւ արդ՝ վասն զի ոչ համանունաբար եւ փաղանունաբար բաղարջ հաց ոչ կոչի, եւ ոչ հաց՝ բաղարջ, զի որպէս անհոգի եւ անմիտ՝ մարդ ոչ կոչի, եւ ոչ բաղարջ հա՛ց կոչելի է: Եթէ բաղարջին հաց կոչեցին, ապա ի լաւ է անդր ասացից[24] զանունն զի իւր յետս ձգելի էր, եւ[25] հին գիրք[26] յատուկ ասեն զհաց՝ հաց, եւ զբաղարջ՝ բաղարջ, որպէս Ադամայ, զհաց քո ասէ. եւ Աբրահամու՝ նկանակ[27], Մելքիսեդեկի՝ հաց ասէ, Ղովտայ՝ բաղարջ ասէ, եւ Յոթոր ասէ. Կոչեցէք զՄովսէս զի հաց կերիցէ[28]: Յօրէնքն բաղարջ եւ բաղարջակերք ասէ, եւ հաց առաջաւորութեան ասէ: Առ Գէդէոն[29] բաղարջ ասէ: Եւ[30] Դաւիթ զՔրիստոսէ՝ որ ուտէ զհաց քո ասէր վասն Յուդայի եւ Աւետարանն եւ նոքա հաց ասեն յամենայնի. եւ այսպէս՝ հաց էր եւ հաց ասի, զի եթէ բաղարջ էր զինքն ասէ (Հմմտ. § ԺԵ):

Ի. *Այլ ասէք[1], թէ Ֆռանկք[2] հին ազգ են եւ առաքելական, եւ նոքա բաղարջ ունին, եւ մեք՝ ի նոցանէ: Այլ դուք ոչ էք[3] Ֆռանկաց աշակերտ եւ ոչ միաբան լեալ, եւ ոչ այլ կարգի հաւասարիք, բայց միայն զայդ ասէք ի նոցանէ ունել: Նոցա զբաղարջն եւ զթլպատութիւնն թոյլ ետուն առաքեալքն, վասն զի ի Հրէից էին հաւատացեալք, բայց դուք Եփեսոսի էք որդիք. զի՞նչ ձեզ եւ նոցա. եւ թէ արդ եւս նոցա էք, մի՛ միայն բաղարջոյն, այլ եւ ամենայնի լերուք[4] ընդունակ: Առաքեալք կարգեցին սոցա[5] օրէնս, եւ ոչ զմի ունէին[6] ի նոցանէ զգուշանալ ի հեղձելոց եւ յարենէ[7] եւ ի պոռնկութենէ եւ ի զոհելոյ կռոց: Եւ նոքա բնաւ հեղձեալ ուտեն[8] եւ զամենայն զազանս ուտեն՝ զարջ եւ զճագար եւ զամենայն, եւ արիւն հեղուլ. եպիսկոպոսք[9] եւ քահանայք ի պատերազմունս գնան և սպանանեն, և պոռնկութիւն ոչ զքահանայագործել արգելու, արուագիտութիւն եւ անասնագիտութիւն եւ շնութիւն ոչ մեղք*

23 զբաղարջ Գ
24 ասացի Դ
25 եւ] զի Դ
26 գիրգ Ե
27 նկանակս ԱԳ
28 կերիցէ հաց Ա
29 Գէղէոն Դ
30 եւ] ԱԴ

Ի 1 ասէ ԱԳ
2 ֆռանգն ԱԳ
3 ոչ էք] ոչ երբեք ԱԳ
4 լեր ԱԳ
5 նոցա ԱԳ
6 ունին Ա
7 յարիւնէ ԱԳ
8 ուտին Դ
9 եպիսկոպոս Գ

եւ ոչ ապաշխարել ի կարգին[10] են. զբազում քոյր կին առնուլ եւ զկին հօր ունել եւ զշաբաթս պահել, եւ զչորեքշաբաթ եւ զուրբաթ՝ ոչ. զՀոգին Սուրբ ի Հօրէ եւ յՈրդւոյ ելանել, զՔրիստոս երկու բնութիւն խոստովանին եւ զխաչեցարն ի Սուրբ Աստուածքն ոչ ասեն, զտօներն զամենայն ուղիղ տօնեն, եւ դուք[11] յայսոց[12] յամենայնէ[13] ոչ առիք ի նոցանէ, եւ զբաղարջն միայն ընդէ՞ր առիք: Այլ Ասորիք, յորոց ունիք զմի բնութիւն եւ զխաչեցարն, եւ նոքա զտօներն ուղիղ տօնեն եւ զնշխարն[14] հաց և ի բաժակն ջուր, եւ դուք զայլ ամենայն այլ և այլ[15] ստաւանդ[16] ասէք. այլ որպէս ի Քերականին[17] ձեր գիրք[18] գրեալ է եթէ զոր օրինակ ի Նիկիոյ[19] ժողովն զՀաւատամքն ասաց եւ Եփեսոսին՝ զՓառք ի բարձունսն, եւ Կոստանդնուպոլսին՝ զՀոգին Սուրբ, տէրն եւ կենդանարարն, նոյնպէս եւ մեք Դունայ ժողովս համարձակեալ օրինադրեցաք, զՔրիստոսի մարմնոյ բնութիւնն ընկղմեցաք՝ մի խոստովանելով, եւ զհաց պատարագին բաղարջ արարաք, անապական եւ զգինին՝ անջուր: Զայս անդ արարեալ, զայլ ազգս ոչ է պարտ վկայ եւ[20] նանիր բերել եւ սուտ[21]:

Եւ արդ՝ որք բաղարջիւ հաղորդին զՔրիստոս գործովք զԱպօղինարին[22] յինքեանս ձգեն զհերձուած, որպէս ոչ գիտեն: Վասն զի նա մարմին միայն ասէր առանց հոգւոյ եւ մտաց՝ առեալ բանին Աստուծոյ ի կուսէն Մարիամայ, հոգի իւր զաստուածութիւնն գոլով: Իսկ մարմին առանց հոգւոյ եւ մտաց գոլով՝ մեռելոտի: Եւ որք զբաղարջ հաղորդին փոխանակ մարմնոյ նորա, զանմիտ եւ զմեռելոտի հաղորդին, զի խմոր օրինակ հոգւոյ է ի հաց, եւ աղ՝ օրինակ մտաց[23], զոր ոչ ունելով բաղարջ, զի մեռեալ է և մեռուցանող եւ յիմարացուցիչ նոցա լինին, մնալ անդառնալի իմն յանձնապաստան հերձուածս իւրեանց:

Այլ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ և կատարեալ Աստուած է եւ կատարեալ մարդ՝ մարմնով եւ հոգւով եւ մտօք, հաց էառ կատարեալ խմորի[ւ] և աղով, և

[10] կարգին] կարիս (sic) ԱԳ
[11] դու Ե
[12] յայսց Դ
[13] ամենայնի Դ
[14] նշխարն ԱԴ
[15] այլ և այլ] Դ
[16] ստայաւանդ ԱԵ
[17] Քերականին] Կերականին ԳԵ, Կիրականին Դ
[18] գիրք] Գեորգ Գ
[19] Նիկիայի Ա

[20] եւ] ի ԳԴ
[21] եւ սուտ բերել ԳԴ
[22] զԱպօլինարին Ե
[23] մտաց] մարդոյ Դ

օրհնեաց եւ եբեկ եւ ետ եւ ասէ. Առէ՛ք կերայք[24], այս է մարմին իմ, հաց յերկնից իջեալ: Եւ բաժակ ետ խառնեալ եւ ասէ. Այս է արիւն իմ, վասն զի ի հինն բաղարջ եւ դառնիճ նորոյ ուխտի միջնորդ լինել ոչ կարէր:

Եւ արդ՝ որպէս ոչ ընդունելով ձեր զյղութիւն եւ զծնունդն Քրիստոսի, նոյնպէս եւ զկանայս ոչ ընդունիք, եւ ոչ թուլացուցանէք նոցա գործել զհաց պատարագին, իբրեւ բոլորովիմբ[25] անսուրբ համարելով զազգս կանանց, եւ զայս ոչ իմանայք, եթէ պատարագին այն հաց ոչ եթէ յայնժամ ինչ գործի եւ եփի, յորժամ ընծայի եւ պատարագի, եւ մարմին Քրիստոսի փոխարկի, այլ յայնժամ, յորժամ սուրբն օծեալ քահանայն յօծեալն եկեղեցի ի վերայ օծեալ սեղանոյն հանելով, եւ ինքն խորհրդական զգեստիւք[26] եւ բնական առաքինութեամբք զարդարեալ, խորհրդարան եւ զառաքելադիր աղօթսն ի վերայ ընթեռնելով, ընծայէ Աստուծոյ, եւ կնքեալ ասէ. Եւ արա զհացս զայս պատուական մարմին Քրիստոսի քոյ, եւ զբաժակ՝ արիւն Քրիստոսի քոյ:

Եւ դարձեալ՝ զի որդին Աստուծոյ զմարմին մարդկային ոչ յառնէ ձգեաց յինքն, այլ աւետեօք հրեշտակին ի կոյսն բնակեցաւ զինն ամսեան ժամանակ, եւ ի նմանէ ծնաւ աստուածացեալն մարմին, եւ ի կանանց սպասաւորեցաւ, եւ լուացաւ[27], խանձարուրեցաւ[28] եւ ստեամբք դիացաւ, եւ զամենայն սպասաւորութիւն ննդեան ի նոցանէ էառ զերկոտասանամեայ, եւ ընդ Սամարացւոյն[29] խօսեալ, ջուր առեալ ըմպեաց ի նմանէ, եւ ի պոռնկէն արտասուօք զոտս թացեալ եղեւ, եւ ի Մարիամայ օծեցաւ, եւ յիւղաբերիցն[30] յոտսն համբոյր էառ յետ յարութեանն, եւ զայս ամենայն սպասաւորութիւն ի կանանցն[31] վասն այսորիկ ընկալաւ, վասն[32] զի զմարդկան ազգ եկն ի բժշկել Տէրն, եւ զնոցայն էառ զմարմին եւ հաղորդեցաւ արեան եւ մարմնոյ: Եւ յայտ իսկ է, զի ամենայն բնութիւն մարդկան կանանցածին գոլով, բաց[33] ի միոյն Ադամայ, զի նա ստեղծուած Աստուծոյ[34] եղեւ. իսկ Եւայ՝ հատումն ի նմանէ, հոգի ի հոգւոյ, եւ ոսկր յոսկերաց, եւ մարմին ի մարմնոյ. եւ ի միասին զօրհնութիւն աճման ընկալեալ յԱստուծոյ. յայնմհետէ բովան-

[24] կերէք ԳԴ
[25] բոլորովին Դ
[26] զգեստուքն Ե

[27] լացաւ Դ
[28] խանձարեցաւ Ե
[29] Սամարացն Ա
[30] յեղայբերիցն Ե
[31] կանանցն] կենաց Գ
[32] վասն] ԳԴԵ
[33] բայց Ե
[34] յԱստուծոյ Ե

դակ բնութիւն մարդկան ի կնոջէ հատեալ, մարմին ի մարմնոյ, եւ ոսկր յոսկերաց եկին յաշխարհ, յորոց եւ յորմէ Քրիստոս:

ԻԱ. Արդ՝ եթէ ամենայն արդարք եւ մարգարէք եւ առաքեալք եւ քահանայապետք եւ ինքն, որ յԱստուծոյ Աստուած Բանն էր Քրիստոս, յորոց օրէնք եւ կարգ մտին յաշխարհս, ամենեքեան ի կանանց հատան եւ մտին յաշխարհս, եւ սուրբ ի սրբոց եղեն գոյացեալք, դու զիա՞րդ համարիս պիղծ, ո՛վ փարիսեցի: Եւ արդ՝ զկնի օրհնութեանն եւ մարմին Քրիստոսի լինելոյ հացին հաղորդութեան նորա, եւ ի սոսա բնակելոյ, եւ միաւորելոյ նոցա, նովաւ ընդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, արժանի են[1] կանայք լոկ հացին սպասաւոր լինելոյ. զիա՞րդ այդպէս[2] ոչ արժանի:

Եւ արդ՝ որ ունի յինքն զբանական հոգի եւ զպատկեր Աստուծոյ, եւ քեզ քահանայիդ[3] նա յիւր[4] արեանցն տուեալ է զհոգի[5], դու զնա զիա՞րդ պիղծ ասես[6] գոլ ի սպասաւորել հացին: Եւ արդ՝ զհոգի[7] քո յորմէ ունելով, դու քան զնա որպէ՞ս սուրբ, որպէս զի դու աստուածացուցանելոյ հացին արժանի, յորմէն դուդ ես[8] գործելոյ ոչ արժանի. զի եւ դու կամ սուրբ ի սրբոյ եղեր, ապա թէ ի պղծոյ՝ պիղծ[9] եւ դու:

Եւ արդ՝ վասն զի ոչ բանիւք[10] խոստովանութեան, այլ ի գործոց իմիք, լոկ մարդոյ ցուցանէք[11] հաւատալ զՔրիստոս ձեզ, իբրեւ զՊօղոս Սամոստացի[12] և զԹէոդորոտոն, նոցայն հետեւող լեալ[13] վարդապետութեանն, վասն զի ի միաւորեալ խորհրդոյն Քրիստոսի ոչ արկանէք ընդ բաժակի զջուր ըստ սահմանադրութեան առաքելոցն, որպէս եւ նոքա ի կարգաւորութիւն պատարագին գրեալ են. վասն զի արկանել ջուր ընդ գինւոյ՝ զերկու անխառնակելի բնութիւնսն իւր[14] օրինակ է զաստուածային եւ զմարդկային. եւ որպէս յայտ եղեւ, յորում ժամու կախեալ կայր զփայտէ խաչին, յանապական կողիցն իւրոց ելին այսուքիկ, մինչեւ[15] խոցեալ եղեւ տիգաւն ի զինաւորէն[16]: Եւ յաղագս այսո-

ԻԱ 1 են] եւ ԱԳԴ
2 ոչ այդպէս ԳԴ
3 քահանային ԱԵ
4 իւր ԱԴ
5 +քո ԳԴ
6 ասեն Ա
7 զհոգիդ ԱԳԵ
8 դու Ա
9 պեղծ Ա
10 բանիւք] բնաւք ԳԴ
11 ցուցանէր ԳԴ
12 Սամոստեցի ԱԳԴ
13 հետեւող լեալ] հետ եւ ոչ լիալ Դ
14 իւր] ԳԴ
15 մինչ ԱԳԴ
16 զինուորէն Ա

րիկ գինի յօրինակ[17] արեան առեալ լինի ի սակս մարդկային բնութեանն, իսկ ջուրն նոյնպէս զկենդանի աստուածային բնութիւնն[18] օրինակով. ո՛չ եթէ կամ ջուր գոլով յԱստուծոյ[19] բնութիւն, կամ խոցելի եւ[20] հեղլի է[21], այլ օրինակ միայն, զի գրեալ է[22] ի հարց՝ Արիւն իբրեւ զմարդոյ, և ջուրն իբրեւ զԱստուած տալով: Եւ այլ՝ արիւն իբրեւ զմարդոյ, եւ ջուրն առաւել իբրեւ քան մարդոյ: Եւ այլ՝ արիւն իբրեւ զմեռանելոյ բնութեամբ, եւ ջուրն իբրեւ զմիշտ կենդանւոյ գոլով: Այլ զայլ ասելով ձեզ, վան կողահոս աղբերացն[23], եթէ էջ արիւն ի սակս հաղորդութեան, եւ ջուրն՝ յօրինակ[24] մկրտութեան, եւ մեր փոքր ինչ խօսելով ի սակս սորա, ցուցից ձեզ, զի ոչ ջուր միայն բաւական է կատարել զմկրտութիւն, եւ ոչ արիւն զհաղորդութիւն:

ԻԲ. Եւ արդ՝ զի մի՛ բնութիւն Աստուծոյ կարծէք մեզ ասել ջուր, քաւ լիցի, այլ զի յառաջմէ կենդանական եւ կենդանարար ամենայն էիցս ջուր ստեղծաւ, եւ սա միջնորդ գոլով ծանրութեան, զօրութեան եւ չորութեան երկրի, եւ սրութեան ջերմութեան[1] հրոյ եւ լծակցէ զնոսա ընդ միմեանս, եւ նա կենագործէ զամենայն անշունչ եւ զանբան եւ զբանական կենդանիս, կապելով զնիւթսն ընդ միմեանս իւրով կրկին բնութեամբն, որակացեալ գոյացուցանէ ոգիս եւ շոգի եւ շունչ եւ արիւն եւ մարմին եւ ոսկր, եւ ամենայն սովաւ կապի եւ ի սմանէ, եւ սա որականայ: Եւ յայն սակս՝ աստուածային ներգործութիւնքն բազմանունաբար ջուր կոչին, եւ անդ գոլով ըմպելի կենագործիչ, եւս լուանալի սրբիչ, եւ սա օրինակ աստուածային բնութեան յայն սակս կոչի, եւ արիւն եւ գինի ի սմանէ[2] որականայ:

Եւ արդ՝ լուր ի Գրոց զանուանս անուն Աստուծոյ գործոց. վասն զի կոչի ջուր, ընթացուն կենդանական, շարժական, զովացուցանող եւ վէմ անկեան[3] եւ հաց եւ մարգարիտ եւ հատ մանանխոյ՝ այսուքիկ բազումբք անուանին Աստուծոյ, եւ ոչ մի ինչ[4] ի սոցանէ եւ ոչ ասելի է, բայց կոչի այլ յԱստուածային Գրոց ջուր եւ ջրոյ օրինակաւ, եւ

17 օրինակ Դ
18 բնութիւնքն Գ
19 Աստուծոյ ԱԳԴ
20 եւ] կամ ԴԵ
21 հեղլի] խեղլի ԱԴ
22 է] Գ
23 աղբերուացն Ե
24 օրինակ ԱԴԵ

ԻԲ 1 + եւ չորութեան ԴԵ
2 ի սմանէ] ի սերմանէ Ա
3 անգեան Ե
4 ինչ] ԳԴԵ

ի սակս ըմպելի[5] կոչի. լուր զի՛նչ ասէ Գիրն, եթէ Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց, եւ Եսայի ասէ. Վասն զի ցօղն, որ ցօղայր ի քէն, բժշկութիւն էր նոցա (Ես. ԻԶ, 19): Եւ դարձեալ՝ թէ Որ ծարաւիդ[6] էք երթայք[7] ի ջուր (Ես. ԾԵ, 1) եւ այլ՝ Առէք ջուր ուրախութեան՝ յաղբերաց փրկութեան: Լուր եւ այն[8], որ աղբիւր[9] կենաց եւ անմահութեան է Քրիստոս, զի ասէ՝ Որ ծարաւի իցէ, եկեսցէ առ իս եւ արբցէ ջուր կենդանի (Յովհ. Է, 37) : Եւ Սամարացւոյն ասաց. Տամ քեզ զջուրն կենդանի, եւ որ ըմպէ ի ջրոյն յայնմանէ, ոչ ծարաւեսցի[10] յաւիտեան, եւ ջուր զոր ես տաց նմա, եղիցի աղբիւր[11] ջրոյ բղխելոյ[12] ի կեանս յաւիտենականս: Եւ դարձեալ՝ Ես եմ հացն կենաց, որ գայ առ իս ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի[13]. եթէ որ հաւատայ յիս, գետք յորովայնէ նորա բղխեն ջուրց[14] կենդանութեան. զայս ասէր զհոգ[ւ]ոյն զոր ընդունելոցն[15] էին:

Այսպէս ամենայն տեղ ջուր եւ ըմպելի[16] ջուր կոչեաց զիւրն աստուածային բնութիւն, եւ զմարմինն բնութեան ասէ. Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ[17] զարիւն իմ, նա յիս[18] բնակեսցէ եւ ես ի նա. եւ թէ՝ Որ ոչ ըմպէ[19] զարիւն իմ, ոչ բնակեսցէ յիս: Եւ թէ՝ Արիւնն իմ ճշմարիտ ըմպելի էր[20] եւ արդ ջուրն ի նմանէ, եւ արիւնն միանգամայն տուաւ առ ի պէտս ըմպելոյ[21], եւ ջուրն կենդանի յայն սակս կոչէ, եւ նմանեցուցանէ զաստուածութիւնն իւր, որպէս զի զմարդիկ, որ հրով մեղաց կիզեալ էին, ըմպելի[22] լինելով զովացուցանէր եւ կենդանացուցանէր, եւ առ ջուրն[23] հանդստեան զաշխատեալս մեղօք հանգուցանէ:

Արդ՝ այսու ամենայնիւ յայտնէ ջուրն եւ զարիւն իբրեւ զԱստուած եւ մարդ յարբումն ետ: Ապա որ ասաց ի նշան մկրտութեան ետ, լուիցէ նախ, զի ի Յովհաննէս սկսեալ էր մկրտութիւնն, եւ Յովհաննէս եւ առաքեալքն մկրտէին. եւ յայնչափ[24] ժամու եղելոյ էր իրացն, զի՞նչ պիտոյ

5 ըմբելի ԱԵ
6 ծարաւիքդ Դ
7 երթայք] եկայք Դ
8 այն] յայնմ ԳԴ, այնմ Ե
9 աղբեւր ԱԵ
10 ծարաւ իցէ ԱԵ
11 աղբեւր ԱԵ
12 բղխելոյ] ԳԴ
13 ծարաւիցի ԳԴ
14 ջրոյ Գ, ջուր Դ
15 ընդունելիք Գ, ընդունելոց Դ

16 ըմբելի ԱԵ
17 ըմբէ ԱԵ
18 ի յիս ԱԵ
19 ըմբէ ԱԵ
20 ըմբելի էր Ա, ըմպելի է ԳԴ
21 ըմբելոյ Ա
22 ըմբելի Ա
23 ջուրս ԱԳԴ
24 այնչափ Ա

էր օրինակ. զի օրինակ առ յապային եւ ոչ անցելոյն[25] պիտոյ[26] է: Երկրորդ՝ զի ի ջուր միայն մկրտեալն ոչ է կատարելութիւն, եւ Յովհաննէս ի ջուր միայն մկրտէր, եւ ոչ էր կատարեալ նորա մկրտութիւնն[27]: Երրորդ՝ զի մկրտութիւն Քրիստոսի հասարակաց ջրով ասաց լուանալ, զի զմեղս ինքն ողողեսցէ եւ տարցէ, եւ որ ի ջրոյ, այսինքն ի հիւթոյ մարմնական է գործեալ ախտք, ի նմին ի ջուրն մնալով և ի սրբեալ յայն[28] մարդոյն, ապա մտանէր հոգին եւ ջուրն եւ արիւնն Քրիստոսի եւ բնակէր և աստուածացուցանէր. այլ կողահոս ջուրն ոչ ողողելով միաբանէր ընդ մեղս եւ գնայր հեռանայր ընդ[29] լուացելոյն: Չորրորդ՝ զի Յովհաննէս ասաց զինքն[30] ջրով մկրտող, եւ ոչ կողահոս ջրով, եւ զՔրիստոս Հոգովն Սրբով և հրով ասաց մկրտող: Հինգերորդ՝ Քրիստոս ոչ ասաց, որ ոչ մկրտի ի ջուրն, զոր ես տամ, ոչ կեցցէ, այլ թէ՝ Որ ոչ ըմպէ[31]: Դարձեալ՝ զլուացման մկրտութիւն աւազանին, որ մարմնոյն լուացումն է, ոչ Քրիստոս ետ՝ այլ առաքելոցն ասաց տալ. զի ոչ եթէ ինքն մկրտէր, այլ աշակերտքն նորա: Գնացէ՛ք, ասէ, մկրտեցէք յան[ուն Հօր][32]: Այլ զըմպելին զայն ջուր եւ գինի, որ յոգի մտէր եւ աստուածացուցանելով կենագործէր եւ անթափելի մնայր, զայն Քրիստոս ետ[33]:

Եւ արդ՝ ոչ լոկ ջուր մկրտութիւն է, եւ ոչ լոկ արիւն հաղորդութիւն է՝ զի երկուն ի մարդոյ ելին, ոչ են օգտակար[34]. ապա թէ յԱստուծոյ եւ ի մարդոյ են ջուրն եւ արիւն եւ հոգին[35], ապա մի են եւ ջուրն, եւ արիւն եւ, հոգին պարտ է ի մկրտութիւն, որպէս եւ գրեալ է. Եւ ապա կատարեալ լիցի եւ ջուրն, եւ արիւնն, եւ հոգի ի հաղորդութիւնս[36] եւ այնպէս աստուածագործէ[37]: Որպէս եւ Յովհաննէս ասէ, եթէ՝ Սա՛ է որ եկն հոգւով եւ ջրով եւ արեամբ (Ա Յովհ. Ե, 8), եւ երեքին մի են: Եւ մեք այսպէս ունիմք. զջուրն եւ զարիւնն եւ զհոգին մկրտիմք. ջուր՝ զհասարակաց եւ լուացող, ջուրն եւ զողողողն մեղաց: Զմեռոնն՝ արիւնն եւ զՀոգին Սուրբ: Եւ այսիւ[38] կատարեմք[39] եւ

25 անցանելոյն Ա
26 պէտս Ե
27 նորայն մկրտութիւն ԱԵ
28 յայնմ Դ
29 ընդ] ի Դ
30 զինքն ասաց Գ
31 ըմբէ Ա

32 (Ձեռ-րից ոչ մեկը չի լրացնում)
33 + եւ արդ զինչ օրինակաւ և ոչ հաղորդութիւն կողահոս ջուրն ԱԳԵ
34 օկտակար Ա
35 եւ հոգին] հոգին Ա, ահագին Դ
36 հաղորդութիւն ԳԵ
37 Աստուած գործէ Ե
38 այսու ԴԵ
39 կատարիմք ԳԴԵ

զջուրն, եւ զարիւնն, եւ զհոգին, զոր[40] ի կողահոս աղբերէն[41] ել, հաղորդիմք, մնալով ի հոգի եւ[42] կենագործելով:

ԻԳ. Նոյնպէս եւ կատարեալ հաց հոգւով եւ մտօք, այսինքն՝ խմորեալ եւ աղիւ հաղորդիմք եւ կենագործիմք, զերիսն հացն ունելով զկատարելութիւն, զերիսն ի բաժակն եւ զերիսն ի մկրտութիւնն: Եւ ոչ ընդունիմք զմեռելոտի բաղարջն միայն հաց, եւ ոչ զջուրն միայն մկրտեալ, եւ ոչ զբաժակն ի հաղորդութիւն, զի անկատարք[1] են: Եւ արդ՝ Իմաստութիւնն ասէ. Իմաստութիւն շինեաց իւր տուն, եւ կանգնեաց ի նմա սիւնս եօթն, եզեն[2] զզենլիս իւր, եւ խառնեաց զխառնելիս ի գինի իւր: Եւ արդ՝ իմաստութիւն Քրիստոս է, եւ տուն՝ բոլորն մարդկային բնութիւն, եւ սիւնք, իւր՝ առաքելական եկեղեցիք. զենլի՝ մարմին, զոր եւ եզեն[3] գեղարդեամբ զինուորին, եւ խառնելին՝ ջուրն եւ արիւնն, որ ի կողահոս աղբերէն[4] ել եւ ետ ամենայն անզգամ աշխարհի առ[5] յըմպումն[6] եւ յիմաստութիւն, եւ ոչ յողողումն ախտից: Նոյնպէս եւ Աւետարանն ասէ, եթէ. Առ բաժակ, եւ բաժակ՝ խառնելոյն անուանէ[7]. իսկ անխառն եւ անապակ գոլով՝ գինի, եւ ոչ բաժակ կոչի. գրեալ է՝ որ ի կարգաւորութիւն սրբոց առաքելոցն, ուր սահմանեցին զամենայն կարգ եկեղեցականք, եւ զպատարագին խորհուրդն, զոր առեալ Յակոբոս[8] Տեառնեղբայր, եւ զայն տարեալ յամենայն համասփիւռ եկեղեցիք աշխարհիս: Եւ գրեալ է յաղօթսն պատարագին եւ ասէ. Եւ յիշելով մեք զփրկական չարչարանսն, զոր յաղագս մեր համբերեաց, եւ գոհանամք զքէն Աստուած Հայր ամենակալ, ոչ որքան պարտապան եմք, այլ որչափ կարող եմք, եւ զկարգադրեալսն[9] ի նմանէ կատարեմք. վասն զի ի գիշերին, յորում մատնիւր[10] յաղագս աշխարհի կենաց, առեալ հաց ի սուրբ ձեռս իւր, եւ համբարձեալ զաչս առ քեզ Աստուած գոհացեալ օրհնեաց, եբեկ եւ ետ աշակերտացն, եւ ասէ. Առէք կերայք[11], այս է մարմին իմ: Նոյնպէս եւ զբաժակն խառնեալ ջրով՝ առեալ օրհնեաց եւ ետ ա-

[40] որ ԴԵ
[41] աղբիւրէն Գ
[42] +ի ԴԵ
ԻԳ [1] անկատար Ա
[2] զեն ԱԳԵ
[3] եւ եզեն] զեն ԱԴԵ
[4] աղբիւրէն Գ
[5] առ] տա ԴԵ
[6] ըմբումն Գ
[7] անուն է ԴԵ
[8] Յակովբոս Գ
[9] զկարգաւորեալսն ԳԴԵ
[10] մատնուիւր] մտանէր Ա, մատնէր Գ
[11] կերէք ԴԵ

շակերտացն եւ ասէ. Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտիս՝ վասն բազմաց հեղեալ, զայս արարէք առ իմոյ յիշատակի:

ԻԴ. Արդ՝ զայսոսիկ[1] ձեռօք առաքելոցն գրեալ եւ տարեալ [է] ընդ ամենայն տիեզերս, եւ ունին մինչեւ ցայսօր լրութիւն ամենայն ազգաց. նաեւ հերձուածողք եւ արիանոսք, Նեստորք եւ Յակոբիկք այսպէս ունելով[2], բաց ի Մանծկերտացւոյց[3]:

Իսկ վասն աղի զի՞նչ պիտոյ է ասել. վասն զի մեք խոստովանիմք զՔրիստոս կատարեալ մարմին՝ հոգւով եւ մտօք, զի Քրիստոս մտաւոր ունէր մարմին, վկայէ Աւետարանն, որ ասէ. Եթէ գիտաց Յիսուս ի միտս իւր, եթէ կամին հարցանել, եւ զի ասէ զայրացեալ ի միտս իւր, եւ խորհէր ընդ միտս[4], եւ ի միտ էառ Յիսուս: Եւ առաքեալ ասէ. Իսկ մեք զմիտս[5] Քրիստոսի ունիմք. եւ այլ այսպիսի բազում վկայութիւն զմտաց, զի ունէր Տէրն եւ զհոգի բանական առանց մտաց ոչ եղեալ[6] երբեք: Եւ վասն զի հաց օրինակ մարմնոյ իւրոյ ետ մեզ, եւ աղ յամենայն ի[7] Գրոց օրինակ է մտաց, եւ պարտ է, զի հացն օրինակ մարմնոյ իւրոյ է[8], զի աղիւ կատարեալ լիցի. զոր օրինակ մարմին նորա հոգւով եւ մտօք կատարեալ էր: Ասէ Տէրն ցառաքեալսն. Դուք էք աղ երկրի: Եւ արդ՝ ո՞րպէս աղ. վասն զի ամենայն հոգիք մարդկան անմտացեալ[9] ի մեղս մոլորեալ էին: Իսկ զառաքեալսն սրբեալ՝ Քրիստոս[10] փչեաց ի նոսա եւ ասէ. Առէք Հոգի Սուրբ, եւ այսիւ որում թողուցուք, թողեալ լիցի. եւ այս էր միտս Քրիստոսի, զոր ասէին ունել: Եւ այսու լեալ աղ. կարող լինէին համեմել[11] զամենայն ազգ մարդկան. այս է օրինակ աղին:

Եւ դարձեալ, դուք կալարուք յանձինս ձեր զաղն, զի եւ զայլոց անձինս[12] համեմեսջիք:

Եւ դարձեալ, թէ ամենայն ինչ հրով փորձեսցի, եւ ամենայն պատարագ աղիւ յաղեսցի: Եւ արդ՝ եթէ Տէրն ոչ ունէր հոգի եւ միտս, զխա՞րդ մարդ կատարեալ էր, եւ եթէ ոչ էառ հոգի եւ միտք՝ ապա զի՞նչ բժշկեաց զմարդոյ. զի սոքա են ի մարդ՝ կերպարան Աստուծոյ գոլ. սոքա են անմահ,

ԻԴ [1] + այսպէս ԱԳ
[2] ընդունելով Դ
[3] Մանազկերտացւոց Դ
[4] +իւր Դ
[5] զի մտաց Ա
[6] ելեալ ԱԳ
[7] ի] ԴԵ
[8] է] Ա
[9] + է Ա
[10] Քրիստոս] ԴԵ
[11] համեմեալ ԱԳ
[12] յանձինս Ա

եւ սոքա կարօտ բժշկութեան: Ապա եթէ ա՛ռ Քրիստոս զմիտս եւ զհոգի մարդկան, եւ հացն է մեզ օրինակ մարմնոյ նորա, ապա պարտ է այնմ հացին աղով կատարեալ լինել:

Եւ դարձեալ՝ թէ այն հացն, որ օրինակ էր Քրիստոսի մարմնոյն, հոգւոյ էր կերակուր եւ կենսատուող, եւ հոգի մեր մտանէ ի միտս, եւ անդ բնակի եւ բնակեցուցանէ ընդ ինքն զՔրիստոս եւ անթափելի մնայ, ապա ոչ է պարտ նմա անաղ եւ անմիտ եւ անհամ լինել: Եւ թէ ամենայն պատարագ աղիւ յաղեսցի, ապա հացն այն է պատարագ եւ օրինակ մարմնոյն Քրիստոսի: Եւ արդ՝ եթէ անասնոցն, զոր մատաղս առնէք, որոց շունչն յօդս ցնդի, եւ զարիւն եւ զոսկերս շունք ուտեն, եւ զկաշի յոտս հագեալ, զապաւառս երկրի եւ զսողունս կոխէք, եւ միս նոցա յորովայնի յաղբ եւ ի մէզ[13] փոխի, զնոսա օրհնեալ աղ եւ հոգեւորս առնէք և այնպէս զոհէք, ապա որպէ՞ս մարմին Քրիստոսի, որ ի հոգի եւ ի միտս գնայ եւ հոգիանայ, առանց աղի եւ կատարելութեան[14] ընդունելի է: Այլ մեք զճշմարիտն, կատարեալ մարմնոյն Քրիստոսի զօրինակն կատարեալ հացս առնելով կենդանի եւ հոգեւոր եւ մտաւոր հաւատամք[15], ըստ սահմանի առաքելոցն Քրիստոսի:

ԻԵ. *Արդ՝ վասն զի առ ի կատարելութիւն հաւատոց եւ ի լրումն յուսոյ եւ ի յիշատակ գալստեանն եւ նորոգման մարդկային բնութեանս[1] ի կրիցն զոր կրեաց յինքն եւ ներգործութեանցն զոր գործեաց, եւ ի քաղաքավարութենէն զոր յաշխարհի քաղաքավարեցաւ, եւ ի բարեգործութենէն[2] եւ յերախտեացն, զոր արար առ մեզ արարիչն եւ Աստուածն մեր Յիսուս Քրիստոս՝ Որդին եւ Բանն Հօր, յորժամ այց արար արարածոց իւրոց, իւրով գթութեամբ եւ հաճութեամբ[3] Հօր և Հոգւոյն Սրբոյ, եւ եկն խոնարհութեամբ յերկիր[4] եւ բնակեցաւ յանապական կոյսն Մարիամ, եւ ա՛ռ յանբիծ[5] յարենէ[6] նորա մարմին, միտք եւ հոգի, եւ զամենայն զոր ինչ ի մարդն է, եւ միաւորեաց յանձն իւր եւ եղեւ նովաւ մի անձնաւորութիւն, մի Քրիստոս եւ մի որդի Աստուծոյ, երկու կատարեալ բնութիւն՝ եւ անխառնակելիս եւ անբաժանելիս[7], եւ կրեաց անեղական Բանն եւ անժամանակ Աստուած, զմեր եղական բնութիւնս[8] ժամանակաւոր կարգ. եւ ըստ կարգի յղութեան մարդկան բնակեցաւ յարգանդի կուսին, եւ արարեալ անդ[9] իննամսեան ժամանակաւ[10], կատարեալ մարդ եղեւ աճմամբ եղանակով եւ ապա ծնաւ մարդակերպ[11] առանց երկանց, մարդակերպ ծնեալ եւ զմայրն կոյս պահեալ, եւ թլպատեցաւ ութօրեայ, եւ ըստ աճման ժամանակի մարդկան յառաջ եկեալ օր ըստ օրէ, քառասնօրեայ գնացեալ ընծայիւք ի տաճարն՝ կատարել[12] զօրէնս, եւ աճէր եւ զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ եւ շնորհօք յԱստուծոյ եւ ի մարդկանէ, եւ երեսուն ամաց սկսեալ մկրտեցաւ, եւ ի քարոզութեան սկսեալ, եւ վասն երկբայս[13] լինելոյ ոմանց փոխակերպեցաւ[14], եւ ի չարչարանս գնալով, յարոյց զՂազար չորեքօրեայ, եւ անտի գնաց յաւանակաւ[15] յԵրուսաղէմ եւ խաչեցաւ, եւ յարեաւ, աւերեալ զդժոխս, եւ ընդ ինքն յարոյց զամենեսեան[16], որք անդր էին, եւ համբարձաւ յերկինս առ Հայր, եւ այս՝ վախճան մարմնականացն Քրիստոսի: Եւ ապա եկն Հոգին Սուրբ յառաքեալսն, եւ անդ ի հոգոյն սկսեալ լինիցին[17] մինչեւ ցայժմ: Եւ թէպէտ եւ իմանալապէս եւ խորհրդաբար գործեցան սոքա ամենեքեան, եւ ոչ բազմաց տեսանիլ կամ հասանելի եւ հաւատարիմ լեալ, այլ ունի իւրաքանչիւր օրն յատուկ, որ ենն եւ[18] հաւատարիմ վկայս. Աւետիքն ունի վկայ զԳաբրիէլ, [զ] Զաքարեա[յ] ի[19] համրանալն, զԵղիսաբեթ եւ զիւր մանկանն յորովայնի խաղալն[20]. Ծնունդն՝ զՅովսէփ, զաստղն յերկնից, զմոգուցն ընծայաբերութիւնն, զհովուացն եւ զհրեշտակաց երգն, զՀերովդէի խռովութիւնն եւ զմանկասպանութիւնն: Իսկ Թլփատութիւնն՝ զօրինացն կատարմունս վկայ ունելով. եւ Քառասնօրեայ գալստեանն՝ Մարիամ, Յովսէփ, քահանայք տաճարին, Սիմէօն ծերունին եւ Աննա մարգարէուհին, իսկ Մկրտութեանն վկայ՝ Յօհաննէս եւ ձայնն Հօր յերկնից. եւ Գալուստ Հոգւոյն՝ տեսլեամբ աղաւնոյ եւ*

[13] միզ ԱԳ
[14] կատարելութիւն ԱԳ
[15] հաւատամ ԱԳ

ԻԵ. [1] մարդկայինս բնութեան Դ
[2] բարեգործութեանն ԳԴ
[3] հաճոյութեամբ Գ
[4] երկրի Գ, երկիր Դ
[5] յամբիծ Ա
[6] արեան Գ, արենէ Ե

[7] անբաժանելի և անխառնակելիս ԱԳ
[8] բնութիւն Ա
[9] անտ Գ
[10] ժամանակս Ա
[11] մարդակերպս Ա, մարդկապէս Գ
[12] կատարեալ Դ
[13] երկայս Ա
[14] փոխայկերպեցաւ Ա
[15] յաւանակաւ] անկաւ Դ, յովանակաւ Գ, յանկաւ Ե
[16] զամենեսին Ա
[17] լինին ԴԵ
[18] եւ] ի ԴԵ
[19] Զաքարեայի ԳԵ, Զաքարեա Դ
[20] զխաղալն Ա

ամենայն ժողովուրդն[21]*, որ մկրտէին, իսկ Փոխակերպութեանն՝ Մովսէս ի մեռելոց, Եղիայ ի կենդանութիւն*[22] *յերկրէն*[23]*, ձայն Հօր յերկնից, Պետրոս*[24]*, Յակոբոս եւ Յովհաննէս: Իսկ Ղազարու յարութեանն՝ ինքն Ղազար եւ քորք*[25] *նորա եւ ժողովն Հրէից: Իսկ յաւանակաւ*[26] *գալոյն՝ առաքեալքն վկայ եւ մանկունքն ոստովք*[27] *եւ ժողովն Հրէից:*

Ապա խաչելութեանն վկայ՝ երկինքն, արեգակն եւ լուսին խաւարելովն, երկիր շարժելովն, վարագուրին հերձումն[28]*, զինուորացն խոստովանութիւնն, գերեզմանաց բացումն եւ մեռելոց յարութիւնն:*

Իսկ թաղմանն վկայ՝ Յովսէփ[29]*, Նիկոդիմոս եւ իւղաբերք*[30]*: Եւ յարութեանն վկայք՝ մայրն եւ առաքեալքն, ընդ նոսա լինելով աւուրս քառասուն*[31]*: Եւ համբարձմանն՝ նոքա եւս: Իսկ Հոգւոյն Սրբոյ գալստեանն՝ հրեղէն լեզուքն եւ երկոտասան*[32] *ազգն Հրէից, որք արբեցութիւն կարծէին:*

ԻԶ. *Եւ արդ՝ զի սոքա ամենեքեան յարարչէն մերոյ յաղագս մերոյ փրկութեան իւրաքանչիւրն յիւրում պատշաճի աւուրն այնպէս պայծառաբար կատարեցաւ եւ հաւատարիմ եղեւ, իբրեւ զի մի՛ մոռացութեանն խորհրդով փակեսցին եւ կորիցեն մոռացմամբ, պար[տ] համարեալ առաքելոցն Քրիստոսի, նախ*[1] *գրեցին զնոսա*[2] *օրէնս*[3] *եւ Աւետարանս, եւ ապա տպաւորեցին ի պատկերս եւ արձանացուցին, եւ ապա տօնս*[4] *կարգեցին զնոսա երկրպագելիս, իբրեւ զի սաղմոսիւք եւ հնկմամբ եւ սրբութեամբ եւ հաւատով եւ երկիւղիւ տօնիցեն*[5] *հաւատացեալք եւ փառաւորեսցեն զաստուածութիւն նորա. եւ զսա տուին*[6] *առաքեալքն օրէնս տնօրինականս եւ անլոյծս, եւ զկնի սորա զԱստուածամօրն եւ Մկրտչին տօներն*[7] *նոյնպէս, եւ ապա՝ ըստ կարգին ընդ ժամանակս առաքելոցն եւ զհարց եւ զխոստովանո-*

[21] ժողովրդեանն Դ
[22] կենդանեաց Դ
[23] երկրէն Դ
[24] + եւ ԱԳ
[25] քոյր ԱԳ
[26] յովանակաւ Գ
[27] ոստօք ԴԵ
[28] հերձեալն ԱԳ
[29] + եւ ԱԳ
[30] իւղաբերք] եղբարքն Ա, եղաբերքն Գ
[31] քառասունս Գ

[32] երկոտասան] հնգետասան ԱԳ
ԻԶ [1] նախ] նա Դ
[2] զնոսա] նոցա Դ
[3] զօրէնս Դ
[4] տօն ԴԵ
[5] տօնեցին ԱԳ
[6] տւին ԴԵ
[7] տօներս Դ

ղաց եւ վկայից կարգեցին ժողովքն. և սկիզբն յառաքելոցն եկն ի լրումն կարգ եկեղեցւոյ եւ ունի աւանդն քրիստոնէից զայսոքիկ[8] *անփոփոխելի եւ անպակասելի: Այլ զայնոսիկ տէրունական տօնսն երկոտասան, ամենայն ծագք երկրի, ամենայն լեզու միապէս եւ միահամուռ իբրեւ զմիոյ Քրիստոսի պատիւ միապէս ունին, եւ տօնեն փափագանօք*[9] *եւ սրբութեամբ, երկիւղիւ եւ յօժարութեամբ, զիւրաքանչիւրն յիւրն օր, ըստ Աւետարանին ասացելոյ*[10]*: Եւ թէպէտ եւ յայլսն իւրս կամ ի խոստովանութիւնս, կամ ի գործ ինչ, կամ ի պահս, կամ յաղօթս յեղափոխին*[11] *ի միմեանց ազգք, այլ ի սոսա*[12] *եւ ոչ բնաւ, այլ միապէս գոն: Եւ ոմանք հերձուածողք եղեն, բայց ի սոցա ոչ փոխադրեցան, զի ճշմարիտ*[13] *երեւին ամենեքեան ի տօնս*[14] *Հրէից լեալ երեքին*[15] *տօնք օրինացն ամին, եւ այն անփոխք, և սոքա ի նոսա եղեն: Այլ վասն զի պապանձումն Զաքարիայի ի տօն տաղաւարահարցն էր, եւ անտի*[16] *ի*[17] *վեցերորդում ամսին՝ Աւետիս կուսին, եւ անտի զկնի ինն ամսոյ՝ Ծնունդն եւ ի ծննդենէն յութերորդում*[18] *աւուր թլփատութիւն, եւ ի քառասներորդ օրն ի տաճարն գնալն: Իսկ մկրտութիւնն՝ մինչ էր երեսուն ամաց սկսեալ, իսկ փոխակերպումն՝ աննշան: Ապա Ղազարու յարութիւնն վեց աւուրբ յառաջ քան զՋատիկն, եւ յավանակաւ*[19] *գալուստն զկնի նորա օր մի՝ Խաչելութիւնն, յառաջ քան զՋատիկն մէկ աւուրբ, եւ Յարութիւնն զկնի Պասեքին միոյ աւուր*[20] *ի վեշտասան*[21] *առաջին ամսոյն: Եւ Համբարձումն զկնի Յարութեանն յետ քառասուն աւուր. իսկ Սուրբ Հոգւոյն գալուստն ի տօն Պէնտէկոստէիցն:*

Արդ՝ այսոքիկ ամենեքեան՝ յայսոսիկ աւուրս յամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից, զորոց եւ զանուանս լեզուաց թուել անհնար է, ուր եւ քարոզեցաւ Աւետարանն Քրիստոսի առ իմաստունս եւ անիմաստս, առ քահանայս, ժողովուրդս, առ[22] *այրս և կինս*[23]*, ի ծերս եւ ի տղայս, առ թագաւորս*[24] *եւ իշ-*

[8] զայսոսիկ ԴԵ
[9] փափաքանօք ԴԵ
[10] ասելոց Գ
[11] յեղափոխեն Դ
[12] սոսա] նոսա Ա
[13] ճշմարիտ] ճշգրիտ Ա
[14] տօն ԴԵ
[15] երեք են Գ
[16] անդի Գ

[17] ի] ԱԴԵ
[18] ութերրերորդում ԴԵ
[19] յովանակաւ Գ
[20] միոյ աւուր] մի օր ԴԵ
[21] տասնուվեց Գ
[22] առ այրս] յայրս Գ
[23] կինս] ի կանայս Դ
[24] թագաւորս] Դ

խանս, առ քաղաքացիս[25] եւ ռամիկս[26], առ քահանայապետս եւ քահանայս, առ կրօնաւորս եւ առ ամենայն նշանաւորս, ի նմին աւուր, նոյն[27] թուով, նովին յօժարութեամբ եւ կամաւ, նկարագրեալ եւ դրոշմեալ եւ եդեալ յեկեղեցի գրով եւ պատկերաւ տօնի. եւ փառաւորի, եւ միաձայն քարոզի յամենեցունց աստուածութիւնն Քրիստոսի. եւ այսոքիկ ամենեքեան[28] իւրն ներգործութիւնք, զորս աստուածաբար[29] եւ մարդկապէս[30] ներգործեաց յաղագս փրկութեան ազգի մարդկան: Եւ վասն զի ընդ ամենայն[31] երկիր ամենայն ազգք[32] մարդկան, եւ յամենայն լեզուս եւ բարբառս առաքելոցն, եւ քարոզութիւնն ի ներքոյ երկնից, ի ծագաց երկրի[33] մինչեւ ի ծագս նորա. եւ բազմութիւնք հաւատացելոց ի բազում տեղիս ընդ անհաւատս[34] բնակակից եւ համազգի եւ համալեզու[35] գոլով, ի նոցայն մերձաւորութենէ առեալ ածին ինչ ի բանս հաւատոյ: Ոմանք[36] լոկ մարդ մարգարէ ասել հաճեցան[37], ոմանք ի բանէն Աստուծոյ եւ ի կուսէն ծնեալ՝ ի վեր քան զմարդ, այլ արարած. ոմանք երկու անձն եւ երկու բնութիւն՝ մի Աստուծոյ եւ մի մարդոյ, ոմանք սոսկ Աստուած ասացին, եւ առ[38] աչօք ունել մարմին, ոմանք մի անձ, եւ մի բնութիւն, եւ զայն Աստուծոյ եւ մարդոյ. իւրաքանչիւր ոք ըստ իւրումն հաճոյից որպէս եւ ընտրեցին իւրոցն մտացն: Վասն զի առաքեալքն մի որդի Աստուծոյ եւ Աստուած քարոզեցին, մի Քրիստոս, մի անձնաւորութիւն, այլ երկու բնութիւն՝ Աստուծոյ եւ մարդոյ, ի մի անձնաւորութիւն միացեալ՝ անխառնակելի եւ անբաժանելի գոլով:

ԻԷ. Եւ արդ՝ ամենեքեան սոքա, թէպէտ այլ եւ այլս բերէին իմն բանս ի դաւանութիւնսն, այլ զայսոսիկ առաքելադիր աւանդ տնօրինական տօնից, միապէս եւ միաւորութեամբ[1] եւ միով կարգաւ[2] տօնախմբեն: Իսկ Հայք, թէպէտ եւ յԱսորեաց առին մի բնութիւն խառնակեալ ասել զՔրիստոս, զոր Եւտիքէ եւ Դէոսկորոսի եւ Սեւերիոս մտածեցին, այլ զա-

25 ի քաղաքացիս ԴԵ
26 յռամիկս Գ, յռամիկս ԴԵ
27 նոյն] նովին Ա
28 ամենայն ԱԳ
29 աստուածարար Ա
30 մարդկաբար ԱԳ
31 յամենայն ԱԳ
32 ազգս ԱԳ
33 երկրէ ԱԳ
34 անհաւատս] հաւատս ԱԳԵ
35 համալեզու] համապատիւ ԴԵ

36 ոմանս ԳԴԵ
37 հաճեցաւ ԳԵ
38 առ] Գ
ԻԷ 1 միաւոր ԴԵ
2 կարգաւ] կերպիւ ԴԵ

մենայն կարգ եկեղեցւոյ առաքելադրեալս, եւ զտօնս, եւ զպատարագին խորհուրդն, եւ զմեռոնն[3], եւ զխորհրդական աղօթենին[4], եւ զձեռնադրութիւնսն ըստ հնոյն ունէին անտի մինչեւ ցՀերակլ արքայ. եւ ապա միաբանեալ ի ձեռն Հերակլի, Եզր կաթողիկոսի Հայոց ամենայն եկեղեցեացն նոցա[5] կացին ի միաբանութիւն յայն ամս ՃԿ: Եւ ապա ժողով արարեալ անդր ընդ Ասորեաց ոմանց ընկալան[6] դարձեալ զմի բնութիւն[7], եւ զխաչեցարն ի Սուրբ Աստուածն ասել, եւ ընկեցեալ[8] զբնաւն խորհրդական աղօթս եւ զկարգս նորս[9] արարին, գրեալս ձեռամբ Յովհաննու Մանդակունէի եւ Մաշտոցի[10]: Եւ յայնմ ժողովոյ, յետս ընկեցեալ զտօն Աւետեացն եւ զմարմնոյ Ծննդեանն[11] Տեառն, միայն զմկրտութիւնն[12] տօնելով: Եւ բազում պատճառս գրեցին այսորիկ եւ աննմանս յիւրեանց Տօնապատճառի, եւ զերկուս խրամատեալս զպահս առաքելադիրս եւ փոխանակ նոցա եւթն[13] շաբաթս այլ և այլս պահեցին, թողեալ եւ զմարմնոյն Քրիստոսի բնութիւն, արտաքսեցին զտօնս մարմնոյն Աւետեաց եւ Ծննդեան[14] եւ հայհոյեցին զպատկերս Քրիստոսի ոչ երկրպագանել[15], այլ կուռս կոչեցին. լուծեալ զՊատարագամատոյց առաքելոցն, նորս գրեցին, բաղարջ եւ գինեաւ միայն մատուցանել, եւ միւռոն[16] կնճթեղս[17] առնել, ոչ իւրոցն նիւթօք[18] եւ կարգօք օրհնեալս, եւ տօն սրբոց ոչ կատարեալս, եւ զԱստուածածնին եւ զԽաչի տօնս[19] ի կիւրակէի կատարել:

ԻԸ. Արդ՝ մեր զոմանս գրեալ և զոմանս յետոյ գրեցից, այլ այժմ զԱւետեաց և զԾննդեան, և զՄկրտութեան գրեցից:

Եւ արդ՝ այսպէս առնեն պատասխանի[1] հարցողացն զնոսա[2] զպատճառս[3] խառնակմանց: Ոմանք ասեն, եթէ Աւետիքն ծածկեալ էր խորհրդով և անգիտելի, եւ ոչ մեք հրատարակեմք, զի Գաբրիէլ միայն գիտէր, գրեալ է. Եւ ծնունդ գիշերին[4] եւ աղախ-

3 զմիռոնն ԱԴԵ
4 աղօթինին ԱԳ, աղօթնին Ե
5 նոցա] ԳԴԵ + Աստուծոյ եւ ԳԴԵ
6 ընգալան ԱԳ
7 զմիաբանութիւն Ա
8 ընգեցեալ ԱԳ
9 նորս] նորա ԳԴԵ
10 Մաշդոցի ԱԳ
11 ծնունդն ԴԵ
12 մկրտութիւնն ԱԳ
13 եօթն ԱԴԵ

14 ծնունդն ԴԵ
15 երկիրպագանել Ա
16 միռոն ԱԴԵ
17 կնչթեղս ԱԳ
18 նիւթով Ա, նիւթովք Գ
19 տօն Գ
ԻԸ 1 պատասխանիք ԱԳ
2 զնոսա] եւ զնոսա ԴԵ
3 պատճառս ԱԳ
4 գիշերաին Գ, գիշերոյն ԴԵ

նական[5] էր, և ոչ այն տօնելի է, այլ տօնեմք զՄկրտութիւն նորա, որ է վերստին ծնունդ, և լուսաւորութիւն եւ Աւետիք, զոր Հայր աւետեաց[6], ասելով, եթէ Դա է որդի իմ սիրելի: Ահա երեք տօն ի մի. Ծնունդ և Լուսաւորութիւն և Աւետիս, զի մեծ է վերստին ծնունդն, քան զաղխնական, եւ մեծ է աւետիս Հօր, քան զԳաբրիէլին՝ և Գրիգոր Աստուածաբանն վկայէ այսորիկ: Իսկ ոմանք ասեն, եթէ տօնեմք զերեքին[7] այլ ի վեցն Յունուարի. երեկոյին[8] Աւետիս, ի մէջ գիշերի՝ Ծնունդ, և յառաւօտն[9]՝ Մկրտութիւն: Այլ զսմանէ ոմանք ասեն ի նոցանէ, եթէ ոչ ընդ ժամանակաւ աճողական էր Բանն Աստուծոյ, և ոչ էր պարտ և կարելի Աստուծոյ յորովայնի կնոջ ախտասնունդ լինիլ[10], այլ երեկոյին աւետեալ՝ ի մէջ գիշերի ծնաւ, և ի լնուլ երեսուն ամին մկրտեցաւ: Իսկ այլքն ասեն ոչ այսպէս՝ եկաց ինն ամսեան ժամանակի կոյսն, այլ այսու աղագաւ տօնեմք ի մի[11], զի ի տօն տաղաւարահարացն պապանձեալ Զաքարիա ի մուտն առաջին աւուրն, եւ ի կատարել պաշտօնն, զաւուրս երկոտասան կացեալ[12] ի տաճարին, ապա դարձաւ ի տուն իւր, և յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ, և թագուցանէր[13] զանձն ամիսս հինգ և ապա ի յղանալոյն Եղիսաբեթի ի լնուլ վեց ամսոյն աւետեաց հրեշտակն Մարիամու[14] և անտի զկնի ինն ամսոյ ծնաւ կոյսն: Եւ դարձեալ՝ զկնի երեսուն ամի, յորում աւուր ծնաւ, ի նմին եւ[15] մկրտեցաւ վասն[16] զի ի ծննդեան օրն լնու զերեսուն ամն, եւ այսպիսի փորձիւ ի միասին տօնեմք: Եւ այս հանդիպելն[17] լինիլ[18] ի մուտն ի տաճարն Զաքարիայի ի Սեպտեմբերի ԻԳ. աւետիս կուսին յԱպրիլի[19] վեց, ծնունդն Յունուարի վեց, անդ եւ մկրտութիւն լինի: Այլ այսպէս ամենայն ի նանիր և ստայօդ եւ անիրաւ են. եւ դառնալն ի տունն ի Հոկտեմբերի վեց, դիմադրութիւնք:

Եւ արդ՝ մեր զսոցանէ փոքր ինչ խօսեցայց: Եւ նախ ո՛չ զդիմադրութիւնս[20] ինչ ասացից, այլ տօնն հրեական եւ աւետիսն Զաքարիայի եղեւ, որ վկայեն ամե-

5 աղախնականք ԱԳ
6 աւետեց Գ, դայ Գ
7 երեքին ԳԴ
8 երեկոյն ԴԵ
9 յառօտուն ԴԵ
10 լինել ԱԳ
11 այլ այսու ազգաւ տօնեմք ի մի] Դ
12 կացեալ] կալիւ Ա, կալով Գ
13 թաքուցանէր Գ
14 Մարիամու] կուսին ԱԳ
15 եւ] ԱԴ
16 վասն] ԱԴԵ
17 հանդիպին ԱԳ
18 լինել Ե
19 +ի Գ
20 դիմադրութիւնս Գ

նայն լեզուք եւ գիրք[21] ազգի մարդկան: Խօսեցաւ Տէր ընդ Մովսէս[22] եւ ասէ. Ասա՛ դու զորդիսն Իսրայէլի, յամսեանն եօթներորդի յառաջնումն աւուր ամսոյն եղիցի ձեզ հանգիստ, եւ յիշատակ փողահարութեան՝ յայտնի և սուրբ օր Տեառն. զամենայն բան սպասաւորական մի՛ առնէք, այլ մատուսջիք ողջակէզս Տեառն: Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ի տասներորդում նոյն եօթներորդի ամսոյն օր քաւութեան եւ սուրբ կոչեսցի ձեզ, խոնարհեցուցէք զանձինս ձեր, եւ մատուցէք զողջակէզս[23] Տեառն:

Զամենայն բան ոչ առնիցէք յաւուրն յայնմիկ. քաւութիւն արարէք ձեզ առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ: Եւ ամենայն անձն որ ոչ խոնարհեսցի յայնմ աւուր՝ կորիցէ ի ժողովրդենէ իւրմէ: Եւ ամենայն անձն որ գործեսցէ[24] ինչ յայնմ աւուր՝ սատակեսցի ի ժողովրդենէ իւրմէ, այս օրէն[25] յաւիտենից յազգս ձեր. յերեկոյէ[26] ինն օր ամսոյն մինչեւ ցերեկս տասին տօն եղիցի ձեզ: Այս երկու տօնս ձեզ[27] մի օր է՝ տօն գոլով, զոր տօնէր իւրաքանչիւր ոք ի գաւառի իւրում: Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի[28] և ասէ. Պատուէր տուր որդւոցն Իսրայէլի, եւ ասա ցնոսա[29] ի հնգետասան աւուր այսու ամսեան եօթներորդի տօն տաղաւարահարացն է, զեօթն օր սուրբ Տեառն, եւ առաջին օր կոչեցեալ[30] սուրբ, զամենայն բան սպասաւորական մի՛արասցես, զեօթն օր մատուցէք ողջակէզ Տեառն եւ ութերորդ օրն կոչեցեալ սուրբ եղիցի ձեզ. մատուցէք ինձ ողջակէզ. զի ճանապարհորդութիւն է, զամենայն գործ մի՛ առնել յաւուրսն յայնոսիկ. այսոքիկ են տօնք Տեառն:

ԻԹ. Եւ արդ՝ տես, յայնմ տօնի յառաջնում աւուրն, մտեալ Զաքարիա ի տաճարն[1] ետես զհրեշտակն եւ պապանձեցաւ. եւ այս էր[2] ի Սեպտեմբերի քսաներկրորդ օր ընդ երեկս, յորում լուսանայր քսանեւերրորդ օր ամսոյն: Այս մուտք տօնին եւ ելն լինի[4] գոլ երեսներրորդ օր ամսոյն, յաւուր ութերորդի, այս տօն յԵրուսաղէմ ի տաճարին կատարէր: Այլ Ղուկաս ասէ, եթէ Եղեւ քահանայանալ նմա ըստ կարգի ա-

21 գիրգ Ե
22 Մօսէսի Գ
23 ողջակէզս ԱԳԵ
24 գործիցէ ԴԵ
25 օրէնք ԱԳ
26 յերեկորէ ԴԵ
27 ձեզ] ԱԴԵ
28 Մօսէսի Գ
29 ցնոցա ԱԳԴ
30 կոչեցեալ] կացեալ ԴԵ
ԻԹ 1 տաճարին Գ
2 աւէր Գ
4 լինել Գ

ւուրցն հասանելոյ (Ղուկ. Ա, 8). եւ այլ՝ եթէ Իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, գնաց ի տուն իւր: Ոչ զաւուրս տօնին ասէ, այլ զիւրոյն պաշտաման. եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ ասէ Կիւրեղ ի մեկնութեան Ղուկասու Աւետարանին, եթէ բարուք[5] արարեալ զայս Մատթէոս առ ծննդեամբն յիշեաց զՀերովդէս[6] եւ ասէ առ Զաքարիայի պապանձմամբն, զմարգարէութիւն Յակոբայ, զոր ի սակս Տեառն մարգարէացաւ՝ լցեալ ցուցանելով. զի ասաց Յակոբ. Մի՛ պակասեսցէ իշխան ի Յուդայէ[7], եւ մի՛ պետ յերանաց նորա մինչեւ եկեսցէ այն, որ իւրն է իշխանութիւնն. եւ յայնժամ պակասեալ էր, վասն զի Հերովդէս Ասկաղոնացի, որդի Անթիպատրեայ այլազգի լեալ էր թագաւոր հրամանաւ կայսեր: Եւ յաղագս այնորիկ օրէնքն խրամատեալ էր, որպէս ասէ Յովսեպոս[8]. եւ այլք էին կացեալք[9] քահանայապետք առ սեղանն, որք ոչ ըստ օրինացն՝ այլ կաշառօք[10], եւ բաժանեալ[11] զաւուրս տօնին մի մի աւուրս, մի մի քահանայապետացն[12] սպասաւորէր ի տաճարին, եւ մատուցանէր զոհս ժողովրդեանն: Եւ Զաքարիա արտաքս ել ի նոցանէ, ի լեռնակողմն բնակէր: Այլ յայնմ տօնի եկեալ անդր, զի օրէն էր Հրէից գալ անդր, եւ նոքա վասն ծերութեան եւ սրբութեան իւրոյ վիճակեալ զառաջին[13] օրն ետուն նմա պաշտաման, եւ նա մտեալ առ սեղանն խնկել[14], ետես զհրեշտակն, եւ լուեալ զաւետիսն՝ հաւատաց: Եւ ի սակս հարցանելոյ զկարգ բանին պապանձեցաւ: Եւ զայն ասէ օր հասանելոյն, զոր[15] նմա վիճակաւ եհաս. եւ ի կատարել իւրոյ պաշտամանն գնաց ի տուն իւր՝ զերկրորդ եւ զմեծն լնուլ պաշտօն Աստուծոյ:

Արդ՝ Աւետարանին ասէ, եւ դիպի սա ի տասն Սեպտեմբերի[16] ամսոյ յառաջին օրն Թշրին է, որ է միօրեայ տօն, իսկ ի նորին ինն և տասն օր գոլ Թշրինայ[17] տօն միօրեայ քաւութեանն, իսկ ի քաներեք Սեպտեմբերի՝ հնգետասան գոլ Թշրինայ, եւ անդ պապանձեցաւ Զաքարիա եւ զմի օր կատարէր զիւրն պաշտօն, դարձաւ ի տուն իւր, և դիպի այս

12 քահանայապետիցն Գ
13 զառաջ Գ
14 խնկել] խնդրել Ա, խնգել Գ, խնկեալ Դ
15 զոր] զի ԴԵ
16 Սեպտեմբեր ԴԵ
17 Թշրինն ԱԳ

ի քանհինգ Սեպտեմբերի, եւ դարձն ի տունն լեալ, եւ ի քանհինգն Մարտի վեց ամիս էր, եւ անդ լեալ աւետիս Կուսին: Եւ քանհինգ Դեկտեմբերի ծնունդն լեալ Տեառն: Եւ ի սկսանել երեսուն ամին երկոտասան[18] աւուրբ[19] մկրտութիւն լեալ: Այսորիկ առաքեալքն եւ ինքն Կոյսն զերեսունեւչորս[20] ամ զկնի համբառնալոյ Տեառն հաւատացեալ, եւ ի նոցանէ սփռեալ մինչեւ ի ծագս երկրի եւ մինչեւ ի մուտս արեւու, եւ մինչեւ ի ցՆերքին[21] Հնդիկս եւ մինչեւ ցհիւսիսոյ Մութ երկիրն, եւ մինչեւ յարեւելս, ուր եւ քարոզեցաւ Աւետարանն Քրիստոսի, ամենեքեան հաւատացին. եւ այսպէս ունին ուղղափառք, եւ ոչ նոյնպէս[22] բաց ի Մանծկերտոյ[23] միոյ ժողովոյն:

Եւ արդ՝ եթէ աւուրք ութ են[24] տօնիցն օրինացն[25] ո՞ւր ձերդ երկոտասան[26] աւուրք են, զոր գրեցիք՝ զորս երկոտասան ասէք, որ ոչ եղեւ բնաւ: Եւ թէ Զաքարիա զիւրն օր կատարեաց եւ գնաց, որպէս եւ գրեալ է, ապա այս երկու օր է, և թէ ասէք թէ ոչ էր օրէն, թէպէտ եւ հրամայեցաւ գնալ ի տաճարէն քահանային[27], ապա թէ ըստ ձերդ եւ ոչ գնաց, ապա յութերորդում[28] գնաց եւ ոչ երկոտասան:

Եւ արդ՝ վասն զի կայր ի տաճարին զպաշտօնն կատարել, զո՞ր պաշտօն, այլ զմոխիր երնջուց[29] ցանել[30] զպղծելովքն եւ զճարպ այրելն (Եբր. Թ, 13):

Արդ՝ ո՞ր արդեօք էր վերագոյն սպասաւորութիւն Աստուծոյ՝ զլուծեալ օրինացն մոխիր զպղծելո՞վքն տալ[31], եթէ Գաբրիէլի աւետիքն, զնախընթացն զսկիզբն նորոյ շնորհացն յարուցանել յաշխարհի[32]. եւ եթէ ասես ամենայն մարմնոյ ոչ գործէր յաւուրսն յայնոսիկ՝ յիրաւի այդ, այն այլ[33] ոչ գործ մարմնոյ էր, զի մեռեալ էր ցանկականն մարմնոյ, եւ Աստուծոյ հրամանին հնազանդութիւն էր միայն: Եւ թէ զամուսնութիւն պիղծ[34] ասես, եւ վասն այսորիկ[35] ոչ համարձակէլի[36] յայն աւուրց[37], ապա նախ

18 զերկոտասան Գ
19 աւուրք Դ, աւուրքն Ե
20 զերեսունեւչորք Ա
21 Ներքին ԱԳԴ
22 նոյնպէսք ԱԳ
23 Մանծկերտոյն ԱԳ, Մանածկերտոյ Դ
24 են] Ա, էր Գ
25 յօրինացն ԱԵ
26 յերկոտասանս Ա, յերկոտասանտ Գ

27 քահանայն Դ
28 ութերրորդում ԱԴ
29 երնջուց] երնձուց Գ
30 ցանեալ ԱԳ
31 տայլ Գ
32 աշխարհ ԱԳ, աշխարհի Դ
33 այլ նա Դ
34 պեղծ Գ
35 անյորիկ Գ
36 համարձակելի] համբարձելի ԱԳ
37 աւուրն ԴԵ

զի օրհնեաց զնա ի սկզբանէ Աստուած[38], եւ սկիզբն[39] մարդկային բնութեանս նա է. եւ թէ արմատն պիղծ՝ ամենայն պիղծ է[40] (հմմտ. Սիրաք Խ, 15), եւ եթէ պիղծ էր ամուսնութիւնն, ընդէ՞ր ծնունդն այնպիսի սուրբ եղեւ, կամ Եղիսաբեթ ընդէ՞ր լցաւ Հոգւովն Սրբով, կամ մանուկն յորովայնի[41] ընդէ՞ր լցաւ Հոգւով Սրբով:

Լ. Եւ կամ թէ զքումդ[1] ասելոյ է՝ եւ ոչ գնաց ի տուն, այլ ելից զաւուրսն, նոյնպէս ոչ գնաց յիւրումն օրեայ տօն Աւետեացն արտաքս ելանելով, վասն զի ասէ Կիւրեղ՝ Յոր ամսեանն վեցերորդի, այսինքն յաւետեաց[2] հրեշտակին, եւ ի պապանձմանէն Զաքարիայի, վասն զի յորմէ հետէ լուաւ զաւետիս հրեշտակապետին[3], կենդանացաւ զօրութիւն մարգարէութեան նորա, որ մեռեալ էր եւ լուծեալ ի ծերութենէն[4]: Եւ զի աւետեաց էր ծնունդն եւ ոչ բնութեան, վասն այսորիկ յաւետեաց թուի[5], եւ ամենայն մարդ նախ ի հայր սկսանի կենդանութիւնն եւ ապա ի մայրն: Եւ այսու աղագաւ յայնմանէ թուեսցի ամիս[6] վեց: Իսկ եթէ դու ի մօրէ թուես՝ նոյնպէս[7] ոչ կարես հաստատել զքոյդ, վասն զի Աւետարանն ոչ ասէ եթէ՝ Զկնի լրման վեց ամսոյ. զի զկնի լրման վեցին առժամայն եւթն[8] սկսանի, եւ նա[9] Եւթն ոչ ասաց: Եւ միանգամայն ամենայն ամսոյն վեցերորդի. վեցերորդ ամիս կոչի եւ վասն այսորիկ յամսեանն վեցերորդի ասէ[10], զի դեռ եւս կային յաւուրց նորա, եւ որչափ եւ կային յաւուրցն, թէեւ երկուս[11] օրս[12], ապա ի Մարտի ամսոյ[13] աւետեաց, եւ ոչ եւթներորդն յԱպրիլի[14], եւ թէեւ յԱպրիլի էր, դուք եւ անդ ոչ տօնէք Աւետեաց, եւ ոչ բնաւ ուրեք[15] եւ ոչ Ծնունդն[16] տօնէք բնաւ՝ այլ մկրտութեան միայն[17] ըստ ձերումն մի բնութեան[18] ասելոյն: Ապա այն որ ասէք[19] ի ծածուկ լեալ Աւետիսն եւ Ծնունդն, եւ

այն չէ մեզ[20] փոյթ, զի վերստին տօնեմք զԾնունդն, եւ զՀօր Աւետիսն, որ մեծ է քան զԳաբրիէլին:

Արդ՝ զիւրոյ սկիզբն ոչ պատուէ ինքն, եւ զիա՞րդ պատուելի է՝ եթէ ոչ աւետեաց, զիա՞րդ յղացաւ, մի՞թէ յառնէ, քաւ լիցի, այս հրէից է[21]: Մի՞թէ առանց պատճառի՝ քաւ լիցի, այլ ի Բանէն Աստուծոյ եւ աւետեօք հրեշտակին: Եւ արդ՝ զիա՞րդ ոչ տօնելի է: Եւ թէ ոչ աւետեաց, ապա եւ ոչ ծնաւ, եւ դուք ոչ զայն տօնէք, եւ որոյ ոչ աւետիս եւ ոչ ծնունդ եւ թլփատութիւն տօնելի նորա, եւ ոչ մկրտութիւնն է տօնելի[22], եւ ձեր ամենայն այսպէս:

Իսկ այն որ ասէք, եթէ ի նմին աւուր, յորում ծնաւ, ի նմին աւուր եւ[23] մկրտեցաւ, զի՞նչ ասէք, զորոյ եւ ոչ աւետիսն գիտել՝ կամել տօնել հնար է. եւ ոչ ծնունդ նորա[24], զիա՞րդ գիտեցէք զլրումն ամին, յորում զմկրտութիւն կարէք իմանալ, զի ի ծննդենէն թուին ամքն: Եւ թէ զմկրտութիւնն զկնի եւթ հարիւր երեսուն ամի համբարձման Տեառն Մանծկերտի[25] ժողովն յայլոց[26] լուեալ ընկալաւ, զաւետիս եւ զծնունդն ընդէ՞ր ոչ ընկալաւ:

Արդ՝ ոչ որպէս ձերն աւետարանիչն Կունդն գրեալ է ի Տօնապատճառն ձերոյ, եթէ ի լնուլ երեսուն ամին եկն ի մկրտութիւն: Նոյն եւ Ղուկաս ասէ, եթէ էր Յիսուս ամաց երեսնից սկսեալ յորոց կարծիւր[27] որդի Յովսէփայ (Ղուկ. Գ, 23): Արդ՝ եթէ սկսեալ էր երեսուն ամաց, ապա յաւուրս ինչ ունէր մտեալ յերեսուն ամն. եւ այս ոչ ի նմին աւուր ասի, զի այն դեռեւս յառաջնոյ ամէն գոյ, այլ սկսեալն մտեալ լինի յամին, որպէս եւ երկոտասան աւուրց, զոր եւ սահմանեցին առաքեալքն զտօն Ծննդեան տօնել զաւուրս երկոտասան, որոյ եւ երկոտասան աւուրցն կանոնս գրեցին: Վկայէ Ոսկեբերանն երկոտասան ճառս արարեալ այնու աւուրցն ի մեկնութեան[28] Աւետարանին: Եւ արդ՝ որպէ՞ս այնպիսի սքանչելի տօն յերկնից եւ յերկնաւորաց[29], յաստեղն, ի հրեշտակաց, եւ յերկրէ եւ յերկրաւորացս, այսինքն ի մոգուցն ի հովուաց, եւ յամենայն արարածոց պատուեալ գոլով[30], ի միում գիշերի ի չորրորդ ժամուն

---

[38] Աստուած ի սկզբանէ ԱԳ
[39] զսկիզբն Գ
[40] ամենայն պիղծ է] Դ, որում պեղծ է Գ
[41] յորովայնէ ԱԳ

Լ [1] զքոյդ ԴԵ
[2] յաւետանից Ա
[3] հրեշտակին ԱԳ
[4] ծերութենէն] զօրութենէն ԱԴԵ
[5] թվի ԳԴԵ
[6] ամիսս ԴԵ
[7] այնպէս ԱԳ
[8] եօթն ԱԲԴԵ
[9] նա] ԴԵ
[10] վեցերորդ... ասէ] ԴԵ
[11] երկու ԴԵ
[12] աւուրս Ա, աւրս Գ
[13] ամսոյ] ԳԴԵ
[14] ի յԱպրիլի Գ, Ապրիլ ԴԵ
[15] ուրուք Ա
[16] ծննդեան Գ
[17] միայն] ի նմա Դ
[18] բնութիւն ԳԴԵ
[19] +թէ ԱԳ
[20] մեզ չէ ԱԳ
[21] է] ԳԴԵ
[22] տօնելի է ԳԴԵ
[23] եւ] ԴԵ
[24] նորա] Գ
[25] Մանծկերտի ԱԳ, Մանածկերտի Դ
[26] յայլոց] Ա
[27] կարծէր ԱԳԵ
[28] մեկնութենէ ԱԳԴԵ
[29] յերկրաւորացն ԳԴԵ
[30] գոլով] գրով ԱԳԴԵ

նորա տօնել եւ կատարել, եւ յառաւօտն ոչ հասանել, եւ այսպէս ծանուցեալ լինի ընդ ամենայն աշխարհ[31]:

ԼԱ. *Եւ արդ՝ մինչ հարցանեմք ցժողովն ձեր. եթէ ունի՞ք դուք տօնել Աւետեաց[1] կամ Ծննդեան Տեառն, ասեն մեզ՝ Եւ ոչ բնաւ լուեալ է մեր, եւ կամ զի՞արդ Մկրտութեանն տօն խառնեալ ընդ նմա փութապէս ընդ առաւօտն՝ յափշտակեալ[2] զպատիւ նորա, ծածկելով զփառս եւ զվայելչութիւն եւ զհրահանգ նորա: Եւ արդ՝ որովհետեւ ուրացեալ ի բաց ձգեցինք[3] ի ձէնջ հաւատով զմարմնոյն բնութիւնն[4] Քրիստոսի եւ զներգործութիւն եւ զկամս նորա, եւ մի խառնակեալս[5] գոլ ասէք զնա ընդ աստուածութիւնն, զնոյն արարիչ եւ զներգործութիւնս[6] նորա, եւ յայն սակս լռեալ զԱւետիս եւ զԾնունդն նորա՝ փոյթ ի Մկրտութիւն ձգիք: Արիոս ասաց շնորհօքն որդիանալ Աստուծոյ զՔրիստոս: Եւ դարձեալ՝ զՄանինենտիոսի եւ զՎաղենտիանոսի նկարեցէք[7] զօրէնս յանձինս ունել, որք ասացին որպէս խողովակ անցանել Բանին ընդ Կոյսն Մարիամ, իբրեւ թէ կարծեօք եւ առ աչօք մարմնացաւ Աստուած եւ ոչ ճշմարտութեամբ. այսու նմանութեամբ ընդ երեկոյ աւետիս[8], ի մէջ գիշերի ծնունդ, եւ ընդ առաւօտն մկրտութիւն ասէք. եւ ոչ երբեք կամիք հասանիլ[9] կարգի ամենայն քրիստոնէից:*

Իսկ մեք վասն զի ճշմարիտ Աստուած եւ Որդի Աստուծոյ եւ համագոյ Հօր եւ Հոգւոյն խոստովանիմք զՏէր[10] Յիսուս Քրիստոս եւ ճշմարիտ մարդ՝ բնութեամբ [եւ] ներգործութեամբ զմի եւ զնոյն համագոյ Հօր եւ մեզ Քրիստոս երկու[11] կատարեալ բնութիւնս եւ ներգործութիւնս, այսինքն Աստուծոյ եւ մարդոյ, ի մի անձն Բանին Աստուծոյ[12] միաւորեալս, անշփոթելի, անխառնակելի եւ անբաժանելի, նոյնպէս եւ զերեսին տօնսն իւր առանձին ուրոյնս[13] անխառնակելիս տօնեմք եւ պատուեմք: Եւ որպէս բնութիւն մարդոյ է յանհատիցն անհայր ունելով զմշտնջենաւորն գոլ եւ անտի[14]

[31] աշխարհս Ա

ԼԱ [1] Աւետեաց] աւուրց ԳԴԵ
[2] յափշտակել Դ
[3] ձգեցէք Ա
[4] Քրիստոսի բնութիւն ԴԵ
[5] խառնեալս ԴԵ
[6] զներգործութիւնս Ա
[7] նկարիցէք Դ
[8] աւետիս] աւուրս ԴԵ
[9] հասանել Գ
[10] + եւ ԴԵ
[11] բնութեամբ... երկու] ԳԴԵ
[12] ի մի անձն Բանին Աստուծոյ] Ե
[13] ուրոյն ԴԵ
[14] անդի Գ

ընդ ժամանակաւ ծնեալ լինի ի ձեռն երրորդ փչմանն (՞), բնական ի հօրէ առ մայր[15], որ եւ այս է առաջին եւ իմանալի ծնունդ անձին եւ մարմնոյ, եւ կատարեալ՝ անդ յաւիտեան մի՛ օտար քաղաքավարութեամբն, նոյն գոլով հոգւոյ եւ մարմնոյ: Եւ ապա զկնի ինն ամսեան ժամանակի, երիս հեծութեամբ եւ ցաւօք եւ երիս երկամբ ծնանի յաշխարհիս յայսմիկ, նոյն գոլ հոգւոյ եւ մարմնոյ: Եւ ապա շնորհօք Աստուծոյ առանց երկանց եւ ցաւոց երիս փչմամբ եւ[16] երիս ընկղմամբ ծնանի վերստին շնորհօք լեալ որդի Աստուծոյ, եւ ապա յետնումն երիս հառաչանօք[17] որոշի հոգին[18] ի մարմնոյն, մտանելով ի գերեզմանի՝ լուծանին իւրաքանչիւր նիւթք ի համագգիս իւրեանց[19]: Եւ յերիս[20] կոչումն[21] փողոյն Գաբրիէլի յարիցեն որ յանվախճան կեանս: Այս բնական է մարդկան[22] յառաջադիմութիւն[23], եւ զայսոսիկ զամենայն յինքն կրեալ պատուեաց ի ժամանակս իւրն Յիսուս, զոր եւ մեք տօնել եւ պատուել եւ փառաւորել պարտական եմք: Զառաջինն[24] աւետեօք հրեշտակին էջ յերկնից անձնաւոր եւ պարագրելի Բանն Հօր. եւ անկարծելաբար, որպէս զանձրեւ ի վերայ գեղման իջեալ բնակեցաւ յարգանդի անապական եւ միշտ կուսին, առանց ցանկութեան, առանց ախտի, եւ զԿոյսն՝ կոյս պահեալ: Եւ աստ եղեւ իջումն եւ խոնարհութիւն անպատմելի. եւ արար անդ յաւիտեանս ինչ, առնելով զմարդն յինքն, եւ միաւորելով, ինքն մարդ լինելով եւ մարդն աստուածանալով, եւ ոչ շարժեալ եւ փոփոխեալ լինելով իւրաքանչիւրն յիւրն բնութենէն յաղագս ի մի անձն Բանին միաւորելոյն. զորս եւ տօնել մեզ եւ պատուել ամենայնիւ արժան եւ յիրաւի[25] է:

Իսկ՝ զկնի ինն ամսեան ժամանակի, ըստ կարգի թւոյ[26] աւուրց մարմնոյ մարդկային բնութեանս, ծնաւ նոյն Քրեստոս Աստուած եւ մարդ, այլ առանց երկանց, եւ[27] մարդ կատարեալ բնութեամբ: Եւ թէպէտ եւ յաղքատէ կնոջէ եւ յայրին ծնաւ, այլ այնպէս հրաշափառագոյն, զի եւ ամենայն արարածք զարհուրեալ երկրպագեցին նորա[28],

[15] առ մայր] անմայր Դ
[16] երիս փչմամբ եւ] ԳԴ
[17] հառաչանօք ԱԴԵ
[18] + եւ Ա
[19] իւրոց Գ
[20] երիս Դ
[21] գոչումն Գ, փչումն Ե
[22] մարդկային ԳԴԵ
[23] յառաջադրութեան ԴԵ
[24] +զայն ԳԴԵ
[25] իրաւի Դ
[26] թւոյ] ԱԲԳ
[27] եւ] ԳԴԵ
[28] նորա] նոր ԳԴԵ

եւ օտար աստղն՝ զաստեղագէտսն[29] յերկրպագութիւն աստուածային ընծայիւք, հրեշտակք՝ փառք ի բարձունս ասելով զհովիւսն երկրպագեցուցին: Հերովդէի[30] եւ Երուսաղեմ խռովելովն[31] եւ մանկասպանութեամբն յայտնեցին: Եւ այսպէս՝ զսա պատուեալ Քրիստոս ի մէնջ յոյժ հռչակելի տօնելի եւ պաշտելի է: Նոյնպէս և զմկրտութիւնն[32], զոր մկրտեցաւ անմեղն յաղագս մեր մեղաւորացս, և նա տօնելի եւ երկրպագելի է, ո՛չ ծածկեալս եւ ոչ խառնակեալս[33] ի միմեանս[34], այլ պաշտեալս[35] եւ փառաւորեալս: Նոյնպէս եւ մահն եւ յարութիւն նորա:

Եւ արդ՝ ո՞[36] ոք ի սոցանէ ծածկելի եւ խառնակելի է, բայց միայն յայնցանէ, որք մարմնոյն բնութեան ունել ոչ հաւատան:

ԼԲ. *Եւ արդ՝ զի ասացեալ [է] ձեր, եթէ Աստուածաբանն է վկայ մեր, բերցուք եւ ի նմանէ վկայութիւն ձեր: Եւ արդ՝ եթէ յաւուրս նորա մի էր լեալ տօն, մի էր ասացեալ զճառ տօնին եւ խառնակեալ զխորհրդով բանիցն, այլ յայն սակս երկու ասաց[1] այլ եւ այլս խորհրդով, զի յայլ եւ յայլ[2] աւուրս տօնէին նոքա: Քանզի սկսեալ ի ծննդեան ասէ. Քրիստոս ծնեալ փառաւորեցէք, զօծեալն անուն էառ. այսինքն զերկու բնութեանն: Քրիստոս յերկնից՝ այսինքն[3] ի վայր իջեալ, Քրիստոս յերկրէ, այսինքն մարդ բնութեամբ եւ երկրածին ծնեալ, եւ այլ եւ այլ:*

Այժմ Աստուծոյ Յայտնութեանն տօն է, այսինքն Ծննդեան, զի երեւեցաւ Աստուած մարդկան մարդ ծննդեամբ եւ որպէ՞ս երևեալ կարէր Աստուած մարդ ծննդեամբ[4], որ աննիւթ եւ անմարմին էր, այլ վասն զի յարգանդին նախ բնակեցաւ Բանն Աստուծոյ բանիւ հրեշտակին, եւ այնպէս երեւեցաւ՝ որպէս ի տախտակի բանն ի մարմնի Կուսին բնակեցաւ Բանն եւ անպատմելաբար մարմնացաւ, եւ Բանն մարմին եղեւ, եւ մարդ կատարեալ ծնաւ ի նմանէն[5], որ կատարեալ Աստուած էր, նախ քան զյաւիտեանս համագոյ Հօր եւ[6] Հոգւոյն, մի՛ յերկուց հակառակացն լինել, եւ երեւեցաւ ի վերայ երկրի ծնանելով ի Կուսէն եւ բնակեցաւ ի մեզ եւ սնաւ, որպէս

[29] զաստղագէտսն ԱԳ
[30] Հերովդէ Գ
[31] խռովելովք ԴԵ
[32] մկրտութիւնն Դ
[33] խառնեալս ԴԵ
[34] ի միմեանց ԱԳԴԵ
[35] պաշտելիս ԱԴԵ
[36] ոյ Գ

ԼԲ [1] +եւ Ա
[2] այլ ԱԴ
[3] այսինքն] ԴԵ
[4] եւ որպէ՞ս… ծննդեամբ] Դ
[5] կուսէն Դ
[6] եւ] ի ԴԵ

գրեալ է, զի պարտ էր, ասէ, ծնունդն պատուիլն եւ նախապատուեալ[7] զկուսութիւնն: Եւ տես, զի ի ճառիս[8] յամենայն բանս զԾնունդն Քրիստոսի իմաստասիրէ, եւ ոչ մի ինչ[9] յիշէ զմկրտութիւնն: Քանզի ասէ անմարմինն մարմնանայ, Բանն թանձրանայ, անտեսանելին տեսանի, որդին Աստուծոյ՝ որդի մարդոյ լինի՝ Յիսուս Քրիստոս յերեկ՝ անցեալն, այսօր որ եւ նոյն եւ յաւիտեանս ապառնին գոլով: Այս ամենայն զմարմնոյ ծնունդն ասէ, եւ մկրտութիւն ոչ յիշէ: Քրիստոս միայն ասէ, եւ ոչ Յիսուս, եւ ոչ Փրկիչ, եւ ոչ Աստուած յիշելով, այլ զՔրիստոս զմերս առ մեզ ծննդեանն անուն, որ զերկու բնութիւնս յայտնէ՝ զաստուածութեան եւ զմարդկութեանն, որով օծաւ եւ որով էօծ զինքն, որ եւ օծաւ իբրեւ զմարդ եւ օծի իբրեւ զԱստուած. զի օծումն մարմնոյն է օծութիւն, զի եւ առաւել քան զընկերս քո, զի օծեալն անուն ի մարգարէիցն էր սկսեալ: Եւ վասն այսորիկ Աստուածաբանն Քրիստոս ծնեալ ասէ եւ ոչ մկրտեալ յայսմ բանս. այլ զի ցուցցէ ուրոյն գոլ զԾննդեան տօնն, զամենայն բանս[10] ճառիս, զորս յերկիր ծննդեան ասէ, եւ առաւել ցուցանէ զսոսա ոչ մի տօն գոլով, ոչ միայն գոլով. զի ասէ փոքր մի յետոյ՝ Տեսցես զՅիսուս մաքրեալ Յորդանանաւ[11] զիմանալի մաքրութիւնս: Փոքր մի յետոյ ասէ, այսինքն՝ յայլ աւուր եւ ոչ այսօր: Եւ դարձեալ ասէ. Այլ ինձ ընկալ[12] այժմ զԾնունդն եւ ցնծա՛[13] թէպէտ եւ ոչ իբրեւ զՅովհաննէս յանապատէն, այլ իբրեւ զԴաւիթ: Եւ թէ զծնունդն պատուէ[14], որով արձակեցար ի կապանաց. զԲեթղեհէմ[15] պատուէ զփոքրն, որով դու յերկինս գրեցար:

Եւ արդ, տե՛ս ամենայնիւ, զի ծննդեան է բանս եւ ոչ մկրտութեան ամենեւիմբ զասացեալսն: Վասն զի մարդկային բնութեան ցոյցք են սոքա եւ ոչ աստուածային. քանզի ասէ. Եւ արդ զծննդեանն վայելչականս տօնեցաք, ընդ աստեղն[16] ընթացաք, ընդ մոգսն ընծայեցաք, ընդ հովիւսն փառաւորեցաք եւ այլն:

Եւ արդ՝ զի՞նչ ասէ՝ ուսուցուք ի նորայն բանից, թէ որպէս միայն զԾնունդն[17] Քրիստոսի գոլ ասէ աստ զտօնն եւ ոչ զմկրտութեանն. տե՛ս թէ որպէ՛ս

[7] նախապետեալ ԴԵ
[8] + եւ Ա
[9] մինչ ԳԴԵ
[10] բան ԱԴԵ

[11] Յորդանանու ԳԴԵ
[12] ընգալ ԱԳ
[13] ցնծայ ԳԴԵ
[14] պատուէ ԳԴԵ
[15] զԲեթղահէմ Ա
[16] աստղն ԴԵ
[17] զծննդեանն ԱԳ

բաժանեաց: Իսկ Յիսուս անուն զխորհրդոյն ասէ, զոր եւ կոչեցեալ էր նախ ի հրեշտակէն՝ վասն զի Փրկիչ թարգմանի: Եւ արդ սկսաւ ի փրկութեան ցոյցս տալ մեզ ի վերստին ծնունդն: Վասն զի մկրտելով ոչ զիւր մաքրէր[18] զմեղս, զի ոչ ունէր բնաւ, այլ մեզ ուսուցանէր մաքրել[19] ի ձեռն փրկութեան լուացմանն եւ զայս առնել սկիզբն փրկութեան:

Եւ արդ՝ ո՞ր ոք թուի ի ձեզ մեծ եւ հռչակելի եւ առաջին տօնելի. Ծնո՞ւնդն, որ խոնարհեալ յերկրի եւ առ[20] զմերս, եւ զմեզ ընդ ինքն[21] միացոյց, ուր եւ երկինք եւ երկիր գումարեալ ցնծային, եթէ Մկրտութիւնն[22], որ զմեղս լուանալ ուսոյց մեզ, եւ թէ ոչ այլ եւ այլ տօն: Ընդէ՞ր այլ եւ այլ անուն եւ այլ եւ այլ զօրութիւն են՝ թէպէտ եւ միոյ Քրիստոսի են:

Դարձեալ՝ իմն Յիսուս իբրեւ թէ սա Յիսուս այն է, որ օծեալ ծնաւ, զորոյ տօնախմբեցաք զծնունդն: Եւ դարձեալ խորհուրդ, իբրեւ[23] թէ խորհուրդ ոչ նոյն, վասն զի[24] անդ նորա եւ առ մեզ իջանելոյն եւ իբրեւ զմեզ լինելոյն եւ զմերս զամենայն կրելոյն, եւ զերեսնամեայ[25] ժամանակի իբրեւ զմարդ ընդ մեզ կալոյն ունէր զխորհուրդ:

Իսկ այս ի վեր գնալոյն եւ առ Հայրն զմերն եւ զմեզ հանելոյն եւ փրկութեան էր սկիզբն: Եւ արդ՝ լուր ի յաջորդէս. դարձեալ իմն Յիսուս, յայտնապէս կոչէ զանուն, զոր ի վերուստ կոչեալն էր նմա ի հրեշտակէն, նաեւ ի թլփատութեան օրն եւ այսու անուամբ յայտ արար զնա Փրկիչ գոլ ամենայն աշխարհի: Որպէս ասացաւ, թէ Նա փրկեսցէ[26] զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց[27]: Եւ վասն սոսա[28] ասէ ծնեալն Քրիստոս եւ մկրտեալն Յիսուս:

Եւ դարձեալ՝ յորժամ ասաց անդ, եթէ Քրիստոս ծնանի, զմարդկային բնութիւն նշանակեաց, որ աստուածացաւ ի նմա: Եւ դարձեալ իմն Յիսուս՝ զաստուածային բնութիւնն յայտնեաց, որք էին առանձնաւորութեամբ միաւորեալք անխառնակելիք ի նմա: Եւ անդ Քրիստոս ծնեալ, զոր մարգարէքն[29] քարոզեցին, իսկ աստ՝ Յիսուս մկրտեալ, զոր Հայր[30] եւ Հոգի

18 մաքրէր] Դ
19 մաքրեալ Գ
20 էառ Ա
21 ինքեան Ա
22 զմկրտութիւնն ԴԵ
23 իբր ԴԵ
24 զի] Գ

25 երեսունամեայ ԱԳ
26 փրկեաց ԴԵ
27 իւրոց ԴԵ
28 այսպէս ԳԴԵ
29 մարգարէքն] մոգք ԴԵ
30 զոր Հայր] զօրանայր ԴԵ

համագոյ նոցին[31] գոլ յայտնեցին: Դարձեալ Յիսուս եւ դարձեալ խորհուրդ, ոչ մոլորեցուցիչ: Եւ արդ, եթէ ոչ մոլորեցուցիչ, ընդէ՞ր մոլորեալ խառնակեցին[32] զերկուս խորհուրդ ընդ միմեանս, այսինքն՝ զտէրունական տօնիցն, զոր ի Սաբելէ եւ յԵւտիքէ[է] առեալ խառնակեցին նախ զբնութիւնսն Քրիստոսի, եւ զներգործութիւնս նոցա. եւ ապա զտօնս եւ զխորհուրդս նոցա, զոր եւ[33] միոյ Քրիստոսի ներգործութեանցն յատուկ կատարեն[34] մեծաւ պատուով ի ներքոյ երկնից յամենայն[35] ազգս: Եւ զայն Աստուծոյ եւս յայտնութիւն կոչէ: Եւ զայս վասն զի Մկրտութեանն է[36] տօնս, ասէ, անդ զԾննդեան[37] եւ զմարդանելոյն քարոզէ զխորհուրդ, եւ աստ՝ զմկրտութեանն[38] առնել զզանազանութիւնս: Վասն զի սուրբ լուսաւորութեանս[39] օրս, յորս ժամանեցաք, որոյ[40] տօնել արժանի եղաք, ուստի ժամանեալ ասէ, այսինքն՝ ի Ծննդեան տօնէն[41], եւ թէ ոչ աւուրք էին միջի, ուստի ո՞ւր ժամանէին: Այսօր սկիզբն իմս[42] Քրիստոսի[43] Մկրտութեան առնու եւ թէ այսօր սկիզբն մկրտութեան առնու՝ ո՞ւր է Ծնունդն. տե՛ս զի լուսաւորութիւն եւ ոչ ծնունդն կոչէ զօրն, եւ ոչ ինչ նմանութիւն ունին անուանքս այսոքիկ առ միմեանս:

ԼԳ. *Արդ՝ պարտ էր ձեզ հաւանիլ եւ սիրով միաբան լինիլ[1] ձեզ ընդ ամենայն կարգս եւ կրօնս առաքելադիրս, զոր ունին ամենայն եկեղեցիք ի ներքոյ երկնից, որպէս եւ նախնիքն ձեր արարին ամս չորեքհարիւր, եւ ոչ անկանիլ[2] ձեզ ի հայհոյութիւնս Եւտիքի, Սաբելի, Դեոսկորոսի, Սեւերիոսի, Պօղոսի Սամոստացւոյ, Պարսումայի[3], Յակոբայ[4], եւ այլոցն, զորոց աւանդն զգուշութեամբ պահէք եւ զաւանդողսն նզովեալս ասէք: Ապա թէ յանիշխանութենէ եւ ի գերութենէ Պարսից եւ ի սարկութենէ նոցա եւ[5] յանգիտանակ ի դպրութենէ լինելոյ ձերոյ, եւ ի հեռի գոլոյ եկեղեցեացն Աստու-*

31 նոցան ԴԵ
32 խառնակցին Գ
33 եւ] ի Ա
34 կատարին ԳԵ
35 ամենայն Դ
36 մկրտութեան Ա
37 զծննունդն ԱԴԵ
38 մկրտութեանցն ԱԳ
39 լուսաւորութեան ԴԵ
40 որո ԱԳ, որոց ԴԵ

41 տօն ԱԳ
42 իմ ԳԴԵ
43 Քրիստոս ԱԴԵ
ԼԳ 1 լինել Գ
2 անկանել ԱԳ
3 Պարսամսի Ա
4 Յակոբի ԱԳ
5 յանիշխանութենէն... նոցա եւ] Դ

ծոյ, ո՛չ երբեք տեսեալ ձեր զիւրեանց ձեռամբ գրեալ կարգաւորութիւնս Առաքելոցն եւ զՍուրբ Հարցն, եւ զհամաշխարհական ժողովոցն, այսու պատճառաւ ի ձեզ, եւ ի հպարտութենէ առաջնորդաց ձերոց ընկալայք ի ձեզ զբանս այսպիսիս վատախոհ եւ չարիմաց, եւ զարտաքսելոց[6] արանցն հերձուած, ապա լսել պարտ էր ձեզ, եւ ոչ Տօնապատճառս եւ դրուակս եւ առասպելականս եւ ստայօդ պատասխանիս եւ դիմադրութիւնս գրել ընդդէմ հաճոյից եւ գրելոցն[7] եկեղեցեացն Աստուծոյ, եւ խրամատեալ զկարգաւորութիւն ձեր, եւ լնուլ զգրեանս ձեր ամենայն բանիւք եւ որոշմամբք[8] նոցա, զոր եւ ոչ նախնիքն ձեր արարին, եւ ոչ նոքին հերձուածողքն անամօթաբար գրի արձանացուցանել զստութիւն: Այլ թէպէտ եւ հերձուածոյն դիտակ եղեն նոքա, այլ զկարգ եւ զտօնս եւ զձեռնադրութիւնս եւ զպատարագին խորհուրդ ոչ խրամատեցին: Այսչափ[9] մինչեւ ցայս վայր վասն այսոց[10] երիցս[11] տօնիցն բաւականասցի:

ԼԴ. *Այլ յայսմհետէ զԶատկէն ասասցուք:*

Գրեալ է ի կարգաւորութիւն սրբոց առաքելոցն ձեռամբ Կղեմայ՝ Եթէ ոք[1] զՅարութիւնն Քրիստոսի նախ քան զլրումն լուսնին ասասցէ լինել կամ զտօնն նորա ոչ զկնի լուսնի լրմանն ի հանդիպեալ կիւրակէին[2] կատարեսցէ, նզովեալ եղիցի: Եւ ժողովն Մանծկերտի[3] օրէնս գրեաց՝ Եթէ որ ոք շաբաթ կամ կիւրակէ պահիցէ[4] բնաւ[5], բաց[6] ի Կաղանդին պահոց, նզովեալ եղիցի: Եւ յաղագս այսորիկ ունեն Հայք զամենայն շաբաթ եւ զկիւրակէս պահոցն, նաեւ[7] զՄեծն շաբաթ օր[8], եւ Քրիստոս դեռ եւս ի գերեզմանին էր, զի մի՛ զկանոնս Մանծկերտի[9] լուծցեն. գրեցին եւ պատճառս բազումս՝ իրաւ առնել զայն. զՅարութիւնն ի շաբաթու ասեն լինել, եւ վկայ ասեն վառեալ լուսոյն ի գերեզմանին. եւ զտէրունական հոգին Քրիստոսի ի հինգշաբթի յընթրիսն[10] ասեն ելեալ ի նմանէ: Եւ զՄեծ ուր-

բաթն երկու[11] աւուրս եւ երկու գիշերս ասեն զոլ, եւ զայս առնեն, զի իբրեւ ի շաբաթու զՅարութիւնն ստուգեն, եւ զլինելն ի սիրտ երկրի զերիս տիւս եւ զերիս գիշերս ոչ ստեսցեն[12], եւ այնպէս[13] պնդեալ[13] ջանան զիւրեանցն արարած:

Եւ արդ՝ սովորութիւն է ի սկզբանն արարածոց լուսնին, որ զի սկսանելն[14] քր[ոն]իկոնին, ուր արեգակ եւ լուսին ի մին[15] սկսանին կիկլիկոս, մինչեւ հինգ լուսին կատարեսցէ զբոլորն իւր եւ երիս բոլորս[16] արեգական կատարի, ի չորրորդում բոլորի արեգականն, ի տասնում կիկլիկոսին ԺԹ. կիկլիկոսին, յայնմ ամին դիպի[17] զլրումն[18] լուսնին շաբաթ երեկոյին, յառաջին ժամ գիշերոյն զոլ, եւ յաւուրն[19] կիւրակէի Յարութեան Քրիստոսի տօնելի է: Եւ Հայք, վասն զի օրէնս եդեալ ոչ պահել զշաբաթն[20] յայնմ ամի, նախ քան[21] ի շաբաթին յիններորդ ժամուն լուծեալ զպահսն՝ Յարութիւն ասացին եւ կերան, դեռ ոչ եւս լեալ լրումն, եւ ոչ զատիկն Հրէից: Եւ ապա զկնի ուտելոյն, յետոյ Անաստաս կաթողիկոսն Հայոց եւ Անանիայ[22] Շիրակացին, երկուցեալք[23] յառաքելական անիծիցն, որ ոչ թոյլացուցանէր նախ քան զլրումն Զատիկ առնել, երկեալ[24] եւ ի Մանծկերտէ[25], որ զշաբաթս ոչ տայր պահել, եւ ընտրեցին լուծին զառաքելոցն, նստեալ ի տան միայն գրեցին նոր տոմարս, եւ գրեցին զԱպրիլի[26] հինգ լրումն Ապրիլի[27] վեց, որպէս զի զկնի կիւրակէ[28] ասել լրումն, զոր եւ Ծառզարդար արարեալ ի միւս կիրակէն Զատիկն, եւ անտի սկսեալ յամենայն ՂԵ. ամի[29] այնպէս դիպի նոցա. եթէ գրեալ է ի Տօնապատճառին նոցա ՉԻԴ. թուականին[30] արարին զտոմարն Զատկին Անաստաս կաթողիկոսն եւ Անանէ Վարժապետ ի Շիրակայ գա-

---

6 զարտաքսելոյ ԱԳԴԵ
7 գրելոյն ԴԵ
8 որո[շ]մամբ Գ
9 Այսչափ] Այսպէս Դ
10 այսոց] Դ
11 երեք ԴԵ

ԼԴ 1 որք ԱԳ
2 կիւրակէն Գ
3 Մանծկերտի ԱԳ, Մանածկերտի Դ
4 պահեսցէ Գ
5 +կամ Գ
6 բայց Ա
7 նաև] նախ Ա
8 շաբաթ օր] շաբաթաւ ԱԳ
9 Մանծկերտի ԱԵ, Մանածկերտի Դ
10 ընթրիսն Դ

---

11 երկուս Գ
12 ստեն ԴԵ
13 եւ այնպէս] նոյնպէս ԴԵ
13 պնդել Դ
14 սկսանիլն Դ
15 ի սմին Դ, ի մին և ի մին ԱԳ
16 բոլոր Ա
17 դէպ ի Դ
18 լրումն ԴԵ
19 յաւուրն] յաւարտն ԱԳ
20 շաբաթն ԳԴ
21 քան] նոքա ԱԳ

---

22 Անանաի եւ Ա, Անանի Գ
23 երկուցեալք Ե
24 երկեալ] եկեալ Ա
25 Մանծկերտէ ԳԵ
26 Ապրիէլի Գ
27 Ապրիէլ ԱԳ
28 կիւրակէ Ա
29 ամի] ԳԴ
30 ՉԻԴ թուականին] Ն եւ ԻԴ թուին ԱԳ (երկու ընթերցումն էլ վրիպյալ են՝ 424 և 724)

ւառն, ի Մարմաշէն[31], եւ կամէին ժողով առնել եւ ցուցանել զնոր տոմարն եւ ոչ ժամանեցին:

Եւ արդ՝ ի Սրբոյն Գրիգորէ մինչև ցայն որ տոմարն էր, ընդէ՞ր ոչ բաւական էր ձեզ, այլ ընդէ՞ր պիտոյ էր առնել նոր[32] եւ վասն այսմ պատճառի, զի մի՛ զշաբաթն պահիցեն[33], յամենայն ՂԵ. ամի թիւրեալ զՁատիկն՝ յամենայն ազգաց ի դուրս ելեալ ութ աւուրբ[34], անկանին յանէծս առաքելոցն: Գտիցին եւ պատասխանիս[35] ինչ[36] սուտս իրաւացուցիչս զնոսա, որք եւ ոչ ընաւ արժանի պատասխանւոյ են: Եւ նախ ասեն զայս. Ռէոն իմն[37] իմաստուն, զոր ի Քաղկեդոնի ժողովն ոչ կոչեցին, խթեաց[38] զտոմարն Հոռոմոց եւ մոլորեցոյց զնոսա ի հինգն ասել յԱպրիլի[39] զլրումն:

ԼԵ. *Եւ արդ՝ զի՞նչ սուտ քան զայս: Ապա թէ զնորն Ռէոն գրեաց, ձեզ առ ի՞նչ պէտք էր նոր տոմար[1] առնել եւ զհինն լռեցուցանել, զի որ զնորն արար, վասն ստութեան ինչ արար, որպէս Անաստաս արար: Դարձեալ, ոչ երբեք լուեալ է անուն Ռէոնի գոլ ուրեք լեալ, բայց ի միոյն[2] ձերն գրոց պատասխանւոյ. եւ թէ է՞ր ուրեմն եւ այնպէս վատ մարդ, որ եւ ոչ ժողովն գոլոյ արժանի էր, նա զամենայն իմաստունս աշխարհիս միով աւուրբ որպէ՞ս մոլորեցուցանել կարէր. զի այնպէս գիտեն զսահմանս աստղագիտութեան, որ իբրև ընդ միով հատիւ[3] ցորենոյ[4] հային ընդ ամենայն ազգս աստեղաց եւ շարժմանց երկնից, նոյնպէս եւ ամենայն ազգք քրիստոնէից, նաեւ Պարսից, որք գիտեն զաստղաբաշխութիւն, ի բուն ամենեքեան անդ ի մի տեղ սկսանին[5] զլրումն: Եւ դուք, որք[6] զանուն աստղագիտացն չիք լսեալ, եւ ոչ բան մի գիտէք ի նմանէ, նոքա ամենեքեան որպէ՞ս մոլորեցան,*

[31] Մարմարաշէն Դ
[32] նոր] նորա Ա
[33] պահեսցեն ԱԳ
[34] ՂԵ ամի... ութ աւուրբ] Անաստաս կաթողիկոսն և Անանէ վարժապետ ի Շիրակայ գառն (կարդա՛ դուռն - Պ. Մ.) ի Մարմաշէնն կամէին ժողով առնել և ցուցանել զնոր տոմարն եւ ոչ ժամանեցին: Եւ արդ ի սրբոյն Գրիգորէ մինչև այն որ տոմարն էր ընդէ՞ր ոչ բաւական էր ձեզ, այլ ընդէ՞ր պիտոյ էր նոր և վասն այսմ պատճառի զշաբաթն պահոցին յամենայն ՂԵ ամի թիւրել զՁատիկն յամենայն ազգաց Ե **[փաստորեն նույն ասելիքն է, սակայն այլ խմբագրությամբ]**
[35] պատասխանս Դ
[36] ինչս Ա
[37] իմն] ոմն ԴԵ
[38] խեթեաց ԳԴԵ
[39] Ապրիէլի ԳԵ, Ապրիլի Դ

ԼԵ [1] տումար ԱԳԵ
[2] միայն Ա
[3] իբրև հատիւ միով Դ
[4] ցորենու Գ
[5] սկսանին] տեսանին ԱԳ
[6] որք] որ ԱԳ

եւ դուք՝ ոչ: Կամ թէ՝ նման ձեզ կարծէք զիմաստունսն ազգաց, որք զԵւտիքի եւ զՍեւերիոսին լաւ համարեցայք, եւ զայլոցն՝ որ զկնի նոցա, քան զՔրիստոսին եւ զիւր առաքելոցն:

Եւ թէպէտ եւ յիշել զսոսա[7] զարշելի է, բայց ասացից զբանէ[8] Եպիփանու ձերոյ, զոր ասէ, եթէ՝ Ի հինգշաբթին երեկոյի[9] յընթրիսն, մինչ տայր զմարմինն Քրիստոս աշակերտացն, բանական հոգի ոչ ունէր, զի զԳառն[10] Աստուծոյ եթէ ոչ էր զենեալ, եւ ոչ ուտելի էր. եւ այն գիշեր՝ մի գիշեր, իսկ Ուրբաթին մինչեւ ցխաւարումն[11] արեգականն՝ մի օր, և խաւարն Գ. ժամուն, երկրորդ գիշեր, եւ գիշեր Ուրբաթուն՝ երրորդ գիշեր, եւ օրն Շաբաթ՝ երրորդ օր, եւ յարեաւ ի Շաբաթ լինն ժամու, երիս տիւս եւ երիս գիշերս ունելով Քրիստոս սիրտ ի[12] երկրի՝ այս ձերն է:

Եւ արդ՝ պա՞րտ էր զսա այսպիսի սուտ գրով դրոշմել, ո՞չ ամաչելի եւս է զսոսա[13] արձանացուցանել. եւ արդ՝ զի՞նչ քան զսա սուտ: Նախ զի Աւետարանն սկիզբն զօրն եդ, եւ զՅարութիւնն ի սկիզբն աւուրն եցոյց. եւ զի ասէ Լինիլ[14] Որդի Մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս, և զերիս գիշերս. և սա՝ սկիզբն զի գիշերն[15] եդ, եւ զՅարութիւնն ի[16] սկիզբն գիշերոյ յիններորդ ժամ Շաբաթուն ասէ լինել: Երկրորդ՝ զի եթէ[17] երեք ժամ խաւարումն, գիշեր մի եւ երեք ժամ զկնի լոյսն՝ մի օր, ոչ երբեք եւ ոչ յումեքէ կոչեալ է, զի ամենայն ընծայումն լուսնի եւ խաւարի այլ օր եւ գիշեր ոչ կոչի: Երրորդ. եթէ բանական հոգին ի Հինգշաբթի[18] էլ, զո՞վ ասէր խռովեալ յինքն ցաշակերտսն, կամ որո՞վ կենդանի էր մինչեւ ցինն ժամն. եւ ի վերայ խաչին, մինչ Էլի՛ Էլի՛ ասաց, զո՞վ աւանդեաց: Եթէ զհոգի բանական աւանդեաց, ապա ի նմա էր. եւ եթէ ոչ, ապա զաստուածութիւնն եհան ի մարմնոյն, եւ այս՝ հայհոյութիւն քոյ, վասն զի մարմինն Աստուած էր, եւ ոչ մեկնեցաւ բանն ի մարմնոյն, զի անամբարձ[19] միացեալ էր: Եւ թէ հոգին աւանդեալ էր[20] ի Հինգշաբթւոջ, ի ձեռս Հօր զի՞նչ աւանդաց: Եւ արդ, քննէ ստու-

[7] զսա ԱԳ
[8] զբանս ԱԳ
[9] երեկորին ԱԳ
[10] Գառն ԱԴԵ
[11] խաւարումն
[12] ի] Դ
[13] զսա ԱԵ, զսոսա].Դ
[14] լինել Ա լինիլ] ԴԵ
[15] զի գիշերն] զգիշերն Ա
[16] ի] ԳԴԵ
[17] եթէ] ԳԴԵ
[18] Հինգշաբթի Գ
[19] անամբարձ] անձամբ Ա
[20] է ԳԴԵ

գիւ, եթէ զայսպիսի կարգ ունել բարւո՞ք է: Ո՛հ օրինադրութեանս, ո՛հ աւանդութեանս, ո՛հ տօնիս եւ խորհրդոյ սորա:

ԼԶ. *Այլ մեք զի՞ երկարեալ կացցուք դեգերեալ եւ զազրալի յայս ասացուածոց[1] ձերոց մտածութիւնս եւ պատասխանիս, թողլով զսոսա եկեսցուք ի կարգս եկեղեցւոյ եւ տեսցուք զձեզ, եւ հարցցուք[2] թէ ունի՞ք բնաւ[3] եւ Մեռոն Սուրբ, այսինքն զեւղն[4] օծութեան, թէ ունիք՝ ուստի՞ ունիք, կամ յորմէ՞ եկեղեցւոյ, կամ ո՞ւմ ումեք միաբանութեամբ[5], կամ զո՞ր, կամ որո՞վք նիւթովք[6], եւ որո՞վք նմանութեամբք, կամ ո՞ւմ արարեալ կարգաւ, եւ կամ ո՞ւմ, եւ ո՞րպէս ձեռնադրած եպիսկոպոսիւ[7] օրհնեալ[8], եւ այսիւ տեսցուք զճշմարտութիւնն, թէ ի նա ումեք տուեալ զշնորհս Հոգւոյն Սրբոյ. զի եթէ նա առեալ ունի[9], եւ ինքն այլոց տալ կարէ:*

Եւ արդ՝ վասն զի ի Քրիստոսէ առաքելոցն տուեալ Հոգին[10] Սուրբ, եւ ի ձեռն[11] առաքելոց տուեալ լինէր Հոգին Սուրբ, գրեալ է. Սմա եւ Սիմովն հաւատաց եւ անտի մինչեւ ցկատարած[12] աշխարհիս առաքելական եկեղեցեացն եւ նոցին[13] եպիսկոպոսացն տուաւ ի Քրիստոսէ տալ Հոգին Սուրբ յաշխարհ: Այլ զմեռոնէ[14] այսպէս ունին եկեղեցիք. ի սկզբանէ այս երեքին տուաւ[15] յԱստուծոյ պիտանի ի կեանս մարդկան՝ սոքա պիտանիք եղեն: Ի դադարումն[16] ջրհեղեղին՝ զսա եբեր աղաւնին ի տապանն տերեւ ձիթենւոյ, եւ Յակոբ[17] զարձանն սորա[18] ձիթովն[19] օծ, եւ զկնի այսոցիկ յօրէնս[20] զսա հրամայեաց Աստուած իւղ օծութեան առնել եւ[21] նովաւ[22] օծանել զԱստուծոյ ընծայեալսն զամենեսին[23]:

Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ. Եւ դու առնուս անուշահոտ ծաղկունս ի զմռ[ս]ոյ ընտրելոյ հինգ հարիւր սկեղ, եւ կինա-

ԼԶ [1] ասացուածոց] ստացուածոց Գ, ասացուած Դ
[2] հարուցք Գ
[3] բնաւ] բանիւ Դ
[4] զեօղն ԱԴԵ
[5] միաբանութեան ԴԵ
[6] նիւթով Ա, նիւթոյ Գ
[7] եպիսկոպոսի ԳԴԵ
[8] օրհնել Գ
[9] ունիք ԳԴԵ
[10] զՀոգին ԴԵ
[11] ձեռս ԱԳ
[12] ի կատարած ԳԴԵ
[13] նոցայն ԱԳ
[14] զմիւռոնէ ԴԵ, զմեւռոնէ Գ
[15] տուան ԱԳ
[16] դադարումն] կատարումն Դ
[17] Յակովբ Ա
[18] սորա] սուրբ ԴԵ
[19] ձիթենովն Ա
[20] յօրէնսն ԱԳ
[21] եւ] Ե
[22] սովաւ ԱԳ
[23] զամենեսեան ԴԵ

մոն[24] կէս սորա[25] չափ՝ երկու հարիւր եւ յիսուն սկեղ, եւ կալամու երկերիւր եւ յիսուն սկեղ, եւ իրէոս հինգ հարիւր սկեղ, եւ ձէթ ձիթենեաց՝ սրբեալ մարմին եւ արա զսա ձէթ օծութեան[26] Սուրբ Մեռոն, ըստ մեռոնեփեցեաց[27] գործել գործ ճա[ր]տարակ. եւ[28] ձէթ օծութեան սուրբ եղիցի դա ձեզ, եւ օծցես զխորանն վկայութեան, եւ զտապանակն և զամենայն սպաս իւր, զաշտանակն եւ զամենայն կահս նորա, եւ զսեղանն խնկոց[29] եւ զսեղան ողջակիզացն եւ զկահս նոցա: Սեղանն եւ զկահս նորա, զաւազանն եւ զխարիսխս նորա: Եւ սրբեալ արասցես զնոսա սրբութիւն սրբոց. եւ որ մերձենայ ի նա՝ սուրբ է: Եւ օծ զԱհարոն եւ զորդիս նորա՝ եղիցին սուրբ ի քահանայութիւն. եւ ասասցես որդւոցն[30] Իսրայէլի. Իւղն[31] օծութեան եղիցի սուրբ ձեզ. զմարմին մարդոյ մի՛ օծանէք, եւ ըստ սորա խառնակումն[32] մի՛ արասցէք ձեզ, եւ որ արասցէ հրամանս եկեղեցեաց նոցա. և զմատն մեռոնի[33] խառնելիս ի նոցայն[34] բերեալ որպէս համաշխարհական եկեղեցիս ունին. ապա՛ եւ դուք մի անգամ Քրիստոսի էք, ապա թէ ոչ բնաւ լսել էք, այլ զայս ինչ ունել ասէք, ոչ անդամք, այլ անգլուխ ժողով եւ խառնիճաղանճ էր ջոկքն[34ա]:

Եւ արդ՝ զոր ի մկրտութիւն ոչ զերիս փչմունս ունիք[35], եւ ոչ ջրով նախ քան զմկրտելն ձիթով օծանեն զմկրտեալն, բաւականաբար ունին ցոյցք, գրեալ է եւ փոքր մի ի մէնջ[36] յառաջագոյն:

Նոյնպէս եւ զՀայր մեր որ յերկինս ոչ ունելով յաղօթսն: Եւ վասն պատկերացն ոչ երկրպագանելոյն[37] գրեալ է մեր յառաջին բանսն չափաւորագոյն:

Եւ զի ի ժամու հաղորդութեանն ոչ մտանեն յեկեղեցին, եւ ոչ յայլ աղօթս, գրեալ է յԵկեղեցեաց խորհուրդն:

Եւ զի բնաւ ոչ պահեն զՇաբաթ կամ զԿիւրակէ, գրեալ ի Ջատկի[38] բանսն:

Եւ զի զյիշատակս սրբոց ոչ պատուեն՝ գրեալ է:

Եւ զի զննջումն Աստուածածնին եւ զԽաչին փոփոխեն[39] ի

[24] կինամովն ԱԳ
[25] սորա] որ Ա
[26] օծութեան] օրհնութեան Դ
[27] միւռոնեփեցաց ԳԴԵ
[28] եւ] ԳԴԵ
[29] խնգոցն Գ
[30] որդիացն Ա
[31] եղն Գ
[32] խառնակման Դ
[33] մեռոնին Ա, միռոնի Ե
[34] նոցուն Դ
[34ա] ջոկ Ե
[35] ունիք] Դ, փչունսին Գ
[36] մէջն] մէջ Ա
[37] երկրպագելոցն Դ
[38] զազոկին (sic) Ա
[39] փոխեն Ա

կիւրակէս տօնել[40], եւ իւրեանքն վկայեն ստութեամբ[41]:

Եւ զԱռաջաւորացն պահոց գրեալ է զի ի սակս[42] Մանծկերտի[43] ժողովոյն, եւ ի կատարել[44] ի նմանէ յամենայն ազգաց կարգեցին, եւ զպանրուտոյն[45] ոչ պահել:

Եւ զի զգեստք[46] քահանայական ոչ[47] ունէին, գրեալ է եկեղեցւոյ խորհուրդն:

Եւ զի ի[48] Մեծի Հինգշաբթոջն ոչ հաղորդին, եւ բնաւ ոչ հաղորդին, զի ոչ ունին մասն հաղորդութեան. զի զմին զայն բաղարջ քահանայն ուտէ եւ այլ ոչ ինչ ունի, բայց միայն անօրհնեալ[49] հաց, զոր խազուկն կոչեն ինքեանքն[50], զայն տալոյ ժողովոյն իւրեանց, եւ գինի սակաւ, եւ հաղորդութիւն ասեն գոլ. այսու ամենայնի ասացեալ է փոքր մի, եւ յայտնի է զի թիւրք են:

ԼԵ. Այլ մեզ փոքր մի վասն գառին նոցա եւ զոհիցն ասել[ի] է:

40 տօնելով Դ
41 ստութեան ԳԴԵ
42 զի ի սակս] ի սոցա Դ
43 Մանծկերտի ԱԳԵ, Մանածկերտի Դ
44 կատարել] կտրել Ա
45 պանտրոտուն ԱԳ, զպանտրոյն ԳԴԵ
46 զգեստ ԱԴ
47 ոչ ունէին] ոչ գրեալ է Դ
48 ի] ԳԴ
49 անօհնեալ (sic)Ա
50 իւրենանքն Ա

Եւ արդ, զի տարեւոր գառամբ մատուցեալ կատարեն զՋատիկն[1], զենլով եւ արեամբ դրոշմելով[2] զսեամս տանն եւ զճակատս, եւ խորովեալ ուտեն. եւ որ ոչն ուտէ՝ մեռելոտի ասեն գոլ: Եւ արդ՝ նախ այն իսկ, զի ոչ ուտելն ինչ է եւ ոչ չուտելն, այլ հրէաբար ուտելն պարսաւելի է: Եւ այս յայտ է, զի գլխաւոր եւ առաջին զոհ օրինացն այն գառն Ջատկին էր, զորոյ ասեն Գիրք, եթէ զօրինակն Քրիստոսի ունէր ի ստուերի օրինացն: Գառն զմարմինն ցուցանէր եւ տարեւորն՝ զանմեղութիւնն, զենումն՝ զզենումն Տեառն, եւ արեան[3] դրոշմելն[4] զարիւնն Քրիստոսի, որով դրոշմեցան արեամբն Քրիստոսի: Եւ ուտելոյն եղանակքն՝ երեք[5] նիւթքն՝ զնորոյս նիւթքն, եւ երեք կալուածք՝ գօտւոյն եւ ցպոյն[6] եւ կօշկացն՝ զամենայն[7] առաքինութիւնս: Եւ այս եւս յայտնի է, զի Քրիստոսիւ դադարեաց օրէնքն, եւ օրինակքն ամենայն ի ճշմարտութիւն եկն: Եւ առաքեալ ասէ, եթէ՝ Օրինօքն ոչ գոյ արդարութիւն, եւ օրինօքն ոչ արդարա-

ԼԷ· 1 զատկականն ԴԵ
2 դրոշմեալ Ա
3 արեանց Ա
4 դրոշմեալն Ա
5 երեք] ԴԵ
6 ցփոյն ԱԳ
7 +հոգևոր ԳԴԵ

նայ ամենայն մարմին, եւ թէ թլպատիք, Քրիստոս ձեզ ինչ ոչ օգնէ, եւ թէ դատարկացայք յօրինացն, եւ թէ որ առնէ զմի յօրինացն, պարտի զամենայն կատարել. զի գրեալ է. Անիծեալ է ամենայն, որ ոչ կացցէ յամենայն գրեալս օրինացն:

Արդ՝ ուր ճշմարտութիւնն եկեալ հասեալ լինի, զի՞նչ պէտք է օրինակին: Եսայի ասէ ի սակս Քրիստոսի, եթէ՝ Որպէս զոչխար ի սպանդ[8] վարեցաւ: Արդ, եթէ ձեզ Ուրբաթի Քրիստոս գառն ի սպանդ վարեցաւ, եւ ճաշակելոյն նորա արժանի եղաք ի Կի[ւ]րակէ, ընդէ՞ր պարտ էր զմեռելոտի անասունն յօրինակ Քրիստոսի ի սպանդ վարել, եւ ի վերայ մարմնոյն Քրիստոսի զմարմին անասնոց՝ օրինակաւ Հրէից ուտել: Վասն զի ոչ էր պարտ որպէս առաքեալն ասէ. Որք վայելեցին ի մարմնոյ եւ յարենէ նորա եւ սեղանոյն[9] նորա հաղորդեցան Հրէիցն սեղանոյ դարձեալ հաղորդակից լինել եւ ընդ արեանն Քրիստոսի զարիւնն անասնոյ ընդ Հրէիցն խառնեալ[10]: Յովհաննէս գոչէ. Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի: Արդ՝ եթէ զարիւն տէրունական ունիս զբարձող մեղաց աշխարհի եւ նովաւ կնքեալ

8 սանդ (sic) Գ
9 սեղանոյն] եւս զնոյն ԴԵ
10 խառնել ԴԵ

զգայարանսդ, արդ ընդէ՞ր արեամբ գառին դրոշմեցար եւ պղծեցեր զայն դրոշմն: Պօղոս ասէ՝ Քանզի զատիկ մեր զենաւ Քրիստոս[11]:

Եւ արդ՝ եթէ զենաւ ձեզ զատիկն Քրիստոս, այս ո՞ր զատիկն էր, զոր երկրորդն զենէր, վասն զի արիւն անասնոցն, ասէ, ոչ կարէր սրբել զպղծեալսն, այլ Քրիստոս եկեալ[12] քահանայապետ մեծաւն եւ կատարելովն, եւ անձեռագործ խորանաւն, եւ ոչ արեամբ անասնոցն, այլ իւրով արեամբն, եւ սա զայն մի անգամ կատարեաց:

Եւ արդ՝ եթէ Քրիստոսի էք դուք, բաւական լիցի ձեզ արիւնն Քրիստոսի, որ վասն ամենայն աշխարհի հեղաւ՝ ի թողութիւն մեղաց. զոր եթէ ընկալայք եւ ունիք, անասնոց արեամբն հակառակատիպ Քրիստոսի առնելով զայն եւ խառնելով[13] ընդ միմեանս զհինն եւ զնորն: Արդ՝ լո՛ւր եւ մի զայրասցիս, այլ քննեա[14] զսա. եթէ օրինակ Քրիստոսի մատուցանես զնա՝ ստես[15], զի ոչ կարօտիս[16] օրինակի. զի ճշմարտութիւնն պատրաստ է, եւ թէ զՔրիստոս գառն ձեր բերէ ի

11 Քրիստոս զենաւ ԱԳ
12 եկեալ] իջեալ Դ
13 խառնակելով Ա
14 քննէ ԱԳ
15 ստես] տես Ա
16 կարօտես ԱԳԵ

կատարելութիւն եւ առանց գառինն, նա Զատիկ ոչ բաւական ձեզ լեալ, այս ոչ ստոյգ, ապա թէ ըստ օրինացն Աստուծոյ մատուցանէք, նախ զՔրիստոսին ի բաց թողէք[17], զի այն ոչ ընդունելի է պահողի օրինացն: Եւ դարձեալ առնելով զայն, ընդ անիծիւքն[18] օրինացն անկանիք բազում օրինակօք: Նախ զի անթլփատք ուտէք, եւ այս ոչ օրէն: Երկրորդ՝ զի արտաքոյ Երուսաղէմի ուտէք: Երրորդ. զի առանց բաղարջի եւ եղէգի ուտէք: Չորրորդ. զի ոչ յաւուր պասեքին ուտէք, եւ զի[19] ոչ յերեկոյէ[20] ուտէք, եւ այսու[21] ամենայնիւ յանցաւոր օրինացն էք. եւ բնաւ ունելով եւ խառնելով[22] զնա՝ յանցաւոր Քրիստոսի էք: Ապա եթէ ասէք զճշմարիտն, թէ մեք ոչ զհացն Քրիստոսի առաք ի հաղորդութիւն մեզ, այլ զբաղարջն հրեական, եւ այն բաղարջն առանց տարեւոր գառին եւ արեան նորա ոչ կարէր մեզ, ապա յայսմիկ[23] արդար ասացիք: Իսկ զոր ի յիշատակ մեռելոցն առնէք զարջառս եւ զոչխարս, ասելով եթէ ոչ թողին[24] յանցանքն[25], եւ ոչ պատարագ մատուցանի նմա՝ մինչեւ ոչ զենցի աղիւ մտաւորեալն զոհ վասն նորա, զի՞նչ ասելի: Վասն զի ամենեւիմբ աննման եւ անբանական է. նախ՝ զի այն ոչ[26] հրեական է, զի Հրեայքն[27] զզոհսն յաղագս անցուցելոց[28] կենդանեաց մատուցանէին, արեամբ նոցա քաւութիւն առնելով զոմանս բնաւ ոչ[29] ողջակիզեալ զմեղս՝ կիզեալ[30] ասելով, զոմանս ի սեղանի այրելով, զոմանս խարշելով[31]. եւ այս ամենայն կենդանեացն էր: Այլ զմեռեալս եւ զորս ի մեռեալս[32] մերձենային[33] պիղծս կոչէին, եւ անյիշելով կարդալով զնոսա:

Եւ դարձեալ ոչ նորոյ շնորհացս է, վասն զի Քրիստոս եկն մեծ Քահանայապետ մեր, նախ կենդանեացս տիրելով. մեռաւ եւս՝ զի մեռելոց[34] եւ կենդանեաց տիրեսցէ: Այլ նա իւրով մարմնովն եւ արեամբն, որով Աստուածն բան հաղորդեցաւ մարմնոյ եւ արեան մարդկան՝ ընդ անձն իւր միացուցանելով եւ ընծայեաց զիւրն մարմին եւ արիւն

17 թողցուք ԱԳ
18 անիծիւ Ա
19 զի] Դ
20 երեկոյ Ա
21 այսիւ Ա
22 խառնելով] առնելով ԳԴԵ
23 այսմիկ Ա
24 թողցին ԴԵ
25 անցանքն Դ
26 ոչ] ԱԴԵ
27 զի Հրեայքն] Դ
28 յանցուցելոց ԱԵ
29 ոչ] ԳԴԵ
30 կիզելով Ա
31 խաշելով ԱԴ
32 մեռեալ Գ
33 մերձեալ Ա
34 մեռելով Դ

Հօր, եւ ետ մեզ զիւրն մարմին ի փրկութիւն, որպէս զի հաղորդելով զնա, բնակեսցի ի մեզ եւ մեք ի նմա[35], եւ եղիցուք կատարեալք ի մի. եւ այսպէս արար Տէրն փրկութիւն կենդանեաց եւ մեռելոց:

Արդ՝ յայսոսիկ[36] ոչ ետ մեզ Քրիստոս զարիւն անասնոց եւ զմարմին նոցա. եւ ոչ մեռելոց եւ ոչ կենդանեաց, եւ[37] օրէնքն կենդանեաց միայն ետ, եւ ոչ մեռելոց: Նաեւ ոչ հեթանոսք ունէին զզոհս մատուցանել[38] յաղագս ննջեցելոց, եւ քրիստոնեայքն[39] զճշմարիտ մարմինն Քրիստոսի գիտեն մատուցանել. եւ Պօղոս սաստէ օրինաւոր զոհիցն մատուցողացն[40], ասելով. Զի որոց անասնոց արիւնն մատչէր ի սրբութիւն, նոցա մարմինքն այրէին արտաքոյ բանակին (Եբր. ԺԳ, 11). եւ մեր կարապետն Քրիստոս իւրով արեամբն եմուտ ի սրբութիւն, եւ մեք, ասէ, փութասցուք մտանել յայն հանդիստն, ուր նայն եմուտ վասն մեր:

ԼԸ. *Եւ արդ ուստի՞ կամ որպէ՞ս, կամ յումմէ՞ առիք զսա՝ լոյս յեղջիւրս[1] վառեալ[2], եւ օրհնեալ աղս[3] տուեալ եւ մտաւորեալ, եւ զայն զենեալ, զմարմինն՝ յաղբ եւ ի մէզ զարիւնն եւ զոսկրն[4] շանց, եւ զշունչ՝ օդոց, եւ զմորթ՝ ապաւառնակոխս լեալ բաժանիցիք, եւ ասէք. Սա՛ պատարագ փրկութեան հոգւոյ, սա՝ քաւարան մեղաց, սա՝ ճանապարհ մտից, սա՝ տայ ընդունելի լինել մարմնոյն Քրիստոսի, եւ ոչ բնաւ թաղեսցի յօրհնեալ[5] հող մեռեալն, մինչեւ սա ոչ մորթեսցի:*

Արդ՝ ասացէք ճշմարիտ, այս աւանդ ի Գրոց ունեալ կամ տուեալ եղե՞ւ՝ երբեք. նաեւ ոչ է, եւ ոչ երբեք ուրեք-ուրեք[6] յումեքէ: Իսկ զպատարագն կենդանւոյն սակս ոչ ընծայէք[7], ասելով՝ Գուցէ մեղիցէ ինչ[8] երբեք: Եւ այս ի նանիր պատճառ. Քրիստոս վասն[9] մեղաւորաց մեռաւ, [ասէ] առաքեալ, զի վասն արդարոց հազիւ ոք մեռանիցի. Նաեւ զմարմինն ետ եւ ասէ. Առէք կերայք[10] զսա ի թողութիւն մեղաց, եւ արբէք զարիւն իմ. եւ զայն ետ ի թողութիւն մեղաց:

35 նա Դ
36 զասոսիկ Դ
37 +ոչ ԱԴ
38 մատուցանելոյ Ա
39 քրիստոնեայքս Ա
40 զմատուցողանոյն Գ
ԼԸ 1 եղջիւրս ԱԳԴ
2 վառել ԱԴԵ
3 աղս] ԱԳ
4 ոսկր Ա
5 օրհնեալ Դ
6 ուրեք-ուրեք] ԳԴԵ
7 ընծայք ԴԵ
8 ինչ] Ա
9 վասն] յաղագս ԱԳ
10 կերէք ԴԵ

Արդ՝ եթէ ոչ վասն մեղաւորաց եղեւ սա[11] տուեալ մեզ, նախ ա՛յն զի արդարոց եւ անմեղաց առ ի՞նչ սակս պիտոյ էր տալ զնոսա՝ որպէս զի զի՞նչ ինչ ննջեսցէ[12] նոցա[13]: Եւ դարձեալ որպէս Յօբ ասէ, եթէ Ոչ ոք է առանց մեղաց առաջի քո կանացածին[14], թէեւ մի օր եկաց յաշխարհի[15]: Եւ թէ այս այսպէս է, որք ննջեցին, եւ զի մարդիկ [էին] նոքա, և ունէին զմեղս, ապա եւ ոչ վասն նոցա մատուցանելի պատարագ, զի մեղս ունին եւ ժամ ապաշխարութեան ոչ ունին. վասն զի զկնի մահու ոչ գոյ հնար ապաշխարութեան: Եւ արդ՝ եթէ վասն կենդանւոյն, որ եւ զղջութեամբ սրտի խնդրէ եւ արտասուէ եւ հառաչէ եւ հաւատայ, եթէ վասն նորա ոչ է մատուցանելի, վասն մեռելոց որպէ՞ս ոչ մատչիցի, որ եւ յայսցանէ եւ ոչ մի ինչ ունել կարող է:

Եւ արդ՝ եթէ վասն կենդանեացն ոչ մատուցանի, հազիւ թէ վասն մեռելոց պարտ է մատուցանել. ապա թէ վասն կենդանւոյն ոչ իշխելի է, եւ վասն մեռելոց[16] ոչ բնաւ: Լո՛ւր առաքելադիր աղօթից պատարագին, թէ որպէս գրեալ է յաղօթսն Յակոբայ. վասն զի ասէ. Եւ ես մատուցանեմ[17] քեզ զբանաւոր զայս պատարագս յաղագս ամենայն աշխարհի, յաղագս ընդհանուր սուրբ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցւոյ, յաղագս որոց սրբութեամբ կենցաղավարին[18] քահանայից եւ որպէս դասուց[19] նոցա, յաղագս թագաւորաց եւ իշխանաց, եւ որպէս զինուորաց, յաղագս ճանապարհորդաց, նաւորդաց, աշխատաւորաց եւ գերեաց:

Արդ՝ զի ընդունիս դու զայս[20] պատարագն առաքելոց, եւ արդ սոքա ամենեքեան, վասն որոց մատուցանէին առաքեալքն, կենդանի՛ք են եւ թէ մեռեալք. յայտ է թէ կենդանիք են: Եւ եթէ կենդանիք են եւ ամենեքեան, որպիսի՞ արդարք են՝ եթէ ոչ, եւ[21] զայս ասել անհնար է եւ եթէ Քրիստոս զինքն եւ առաքեալքն զՔրիստոսի մարմին որպէս աշխարհի եւ վասն կենդանեաց եւ մեղուցելոց մատուցին, եւ մեք հաւատամք նոցա եւ ընդունիմք. ապա քահանայքն ի ծախս բռեալս ոչ մատուցանեն այսպէս:

[11] սա] ԳԴԵ
[12] ննջեսցէ] ջնջեսցէ Դ
[13] ի նոցա] զնոսա Գ
[14] կանանցածին Դ
[15] աշխարհի ԴԵ
[16] մեռելոյ Գ

[17] մատուցանեմ] հատուցանեմ ԳԴԵ
[18] կենցաղավարեն Դ
[19] դասու Ա
[20] զայդ Ա
[21] եւ] Ա

[ԱՄՓՈՓՈՒՄՆ]

Եւ արդ՝ զայս ինչ գրելով, ով եղբարք[1], վկայէ ճշմարիտ բան, զի ոչ ատելութեան աղագաւ եւ ոչ բամբասելով եւ ոչ զայրագնեալ գրեցի. այլ բազում սիրով եւ[2] գթով եւ արտասուօք եւ ընդունելով զձերդ գրեմ, աղաչելով[3] զձեզ հեզաբար՝ լսել եւ քննել զասացեալսդ, վկայութեամբ Գրոց, բայց մի՛ ի ձերոցն այնց գրոց, զոր յաղագս հերձման[4] առատաբար նորս եւ դիմադրականս գրեցին՝ կցեալ ընդ միմեանս զամենայն բանս հերձուածողացն եւ այնիւ[5] զայրացուցանեն եւ մեկնեն զձեզ յամենայն եկեղեցեաց, հեռի եւ մեկին, եւ այլայլեցին ի նոցանէն գոլոյ աղագաւ: Այլ առէք[6] փոյթ յանձին եւ եկայք սիրով յառաքելական եկեղեցիքն տեսարուք[7] եւ ընթերցէք[8] զԱւետարանն եւ զԱռաքելական եւ զԿարգաւորութիւն հաւատոյ, եւ զԿանոնս զայն տեսէք, զոր ձեռօք իւրեանց առաքեալքն գրեցին: Իսկ զհարանցն[9] եւ զհայրապետաց վարդապետութիւն եւ զաւանդն, եւ զԴիոնէսիոս, զՌէթէոս[10], զԵրինէոս[11], զՍեղբեստրոս[12], զԱթանասի, զԿիւրղի, զԱստուածաբանն[13] Գրիգորի, զՎասիլիոս, զՆիւսացին, զՈսկեբերանին զսոցայն գրեալ իւրեանց ձեռամբն: Իսկ զդրուականսն[14] ի հինգ ժողովոցն, զնոյն արձան իւրեանցն ձեռաց դրոշմած եւ գրեալ գոլով զայն ամենայն առաջինն տեսէք, եւ թէ որպէս զամենայն[15] միաբանապէս գրեալ է, տեսէք եւ զձերդ գրելոց, եթէ ընդ որքան միտս եւ ընդ որքան լեզուս եւ ընդ որքան գրիչս եւ ընդ որպիսի՛ անսէր եւ ատելի հոգիս, եւ որչա՛փ ժամանակի զկնի թիւր ի թիւրոց եւ նոր ի նորոց թիւրեալսն եհաս առ ձեզ, եւ այնպէս հասու լեալք ստուգութեան եւ ճշմարտութեան, թողեալք[16] զհեռ եւ զնախանձ, բարձէք ի միջոյ զատելութիւն, որ համազգութիւն սատանայի է, եւ առէք զսէր յանձինս ձեր, որ եւ Աստուած եւ աստուածացուցիչ է, եւ այնպէս միաւորեալ ընդ եկե-

[1] եղբայրք ԱԳ
[2] եւ] ԴԵ
[3] աղաչեմ ԴԵ
[4] հերձուման Գ
[5] այնու ԴԵ
[6] առքէ (sic)Ա
[7] տեսարուք] ԴԵ
[8] ընթերցջիք ԱԳ

[9] զհայրանցն Գ, զհարցն ԴԵ
[10] զՌէթէոս] զՈրոթէոս ԱԳ
[11] զէռինէոս ԱԳԵ
[12] զՍեղբեստիոս ԱԳ
[13] զԱստուածաբանն Ա, Աստուածաբան Գ
[14] զդրուական Դ, զպատուական Ե
[15] յամենայն Ե
[16] թողեալ Գ

ղեցեացն[17] Քրիստոսի, լինիք մի անդամ նորա, հասցուք ի միաբանութիւն հաւատոյ եւ ի գիտութիւն ճշմարիտ աւանդութեան եւ տնտեսութեանն Քրիստոսի, որպէս զի բառնալով զատելութիւնն[18] ի միջոյ, եղիցուք մեք[19] մի հոգի եւ մի կամք ընդ ամենեսեանսն[20] եւ սիրով լցեալ առ[21] միմեանս միաւորութեամբ, եւ փառաւորեսցի ձեօք հանդերձ Քրիստոս եւ մի՛ ընդ ատելիս կալով վասն ձեր հայհոյեսցի անունն Աստուծոյ[22] ի հեթանոսս[23]:

[17] եկեղեցւոյն ԱԴԵ
[18] զատելին ԳԴԵ
[19] մեք] ԱԴԵ
[20] ամենեքեանսն Ա, ամենեքեան ԴԵ
[21] առ] ու ԴԵ
[22] Աստուծոյ] ԳԴ
[23] հեթանոս ԱԳԴ

ՄԽ. ԳՈՇԻ «ԱՌ ՎՐԱՑԻՍՆ» ԹՈՒՂԹԸ ԵՎ ԴԱՎԱՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք, չիք խտիր ո՛չ հրէի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» [Գաղ. Գ. 27-28]:

Մխիթար Գոշի գրական վաստակները թվարկելիս Կիրակոս Գանձակեցին հիշում է «Գիրք մի՝ Յայտարարութիւն ուղղափառութեան հակեցին հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի եւ եղբօր իւրոյ»[1]: Հավանաբար սա նույնն է 1900-1901 թթ. «Արարատում» երեք ձեռագրի հիման տպագրված (պետք է խոստովանել՝ ընթերցումների բավական անհաջող ընտրությամբ) «Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գօշն կոչիւր» *ընդարձակ ջատագովականի հետ՝ հասցեագրված հիշյալ զորավար եղբայրներին եւ նրանց միջոցով՝ Վրաց արքունիքին ու կաթողիկոսին[2]:*

Գրության ժամանակն ավանդված չէ, բայց աներկբայորեն հաջորդել է Լոռեի 1204/5 թ. կայացած ժողովին, որին Գոշը ներկա է եղել, եւ նախորդել 1207 թ. Ծննդյան տոնի նախօրեին հրավիրված Անիի ժողովին, որին Գոշը նույնպես մասնակցել է: Թղթում «յաղթող թագաւորք մեր»՝ Թամարն ու Դավիթ Սոսլանը, կենդանի են հիշվում, որով վստահ կարող ենք ասել, թե այն գրված է 1206 թ.: Գրության շարժառիթը որոշակի է. «Յաւուրս մեր տեսանելով եւ լսելով զբամբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէր հոգի, մանաւանդ զի,— դիմում է

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն Հայոց, աշխատ. **Կ. Մելիք-Օհանջանյանի,** Երևան, 1961, էջ 221:
[2] Տես «Արարատ», 1900, էջ 497-504, 562-568, 1901, էջ 55-61, 121-127:

զորավար եղբայրներին,— հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ»:

Վրաց կաթողիկոսին և հոգևորականությանն ուղղված նախադրությունում ասված է. «Գրեցաք զթուղթդ՝ ոչ հակառակելով եւ կամ զոք պարսաւելով յազգաց, այլ զարժանն եւ զիրաւն իբր դատաստանաւ ցուցաք եւ զդժուարաւ գալն ի միաբանութիւն եւ զհնարաւորն ըստ ժամանակիս յայտ արարաք եւ զճշմարիտ խոստովանութիւնն ցուցաք զմերոցս ազգաց եւ զխոտելի իրսն ոչ թաքուցաք զմերոյ ազգիս եւ զիւրաքանչիւր ազգի զգովելին եւ զպարսաւելին գրեցաք, եւ ի գլուխ բանին ընտրեցաք զբարին եւ զլաւն»: Նշանակում է՝ հետապնդած նպատակներն են.

Ա. Ներկայացնել հայոց դավանությունն ու եկեղեցու ծիսակարգը, բացատրել նրանում եղած ինքնօրինակությունները:

Բ. Ինչպես հույներն ու վրացիները, այնպես էլ հայերը հերձվածողներ չեն, ուստի միմյանց հանդեպ կրկին մկրտություն կիրառելը «Քրիստոսի է անարգանք»:

Գ. Լավ կլիներ եթե «ամենայն ազգ միակրաւն լինէր», բայց այլևս միաբանության հասնելն անհնար է:

Դ. Ներկա կացության մեջ ի՞նչ պետք է անել. «Միանգամայն եւ այն ծանուցաք, թէ զի՞նչ այժմ հնարաւոր է լինել ազգաց, զոր թէ ձեզ (իմա՛ զորավար եղբայրներիդ - Պ. Մ.) հաճոյ կարծի, թարգմանեալ ընթեռնոյք նոցա (իմա՛ վրացիներին — Պ. Մ.)»:

Դիտենք, որ Գոշի այս երկի ուսումնասիրությունն առ այսօր ընթացել է գերազանցապես աղբյուրները բացահայտելու ուղիով. Լ. Մելիքսեթ-Բեկը պարզել է, որ Դվինի ժողովի մասին պատմելիս Գոշն օգտվում է Հովհան Օձնեցու անունը կրող «Սակս ժողովոց, որ եղեն ի Հայս» երկից՝ համառոտելով, հայ-վրացական եկեղեցական բաժանումը ներկայացնելիս՝ Անանիա Սանահնեցու «Վասն բաժանման Վրաց» գործից գրեթե բառացի քաղումներով[3]:

[3] Տե՛ս ლ. მელიქსეთ-ბეგი, «ძრდილო მხარეთა სომეხთა მოძღვარნი» და მათი ვინაობა, ტფ. 1928, გვ. 243-245: **Անանիա Սանահնեցու** երկն այժմ հրատարակված է. տե՛ս «Անանիա վարդապետի Հայոց՝ Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի», հրատ. **Հ. Քյոսեյան,** «Գանձասար», Ա., էջ 204-238, Բ., էջ 168-218, Գ., էջ 174-215: Նաև **Հակոբ Քյոսեյան,** Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրություններ, Ա. Անանիա Սանահնեցի, Երևան, 2000, էջ 293-337:

1938 թ. գրված մի հոդվածում Ի. Աբուլաձեն հաստատապես ապացուցեց, որ Գոշի թուղթը պատասխան է Արսեն Վաչես-ձեի «Դոգմատիկոնի» հակամիաբնակ դրվագներին, որպիսիք ութն են, մասնավորապես՝ նրանցից մեկին՝ «Երեսուն գլուխ Հայոց հերձուածի»: Հայագետը ցույց տվեց նաև, թե հակամիաբնակ այս երկը հայ քաղկեդոնականների միջավայրում թարգմանվել է հայերեն, լրացվել թարգմանչի մեկնաբանություններով ու ընդմիջարկություննեով և «Պատասխանիք առ Հայս» խորագրով ու Հովհան Դամասակցու հեղինակության վերագրումով ժամանակին հրատարակվել[4]: Մի քանի տարի առաջ Զ. Ալեքսիձեն հրատարակեց «Երեսուն գլուխ Հայոց հերձուածի» վրացերեն բնագիրն ու նրա համապատասխան հատվածները Հովհան Դամասկացուն վերագրված «Պատասխանիք առ Հայս» երկից[5]: Ի վերջո, 1976 թ. Ժ. Գարիտը ճշգրտեց, թե Արսեն Վաչես-ձեի «Դոգմատիկոնի» հիշյալ հակամիաբնակ դրվագի աղբյուրը հունարեն մի աշխատություն է՝ հրատարակված Մինի PG-ի 132-րդ հատորում (սյունակ 1221-1237)[6]:

Այս ամենն, անուշուշտ, և՛ կարևոր է, և՛ հետաքրքիր, բայց մոռացության չպետք է տալ ամենաէականը՝ ինչո՞վ է տարբերվում Մ. Գոշի թուղթն այն մատենագրական երկերից, որոնցից օգտվում է կամ որոնց ի պատասխան գրում է: Մեր խնդիրն այս հարցերին պատասխանելն է:

Մ. Գոշին նախորդած հայ հեղինակները, որոնց երկերից նա օգտվել է, իբրև կանոն, ջանացել են ապացուցել, որ Հայոց եկեղեցու դավանությունն ու ծիսակարգը անխոտոր պահպանել են ուղղափա-

[4] ი. აბულაძე, შრომები, 1985, IV, გვ. 10-16: Տե՛ս «Լոյս» (շաբաթաթերթ), Կ. Պոլիս, 1905, էջ 100-1012, 1065-1066 (նախաբան), 1066-1068, 1112-1115, 1906, էջ 45-48, 116-119, 213-216, 355-359, 1199. Հայերեն տեքստի հրատարակիչը **Բաբկեն վրդ. Կյուլեսերյանն** է, որը համառոտ ներածականում չի մերժում Դամասկացու հեղինակ լինելը, բայց և դիտում է հետագա ընդմիջարկության առկայությունը: **Ն. Ակինյանն** այն համարում է «Յովհ. Դամասկացւոյ անուան ներքեւ կեղծող հայհոռոմի մը» գործ (տե՛ս **Ն.Ակինեան,** Կիւրիոն կաթողիկոս Վրաց. Վիեննա, 1910, էջ 69-70):

[5] ზაზა ალექსიძე, არსენი ვაჩესძის "დოგმატიკონში" შესული ანტიმონოფიზიტური ტრაქტატი და მისი გამოძახილი ძველ სომხურ მწერლობაში, "მრავალთავი", ტ. I, თბ., 1977, გვ. 133-158.

[6] **Gérard Garitte**, *La source grecque des "Trente articles" géorgiens contre les arméniens*, «Հանդէս ամսօրեայ», 1976, էջ 111-116: Սույն երկի թարգմանական լինելու շուրջ Աբել վրդ. Օղլուգյանի հայտնած տարակուսանքը (տե՛ս «Գանձասար», Գ., էջ 53-54) արդյունք է այստեղ հիշված մասնագիտական գրականության անծանոթության:

ությունը, և որ հերձվածողները Քաղկեդոնի ժողովի հետևողներն են: Գոշը նույնպես պաշտպանում է միաբնակ եկեղեցու ուղղափառությունը, բայց և երկաբնակությունը հերձված չի համարում «Ե. (5) ազգաց (իմա՛ Հույներ, Հռոմեացիներ, Հայեր, Ասորիներ և Վրացիներ – Պ. Մ.) չտեսանեմք այնքան պատճառք, որ անընդունելի առնէ Աստուած զհաւատ կամ զտաւն, եւ նա ճանաչէ զիւրաքանչիւրոցն զարժանաւորութիւն», ուստի՝ «այլ թէ ասացեալ հինգ ազգ ոչ կարէն միաբանել, բայց կարող են թշնամիք միմեանց չլինել, զխաչ եւ զեկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ», որովհետև «Հայք եւ Վիրք, Ասորիք եւ Հոռոմք ճշմարիտ սուրբ զԵրրորդութիւն խոստովանին եւ զՔրիստոս Աստուած՝ ճշմարիտ Որդի Աստուծոյ, թէպէտ եւ ի տնաւրէնութիւնն այլայլին, եւ զՄարիամ Աստուածածին, թէ չիցէ ի կարծեաց Նեստորի, եւ զխաչն՝ Աստուծոյ Խաչ. առ Հայս այդ առաւել ճշմարիտ է: Այլ ինչ սակաւ բաժանումն փաւնի կամ պահոց կամ կերակրոց չէ հաւատոյ բաժանումն» (էջ 262):

Գոշը լայնախոհաբար նկատում է. «Մի՞թէ ընդ յամենայն աշխարհ Հայ միայն է, կամ՝ Վրացի, եւ կամ՝ Հոռոմ: Քրիստոս չէ նախանձոտ. Նա զամենայն ազգ ընկալեալ է, զի զարքայութիւնն զուռկանի նմանեցոյց, յոր ամենայն ազգ ձկանց ըմբռնին: Աստուած ե՞րբ առնէ թողութիւն այն քրիստոնէին, որ զՏաճիկն եւ զՋհուտն լաւ առէ, քան զՀայն: Այնպիսի ասացողքն չունին թողութիւն ո՛չ աստ և ո՛չ ի հանդերձելումն, թէ ոչ ապաշխարին. թէ Հայ Վրացւոյ ասէ, եւ կամ Վրացի՝ Հայոյ, եւ կամ այլ քրիստոնեայ ազգ՝ քրիստոնէի, զի ամենայն քրիստոնեայք եղբարք են»:

Պատկերացնելու համար, թե ինչ շոշափելի տարբերություն կա Մ. Գոշի և նրա դիմաց կանգնած հույն և վրացի հեղինակների համոզմունքների միջև, բավական է հիշել վերջիններիս գործածած մի քանի արտահայտությունները՝ «անենայն չար Հայք», «անաստուածներ եւ զազրելիներ», «այժմեան Հայք՝ մերժողք, հայհոյիչ եւ փոխեալ են այսպիսի խորհրդոց», Հայոց եկեղեցիները կոչվում են «սատանայական ժողովարաններ» և այլն: Ի դեպ, նման տեղերը հիրավի վիրավորական են ներկայացել հուշարձանի միջնադարյան երկաբնակ հայ թարգմանչին, ուստի նա այս որակումները բաց է թողել[7]:

[7] **Ի. Աբուլաձեի** համոզմամբ, «Պատասխանի առ Հայս» երկի հայերեն թարգմանիչն այլ աղբյուրներից քաջ հայտնի **Սիմեոն Պղնձահանեցին** պիտի լինի (տե՛ս նշվ. աշխ., էջ 18): Վերջինիս մասին հանգամանորեն տե՛ս **Ներսէս վրդ. Ակինեան**, Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգ-

Դավանության շուրջ խոսող Գոշի նախորդները մանավանդ հունա-վրացական միջավայրում, սովորաբար հավասարության նշան են դնում ազգային եւ դավանական հասկացությունների միջև: Պատահական չէ, որ հունական և վրացական աղբյուրներում երբեմն «Հայք», «հայոց»-ի փոխարեն գործածվում է «խաչեցարներ» փոխաբերական եզրը: Գոշը որոշակիորեն տարբերում է այս կամ այն ժողովուրդը և նրա դավանությունը: Նա ջանում է ապացուցել, որ միաբնակություն դավանող ուրիշ ժողովուրդներ էլ կան, և թվարկում է Ասիայում և Աֆրիկայում գտնվող շատ երկրներ ու ժողովուրդներ, որոնք «ընդ մեզ ի նոյն կրաւնի կան հաստատուն՝ չընկալեալք զժողովն Քաղկեդոնի», «եւ սոքա ի նոյն հաստատեալ հաւատս ոչ միաբանին ընդ Յոյնս եւ ընդ Վիրս»: Կա եւ հակառակը՝ ապրում են Հայոց միջավայրում, հայալեզու են, բայց հայ չեն ազգային պատկանելությամբ, որպիսիք են, ըստ Գոշի, «մաքենացիք» (էջ 247): Այս էթնոնիմի տակ, թերևս, Գոշը նկատի ունի պավլիկյաններին (գուցե նաև ուտի/ուդիներին կամ բոշաներին): Վրաց հոգևորականությանը դիմելով՝ Գոշն ամփոփում է. «Մի՛, սիրելի՛ք Աստուծոյ, լսողք լինիք թշնամեաց մերոց, զի չկայ ի Հայս հերձուած, եւ զայն սակաւ պատճառն, զոր ունին, յամենայն ազգ այլ շատ եկամուտ տեսանեմք, եւ այն չէ հերձուած Հայոց» (էջ 198-199):

Անհրաժեշտաբար կրկնում ենք. իր տված բնութագրությունները Գոշը կառուցում է էթնիկական-ազգագրական հատկանիշների և ո՛չ դավանական պատկանելության վրա: «Զիք ազգ,- ասում է նա,- որ բարի կարգ ոչ ունի եւ խոտան». «Յոյնք իմաստունք են եւ ողորմածք՝ ուսեալք ի Յոհանէ Ոսկեբերանէ, Հոռոմք զգաստք են աղաւթից եւ հնազանդ առաջնորդաց, Ասորիք խոնարհք են եւ ճգնողք, Հայք պահողք են եւ ողորմածք գերելոց եւ եկեղեցականաց, սրբութեան սիրողք, Վիրք՝ սրբոց եւ վանորէից մեծարողք եւ անբամբասք առաջնորդաց», եւ ապա՝ «առաջնորդաց անհնազանդ են Հայք, բայց

մանութիւնները վրացերէնէ, Վիեննա, 1951: Եթե թարգմանիչ **Սիմեոնը** նույն **Պղնձահանեցին** է (Ն. Ակինյանն այդ չի ասում, տե՛ս նշվ. աշխ., էջ 96-98), ապա Մ. Գոշն օգտված պիտի լինի վրացերեն բնագրից, քանի որ 1206 թ., երբ նա իր աշխատությունն էր գրում, **Պղնձահանեցին** ընդամենը 18 տարեկան էր և հազիվ թե թարգմանության մարզում հմտացած լիներ: **Ի. Աբուլաձեն** և՛ս այս հարցում կասկածներ ունի (տե՛ս նշվ. աշխ., էջ 16): Ի դեպ, **Ն. Ակինյանը** «Պատասխանիք առ Հայսի» հունարեն բնագրի հեղինակ է համարում **Եւստրատիոս Նիկեացուն** (տե՛ս նշվ. աշխ., էջ 97):

սրբութիւն կրաւնաւորաց ի Հայք առաւել գտանի եւ արժանաւոր պատարագ, քան՝ զայլ ազգ»:

Նույնիսկ ոչ կանոնական դիտվող, բայց ազգային սովորույթ դարձած իրողությունները նա հանդուրժելի է համարում. «Այլ զի յոյժ պատուեն Վիրք զկնքահայր, գովելի է, թէպէտ եւ ոչ է կանոնական, եւ զի՞ բամբասեն զՀայս, թէ զազգականսն առնեն կնքահայր»: Նա դիտում է, որ տարբերություններ հիրավի կան. «Յոյնք եւ Վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն, եւ Հայք՝ զխաչ». «որպէս Հայք զխաչ անարգեցին՝ արհամարհանաւք յամենայն տեղիս կանգնելով, նոյնպէս եւ Յոյնք եւ Վիրք՝ զպատկերս, զի զոր գիտեմք, ընդունիմք եւ պատուեմք, զի յիշեցուցիչ է որպէս պատմութիւն վարուց սրբոցն, բայց զի արք ոգէտք պաշտելի կարծեն՝ վասն այն եւ ոչ փութան առնել Հայք, այլ իմաստունք զսրբոցն զարաբեալսն ոչ անպատուեն»:

Այն գրությանը, որին պատասխանում է Մ. Գոշը, անծանոթ է միջէթնիկական հարաբերությունների հեռանկարի հասկացությունը, ինչպես նաև՝ ազգամիջյան համերաշխության և դավանական հանդուրժողականության գաղափարը, մինչդեռ իրատես Գոշն իրեն պարտավոր է զգում ասել, թե՝ «զի՞նչ այժմ հնարաւոր է լինել ազգաց»: Նրա համոզմամբ՝ վրաց թագավորները եւ «նախանձաւորին խաղաղութեան եւ սիրոյ առ միմեանս հաւատացելոց», և թեև Թամարն ու Դավիթը «չեն բաւական տիեզերական ժողով առնել ամենայն ազգաց, այլ... Աստուծոյ շնորհաւքն կարող են զՀայոց եւ զՎրաց թշնամութիւնն բառնալ, որ Քրիստոս չհայհոյեն, զի այն Քրիստոսի է ատելութիւն, զոր զխաչ եւ զխրատ եւ զեկեղեցի միմեանց չհայհոյեն եւ նախատեն»: «Եւ դուք բաւական էք,– և դիմում է նա զորավար եղբայրներին,– զսաստկացեալ պատերազմդ հայհոյութեան շիջուցանել իմաստութեամբ եւ հաւանելի բանիւ, թէպէտ եւ անհնար ցուցաք զժողովն լինել զմիաբանութիւն... զի դուք իշխանք էք Հայոց եւ Վրաց կամաւքն Աստուծոյ եւ թէ կամիք՝ ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ դնեն»:

Գոշը նման դիմում է կատարում և վրաց հոգևորականությանը. «Արդ, մի՛ լիցի ձեզ պատճառ լինել եւ այլոց գայթակղութեան, այլ՝ առաւել շինութեան եւ խաղաղութեան»: Մարդիկ միմյանց պետք ու կարոտ ունեն, ուստի նրանց չի կարելի ատելությամբ բաժանել. «Այլ

զայս նախ դիցուք զկամս Աստուծոյ, որ սիրողն է միաբանական կենաց մարդկան, վասն որոյ կարաւտս արար զպէտս ունել միմեանց, եւ յաղագս այնորիկ շինեցան քաղաքք եւ այլ բնակութիւնք: Ընդդէմ այսմ է եւ կամք չարին՝ բաժանիլն մարդկան ատելութեամբ, զի այսու դիւրաւ զչարն գործիցէ, որպէս սիրով՝ զբարին Աստուած»:

Արմատացած սովորությունների և գոյացած ավանդույթների պատճառով «անհնար տեսանեմք զգալն ամենեցուն ի միաբանութիւն», բայց և միաժամանակ՝ «լաւ համարեցաք, որ զմիմեանս չթշնամանեմք եւ զխաչ եւ զեկեղեցի չանարգեմք», որովհետև «եւ այս ախտ ամբարտաւանութեան է, զի Յոյնն զինքն կարծէ ճշմարիտ, եւ Հոռոմն՝ զինքն, նմանապէս եւ՝ ազգ ամենայն»: Խելամիտն իրար հանդուրժելն է. «Լաւ էր, թէ զայն ընտրէաք, որ զթշնամութիւն բառնէաք ի միմեանց եւ բարեկամ լինէաք եւ զկարգ միմեանց չհայհոյէաք»: Գոշն այլ ելք չի տեսնում, քան խաղաղ ու ինքնակամ գոյակցելը. «Արդ, այլ ինչ հնար բառնալոյ զայդ հակառակութիւնդ ոչ տեսանեմք, բայց թէ՝ զմիմեանս հաւանելն եւ կալ իւրաքանչիւր կարգի ամենայն ազգ»:

Կատարված քննությունը մեզ մղում է մի կարևոր սկզբունքային եզրակացության.

Ա. ԺԲ–ԺԳ. դդ. հայ իրականության մեջ Մխ. Գոշը փաստորեն հանգել է դավանական հանդուրժողականության և ազգամիջյան համերաշխության գաղափարին: Այդ նոր գաղափարախոսության բանիբուն ջատագով է եղել Մխիթար Գոշը:

Բ. Հայ ժողովրդի ստեղծած մշակույթը միջնադարյան այլ ժողովուրդների մշակույթներին հարաբերելիս չպետք է անտես առնել տեղական ավանդների գործուն ներկայությունը. իր գոյությունն ապահովելու եւ խաղաղ գոյակցելու երազանքը միշտ ուղեկցել է տեւական մաքառումներով ապրող մեր ժողովրդին: Աշտարակի Կարմրավորի կառուցողը Է. դարում փորագրել է «Տուաք շինել... վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ շինութեան Աշտարակի եւ պտղաբերութեան սահմանիդ»[7ա]:

Գ. Մխիթար Գոշի մատենագրական ժառանգությունն ուսումնասիրելիս, «Դատաստանագրքում» երևացող և հումանիստական որակվող համոզմունքները գնահատելիս չպետք է զանց առնել «Գծագրութիւն» կամ «Թուղթ» կոչվող երկի խիստ ուշագրավ դրույթները:

[7ա] Տե՛ս **Պարոյր Մուրադեան**, Կովկասեան մշակութային աշխարհը և Հայաստանը, պրակ Ա, Երևան, 2008, էջ 383:

* * *

Տասնամյակներ առաջ հայագիտության անխոնջ վաստակավոր Հակոբ Անասյանը Մատենադարանի ձեռագրերից մեկում (թիվ 8356, ընդօրինակված հեղինակային ինքնագրից, 1322 թ. Կիլիկիայի Կամրիկ անապատում) ի հայտ բերեց, հրատարակեց և վերահրատարակեց Վարդան Այգեկցու գրչին պատկանող և մատենագրության պատմության համար առանձնակի կարևորություն ներկայացնող մի թուղթ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն»[8]: «Շատահաջ քննողք» նորահնար բնորոշումը վերաբերում է Ասորիքի Դլուք գավառի հայ, ասորի և հույն այն հավատացյալներին, որոնք բռնված են ազգային-դավանական անհանդուրժողականության մոլուցքով, «քանզի Հայն ասէ, թէ՝ Ես եմ լաւ եւ ընտիր քրիստոնեայ, եւ հայհոյէ անմտութեամբ զՀոռոմն եւ զԱսորին, եւ Հոռոմն ասէ հպարտութեամբ, թէ՝ Ես եմ ազգ առաջին, սուրբ եւ գիտնական եւ ուղեղ հաւատ, եւ Հայն եւ Ասորին ոչ են ի կարգս քրիստոնէութեան եւ ոչ ունին առ Աստուած բաժին, եւ այսպէս նախատէ եւ հայհոյէ: Իսկ Ասորին ասէ ծածուկ նենգութեամբ եւ կեղծաւորութեամբ, թէ՝ Ես եմ ընտիր քրիստոնեայ եւ ունիմ անարատ հաւատ եւ սուրբ կարգ, եւ Հոռոմն եւ Հայն լցեալ են չար հերձուածաւք, ատար են յԱստուծոյ եւ զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեն եւ դժոխոց են ժառանգ»:

Եվ մինչ ամեն մեկը զբաղված է իր հավատն ու կարգը գովելով՝ «Գայ խալիֆայն ի Բաբելոնէ, եւ խատին՝ ի Հալպայ, եւ նախատեն զձեզ... եւ ասեն, թէ՝ դուք՝ ամենայն քրիստոնեայքդ, ատար էք յԱստուծոյ եւ ոչ ճանաչէք զՆա...»:

Այգեկցին հանդիմանելով խրատում է և պարսավելով հորդորում, թե դուք բոլորդ՝ Հայ, Ասորի, Հույն, «ի մի Քրիստոս կոչեցայք եւ ի մի աւազան մկրտեցայք, ի մի Հայր եւ ի մի Սուրբ Հոգի լուսաւորեցայք եւ դարձեալ նախատէք զիրար եւ հայհոյէք...»[9]: «Ընդէ՞ր ոչ հայիք ի տունն Մսլիմնաց, թէ քանի ազգ են բաժանեալ լեզուաւք

[8] **Յ. Անասեան,** Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ, «Բազմավէպ», 1968, էջ 273-277. Նույնի՝ Վարդան Այգեկցին որպես համերաշխության գաղափարախոս, «Էջմիածին», 1969, Է-Ը., էջ 56-58, նոր վերահրատակություն տե՛ս դոկտ. **Յ. Ս. Անասեան,** Մանր երկեր, Լոս Անջելէս, 1987, էջ 217-220:

[9] Այստեղ ձեռագրի 153v և 154r էջերի արանքից մեկ թերթ ընկած է, ուստի բնականոն շարադրանքն ընդհատվում է, որ և նկատված է հրատարակչի կողմից:

եւ կան խաղաղութեամբ եւ սիրով առ իրար՝ ի մի սահման եւ ի կարգ, զոր առաջնորդն իւրեանց Մահմէտ, կարգաւորեաց եւ սահմանեաց զնոսա»:

Իրատես Այգեկցու դատողության հիմքում ժամանակի սթափ զգացողությունն է դրված... «Ո՛վ յիմարք եւ անմիտք, չգիտէ՞ք, որ այս չէ ժամ զհաւատքս քննել կամ հաստատել... այժմ որ ունի, այն է, զինչ որ ունի»: Ուրեմն ավելորդ է վիճարկել, թե ո՞վ ավելի առաջ «ծանեաց զՔրիստոս», ո՞վ է անարատ հավատով եւ կարգով. «Աղաչեմ զձեզ, որդեա՛կք, ամէն ազգ կալէ՛ք զիւր եկեղեցւոյն սահման եւ սովորութիւնն եւ զկարգն՝ զպատարագելն, զտաւնելն, զպահքն, զմկրտելն, եւ առ իրար սիրով կեցի՛ք եւ խաղաղութեամբ, որ Քրիստոս հանգչի առ ձեզ, եւ... վասն կարգաց եկեղեցւոյ մի՛ քննէք եւ բանավէճ լինիք եւ անհանգիստք»:

Խռովարարները՝ Հայ, Հույն թե Ասորի, Այգեկցու համոզմամբ, սատանայի բերանով են խոսում, մանավանդ որ «սատանայ բնաւ ոչ եթող եկեղեցի եւ ազգ եւ մարդ անարատ եւ անվնաս, այլ դեղեալ ապականեաց զամենայն ազգ եւ զեկեղեցի», «Եւ թէ կայ իրք մի չար յեկեղեցիս քրիստոնէից, զայն չհամարի նոցա ի մեղս, զի մարդիկ են տկարամիտք, եւ սատանայ խաբաւղ է եւ նենգաւոր...»:

Այգեկցին եւս կուզենար, որ՝ «ամենայն ազգ քրիստոնեայ թող յիւր ազգէն առնեն խնամութիւն, որ չխառնակի մի ազգն ի միւսն, եւ յիւր ազգն մկրտի եւ հաղորդի, եւ այս բարի էր»: Սակայն այլ է իրականությունը. «Եւ ահա, ի Կեսարիա եւ ի Մելիտինի, յՈւռհայ եւ յԱնտիոք եւ ի մեր աշխարհս Կիլիկեցոց անխտիր կու խնամենան եւ կու առնուն հարսն զդստերս միմեանց Ասորին եւ Հայն եւ Հոռոմն», ուստի մի՛ հանդիմանեք ու վերամկրտեք իրար, այլ «պաշտեցէ՛ք զամենայն ազգ զիւր կարգն եւ զսահմանն եւ զիւր եկեղեցին»:

Այս ամենը հիրավի ազգամիջյան համերաշխության գաղափարի դրսևորման միջնադարյան մատնացուցելի նմուշ է ու Կիլիկյան Հայաստանում նախորդ սերնդի մեծերի՝ Շնորհալու, Լամբրոնացու, Գրիգոր Տղայի մտորումների և համոզմունքների ակնհայտ զարգացում: Խոսքն ավետարանական համերաշխության ու մարդկության մասին չէ [Գաղ. Գ. 27-28, Հռմ. Ը. Կոր. ԺԲ. 13], այլ՝ բազմազգի և այլադեն պատմական միջավայրում գաղափարական դիրքորոշման:

Այգեկցու սույն թղթի, ինչպես նաև «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ» ժողովածուի հայտնաբերումով Հ. Անասյանը

Վարդան Այգեկցու ժառանգության ուսումնասիրության մարզում Ն. Մառից հետո մի նոր շրջափուլ բաց արեց և մեկ անգամ ևս ապացուցեց, որ հայոց մատենագրության ուսումնասիրությունը քաղաքակրթական արժեք ներկայացնող նոր էջեր կարող է բացահայտել[10]:

Հ. Անասյանն, այնուամենայնիվ, իր առջև խնդիր չուներ պարզել, թե 1210 թ. հետո (բայց՝ մինչև 1215 թ.) Այգեկցու գրած այս թուղթն իր արծարծած հարցերով և աշխարհայեցությամբ զուտ կիլիկյան միջավայրի՞ ծնունդ է, թե՞ համերաշխության այդ վարդապետությունը համակել էր նաև Արևելյան Հայաստանի երևելի մատենագիրներին: Ասել է թե՝ անհրաժեշտ էր պարզել. սա մի մասնավո՞ր դեպք է՝ պայմանավորված Կիլիկյան Հայաստանի և Ասորիքի այլազգի համայնքների միջև ստեղծված դավանական կացությամբ, թե՞ աշխարհայացքային նոր դիրքորոշում առհասարակ: Առիթը ներկայացել էր՝ հաստատելու կամ մերժելու դարասկզբին Ն. Ադոնցի առաջադրած այն դրույթը, ըստ որի՝ ԺԲ-ԺԳ. դդ. հայոց եկեղեցական գրականությունն իր հարստությամբ մասամբ պարտական է «այն կուսակցական քաշքշուկներին ու ընդհարումներին, որոնք տեղի էին ունենում հայոց կրթականության երկու կենտրոնների միջև», այսինքն՝ կիլիկյան և արևելահայաստանյան: Ըստ Ն. Ադոնցի գնահատության՝ «միարարության միտքը համակրություն էր գտնում եկեղեցու այն ներկայացուցիչների քով, որոնք դաստիարակվել էին կիլիկյան նոր ոլորտում՝ առլեցուն արևմտյան ոգով», մինչդեռ «հյուսիսային (կամ՝ արևելյան – Պ. Մ.) կողմանց» հայոց վարդապետները «վարդապետութեան հարցում բռնել էին ծայրահեղական դիրք՝ կիլիկեցիների լիբերալիզմին հակադրելով Սանահնի դպրոցի նվիրվածությունն անցյալի պատգամներին»[11]: Այս բնութագրության ազդեցությամբ հայ մատենագրության կիլիկյան լիբերալ թևին հակադրվեց «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց» պահպանողական թևը[12], որ ներկայացնում են Գրիգոր Տուտեորդին, Դավիթ Քոբայրեցին, Մխիթար Գոշը և այլք: Վարդան Այգեկցու նորահայտ թուղթը լիովին արդարացնում է «լիբերալիզմ» որակումը՝ նշանակալիորեն ընդլայնելով այդ եզրի դրական ընդգրկումը, բայց ինչպես կտեսնենք ստորև, ամենևին չի ընդգծում մյուս թևի «պահպանողականությունը»:

***

Վարդան Այգեկցու անմիջական գաղափարական նախորդը նրա իսկ ավագ ժամանակակից Ներսես Լամբրոնացին է: Տարսոնի երիտասարդ եպիսկոպոսի 1177 կամ 1179 թ. արտասանած «Ատենաբանութիւն վասն միութեան եկեղեցւոյ»[13] ճառը հայոց քաղաքական, մշակութային և դավանական պատմության առավել նշանակալի ձեռքբերումներից է՝ արժանի մասնավոր ուշադրության՝ մեզ հետաքրքրող ազգամիջյան համերաշխության և դավանական հանդուրժողականության կտրվածքով ևս: 32 եպիսկոպոսների ներկայությամբ[14] արտասանած այդ ճառի շատ դրույթներ դժվար են տեղավորվում միջնադարյան դպրության՝ դարերով մշակված ու որդեգրված պատկերացումների շրջանակներում: Ահավասիկ մի քանի նմուշ.

1. «Մի գլխոյն է անդամ Սպանիա եւ Արեւելք, Յոյնք եւ բարբարոսք, Հայք եւ Վիրք, Ասորիք եւ Եգիպացիք: Ի նա են յարեալ ամենեքեան հոգւով եւ զնա զգեցեալք հաւատովք» (էջ 35)[15]:

«Նա թէեւ առ հաւատոյ բան լսեն հաւանական խոստովանութիւն յայլ ազգաց, ոչ կամին ի սէրն խոնարհել, այլ բուռն հարկանեն զայլ կարծեաց, թէ նոքա զմերս ատեն ազգ, վասն այսորիկ եւ ի մէնջ ատեացին, կռփեն եւ կեղեքեն եւ հայհոյեն զմեզ, յաղագս ասորիկ եւ ի մէնջ հայհոյեացին: Ո՛վ մտացի դու, եւ ո՞ւր ուսար վիրօք զվէր բժշկել…» (էջ 43):

2. «Հայն ի Հոռոմին խորշի հաղորդել յօրհնեալ պատարագն, եւ Հոռոմն՝ ի Հայոյն: Եւ զհաց, զոր մի աղօթիւք միով օրհնութեամբ,

[10] Զարմանքով ու ափսոսանքով պիտի նշենք, որ Այգեկցու այդ նորահայտ աշխատության հրատարակության տիտղոսաթերթի վրա չի նշված այն հայտնաբերողի և աշխատասիրողի՝ **Հակոբ Անասյանի** անունը (տե՛ս **Վարդան Այգեկցի,** Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, Երեւան, 1998):

[11] **Н. Адонц,** *Армянская литература, "Новый энциклопедический словарь Брокгауза-Ефрона", т. 3, с. 652-653.*

[12] Տե՛ս ლ. მელიქსეთ-ბეგი, նշվ. աշխ., էջ 3, նաև ილია აბულაძე, *შრომები*, հատ. Դ, Թբիլիսի, 1985, էջ 5:

[13] Տե՛ս «Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ», Վենետիկ, 1812, հրատ. Հ. Պ. Աւգերեանի (նրա իսկ լատիներեն թարգմանությամբ և ծանոթագրություններով), նաև «Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Ատենաբանութիւն վասն միութեան եկեղեցւոյ եւ ճառք», Կալկաթա, 1851:

[14] Ժողովի հրավիրման մասին տե՛ս **Ներսէս վրդ. Ակինեան,** Ներսէս Լամբրոնացի՝ արքեպիսկոպոս Տարսոնի, Վիեննա, 1956, էջ 31, 35:

[15] Այստեղ և ստորև մեջբերումներն ըստ Կալկաթայի հրատարակության:

մի Քրիստոս անուամբ անուանեմք, միոյ Հոգւոյ շնորհիւ իւրաքանչիւրքս կատարեցաք, յետ այնորիկ անգոսնեմք զիրերաց» (էջ 51):

3. «Տեսցուք, թէ հաստուածեալն ի մէնջ ազգ Վրաց ի նոսա յեցեալ, որքան օրըստօրէ ի Քրիստոս պայծառանան. արդ, գոնեա անագան եւ մեք զնոյն խոկասցուք» (էջ 65):

4. «Ընդէ՞ր այսչափ զայլս խոտեալ՝ խորշիմք եւ խուսափեմք ի միմեանց քրիստոնեայքս, որ այլ ազգաց վիճակեցաք կենակիցս: Մինչեւ յե՞րբ անդամքս լեզուօք զիրեարս խոցոտեմք՝ թունիւք իժին լցեալ զբերանս, այսքան յերկար ժամանակս անխնայ զմիմեանս հարաք» (էջ 65):

5. «Հայն միշտ աղաղակէ՝ Աստուած իմ, գոհանամ զքէն, որ չարարեր զիս Հոռոմ, եւ Հոռոմն զնոյն բան երկրորդէ, թէ՝ որ ոչ արարեր զիս Հայ: Ո՛վ տմարդութեանս եւ անմիտ յանդգնութեանս...» (էջ 66):

6. «Անմիտ, կամք չար ստացան ոմանք ի մարդկանէ եւ ոչ բնութիւն ազգին է չար՝ Հոռոմին կամ Հայոյն կամ այլոց սեռից, զի եւ ի Պարսից բազումք հաճոյացան Աստուծոյ եւ ընտրին: Արդ, քո այնքան կուրացեալ յատելութենէն, մինչ զի ոչ միայն զկարծիս ազգին, այլեւ զազգն ողջոյն բամբասես եւ ի նմանէ գոհութեամբ հրաժարես» (էջ 66):

7. «Արդ, այժմ չէ օգուտ ի միմեանց հրաժարելն կամ ընդ անհնազանդն ոչ հաղորդելն...» (էջ 67):

Ի՞նչ է առաջարկում Լամբրոնացին՝ «համաշունչ լինել, միախորհուրդ» *(էջ 53)*, պահել սեփական ավանդությունը եւ «ընդունիլ զնորայն». «այդ է զովելի կարծիք» *(էջ 60):*

Որ այս դրույթները հավուր պատշաճի ձևակերպումներ չեն, այլ՝ համոզմունք ու դիրքորոշում, կարելի է հավաստիանալ նրանց մեծ մասի կրկնությամբ նույն Լամբրոնացու 1194-1195 թթ. միջոցին հեղինակած «Թուղթ առ քրիստոսազօր իշխողն մեր ինքնակալութեամբ Լեւոն, ի նուաստ Ներսիսէ, որ ի Տարսոն սրբոյ եկեղեցւոյն պաշտօնեայ», կարճ՝ «Թուղթ առ Լեւոն» երկրում[16]:

Պատասխանելով հայրենի ավանդներից հեռանալու մեղադրանքին և նորից արծարծելով Հույն, Հայ, Լատին և Ասորի եկեղեցիների միջև հաղորդություն առնել-չառնելու խնդիրը՝ Լամբրոնացին

[16] Տե՛ս «**Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ**՝ Տարսոնի եպիսկոպոսի ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք», Վենետիկ, 1838, էջ 203-242:

անվարան հայտարարում է. «Երկրորդ անկարգութիւն իմ այն է, որ ընդ ամենայն քրիստոնեայս հաղորդիմ: Գիտելի է իմաստուն քննողաց, որ քրիստոնէից ազգք բացատրին ի միմեանց իւրք-իւրք: Իսկ շնորհն Աստուծոյ զօրացոյց զիս՝ զայս սնոտի աւանդութիւնս նոցա գիտութեամբ արհամարհել եւ զսէրն նախապատուել. *եւ է ինձ Հայն որպէս Լատինացին, եւ Լատինացին՝ որպէս զՀելլէնացին, եւ Հելլենացին՝ որպէս զԵգիպտացին, եւ Եգիպտացին՝ որպէս զԱսորին: Արդ, եթէ ես միոյ ազգի ջատագով էի, ընդ այլսն ե՞րբ էր կար հաղորդել. բայց ընդ իւրաքանչիւր, որ միմեանց թշնամիք են, խառնիմ եւ զբնաւսն չահիմ՝ ըստ Քրիստոսի առաքելոյն. եւ ունիմ բան, որ ամենայն հարցողի կարող եմ պատասխանել, թէ ուղիղ ընթանամ եւ սիրովն Քրիստոսի զամենայն կրճիմն քակեմ, որով բարեհռչակիմ ե՛ւ ի Լատինացւոց եկեղեցիսն, ե՛ւ ի Հելլէնացւոց, ե՛ւ յԱսորաց, ե՛ւ կամ ի Հայաստանս, եւ ընդ սոսա՝ անշարժ, եւ նոցին աւանդութիւնն՝ անփոփոխ»*[17]:

Լամբրոնացին փաստորեն մերժում է էթնիկական և դավանական շրջանակներում ներփակվելու կարելիությունը, քրիստոնյաներին իրարից բաժանող հակումներն ու ծիսական տարբերությունները «սնոտի աւանդութիւն» հռչակում և «գիտութեամբ արհամարհում»:

Կարևոր է ընդգծել, որ մեր մատենագիրն իրեն միայնակ չի զգում և թվարկում է Հայաստանի տարբեր գավառներում ու թեմերում գործող իր գաղափարակիցներին, որից և կարելի է եզրակացնել, թե լիբերալիզմը չէր շրջանակվում Կիլիկյան Հայաստանի սահմաններով: *Նորից վկայակոչենք Լամբրոնացուն. «...Արդ, թէ քո աստուածապաշտութիւնդ արժանացոյց զնոսա պատասխանւոյ, մեր իմաստութիւն՝ ոչ բնաւ. զի խրատիմք ոչ տալ անզգամին պատասխանի եւ զի յետին են նոքա, որ յայս յանդգնին՝ բոլոր հարց, որք մերում ճշմարտութեանս ջատագովք են, նոյն ինքն՝ մեր աշխարհս եւ Սուրբ Լեառնս եւ որ ի սմա՝ հովիւք սուրբք, եւ բոլոր գաւառն Վասպուրականի եւ որ անդ՝ հռչակաւոր ուխտն Վարագ, եւ երեւելի արքն Ստեփաննոս տիրացուն՝ ուսուցիչն մեր, եւ Գէորգ ճգնաւորն եւ Ստեփաննոս՝ մեր ուսումնակից, եւ Քրիստոսատուր եւ Տիմոթէոս ճգնաւորք, որք ականատես լեալք են մեզ եւ որ առ մեզ ճշմարտութեանս հաւանեալ եւ երանեն, թէ կարող էին ձայնակցել. բոլոր գաւառն Տարոնայ եւ որ ի նմա՝ իմաստուն եպիսկոպոսն Եսայի եւ վարժապետ Թէոդորոս, որ*

[17] Նույն տեղում, էջ 215-216:

զմերս բարեհռչակն բարեկարգութիւն եւ երանեն զհաղորդեալսն. զաւառն Եկեղեցաց եւ լեառն սրբոյն Գրիգորի եւ որ ի նմա հարքն եւ եպիսկոպոսքն, որք գրովն իւրեանց բարեհամբաւեն զմեր ճշմարտութիւնս եւ աւաղեն վասն աղքատութեամբ եւ անօրինաց բռնութեամբ ի սմանէ վերջանալոյ. իշխանքն Խաչենոյ եւ որ անդ՝ վանորայք, որք զաշակերտն մեր զՅովսէփ եւ զկարգաց մեր վարժապետ որպէս զհրեշտակ պատուեն եւ կաթողիկոսութեան Աղուանից ընծայեն...»:

Հայաստանի աշխարհագրությունն այստեղ բավական հարուստ է ներկայացված՝ Վասպուրական, Տարոն, Եկեղիք, Խաչեն: *Նշանակում է՝ Լամբրոնացու կուսակիցներ (ուսուցիչներ, սնդակիցներ և աշակերտներ) կային թե՛ Կիլիկյան և թե՛ Արևելյան ու Հարավային Հայաստանում: Ցավոք, նրա թվարկած գործիչներից շատերի ինքնությունը, ինչպես նաև նրանց գրական արտադրանքները հայագիտության մեջ քննության չեն առնվել, ուստի «լիբերալիզմի» և «պահպանողականության» թևերի բաժանումն աշխարհագրական առումով արդարացված չէ: Այս իրողությունը լավագույնս կարելի է հավաստել Արևելյան Հայաստանի ԺԲ-ԺԳ. դդ. խոշորագույն մատենագիրներից մեկի Մխիթար Գոշի ժառանգության քննությամբ:*

Հայոց էթնիկական աշխարհի երկու ծայր հատվածներում՝ Կիլիկիայում *և* Հյուսիսային (Արևելյան) Հայաստանում *միաժամանակ, բայց միմյանցից անկախ ձևավորված համերաշխության և հանդուրժողականության այս գաղափարը բարձրակետ էր, որին հանգեցրել է Հայոց էթնիկական, քաղաքական և մշակութային զարգացման ողջ նախընթաց շրջանը:*

Վերանայելի է ԺԲ-ԺԳ. դդ. հայոց մատենագրության և նրա կերտողների երկու հակադրվող թևերի բաժանումը՝ մեկին որակելով լիբերալ, մյուսին՝ պահպանողական: Կիլիկիան և «Հյուսիսային կողմանց» վարդապետների թղթերում եղած փոխհանդիմանությունները նման ընդհանրացման հիմք չեն տալիս: Մշակութային ամբողջականության զգացումը միջնադարյան էթնիկ ինքնագիտակցության կարևոր բաղադրիչներից է:

***

Դավանական հանդուրժողականության և ազգամիջյան համերաշխության գաղափարը Հայոց միջնադարյան գաղափարաբանության ճշմարիտ նվաճումն է, որին, ցավոք, չարձագանքեցին մեր

պատմության ու մշակույթին աղերսվող և անհամեմատ ավելի նպաստավոր կացության մեջ գտնվող հարևան հասարակությունները, ամենից առաջ Բյուզանդական կայսրությունը: «Հանդուրժողականությունը,— գրում էր Ն. Ադոնցը,— քրիստոնեական մեծ կայսրության առաքինություններից չէր: Ժ. դարից ի վեր նա սկսում է հալածել բոլոր այլադավաններին և առաջին հերթին հայերին: Նրանց նկատմամբ գործադրվող բռնությունն ընդունել է այնպիսի ձևեր, որոնք ամենևին պատիվ չէին բերում խելամիտ քաղաքականությանը... Ուստի կայսրությունը միայն ցամաքեցրել է դարեր շարունակ իր զինվորական փառքն ապահովող աղբյուրը»[18]:

Որ հանդուրժողականության գաղափարը մեզանում անցողիկ համոզմունք չէր՝ կարելի է հավաստիանալ նրա ոչ պակաս ակներև դրսևորումով ուշմիջնադարյան հայկական միջավայրում՝ հանձին Ստեփանոս Դաշտեցու լայնախոհ դատումների:

Ճիշտ է՝ Ստեփանոս Դաշտեցու մատենագրական ժառանգության ուսումնասիրությանը նվիրված մենագրական աշխատություն չկա, իսկ նրա գործերից շատերը, մանավանդ եկեղեցական-դավանական բովանդակության, տակավին կարոտ են հրատարակության, այնուամենայնիվ ԺԷ-ԺԸ. դարերի դարագլխի այս հեղինակին չուսումնասիրված մատենագիրների ցանկ չի կարելի դասել[19]: Ստեփանոս Դաշտեցու գործերի առավել ամփոփ և ըստ էության բնութագրության փորձ կատարել է նոր ժամանակների մեր բանիբուն պատմաբաններից ակադ. Աշոտ Հովհաննիսյանը, իր քննությունն ավարտելով հետևյալ բանաձևումով «Գաղութահայ միջավայրում Դաշտեցու երկերը մի հայտնի չափով արտացոլում էին իրանական բռնատիրությանը սպասարկող հայ եկեղեցական և խոջայական տարրերի դեմ քաղաքի ներքնախավերում կուտակված տրամադրությունները: Այնուամենայնիվ քաղաքական իր դիրքորոշումով Դաշտեցին դեռ շարունակում էր հածել հայ բանավարությունների հին՝ արևմտաեվրոպական շավիղներում: Նա երազում է տեսնել հայրենի երկիրը եթե ոչ սեփական իշխանության, գեթ արևմտաեվ-

18 **Նիկողայոս Ադոնց,** Լիկանդոսի բանակաթեմը հայ-բիւզանդական յարաբերութիւններում, «Էջմիածին», 2006, Ժ-ԺԱ., էջ 69:

19 Նրան վերաբերող աշխատությունների և հրապարակումների մատենագիտություն տե՛ս **Kevork B.Bardakjian,** A Reference Cuide to Modern Armenian Literature, 1500-1920, With an Inteoductory History, Detroit, 2000, pp. 66-67, 516.

րոպական կաթոլիկ դինաստիաներից մեկի տիրապետության ներքո: Իրանահայ ժողովրդի տրիբունը չէ նա իր հակաճառություններով ու քառյակներով, այլ պապական միսիոներների ետև կանգնած պետությունների և սրանց հայ մեծարողների մոլորաշավիղ տեսաբանն ու դեմագոգ հրապարակագիրը... Նա չնշմարեց նոր այն հեռանկարը, որի կոնտուրները գծագրվում էին Օրիի գիտակցության մեջ՝ սկսած այն օրից, երբ վերջինս հրաժեշտ տվեց Արևմտյան Եվրոպային՝ հայերի քաղաքական բախտը հյուսիսի մեծ պետության հետ կապելու համար»[20]:

Հանգուցյալ Ռ. Աբրահամյանի թվարկմամբ Ստ. Դաշտեցին քսանչորս անուն երկի հեղինակ է, գրված այլևայլ թեմաներով ու ժանրերով (պատմություն, ջատագովություն, ժամանակագրություն, քառյակներ, թեջնիսներ, հանելուկներ, երգիծանք, վարժանք և այլն)[21]: Ա. Հովհաննիսյանի տված բնութագրությունը հիմնականում կառուցված է այս հեղինակի «Համառոտ ձեռնարկ վիճաբանութեան ընդդէմ հերձուածողաց ազգին Հայոց» ընդհանուր խորագիրն ունեցող երեքմասնյա աշխատության վրա («Մաղախ փշրանաց», «Կոչնակ ճշմարտութեան» և «Խնդիր ուղղութեան»)[22]:

Հարկավ իրողություն է, որ Նոր Ջուղայում Հայոց ուղղափառ եկեղեցու քահանա Տեր-Բարսեղի ընտանիքում ծնված, «դաստիրակեալ եւ սնեալ ի եկեղեցւոջ Հայոց և նախանձայոյզ ճշմարտութեան, սիրող սիրոյ և միաբանութեան, ցանկացող արդարութեան և ճշմարտութեան» դպիր Ստեփանոսը ազգային եկեղեցու սպասավոր չի դառնում, ավելին՝ անթաքույց հանդիմանում է նրա վարդապետությունից դուրս եղած դավանությունները (կաթողիկէ և օրթոդոքս) մերժող ազգային վարդապետներին և պաշտպան կանգնում հռոմեականության, սակայն ամենևին իրավացի չէ նրան «պապա-

[20] **Աշոտ Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 466: Ափսոսանքով պիտի նշենք, որ Ա. Հովհաննիսյանի այս աշխատության Դաշտեցուն վերաբերող էջերը (460-466) չեն ընդգրկվել Գևորգ Բարտակճյանի վերոնշյալ մատենագիտություն: Չեն հիշատակված նաև **Մ. Չամչյանի, Ղ. Ալիշանի, Հ. Տաշյանի, Հ. Աճառյանի, Գ. Զարպհանալյանի, Հ. Տեր-Հովհանյանցի** և որոշ այլ հեղինակների մոտ եղած տեղեկությունները:

[21] **Ռ. Աբրահամյան,** Ստեփանոս Դաշտեցի, Հայկ. ՍՍՌ. գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հասարակ. գիտ.) 1956, N 12, էջ 105-106:

[22] Ավանդված է Երևանի Մատենադարան, ձեռ. N 673, 718, 8111, 8746, 9049, 9689 (նկատվում են խորագրային տարբերակներ): Կա և այլ հավաքածոներում:

կան միսիոներների ետև կանգնած պետությունների և սրանց հայ մեծարողների մոլորաշավիղ տեսաբանն ու դեմագոգ հրապարակագիր» կոչելը: ԺԷ. դարի վերջին և ԺԸ. դարի առաջին երկու տասնամյակում ապրած ու գործած հեղինակը, վաճառականության բերմամբ Արևելքի ու Արևմուտքի երկրները ճանաչելով, բնականաբար, պարսիկների ու թուրքերի բռնատիրությունից և հետամնացությունից ելք որոնելիս իր տեսած ու գնահատած Արևմուտքը պետք է նախընտրեր՝ քանի դեռ «հյուսիսի մեծ պետությունը» չէր երևակել իր կարողություններն ու հետաքրքրությունները: Ընդ որում՝ արդարացի չէ Դաշտեցուն շրջանակել պապականության հրապարակագրի անձուկ գաղափարով, որովհետև մեր հեղինակը ընդգծված համակրությամբ է խոսում նաև հույն վարդապետների մասին. «այնպէս գտաք զազգս նոցա, զոր ոչ կարեմ պատմել զբարուց և զազնուականութենէ նոցին, մանաւանդ թէ որպիսի և անխարդախ ընդանութիւն տեսաք ի յեկեղեցականաց եւ ի վարդապետացն նոցունց...»: Նա հավասարապես մերժում է, ինչպես ժամանակին Ներսես Լամբրոնացին, թե ներազգային և թե ազգամիջյան դավանական անհանդուրժողականությունը և Աստված կանչում, որ «տացէ թերևս զճաշակ սիրոյ եւ միաբանութեան ազգիս Հայոց առ ի սիրել զհամահաւատ զհաւատակից զեղբարս մեր, թէ՛ զՅոյնս, թէ՛ զՎիրս, թէ՛ զՌուսս, թէ՛ զԼատինացիս, թէ՛ զԵթեօպացիս և թերևս զՀոլանդացիս, զՇուէտս և զԴանեմարքս, թէպէտ եւ սոքայ երեքեան ազգս իցեն արտաքոյ կաթողիկէ եկեղեցւոյն: Եւ այսպէս, ի ձեռն այսու սիրոյ եւ միաբանութեան ակն ունիմ ժառանգել ազգի և վարդապետաց և առհասարակ ազանցս կրկնակի փառս և խնդութիւն այժմ և ի հանդերձելումն, ամէն»[23]:

Կարծում ենք՝ այսպիսի լայնախոհությամբ ու դավանական հանդուրժողականությամբ օժտված անհատականության ներկայությունը «հայ բանավարութեան հին՝ արեւմտաեւրոպական շաւիղներում» ԺԷ-ԺԸ. դարերի դարագլխի համար բնավ հանդիմանելի չէ, ավելին՝ ազգային-ազատագրական գաղափարներով հայրենակիցներին տո-

[23] Ստեփանոս Դաշտեցին փաստորեն երկրորդում է Ներսես Լամբրոնացուն, Վարդան Այգեկցուն և Մխիթար Գոշին (տե՛ս **Паруйр М. Мурадян,** *Идея конфессиональной толерантности и межнационального согласия в армянской книжности XII-XIII веков, "Христианский Восток", новая серия, том 1(7), с. 359-373):*

գործելու մի նոր դրվագ է մեր պատմության մեջ[24]: Դաշտեցին հպարտ է իր ցեղային պատկանելությամբ և նույնքան սրտացավ՝ օտարների դռներն ընկած հայրենակիցների վերաբերմամբ. «ով ոք ազգաւ Հայ՝ առավել եւ ես, եւ ով ոք ժառանգ Յաբեթի՝ առաւել եւ ես, եւ ով ոք ի ծննդոցն Հայկայ՝ առաւել եւ ես» ուստի ճանաչում է այն դիպվածներն ու անցքերը, որոնց «Հանդիպեցաւ տառապեալ ազգս Հայոց, թէ ի յոր ատիճանէ սուզեալք անկան ի ստրկութիւն եւ ի ծառայութիւն այլոց ազգաց, այսքան ժամանակք կորուսանելով զթագն ականակուռ եւ զնիզակն յաղթութեան թէ՛ ի ծփանաց մեղաց իմոց, թէ՛ ի նախասահմանութենէն Աստուծոյ»:

Հեղինակը, մեր համոզմամբ, ոչ այնքան կաթոլիկե վարդապետությանն է հետամուտ, որքան իր օրերում ամենազոր Պապի հովանավորությունը Հայոց վրա ապահովելուն, այսինքն՝ արևելյան բռնակալությունից Հայոց ազատագրմանն ու Հայոց միջավայրում փոխադարձ հանդուրժողականության, հաշտության հասնելուն, ուստի «Յովհաննիսի գերիմաստ վարդապետի Ջուլֆայեցւոյ և յազգէս մեծահռչակ փիլիսոփայի՝ մականուն Մրքուզ կոչեցելոյ ընդդէմ կաթողիկէ եկեղեցւոյն Լատինացւոյ և Յունաց երկաբնակաց» գրքի դեմ բանավիճելիս խորագրում իսկ մասնավորեցնում է՝ «Առ ի խելամտութիւն համազնեացն իմոց ձօնեմ թէ՛ վարդապետինն և թէ՛ զմեղապարտինս, որք աւանիկ հանդէպ իրերաց եդեալք երեւին մինն եւ միւսն»[25]:

Յովհաննես Մրքուզ Ջուղայեցին հայոց և նույնիսկ պարսից միջավայրում ճանաչված աստվածաբան էր, «Տիեզերափայլ երջանկափառ վարդապետ», մեկը այն քչերից, «որք ափիբերան առնէին զկաճառս եւ զխումբս մոլեգնեալ եւ կատաղի Պարսկայնոց եւ վայրադողանջ հերձուածողաց հերեսիովտաց»[26]: Դաշտեցին նրա հետ չի չափվում (Պատասխանատրութիւնք Ստեփաննոսի ումեմն մեղապարտ ծառայի Դաշտեցւոյ և մեզօք զառածելւոյ ապաշնորհի), բայց և ունի ազգային շահի ու հեռանկարի իր ընկալումը. «Արդ, ձեզ ասեմ, ազգք Հայոց.- գրում է նա,- հա՛րք իմ պատուելիք, դուք իրաւունս արարէ՛ք, հայեցէ՛ք ըստ որքանութիւն գիտութեան վարդապետիս մերոյ եւ դի՛ք ի կշիռս ըստ մեծի ուշիմութեան և խոհեմութեան ձերոյ ի յերկոսեան կողմանս, այսինքն՝ զՅոհաննէս Մրքուզ վարդապետս այս Ջուլֆայեցի, և զաթոռաժառանգն Պետրոսի և աթոռոյ Հռոմայ փափն, և տաջիք ապա զդոյզն ինչ զգուշանալ վարդապետիս ձերոյ, զի մի՛ սլասցի առաւել քան զկար իւր, վերստին դառնաս վարդապետի սոյն համարադէմս և ասես՝ եթէ փափն իցէ ուղղափառ՝ յայնժամ Հայաստանեացս եկեղեցի ընդունի զնա իբրև արհիեպիսկոպոս ի վերայ իւրում վիճակի և աթոռոյն»[27]:

Ակնհայտ է, որ կյանքի վերջին տարիներին Դաշտեցու ջերմեռանդությունը դեպի կաթոլիկ վարդապետությունը աճել է, որ արդյունք պիտի լինի տարբեր երկրներում տևական վաճառականական թափառումի: 1745 թ. Հռոմի Մարիամ Եգիպտացու եկեղեցում եռաթափառումի: 1745 թ. Հռոմի Մարիամ Եգիպտացու եկեղեցում եռամասնյա «Համառօտ ընձեռումն վիճաբանութեան» գիրքն ընդօրինակող Հակոբոս քահ. Սետեֆյանը պահպանել է աշխատության հեղինակային հիշատակարանը, ուր կարդում ենք. «Եւ այս բաւականացի ի մէնջ, որ եմ ամենանուաստ ծառայ տերութեան ձերոյ և անարգ սպասաւոր բոլոր վարդապետաց և առ հասարակ ազգիս Հայոց և կրտսեր պաշտօնեայ բանասիրաց ապիրատ Ստեփաննոս Բասիլիու Շիրիփալանկեան ի Դաշտէն Գողթնեաց, սերունդ յԱսպահանայ և սխալական, որոյ սկիզբն կալայ խօսիլ ընդ գերահռչակ վարդապետիս յամի փրկչին 1714, ի մուտս ապրիլ ամսոյն, իսկ յաւարտածի ի թուին 1715 ի փետրուարի Հռոմեացւոց սկզբանն, ի վայրս Հնդկաց ի Բանդարի՝ Սուրաթ անուանեալ նաւահանգստի: Իսկ ի թուին Հայոց ՌՃԿԳ. և յունվարի Ի. (20) աւարտ սորին: Նուէր յինէն ապերախտէ իմոյ հարազատ իմաստասիրաց մանկանց Հայոց՝ ի փառս մեծագոյնս Աստուծոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն»[28]:

24 Այդ նույն հողի վրա, հարյուրամյակներ անց, Լամբրոնացուն ազգային ինքնասիրությունից զուրկ է որակում Յուսիկ եպիսկոպոսը (տես նրա՝ եկեղեցական գրքերում կամայական սրբագրութիւն և օտարածայն ընթերցմունք թոյլատրելի չեն.- «Լումայ», 1903, N 3, էջ 224):

25 Մատենադարանի ձեռ. N 8111, էջ 1v: Յմմտ. ձեռ. N 9049:

26 **Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ**՝ Պատմութիւն Պարսից, աշխատութեամբ **Բաբգէն վրդ. Աղաւելեանց**, Վաղարշապատ, 1905, էջ 105: Վերջերս Երևանում լույս տեսավ Մրքուզի երկլեզու հայերեն-պարսկերեն աշխատությունը (**Յովհաննէս Վարդապետ Մրքուզ Ջուղայեցի**, Ըղձալի Քրիստոսի օրէնքը, աշխատասիրությամբ պրոֆ. **Գ. Մ. Նալբանդյանի**, Երևան, 1998: Ստեփանոս Դաշտեցու կենդանության Յովհաննես Մրքուզ Ջուղայեցին չորս հրատարակության հեղինակ էր. «Գիրք համառօտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ», Նոր Ջուղա, 1788, «Դաւանութիւն

հաւատոյ», Կ. Պոլիս, 1713/1714, «Կրթութիւն հաւատոյ», Կ. Պոլիս, 1713, «Համառօտ քերականութիւն և տրամաբանութիւն», Ամստերդամ, 1711: Նրա մատենագրական ժառանգության գնահատությունը տես **Հ. Ղ. Միրզոյան**, Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցի, Երևան, 2001:

27 Մատ. ձեռ. N 781, էջ 70r.

28 Անդ, էջ 81r:

Քանի որ ձեռագրի սկզբում պահպանվել է դարձյալ հեղինակային տեղեկություն, թե եռամասնյա գիրքը նվեր է «առ Հայկազուն եղբօրս իմ: Յամի 1700», ստիպված ենք ենթադրել, որ 1714-1715 թվականներին նա վերջնականապես վերանայել-խմբագրել է աշխատությունը և օժտել վերևում բերված տեղեկությամբ:

Համոզվելու համար, որ արդարացի չէ կամ գոնե չափազանցված է ասել, թե Ստեփանոս Դաշտեցին «պապական միսիոներների եռեւ կանգնած պետութիւնների եւ սրանց հայ մեծարողների մոլորաշաւիղ տեսաբանն ու դեմագոգ հրապարակագիրն» է, անհրաժեշտ է կարդալ նրա դավանաբանական աշխատության «Յառաջաբանութիւնը»՝ «Բանք սակաւք առ ընթերցօղ ազգակից եղբարս իմ» (Մատ. N 781 ձեռագիր): Նույն հավաքածոյի N 9049 ձեռագրից է քաղված Դաշտեցու կենսագրությանն ու աշխատանոցին վերաբերող հիշատակարանային դրվագը:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՎԱՆԱԿԱՆ ԹՂԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Մ. Գոշի «Թուղթն» ունեցել է մեկ հրատարակություն[1]. հրատարակիչն է հայագետ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը[2], որի ձեռքի տակ եղել է էջմիածնի մատենադարանի երեք ձեռագիր (այժմ՝ ՄՄ ձեռ. NN 631, 2966, 3062): Իբրեւ բնագիր անփոփոխ ներկայացված է N 631 ձեռագրի բովանդակածը, իսկ մյուս երկուսը Ա եւ Բ ցուցիչներով տրված են որպես տարընթերցում:

Երկրորդելով Մեսրոպ արքեպս. Գրիգորյանին՝ այստեղ եւս պիտի կրկնել, թե՝ «Զարմանալիօրէն բազմահմուտ Կարապետ եպս. Տէր-Մկրտչեան չէ անդրադարձեր ձեռագրական այս խաթարումներուն»[3]: Եւ, հիրավի, հրատարակչի նախընտրած ձեռագիրը, բազում անընթեռնելի տեղիներից բացի, ունի ոճական, իմաստային ու ուղղագրական ոչ քիչ խաթարումներ, որոնք որեւէ ուշադրության չեն առնված, հ. Համազասպ Ոսկյանի արդարացի դիտողությամբ՝ հրատարակության «ինչ-ինչ տեղեր անկապ են եւ խառնաշփոթ. հրատարակուած բնագիրը շատ խեղճ է»[4]: Նոր հրատարակություն կատարելու անհրաժեշտությունը ամենից առաջ թելադրված է այդ «անկապ ու խառնաշփոթ» տեղիներից ազատվելու եւ Մ. Գոշի կարեւոր վաստակներից մեկը իր բնիկ տեսքին վերադարձնելու պարտավորությամբ:

Սույն հրատարակությունը պատրաստելիս Մաշտոցյան Մատենադարանի հավաքածոյում երեւան եկավ «Թղթի» եւս երկու ընդօրինակություն (մեկը՝ հատվածական)՝ դյուրացնելով առանց այդ էլ նախորդ ձեռագրերով լիովին հասու բնագրի քննական հրատարակությունը:

---

1 «Արարատ», 1900, էջ 497-504, 562-568. 1901, էջ 55-61, 121-127:

2 Տես ««Արարատ» հանդեսի բնագրական հրատարակությունների մատենագիտություն (1868-1919 թթ.)», կազմ. Կ. Դ. Ավետյան, Երեւան, 1989, էջ 117 (N 344):

3 Դոկտ. **Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորեան**, Անձնանուններու աղաւաղումներ դաւանաբանական գրութեանց մէջ.- ՀԱ, 1970, էջ 330:

4 Դոկտ. **հ. Համազասպ Ոսկեան**, Մատենագրական քննություններ, Վիեննա, 1926, էջ 191:

Այսպիսով, ներկայացվող բնագիրը կազմված է ըստ հետևյալ ընդօրինակություննե-րի.

Ա. – ձեռ. N 631, թ. 17r-45v: ԺԵ. դար, ժողովածու, գրիչ՝ Գրիգոր Սամսոնեցի, ստացող՝ Մկրտիչ քահանայ, 277 թերթ, միասյուն, բոլորգիր[5]:

Բ. – ձեռ. N 2966, թ. 63r-80v: ԺԷ. դար, Կ. Պոլիս, ժողովածու, գրիչ՝ Ղուկաս երէց, 180 թերթ, երկսյուն, նոտրգիր[6]:

Գ. – ձեռ. N 3062, թ. 165r-176v: 1765-1767 թթ., Էջմիածին, ժողովածու, գրիչ՝ Խաչատուր Կ. Պոլսեցի, ստացող՝ Աբրահամ վրդ. Աստապատցի, 298 թերթ, երկսյուն, նոտրգիր[7]:

Դ. – ձեռ. N 9622, էջ 773-828: 1858 թ., Երուսաղեմ, ժողովածու, գրիչ՝ Յակոբոս Ջիլինգերեան, 474 թերթ, միասյուն, շղագիր[8]:

Ե. – ձեռ. N 2678, թ. 378r-383v: 1426-1476 թթ., դավանական նյութերի հույժ կարևոր ժողովածու, գրիչ՝ Մատթէոս, ստացող՝ Իգնատիոս կրօնաւոր, Եսայի վրդ., Ուսիկ աշակերտ, Արիստակէս, 387 թերթ, միասյուն, երկսյուն, բոլորգիր, նոտրգիր[9]: Գոշի թուղթը համավծական ընդօրինակություն է: Ավելորդ չծանրաբեռնելու համար տարընթերցումները չենք նշում:

Ձեռագրերում ի մասնավորի Մ. Գոշի «Թղթին» վերաբերող կարևոր լրացուցիչ հաղորդումներ գրեթե չկան: Ա-ն ավարտվում է գրչի այս կարճառոտ հիշատակարանով. «Գրեցաւ սակաւ սատարս այս ձեռամբ յիմարի միոյ, զոր Գրիգոր ճանաչի, մականուն Սամսոնեցի, հրամանաւ Մկրտչի: Աղաչեմ յիշել ի Տէր Յիսուս» (թ. 45v): Գ-ն լուսանցներում ունի բնագրում վկայակոչված սուրբգրային տեղիների հղումներ, ընդ որում՝ ոչ միշտ ստույգ (նրանք նույնությամբ կիրառված են «Արարատի» հրատարակության մեջ): Դ-ն բնագրին վերաբերող երկու ծանոթություն ունի. Նիկիոյ ժողովի ընդունած կանոնների «ԺԱ. գլուխ» թվի առիթով գրիչ Հակոբոս Ջիլինգերյանը նկատել է. «Նիկիայ կանոնք Ի. գլուխ է» (էջ 783), իսկ էջ 829-ում ծանոթագրել. «Մեր օրինակն ազդ առնէ, թէ յայս վայր աւարտէր

5 Նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց», կազմ. Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներած. Օ. Եգանյանի, խմբ. Լ. Խաչիկյան, Ա. Մնացականյան, Երեւան, 1965, էջ 638:

6 Նկարագրությունը նույն տեղում. էջ 912:

7 Նույն տեղում, էջ 920-931:

8 «Ցուցակ ձեռագրաց». Երեւան, 1970. Բ. էջ 962-963:

9 «Ցուցակ ձեռագրաց». Ա., էջ 851-852:

խուր օրինակն: Յայտ է՝ զմնացեալն յայլմէ օրինակէ առեալ գոլ»: Կարող ենք միայն արձանագրել, թէ Հ. Ջիլինգերյանի ընդօրինակության և նրա նախօրինակի հիմքում ընկած ձեռագրերը չեն նույնանում այստեղ ներկայացվողների հետ: Թերևս Դ-ի նախօրինակից է գալիս խորագրին առընթեր այս ծանօթությունը. «Թուղթ հաւատոյ ընդհանրական ի դիմաց Հայաստան (կարդա Հայաստանեայց – Պ. Մ.) Եկեղեցւոյ առ ազգն Վրաց եւ առ մեծ թագուհին Թամար եւ առ այլ մեծամեծ դէդէփալքս (կարդա դիդեբուլքս – Պ. Մ.) եւ առ կաթողիկոսն եւ այլ առաջնորդք Եկեղեցւոյ վասն նախատանաց մերոյ աւանդութեանս եւ վասն ազգացն միաբանութեան, որում ի խնդիր ելեալ էին մեծ սպասալարն Զաքարէ եւ Իւանէ աթաբակն, հրամանաւ թագուհւոյն եւ կամեցան մեծ ժողովք միաբանել, առ որս ըստ արժանւոյն գրէ լայն թուղթ պատասխանւոյ եւ հաւանութեան մեծ եւ աշխարհալոյս վարդապետն Մխիթար եւ մականուն Գոշ կոչեցաւ, ի Գետիկ» (էջ 773): Գրիչը, ինչպես տեսնում ենք, խորամուխ է «Թղթի» բովանդակության՝ այն դիտելով իբրեւ «ի դիմաց Հայաստան Եկեղեցւոյ» գրված «Թուղթ հաւատոյ ընդհանրական»:

Քանի որ Մ. Գոշը «Թղթում» քննարկվող հարցերը ներկայացնում է որոշակի խմբավորումով և, ինչպես արդեն ծանոթ է[10], պատասխանում հայերի դավանությանը վերագրվող ամբաստանություններին, անհրաժեշտ նկատեցինք կիրառել համապատասխան համարակալում, այլ կերպ՝ բնագիրը տրոհել դրվագների՝ առանձնացնելով նաև Նախադրությունն ու Ամփոփումը: Վերջիններս հատակորեն տարբերակվում են ե՛ւ նիւթով, ե՛ւ շարադրանքի եղանակով: Ջանացել ենք աղատվել ընդօրինակությունների ժամանակ երևան եկած այլագրություններից (Հռաւմ-Հռոմ, հրեայ-հրէայ, տաջիկ-տաճիկ, ձայթ-ձէթ, կաթուղիկոս-կաթողիկոս եւ այլն), ինչպես նաև՝ զանց առել կիսաձայն յ-ի անտեղի գործածությունը, աւ երկբարբառի օ պարզեցումը և նման այլ՝ բնագրական առումով ոչ կարևոր խրողություններ: Այլագրություններ կան և անձնանունների շարքում (Յովհաննէս-Յովաննէս-Յոհան, Սոկրատէս-Սոկրատ), երբեմն նույնիսկ՝ աղավաղում-շփոթումներ (Թէոդորիտոս-Թէոդորոս): Նման պարագաներում սրբագրումները կատարել ենք առկա տարընթերցումների շրջանակներում, իսկ լրացուցիչ միջամտություններն ա-

10 Տե՛ս «Գանձասար», Դ., Երեւան, 1993, էջ 108. ՊԲՀ, 1995, N 2, էջ 187-194:

ռել անկյունավոր փակագծերի մեջ: Թերեւս կարելի էր այլ ուղղումներ եւս մուծել բնագիր, բայց համոզուած չենք, թե Գոշի ձեռքի տակից դուրս եկած տեքստը ստույգ պիտի համապատասխաներ այսօրվա քննական հայացքով ճշգրտվող իրողություններին, ուստի հաճախ գերադասել ենք թողնել անփոփոխ[11]: Այսպես օրինակ՝ ըստ Գոշի՝ «ի Քրիստոսէ մինչ ի չար ժողովն Քաղկեդոնի ՆՀԴ. ամք են» (Է.), ասել է թե՝ այն տեղի է ունեցել 474 թվականին, որ իրական 451-ից տարբերվում է 23 տարով: Անկարելի ենք նկատում ՆՀԴ.-ի սրբագրում ՆԾԱ., որովհետեւ գրերի նման շփոթ սպասելի չէ (մեկ այլ դրվագում (Գ.) գրեթե ճիշտ է թվագրում՝ Մարկիանոսի երկրորդ տարում, որ, 450-ից հաշված, ընկնում է 451-ին): Կամ՝ Հայոց դարձը թվագրում է ՅԵ. (305), որ չի համերաշխվում ո՛չ ավանդական 301-ին, ո՛չ էլ քննական 314-ին:

Այս կարգի ինքնատիպությունները, բնականաբար, անփոփոխ պիտի մնային տեքստում: Առանձին դեպքերում տարընթերցումները կարող են հուշել, թե նախապես ինչ հնարավոր տարբերակ կարող էր լինել: Անշուշտ, որոշ խաթարումներ սպասելի են նաեւ այլազան ցեղանունների եւ դավանական խմբանունների գրության մեջ (Զ.):

Համեմատվող բոլոր ձեռագրերում Հայք երկրանվան հայցականը (ի Հայս. զՀայս) նույնական է ուղղականին (Հայք): Նման դեպքերում սրբագրումն անխուսափելի էր, թեեւ այդպիսի փոխարինության օրինակներ ծանոթ են այլ մատենագիրների երկերից եւս (օրինակ՝ Մխիթար Հերացիի «Ջերմանց մխիթարութեան» նախաբանում. «Եւ ի Հայք բնաւ ոչ գտի զվարդապետութիւն եւ զիմաստ նախագիտութեան, այլ զստածումն միայն...»):

---

11 Նորայր եպս. Պողարյանի փործառու դիտողությամբ Մ. Գոշի «հայերէն շարադրութիւնը, սակայն, պէտք եղածին չափ խնամուած չ'երեւիր» («Հայ գրողներ». Երուսաղեմ, 1971, էջ 261):

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈՇ

ԹՈՒՂԹ ԱՌ ՎՐԱՑԻՍՆ՝ ՅԱՂԱԳՍ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՈՅ[1]

---

1 **Խորագիր**. Ա-ն չունի, «Թուղթ (թուխտ Բ, ի թխտոյն Ե) Մխիթար վարդապետին (վարդապետի Ե), որ Գոշն կոչիւր» ԲԳԵ, «Թուղթ հաւատոյ ընդհանրական ի դիմաց Հայաստան եկեղեցւոյ առ ազգն Վրաց եւ առ մեծ թագուհին Թամար եւ առ այլ մեծամեծ դէդէփալքս (sic) եւ առ կաթողիկոսն եւ այլ առաջնորդք եկեղեցւոյ վասն նախատանաց մերոյ աւանդութեանս եւ վասն ազգացն միաբանութեան, որում ի խնդիր ելեալ էին մեծ սպասալարն Զաքարէ եւ Իւանէ աթաբակն հրամանաւ թագուհւոյն եւ կամեցան մեծ ժողովք միաբանել, առ որս ըստ արժանւոյն գրէ լայն թուղթ պատասխանւոյ եւ հաւանութեան մեծ եւ աշխարհալոյս վարդապետն Մխիթար, եւ մականունն Գօշ կոչեցաւ, ի Գետիկ» Դ

[ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ]

Զայս[2] գծագրութիւն սակաւուք հարկաւոր կարծեաւք եդաք յաղագս Վրաց, որ ոչ սակաւ թշնամութեամբ[3] վարին ընդ Հայս, աշակերտելով Յունաց[4]:

Եւ արդ, զի նախ առ ձեզ է[5] նախադրութիւն բանիս, ո՛վ աստուածասէր[6] եւ բարեպաշտ[7] իշխանք իշխանաց Զաքարէ եւ Իվանէ, ծնունդք սիրոյ Աստուծոյ ի բարեզարդ ծնողաց[8], զի ես՝ յամենայն նուաստ Մխիթար, ի բանս եւ ի գործս սպասաւորաց Բանին[9], որ յաւուրս մեր տեսանելով եւ լսելով զբամբասանս Վրաց[10] ի դաւանութիւնս մեր հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէր[11] հոգի[12], մանաւանդ զի[13] հաւանելի թուելով ձեզ[14] ասացեալքն առ[15] ի նոցանէ, յայսոսիկ[16] եկի ի[17] միտս[18]՝ գրել սակաւուք զճշմարիտ հաւատոյս մերոյ զաւրինակ: Եւ զոր ամբաստանիմք, թէ[19] ոչ միաբանին ընդ Յոյնս եւ ընդ Վիրս՝ ցուցանել փութացաք զանհնարութիւն: Նաեւ զայն յայտ արարաք, թէ[20] զո՞ր արժան է մկրտել[21] ի կարծելոց հերձուածողաց. զի կարի յանդգնութիւն է մկրտել զՀայ կամ զՅոյն եւ զՎրացի: Վասն այնորիկ[22]՝ եւ զաղաւթսն գրեցաք ի թղթի[23] աստ, զոր արարեալ է հարցն առաջնոց՝ փոխանակ մկրտելոյ ընթեռնուլ ի վերայ դարձելոցն[24] ի ժողովոյն[25] Քաղկեդոնի, որ եւ[26] զնոյն չափ ունի յայլոց ազգաց, զոր անգիտացեալ Յոյնք եւ Վիրք՝ պատրեալսն[27] ի նոցանէ, զՀայ ոք[28] մկրտեն[29], եւ Հայ ոք[30]՝ զնոսա, զի յոյժ հայհոյութիւն է առ Աստուած եւ ոչ լուսաւորութիւն:

---

[2] + սակաւ Դ
[3] թշնամութիւն Ա
[4] վարին... Յունաց] ընդ մեզ վարին քան զՅոյնս, աշակերտելով նոցայ ԱԲԳ
[5] են Ա
[6] աստուածասէրք Դ
[7] բարեպաշտք Դ
[8] ի բարեզարդ (բարէզարդ Ա) ծնողաց] Դ
[9] բանին] Գ
[10] վրաց] Դ
[11] լինէի Դ
[12] յոգի ԱԲ
[13] զի] Դ
[14] ձեզ թուելով Դ
[15] առ] Դ
[16] այսորիկ Գ
[17] ի] Ա
[18] + ձեր Բ, միտ ձեր Գ
[19] թէ] որ Ա
[20] արասցուք, եթէ Դ
[21] մկրտել] ԱԴ
[22] այն ԱԲԳ
[23] թխտի Բ
[24] վերադարձելոցն Ա
[25] ժողովու Ա
[26] եւ որ ԱԴ
[27] զպատրեալսն Դ
[28] զՀայք Դ
[29] մկրտեն] Գ
[30] Հայք Դ

Միանգամայն[31] եւ զայն ծանուցաք, թէ զի՞նչ[32] այժմ հնարաւոր է լինել ազգաց, զոր թէ[33] ձեզ հաճոյ կարծի՝ թարգմանեալ[34] ընթեռնույք[35] նոցա: Եւ թէ[36]՝ անշահ համարիք դուք զկարծիսն[37], զոր ունիք ի մեզ անգայթակղելի[38] իրս, իբր զփոշի[39] ի տեսանելեաց ձերոց[40] ի բաց թափեցէք: Յաղագս այնորիկ[41] եւ[42] յառաջնորդս նոցա զսակաւդ գրեցաք թղթոյ[43] աւրինակ եւ ապա եկաք ի բանս աւանդութեանց մեր[ոց] եւ կարգաց: Եւ դուք բաւական էք զսաստկացեալ[44] պատերազմդ հայհոյութեան[45] շիջուցանել իմաստութեամբ եւ հաւանելի բանիւ[46], թէպէտ[47] եւ անհնար ցուցաք զժողովն լինել[48] եւ զմիաբանութիւն:

---

[31] միանգամայն] Ա
[32] զինչ] Դ
[33] եթէ Դ
[34] թարգմանել ԱԲԳ
[35] ընթեռնուք Դ
[36] եթէ Դ
[37] զկարծիքն Դ
[38] գայթակղելի ԱԲԴ
[39] փոշի Ա
[40] ձեր ԱԴ
[41] այնոցիկ ԱԲ
[42] եւ] ԱԲԳ
[43] թղթո Ա, թուխտոյ Բ, գրեցաք զսակաւ թուղթ Դ
[44] զսաստկաց ԲԳ
[45] հայհոյութեան] Դ
[46] բանիւք Դ
[47] թէպետ Ա, թէեւ Դ
[48] լինել] Դ

[Ա.] Փոքր ինչ եւ թղթոյ աւրինակդ[1]

Աստուածարեալ եւ հոգեւոր տեառնդ՝ քրիստոսապսակ[2] կաթողիկոսիդ, հաւատացելոցդ ի Քրիստոս Վրաց եւ աստուածապատիւ եպիսկոպոսաց եւ հարց հոգեւորաց, եղբայրանոցաց եւ կուսաստանաց, եւ խաչակրաւն միանձանց, եւ հասարակ եկեղեցական կարգաց[3], նուաստս ի Քրիստոս եւ սպասաւոր Բանի Աստուծոյ[4], գծողս այսմ[5] մատենի[6] աղաչանաւք ծանուցանեմ[7]: Քանզի ընդ միտ[8] ածի զոր սատանայ սերմանեաց ի մէջ հաւատացելոց զնախանձ եւ զատելութիւն[9] եւ վասն այն համարձակեցաք եւ զսակաւդ գրեցաք զթուղթդ[10]՝ ոչ հակառակելով[11] եւ կամ զոք պարսաւելով յազգաց[12], այլ զարժանն[13] եւ զիրաւն[14] իբր[15]

[Ա.] [1] աւրինակս ԱԴ
[2] քրիստոսապսակեալ Դ
[3] եկեղեցական կարգաց] եկեղեցականաց Դ
[4] Աստուծոյ] նորա ԱԴ
[5] գծողացս ԲԴ
[6] գծողս այսմ մատենի] Դ
[7] ծանուցանեմք ԲԳ
[8] միտ] մէջ Դ
[9] + ի նախատութիւնս ազգաց Դ
[10] զթուխտդ Բ
[11] հակառելով Ա
[12] եւ վասն այն... յազգաց] Դ
[13] զարժան Ա
[14] զիրաւունս ԱԴ
[15] իբրեւ Դ

դատաստանաւ ցուցաք եւ զդժուարաւ գալն ի միաբանութիւն եւ զհնարաւորն ըստ ժամանակիս[16] յայտ արարաք, եւ զճշմարիտ խոստովանութիւնն[17] ցուցաք զմերոցս ազգաց[18], եւ զխոտելի իրսն[19] ոչ թաքուցաք[20] զմերոյ[21] ազգի[22], եւ զիւրաքանչիւր ազգի զգովելին եւ զպարսաւելին գրեցաք, եւ ի գլուխ բանին ընտրեցաք զբարին եւ զլաւն:

Զի այն էր հաճոյ Աստուծոյ, զի ամենայն ազգ միակրաւն լինէր, բայց տեսաք, որ սատանայ եւ ամբարտաւանութիւնն[23] մեր[24] զայդ չտայ[25] առնել՝ լաւ[26] համարեցաք, որ զմիմեանս չթշնամանեմք եւ զխաչ եւ զեկեղեցի միմեանց չանարգեմք[27], զի այն Քրիստոսի է եւ Աստուծոյ[28] անարգանք: Եւ զոր գրեմք[29] ի թղթի[30] վասն Հայոց[31] խոստովանութեան[32]՝ ճշմարտութեամբ այդպէս[33] է, եւ դատիմ ի Տեառնէ[34], թէ վասն Հայոց[35] երեսաց ես սուտ ինչ գրեալ[36] եմ: Բայց կամ եւ[37] խղճամ ընդ ձեր, զի անգիտութեամբ, որ չէ ոք զձեզ հասկացուցեալ՝ կայք եւ[38] զՔրիստոս զայրացուցանէք, եւ զձեր ժողովուրդ ի գայթակղեցուցանէք[39], ասելով[40], թէ՝ Տաճիկն[41] եւ Ջհուտն[42] լաւ է քան զՀայն[43]: Եւ զայդ ի Հոռոմէն էք[44] լսել, եւ Հոռոմն ի սուտ քրիստոնէէն՝ ի յարեւորդւոյն, զինչ գրեալ եմք[45] ի թղթիդ[46] զպատճառն[47]: Մի՛, սիրելի՛ք Աստուծոյ, լսողք[48] լինիք[49] թշնամեաց[50] մերոց, զի չկայ[51] ի Հայս

16 ժամանակին ԲԳ
17 խոստովանութիւն ԱԳԴ
18 զմերոց ազգացս ԲԳ զմերոցս ազգաց] զհարցն
19 իրն Ա
20 չթագուցաք ԲԳԴ
21 զմեր ԱԲԳ
22 ազգիս ԱԲԳ
23 ամբարտաւանութիւն Ա
24 մեր] ԲԳ
25 չտայ զայդ Դ
26 լաւ] շատ Դ
27 չանարգենք Բ
28 եւ Աստուծոյ] ԱԲԳ
29 գրեմ] գրել են Ա, գրեալ ենք ԲԳ
30 թղթիտ Ա, թխթիդ Բ
31 հայոց] հաւատոց Բ

32 խոստովանութեան Դ
33 այսպէս ԳԴ
34 եւ դատիմ ի տեառնէ] եւ թող դատէ զիս Աստուած Դ
35 հայոց] Դ
36 գրել ԱԲ
37 եւ] ու Դ
38 կայք եւ] դուք Դ
39 գայթագղեցանել էք Ա. գայթակղեցանել էք Բ, գայթակղեցնել էք Գ, գայթակղեցուցանել էք Դ
40 ասելով] ԱԲԳ
41 Տաջիկն ԱԲԳԴ
42 ջահուտն Ա
43 զՀայն] զնոսա Դ
44 էք] ենք Բ. էնք Գ
45 գրել ենք ԱԲԳԴ
46 թղթիտ Ա, թխտիդ Բ
47 զինչ գրեալ... զպատճառն] Դ
48 լսող Ա, լսօղք ԲԳ
49 Մի... լսողք լինիք] մի լինիք լսող Դ
50 թշնամեացն ԲԳ
51 ոչ կայ Դ

հերձուած, եւ զայն սակաւ պատճառն, զոր ունին[52]՝ յամենայն ազգ այլ շատ եկամուտ տեսանեմք[53], եւ այն չէ հերձուած այնոց[54], որ մկրտելոյ հրաման կայ[55] ի Գրոց՝ որպէս գրեալ եմք[56] ի թղթիդ, թէ զոր պիտի մկրտել եւ կամ[57] զոր՝ ոչ: Վասն այն եւ զաղաւթսն գրեցաք ի թղթիդ[58], զոր արարեալ են առաջին հարքն, որ ոչ մկրտէին[59], այլ աղաւթիւք սրբէին զայնչափ հերձուածսն, որ յայս ժամանակիս երեւի: Զի որ[60] զմկրտութիւնդ առնեն[61]՝ թէ Վրացի զՀայ մկրտէ[62] եւ կամ թէ Հայ զՎրացի, զո՞ր Քրիստոս տայ[63] թողուլ եւ կամ[64] զո՞ր խոստովանիլ[65], զի մի է Քրիստոս եւ ոչ երկու, զի մի հաւատ եւ[66] մի մկրտութիւն քարոզի ի Գրոց (Եփես. Դ. 5):

Արդ, մի լիցի ձեզ պատճառ լինել եւ այլոց գայթակղութեան[67], այլ առաւել շինութեան[68] եւ խաղաղութեան, որպէս զի համարձակ լիցուք[69] ասել[70]՝ Ահաւասիկ[71] ես եւ մանկունք իմ (Ես. Ը. 18), եւ[72] ընդունիցիք զանթառամ պսակն ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ[73] յաւիտեան[74]:

Թէ հաճոյ ձեզ առնէ Աստուած զսակաւ պատճառ[75] ի բանս թղթիդ[76], դուք աննախանձ կամաւք աստուածասէր թագաւորացդ[77] յայտնեցէք, զի եւ նոքա[78] նախանձորդք են[79] խաղաղութեան եւ սիրոյ առ ի[80] միմեանս հաւատացելոց: Գիտեմք[81] եւ զձեզ վշտակից կամաւք հոգալ, թէեւ ոչ է[82] միաբանելոյ հնար, այլ հնար է զհայհոյութիւնդ[83] բառնալ եւ խափանել[84]

52 ունի Դ
53 եկամուտ տեսանեմք] կան եւ տեսանենք ԱԲԳ
54 այնոց] հայոց ԱԲԳ
55 կա ԱԲ
56 գրել ենք Ա
57 կամ] ԱԴ
58 թղթիտ Ա, թխտիդ Բ
59 ոչ մկրտէին] չմկրտէին ԱԲԳ
60 զոր Գ
61 առնեն] ունի Դ
62 մկրտեն Ա
63 տա Բ
64 կամ] Դ
65 խոստովանել Դ
66 եւ] Գ

67 գայթագղութիւն Ա
68 շինութիւն Ա
69 լինիք Դ
70 ասելով Դ
71 ահա ԱԲԳ
72 եւ] Դ
73 աւրհնել Ա
74 յաւիտեան] ԲԳ եւ ընդունիցիք... յաւիտեան] Դ
75 պատճառդ ԱԴ
76 ի բանս թղթիդ] իմաստութեան եւ Դ
77 թագաւորի Դ
78 նոքա] դոքա ԱԲԳ
79 նախանձաւոր են ԱԲ, նախանձաւորք են Գ, նախանձորդ են Դ
80 ի] Դ
81 գիտեմ Դ
82 թէեւ ոչ է] թէ եւս չէ Բ
83 զհայհոյութիւնն Ա, զհայհոյութիւն Դ
84 խափանելոյ Դ

զմկրտութիւնդ, որ յոյժ[85] անհաճոյ է[86] Քրիստոսի եւ ամենայն սրբոց[87] Նորա[88], ապա թէ ոչ՝ թողութիւն առնէք մեզ, զի ոչ յանդգնութեամբ, այլ վշտանալով գրեցաք:

Եւ արդ՝ սկսեսցուք[89] ի բանս առաջիկայ թղթիս[90]:

[Բ.] Բազմաց փոյթ եղեւ ըստ պատահմանց[1] ժամանակաց[2] եւ ըստ հարկի գրել ինչ յաղագս բամբասանաց զմենջ՝ վասն հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ: Նմանապէս եւ այժմ մեզ պատահեաց՝ ոչ իբր իմաստուն կատարեալ[3] ձեռնամուխ եղաք, այլ սակաւ ըստ կարի նման լինել՝ որ զանկեալ[4] զհասկ առնու[5] եւ կամ[6] զմնացեալն զճիռ յայգւոջ[7] (Հմմտ. Ղեւ. ԺԹ. 10): Այլ զայս նախ[8] դիցուք զկամս Աստուծոյ, որ սիրողն է[9] միաբանական կենաց մարդկան, վասն որոյ կարաւտ արար պէտս ունել միմեանց, եւ յաղագս այնոցիկ շինեցան քաղաքք եւ այլ բնակութիւնք: Ընդդէմ այսմ է[10] եւ կամք չարին՝ բաժանիլն[11] մարդկան ատելութեամբ, զի այսու դիւրաւ զչարն գործիցէ, որպէս[12] սիրով զբարին՝ Աստուած, զի Հին եւ Նոր կտակարանք[13] զսէրն տան աստուածապաշտութեան եւ աշակերտութեան Քրիստոսի նշանակ: Եւ թէ Աստուած զմի լեզուն ի բազումս[14] բաժանեաց՝ զչարն խափանելոյ աղագաւ, եւ ի հարկէ յայտ անտի[15] է, զի[16] ի վերայ բարի[17] սիրոյ սերման[18] զատելութիւնն սերմանեաց չարն, զոր ասաց Տէրն՝ Այր թշնամի արար զայն (Մատթ. ԺԳ. 28), եւ յայնմանէ բուսան հերձուածք եւ նա[եւ][19] յամբարտաւանութենէ: Յաղագս այնորիկ[20] Քրիստոս սկիզբն[21] բարեաց հաստատելոց զխոնարհութիւնն ետ երանութեամբ եւ Աւետարանաւն արար մի հաւտ եւ մի հովիւ՝ զցրուեալ[22]

85 յոյժ] այժմ Դ
86 է] Ա, հաճոյ է Դ
87 սրբոցն Դ
88 նորա] ԲԳԴ
89 սկսցուք ԱԲԳ
90 թխտոյս Բ, թղթոյս Գ
[Բ.] 1 պատահման ԱԲԳ
2 ժամանց Ա, ժամանակաց] Դ
3 կատարել Ա
4 զանգել ԲԳ
5 զանկեալն առնու զհասկ Դ
6 կամ] ԱԲԳ
7 այգոչ Բ, այւգոչ Դ, յայգւոյ զճիռ Դ
8 նախ զայս ԲԳ
9 է] Գ
10 է] ԲԳԴ
11 բաժանելն Դ
12 որպէս] այսպէս ԲԳ
13 կտակարանքս Բ
14 բազում Ա
15 անդի ԱԲԳ
16 + եւ Դ
17 բարոյ ԱԲ, բարւոյ Գ
18 սերման սիրոյն Դ
19 նա ԱԲԳԴ
20 այսորիկ ԳԴ
21 սկիսբն Ա
22 զցրուել Ա, զցրուեալսն Դ

զորդիսն Աստուծոյ ժողովելով[23] ի մի եկեղեցի, զոր տեսեալ բարիատեացն սատանայ զմայրն[24] ամենայն[25] ուղղութեանց[26]՝ նախանձու շարժեաց զոմանս ի մարդկանէ զամբարտաւանս՝ սերմանել զանազան աղանդս: Եւ[27] որպէս յաւուրս ճշմարիտ մարգարէից[28], զսուտն յարոյց զմարգարէսն[29] եւ զսուտ առաքեալսն յաւուրս ճշմարիտ առաքելոցն, նոյնպէս եւ[30]՝ յաւուրս ուղղափառ հայրապետաց[31]՝ զչարափառ հայրապետսն: Եւ որ չարն է քան զամենայն՝ զի չետ իմանալ զվնասն. բարւոյ[32] պատճառաւ զչարն ետ խաւսել հակառակ ի[33] միմեանց: Եւ[34] որպէս արար Ադամ առ[35] աստուածանալոյ[36] պատճառաւ՝ եւ զոր[37] ունէրն զպատիւն, զայն կորոյս, այսպէս եւ այժմ[38] լինել տեսանեմք առ ամենայն ազգս քրիստոնէից:

Զի ախտիւք ամբարտաւանութեան[39] փքացեալք, անհաւանք միմեանց[40] լինելով, զՔրիստոս Աստուած[41] հայհոյեն եւ զԱստուած Հայր[42] զայրացուցանեն. եւ զոր ոչ գիտեն՝ ձեւանան գիտել[43], եւ զսակաւն[44], զոր լուեալ են[45] յիմաստնոցն[46]՝ զայն կատարեալ գիտութիւն կարծեն: Զի թէ Պաւղոս, որ զՔրիստոս յինքն[47] ունէր եւ յերրորդ[48] յերկինս յափշտակեցաւ եւ զանճառելին լուեալ[49]՝ ասէր. Փոքր ի շատէ գիտեմք[50] (Ա. Կոր. ԺԳ. 9), եւ առ կարծողսն գիտելոյ ասացեալ է[51]՝ Զեւ եւս գիտաց որպէս արժանն[52] էր (Ա. Կոր. Ը. 2): Զի՞նչ գիտեն եւ որ ի ցնորս աշխարհիս զբաղեալ[53] են եւ պաշտաւնեայք[54] եկեղեց[ւ]ոյ՝ ուտելոյ եւ ըմպելոյ միայն պարապեալք[55] եւ ըմբռ-

23 ժողովէ Ա
24 զմայր Ա
25 ամենայն] ԱԲԳ
26 ուղղութեանցն ԲԳ
27 եւ] Ա
28 մարգարէիցն ԱԴ
29 մարգարէս Դ
30 նոյնպէս եւ] նմանապէս ԱԲԳ
31 հայրապետացն ԱԴ. հայրապետաց] վարդապետացն եւ հայրապետացն ԲԳ
32 բարոյ ԱԲԳ
33 ի] ԱԴ
34 եւ] Դ
35 առ] ԱԲԳ
36 աստուածանալ Ա
37 զորն Գ
38 այժմ եւ այնպէս Գ
39 ամբարտաւանութեամբ Ա
40 միմեանց] Դ
41 Աստուած] Դ
42 հայր] Դ
43 ձեւանալն գիտեն Ա
44 սակաւն Դ
45 եան Ա
46 յիմաստանոց ԱԲԳ
47 յինքեան ԲԳ
48 երրորդ Բ
49 լուել Ա, լուաւ ԲԴ
50 + եւ այլն ԲԳ
51 ասացել Ա
52 արժան Ա
53 գիտեն... զբաղեալ] գիտէ նորից նորս աշխարհի զբաղեալ ԲԳ, որ զբաղեալ են ի ցնորս աշխարհէ Դ
54 պաշտաւնայք Ա
55 միայն պարապեալք ուտելոյ, ըմպելոյ Ա

նեալք ի զանազան ախտս: Եւ որ կարի[56] զարմանալին է, խաբեալք ի չարէն, չշատանան իւրեանց վնասիւն[57], այլ փութան զայնոսիկ, որ յուղիղն[58] գնան ճանապարհ[59], եւ զնոսա մոլորեցուցանեն[60], թողեալ[61] զերից սուրբ ժողովոց[62] զհաւատս[63] ուղիղս[64]:

[Գ.] Առաջինն[1], որ եղեւ ըստ հրամանի բարեպաշտ թագաւորին Կոստանդիանոսի վասն Արիոսի, որ արարած ասէր զՈրդին Աստուծոյ: Եւ ժողովեալ[2] ի Նիկիա Մակարիոս[3] Երուսաղեմի, Ռստակէս ի[4] Հայաստանէ, Յուլիոս ի[5] Հռոմայ եւ այլք ՅԺԸ, որոց յայտնի են անուանք, այլ զի մի լիցուք երկարաբանք՝ եւ վասն ձեր մանաւանդ, որ[6] անպարապ էք ընթերցմանց:*

Երկրորդ ժողովն առ մեծին Թէոդոսիւ եղեւ ի Բիւզանդիա[7] վասն Հոգեմարտին Մակեդոնի, որ նուազ ասէր զՀոգին Սուրբ, քան զՀայր եւ զՈրդի, եւ էր[8] մեռեալ նախ քան գումարել[9] ժողովոյն: Եւ գլխաւորք ժողովոյն[10] էին Կիւրղոս Երուսաղեմի, Տիմոթէոս Աղեքսանդրի[11], Մեղիտոս Անտիոքայ[12], Գրիգոր Նիւսացի[13], Դամասոս ի Հռոմայ, Գրիգոր Աստուածաբան[14], Ներսէս ի Հայաստանէ եւ այլք՝ ՃԾ հարք հոգեւորք, որք[15] խոստովանեցին զՀոգին Սուրբ՝ Հաւր եւ Որդւոյ հաւասար եւ փառակից, եւ նզովեցին ի մեռեալս ընդ ամենայն հերձուածողս[16] զՄակեդոն:

Եւ երրորդ ժողով եղեւ յաւուրս Թէոդոսի[17] Փոքու վասն աղանդին[18] Նեստորի Անտիոքացւոյ[19], որ էր[20] ի Բիւզանդիոն[21] ե-

56 որ զկարի ԲԳ
57 վնասուն ԲԳ
58 ուղեղն Ա, ուղիղն ԲԳ
59 ճանարի Ա
60 մոլորեցուցանել ԲԳԴ
61 + եւ Դ
62 ժողովին Ա, ժողովոյն ԲԳ, ժողով Դ
63 հաւատս Գ
64 ուղեղս ԱԲ

[Գ.] * Ե-ն սկսում է այստեղից, սակայն նկատելի կրճատումներով
1 առաջին ԲԳ
2 ժողեալ Ա
3 Մակար ԲԳ
4 ի] Ա
5 ի] ԱԴ
6 որ] զի ԱԲԳ
7 Բիզանդիա Ա, Բազանդիա Գ
8 եր Ա, + նա Բ
9 գումարեալ Բ
10 ժողովին Ա
11 Աղէկսանդրի Ա, Աղէքսանդրի Դ
12 Մելիտոս Անտիոքա ԲԴ
13 Նիւսեայ Դ
14 Աստուածութեանն Դ
15 որք] Ա
16 հերձուածողսն Ա
17 Թէոդոսու ԱԲԳ
18 աղանդոյն ԲԳ
19 Անդիոքացո Ա
20 էր] ԱԴ
21 Բիզանդիայ ԱԲ, Բուզանդիա Գ

պիսկոպոս[22] եւ սկսաւ զխոտոր վարդապետութիւնն[23] ուսուցանել զՊաւղոսէ Սամոսատացւոյ[24], զոր եառ[25] Թէոդորոս Մամուեստացի[26] եւ ի նմանէ Նեստորիոս, զի ո՛չ խոստովանէին զԲանն մարմին եղեալ, այլ ի մարմին բնակեալ, եւ շնորհաւք Որդի ասէր զ՚ի Մարիամայ ծնեալն[27]: Զոր գիտացեալ Կիւրղի Աղեքսանդրացւոյ[28] եպիսկոպոսապետի[29]՝ գրէ երիցս անգամ ի բաց[30] դառնալ ի հայհոյութեանցն եւ միաբանիլ[31] ի[32] կաթողիկէ եկեղեցի[33]: Իսկ Նեստոր զընդդէմն առնէ[34] պատասխանի, վասն որոյ հարկաւորի Կիւրեղ գրել առ թագաւորն՝ հրաման տալ ժողովոյ: Եւ հրամայէ[35] ժողով լինել[36] յԵփեսոս: Եւ ժողովեցան ՄԼ եպիսկոպոսք[37] յիւրաքանչիւր գաւառէ. Յոբնաղ Երուսաղեմի, Կիւրեղ Աղեքսանդրացի[38], Մոմնոս[39] Եփեսոսի[40] եւ Սահակ Հայաստանի միաբանի գրով ընդ նոսա, Կեղեստիանոս ի Հռոմայ[41], զոր նզովեալ[42] զՆեստոր՝ հալածական [առան] զնա[43] ի կողմանս Մծբնայ, եւ անդի վարեցաւ ի Խուժաստան: Զկնի[44] այսորիկ կալաւ զաթոռն Բիւզանդիոյ[45] Մաքսիմիանոս եւ ապա՝ Պրոկղոս[46], յետ որոյ՝ Փլաբիանոս[47] եւ սկսաւ ուսուցանել զՆեստորի մոլորութիւնն[48]:

Իսկ Եւտիքէս[49] ոմն, որ էր վանական ի կղզւոյն, առաջրէր[50] ընդդէմ Փլաբիանոսի[51] եւ ոչ[52] խոստովանէր ճշտութեամբ[53] առնուլ մարմին ի Մարիամայ, այլ

22 + էր Դ
23 զխոտորել վարդապետութիւն Ա
24 զՊաւղոսի Սամաստացւոյ ԱԲ
25 էառ Ա, առ ԲԳԴ
26 Մամուեստացի] Տարսոնացի ԱԲ, + եւ ի նմանէ Թէոդորոս Մամեստացի ԱԲԳ, Դիոդորոս Գ
27 ծնեալ Գ, ծնեալի Դ
28 Աղեքսանդի Ա, Աղէքսանդրացի Գ
29 եպիսկոպոսի Դ
30 ի բաց] առ նա ԲԳԴ
31 միաբանել Ա
32 ի] ԱԳԴ
33 եկեղեցւոյ Գ, եկեղեցին Դ
34 առնէր ԱԲԴ, + եկեղեցի Բ, եկեղեցին Դ
35 հրամաէ Ա
36 ժողով լինել] ժողովել Ա
37 ՄԼ] ՄԱ, ՄԼ] ամենայն Դ, եպիսկոպոսք] եպիսկոպոս Ա
38 Աղէկսանդրիայ Ա, Աղեքսանդրի ԲԳ
39 Մեմնոն Դ
40 եփեսացոց Ա
41 Հռովմայ ԱԲԴ, Կելեստիանոս ի Հռօմայ Դ
42 նզովել Ա
43 զնա] ԱԴ
44 զկնի] իսկ զկնի ԲԳԴ
45 Բուզանդիա Ա, Բիւզանդիա ԲԴ, Բուզանդիոյ Գ
46 Պրոկղիոս
47 Փլաբիանոսի
48 մոլորութիւն Գ
49 Եւտիքէ Ա
50 առագրեաց Դ
51 Փլիբանոսի Ա
52 ոչ] որ Գ
53 ճշմարտութեամբ ԱԳ

Նմանաւորութեամբ[54] մարմնոյ, զի կերպարանաւք գտաւ իբրեւ զմարդ: Եւ զայս գիտացեալ թագաւորին՝ հրամայէ[55] դարձեալ ժողով լինել[56] յԵփեսոս: Եւ ժողովեցան եպիսկոպոսունք ՄԼ[57]. Յոբնաղ Երուսաղեմի, Դիոսկորոս Աղեքսանդրի[58], եւ նզովեցին զԵւտիքէս: Եւ նա զղջացեալ ստութեամբ՝ խոստովանի առնուլ մարմին ճշտութեամբ[59] եւ յետոյ ի նոյն դառնոյ յաղանդ[60]:

Իսկ հաւանեալքն Փլաբիանոսի՝ հաստատել կամելով զԲ. բնութիւնն[61] [...], ոչ հաւանի Դիոսկորոս, այլ նզովէ զՓլաբիանոս[62], որ յետ է. աւուր սատակեալ լինի[63] ի բարկութենէ Աստուծոյ: Եւ սահմանեն այսպէս. Որ ոք ոչ խոստովանի զՔրիստոս մի բնութիւն մարմնոյն եւ Բանին[64] վասն անճառ միութեանն[65]՝ նզովեալ լիցի[66]: Զի զերկաքանչիւրսն[67] նզովեցին զաղանդ[68] եւ ըստ ցուցելոյ պատճառիդ լինի ժողով չորրորդ:*

Իսկ զկնի Թէոդոսի թագաւորէ Մարկիանոս, եւ յերկրորդ ամի թագաւորութեանն իւրոյ հրամայէ ժողով լինել ի Քաղկեդոն, ի մայրաքաղաքին[69] Բիւթանացւոց՝ քինախնդիր[70] լեալ լուծմանն Նեստորի եւ նորին համախոհ[71] եպիսկոպոսացն, զի[72] էր ինքն նորին աղանդովն եւ շարժեալ լինէր[73] ի Պողքերայ[74] զուգակցէ իւրմէ, որ էր քոյր թագաւորին Թէոդոսի եւ սիրելի Փլաբիանոսի, առաւել յորդորէր[75] ժողով գումարել յաղանդակցացն[76] Նեստորի եւ դարձուցանել զՆեստոր, զի տակաւին կենդանի էր ի Խուժաստանի:

Եւ ի գալն Նեստորի հասանի բարկութիւնն Աստուծոյ ի վերայ նորա[77], եւ եղեալ որդնալից՝ սատակեցաւ: Իսկ գումարեալքն ի

54 նմանութիւն ԲԳ, նմանութեամբ Դ
55 հրամաէ Ա, հրամայէր ԲԳԴ
56 դարձեալ ժողով լինել] դարձել Ա
57 ՄԼ] Լ Դ
58 Աղէքսանդրացի Դ
59 ճշմարտութեամբ ԱԳԴ
60 աղանդ ԱԲԳ
61 բնութիւն ԱԴ
* Այստեղ բնագրական տողի կորուստ է ենթադրելի
62 Փլաբիանոսի ԱԲԳ
63 սատակեալ լինի] սատակել լինի Ա, լինի] ԲԳ
64 բանին եւ մարմնոյն ԲԳ
65 միութեան Դ
66 եղիցի Դ
67 զերկանչիւրսն Բ
68 աղանդ ԱԲԴ
69 մայրաքաղաքն Բ, մայր քաղաքն Գ
70 քենախնդիր Դ
71 համախոհից Բ, համախոհակից Գ
72 զի] զոր ԲԳ
73 շարժէր Դ
74 + ի Դ
75 յորդորէ Դ
76 աղանդակցացն ԱԲԴ
77 ի վերայ նորա] Ա

Քաղկեդոն ՈԼՁ[78] եպիսկոպոսք, զի կրկին առնէ[79] զթիւ եպիսկոպոսացն, քան զոր արարն[80] Կոստանդիանոս, փառասիրութեան ախտիւ, եւ էին գլխաւորք Յոբնաղ Երուսաղեմի, Դիոսկորոս Աղեքսանդրի, Լեւոն Հռոմայ[81], զի թէպէտ ինքն ոչ եկն[82] ի ժողովն, այլ[83] ետ տանել զԴԺ-աներորդ[84] գլխոցն զառաջագոյն[85] առ Փլաբիանոս զգրեալն[86], զի այնու հաւանեսցին[87] ժողովեալքն ի Քաղկեդոն[88], զոր խոստեալ[89] էր երանելին Դիոսկորոս յերկրորդ ժողովոյն Եփեսոսի: Եւ առեալ զգրեալսն Լեւոնի, թագաւորն ընկալաւ եւ ետ զատուցանել ի միաբանութենէ եկեղեցւոյն զերանելին Դիոսկորոս[90]: Եւ խնդրեաց ի ժողովոյն դնել[91] սահման հաւատոյ ըստ գրեցելոյն Լեւոնի հայհոյութեանցն:

Իսկ ուղղափառ իշխանքն, որ էին ի ժողովին[92], ասացին առ եպիսկոպոսունսն. Այս է ժամանակ ճգնութեան ձերոյ[93] ի վերայ սուրբ հաւատոյս, զի հաստատուն[94] ունիցիք զաւանդութիւն[95] հարցն խոստովանութեան: Իսկ եպիսկոպոսունքն միաբանեցան ասել. Ոչ ումեք է իշխանութիւն[96] ըստ հրամանի կանոնաց դնել սահման հաւատոյ, զի բաւական են մեզ եղեալ սահմանքն[97] ի Նիկիա եւ ի Բիւզանդիա[98] եւ [յ]Եփեսոս: Յայնժամ հրամայեաց թագաւորն տալ ի պահեստի[99] զեպիսկոպոսունսն հանդերձ իշխանաւքն[100] եւ գումարեաց[101] ի վերայ նոցա զինազգեաց զաւրականս, զի թէ ոչ հնազանդեսցին կամաց թագաւորին՝ եղիցին պատուհասեալք[102]: Եւ մեծաւ երկիւղիւ էին ի տարակուսանս, թէ զիա՞րդ հնար լիցի զերծանիլ ի պատժոցն[103]: Յայնժամ Յոբնաղ Երու-

78 ՈԼՁ.] զճԼՁ. Բ
79 առնէ] արասցէ Դ
80 արար Դ
81 Հոռոմայ Ա, Հռովմայ Դ
82 եկն] երեկ Դ
83 այլ] ԱԴ
84 զԴԺ.աներորդ] զԴԺ.երրորդ Ա, զչորեքտասաներրորդաց Գ, զերեքտասաներորդաց Դ
85 զյառաջագոյն ԲԳԴ
86 զգրեալսն ԲԴ, գրեալսն Գ
87 հաւանեցին Գ
88 ի Քաղկեդոնիա] Քաղկեդոնեայ Ա, Քաղկեդոնիա Բ. Քաղկեդոնիայ ԳԴ
89 էր խոստեալ ԱԲԳ
90 յերկրորդ ժողովոյն... Դիոսկորոս] ԱԲԳ
91 դնեալ Ա

92 ժողովն ԱԲԳ
93 այս է ճգնութեան ծերոյ ժամանակ Գ
94 զհաստատունն ԲԳ
95 զաւանդութեան Ա
96 իշխանութեան Ա
97 եղեալ սահմանքն] եղեալքն Դ
98 Բիւզանդիայ ԱԲԴ, Բուզանդիա Գ
99 պահեստ Գ
100 իշխանք հանդերձ ԲԳ
101 գումարեալ Դ
102 եղիցին պատուհասեալք] պատուհասեսցին Դ
103 ի պատժոցն զերծանել Ա

սաղեմի եպիսկոպոսն[104] հրամայեաց[105] Ասկղեպիադայ[106] սարկաւագի[107] Կոստանդնուպաւլսի[108] առնել սահման հաւատոյ[109] եւ դնել ի նմա[110] յԲ. բնութեանց զմինն[111] խոստովանել, որում առ երկիւղի[112] հաւանեալ[113] եպիսկոպոսացն, զի թերեւս հնար լիցի այնու[114] զերծանել, եւ ետուն զգրեալսն առ թագաւորն:

Իսկ թագաւորն ոչ ընկալաւ, այլ ետ տանել զգիրս հայհոյութեան գլխոյն[115] Լեւոնի, զոր ընթերցեալ մասն ինչ ի գլխոցն[116]՝ միաբան ասացին եպիսկոպոսքն[117]. Ոչ հաւանիմք[118], զի Պաւղոսի Սամոսատացւոյ[119] հայհոյութիւնն[120] է. այսպէս եւ ոչ Նեստոր յանդգնեցաւ ի հայհոյութիւն: Յայնժամ թագաւորն հանդերձ կնաւն իւրով եկն առ ժողովն եւ, որպէս ասի[121], եղեւ առ նոսա աւուրս երիս: Իսկ ժողովեալքն ի Քաղկեդոն՝ ոմանք յերկիւղէ[122] եւ ոմանք ակնառութեամբ աղտեղի կնոջ[123] նորա եղեն հաւանեալք[124] նորաձայնութեան պիղծ[125] հայհոյութեան թղթոյն[126] Լեւոնի, զոր նզովեցին յառաջագոյն եւ[127] եղեն ընդ ինքեանց[128] նզովիւք[129]: Եւ[130] ընկալան զլուծեալն Թէոդորիտոս[131]՝ զաշակերտն[132] Նեստորի, զորմէ ասի գլխակալ ժողովոյն, եւ զԻբաս Եդեսացի[133]՝ զհամախոհն Նեստորի[134], զոր եւ գրեցին սահման հաւատոյ ըստ Լեւոնի եւ Թէոդորիտայ մոլորութեան[135], որ հաւասարին[136] Նեստորի պղծոյ եւ Թէոդորոսի[137] եւ Դիոդորի[138] եւ Պաւղոսի, եւ Արտեմոնի կատարեալ հայհոյութեանն[139], յո-

104 եպիսկոպոսն] հայրապետն Դ
105 հրամաեաց Ա
106 Ասկղեպիադայ Դ
107 սարկաւագին Ա
108 Կոստանդինուպաւլսի Ա
109 հաւատոյ] հաւանեալԴ
110 ի նմա] ԱԴ
111 զմին ԱԴ
112 երկեղի ԱԴ
113 հաւանել ԱԴ
114 այսու Դ
115 գլխոյ Դ
116 գլխոյն ԲԳ
117 + Այսոցիկ Ա, + թէ այսոցիկ Դ
118 հաւանիմք] հաւատամք Դ
119 Սամաստացոյ Ա, Սամոստացոյ Բ
120 հայհոյութիւն ԱԴ
121 ասէ Դ
122 յերկեղէ ԱԴ
123 կնոջն Ա
124 հաւանեալ ԲԳ, հաւանել Դ
125 պեղծ Ա
126 թխտոյն ԲԳ
127 եւ] ԱԲԳ
128 իւրեանց Դ
129 նզովիւքն ԱԲԳ
130 եւ] ԱԲԳ
131 Դիոդորիտոս Բ, Դիոտորիտոս Գ
132 զաշակերտսն Ա
133 զեդեսացի ԲԳ
134 զորմէ ասի... Նեստորք Ա
135 մոլութեանն ԲԳ, մոլորութեանն Դ
136 հաւասար է ԱԲԳ
137 Թէոդորիտոսի Դ
138 Թեւդորի Դ
139 հայհոյութեանց Դ

րում կայ յետ սակաւուց[140] այսպէս. Խոստովանիմք ամենեքեանն[141] միաբան զՏէր մեր Յիսուս Քրիստոս ըստ Աստուածութեանն[142] ի Հաւրէ եւ ըստ մարդկութեանն[143] ի կուսէ[144] միածին, յերկուց բնութեանց[145]՝ մի դէմ եւ մի անձն միաւորելով: Եւ զի մի իւրեանց ամբարշտութիւնն[146] յայտնի երեւեսցի՝ զՆեստոր պատճառանաւք նզովեցին:

Իսկ բազումք[147] ի գլխաւորաց[148] քաղաքին Կոստանդնուպոլսի, որք[149] Նեստորի հաւանեալք էին եւ կարծեցին, թէ ճշմարտութեամբ նզովեցաւ Նեստոր[150], զարմացեալք ասացին առաջի[151] թագաւորին, որպէս ի նոցունց[152] Քաղկեդոնացւոց պատմութեանց[153] ցուցանի՝ ասեն. Սուրբքն[154] զի՞ նզովին, զի թէ հաւատ[155] Նեստորին սահմանեցին՝ զնա զի նզովեցին:

Իսկ թագաւորն բարկացեալ սաստեաց[156] նոցա[157] զի լռեսցեն: Այսպէս[158] ի նոցունց իսկ[159] յայտնեալ՝ կեղծաւորութիւն[160] նոցա ծանուցաւ ամենեցուն[161], որ եւս առաւելագունաւք յայտնի է ուրացութիւն նոցա՝ զի որք ի Քաղկեդոն ժողովեալ էին եպիսկոպոսունք՝ նոյնքն[162] յԵփեսոսի ժողովն էին[163] եւ գրով սահմանեալ ասացին. Որ ոք ասացէ[164] զՔրիստոս երկու բնութիւնս՝ նզովեալ լիցի[165] եւ լուծան[166] ի պատուոյ[167] Նեստոր եւ նմանիք նորա: Իսկ ի[168] Քաղկեդոն կործանեալք ի յերկեղէն[169] եւ որք ձեռնարկաւ[170] ուրացեալք[171] Քրիստոս՝ ասացին. Որ ոչ ասէ զՔրիստոս երկու բնու-

140 սակաւուց] սակաւ աւուրց Ա
141 ամենայնքս Գ, ամենեքեանն] Դ
142 աստուածութեան Դ
143 մարդկութեան Դ
144 կուսէն Դ
145 + ոչ ինչ բառնալով զատկութիւնսն իւրաքանչիւր բնութեանցն եւ Ա
146 անբարշտութիւն Դ
147 բազում Ա
148 գըլխաւորաց] պաշտօնաւորաց Դ
149 որ Դ
150 նզովեցին զՆեստոր ԲԳ
151 առաջի] Դ
152 + ի Դ
153 պատմութիւն ԱԲԳ
154 սուրբն Բ, սուրբքն] Գ
155 հաւատք Դ
156 սաստեաց] Դ
157 նոցայ ԱԴ
158 այսպէս] որպէս Գ
159 իսկ] Ա
160 զկեղծաւորութիւն Գ
161 ամեցուն Ա
162 նոյն Ա
163 ժողովէին ԲԳ
164 ասէ Դ
165 լինի Ա, եղիցի Դ
166 լուծաւ ԱԲԳԴ
167 պատւոյն Դ
168 ի] ԲԳ
169 յերկիւղէ ԱԲԳ
170 ձեռնարկաւ] ձերկեղէն Դ
171 եւ որ ձեռնարկաւ ուրացեալք] ձեռնարկաւորացեալք Ա, որք] որ ԱԲԳ

թիւն՝ նզովեալ լիցի, եւ ընկալան ի պատիւ զհաւանեալսն Նեստորի եւ զաշակերտեալսն[172] իւր:

Իսկ որք[173] ոչ հաւանեցան կործանական հայհոյութեան ժողովոյն եւ[174] անաւրէն սահմանադրութեանն՝ զնոսա աքսորեցին՝ զՊետրոս Անտիոքացին[175] եւ[176] զՏիմոթէոս, եւ զԱնատոլիոս[177] զնորին եղբայր[178], եւ զԴիոսկորոս Աղեքսանդրի[179] եպիսկոպոսն նախ ի Կիզիկոն[180] եւ ապա յԱրակլիա՝ բարի խոստովանութեամբ եւ վկայութեամբ ի Քրիստոս կատարեալ[181] սուրբն Դիոսկորոս:

[Դ] Եւ էր խռովութիւն ի սուրբ եկեղեցի Աստուծոյ զամենայն աւուրս Մարկիանոսի[1] եւ Լեւոնի[2] իբրեւ ամս[3] ԻԴ: Եւ[4] ըստ ասացելոյ[5] պատճառիդ Ե-երորդ ժողով եղեւ ի Քաղկեդոն, յաղագս որոյ եւ բարեպաշտ թագաւորքն[6] Յունաց[7] Անաստաս եւ Զենոն յաւուրս[8] իւրեանց բարձին զաւանդ խոստովանութեան ժողովոյն Քաղկեդոնի՝ նզովիւք:

Նոյնպէս եւ հարքն մեր ոչ ընկալան եւ ոչ գնացին յայն ժողով[9]: Եւ թէպէտ Յուստիանոս ի թագաւորելն[10] իւրում կամեցաւ[11] զտաւնս տերունականս, զոր եդեալ էր Յակոբայ առաքելոյ ընթերցուածաւք[12] յԵրուսաղէմ[13], փոխել եւ զտեառնընդառաջն[14] ըստ ծննդեանն առնել եւ ոչ ըստ մկրտութեան[15], զոր սովոր էին ի միասին առնել[16], որպէս եւ առնեն[17] Հայք, ոչ կարացաւ[18] եւ ոչ ըստ աղանդոյն[19] Քաղկեդոնի ժողովոյն[20] հաստատել զտաւնն, այլ բազում նշանաւք[21] յանդի-

[172] զաշակերտս Դ
[173] որ Դ
[174] եւ] Ա
[175] Անդիոքացին Ա
[176] եւ] Դ
[177] զԱնատոլիլոս Ա, զԱնատոլիս Գ
[178] եղբայրն Դ
[179] զԱղեկսանդրի Ա, զԱղէքսանդրի ԲԳ
[180] Կիղիկոն
[181] բարի վկայութեամբ եւ խոստովանութեամբ ի Քրիստոս Ա

[Դ.] [1] Մարկիանոսի] Դ
[2] Ղեւոնի Ա
[3] զամս Դ
[4] եւ] Դ
[5] ասացելոյ] ցուցանելոյ Դ
[6] թագաւորն ԱԴ
[7] Յունաց] ԲԳ
[8] յաւուր Գ
[9] ժողովն Դ
[10] թագաւորեալն ԱԲԳ
[11] կամեցաւ] Դ
[12] ընթերցուածք Դ
[13] + կամեցաւ Դ
[14] զտեառնընդառաջի Դ
[15] մկրտութեան ԲԳ
[16] առնել միասին Դ
[17] + այժմ Դ
[18] կարացաւն Ա, կարաց առնել ԲԳ
[19] աղանդին Դ
[20] ժողովոյն] Դ
[21] նշաւք Ա

մանեալ լինի, որպէս ունի Պատմութիւնն:

Իսկ երկրորդն[22] Յուստիանոս իբրեւ թագաւորեաց, եւ նա ընկալաւ զժողովն[23] Քաղկեդոնի, քանզի[24] պատրէին զնա, թէ մեծ ճգնաւորն եւ սիւնակեացն[25] Սիմէոն ընկալեալ է զժողովն Քաղկեդոնի, եւ ահա գիր խոստովանութեան նորա եդեալ է ի տապանի Եփիմէի[26] ի Քաղկեդոնի: Եւ այլ ոմն նզովիւք հաստատէր, թէ ոչ է, զի իբրեւ հաստատեաց[27] Մարկիանոս[28] զժողովն, առաքեաց[29] զսահման ժողովոյն Քաղկեդոնի[30] առ Սիմէոն: Եւ ծանեաւ[31] հոգւով երանելին եւ ետ սպասաւորին հուր վառել[32] եւ հրամայէր[33] ձգել ի հուրն[34], ասելով՝ Նզովեալ[35] Մարկիանոս եւ ժողովն Քաղկեդոնի: Եւ զայս լուեալ Յուստիանոս եւ կամեցեալ ճշգրտել՝ գնացեալ սակաւուք եւ ետ բանալ զտապան[36] սրբոյն եւ հրամայէր սպասաւորին զնշխարսն հանել ի քղամիդն[37] իւր, զոր տարածեաց: Եւ իբրեւ սպառեցաւ՝ հարցանէր[38], թէ այլ ի՞նչ կայ, եւ ինքն հայցեալ ի տապանն՝ ոչ ինչ ետես եւ սկսաւ յոգւոց հանել[39] եւ ծեծելով զերեսն աւաղէր[40]՝ Ո՜հ, ապաշաւելով զհալածանսն եւ զսպանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի յԱղեքսանդր[41] եւ յԵրուսաղէմ: Եւ կամեցեալ նորա[42] բառնալ զաղանդ ժողովոյն Քաղկեդոնի[43]՝ հասանէ նմա մահ դաւով:

Նոյնպէս Պարսամու[44] ոչ ընկալաւ զժողովն Քաղկեդոնի. եւ նա չարաչար նզովիւք նզովէր եւս[45], զի ամենայն ազգաց քրիստոնէից չարի պատճառ[46] ժողովն եղեւ Քաղկեդոնի: Եւ թէպէտ[47] այլ ժողով բազում եղեւ ի[48] Յոյնս եւ ի Հռոմ՝ ըստ զանազան պատճառի եւ ժամանակի[49], այլ

[22] երկրորդ Դ
[23] ժողովն Բ
[24] քանզի] եւ Ա
[25] Սինիականն Ա, Սիւնականն ԲԳ
[26] Էփրիմէ Ա, Եւփիմիայի Դ
[27] հաստատեաց] առաքեաց Դ
[28] Մարկիոն Դ
[29] զժողովն առաքեաց] Դ
[30] Քաղկեդոնի] ԱԲԳ
[31] ծանեւ Ա
[32] վառեալ ԱԲԳ
[33] հրամաեր Ա
[34] հրամայէր ձգել ի հուրն] ետ ընկենուլ ի հուրն Դ
[35] նզովել Ա
[36] զտապանսն Ա
[37] քղամիթն Ա
[38] հարցանէ Դ
[39] հանել] ելանել ԱԲԳ
[40] աւաղէր] ասէր ԱԴ
[41] յԱղէքսանդր ԲԳ, Աղեքսանդր Գ
[42] նմա Դ
[43] Քաղկեդոն ԱԴ
[44] Պարսամա] սուրբն Պարսամ Դ
[45] եւս] եւ
Արդ[58], ցոյցք եւ որ ինչ նման դոցին երկու բնութեանն է, բայց հանդերձ Բանին միութեամբ, ըստ որում ասաց՝ Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն[59] յերկնից Որդին մարդոյ, որ էն յերկինս (Յովհ. Գ. 13): Արդ, ոչ զմարմնոյն[60] ասէ յերկնից բերեալ, թէպէտ եւ[61] ի մարմնի էր՝ ասաց զնոյն[62] լինել յերկինս եւ ի մարմնի[63], զի ոչ ի Հաւրէ բաժանեցաւ ի մարմին լինելով[64] եւ ոչ ի մարմնոյ՝ յերկինս գնալով. ամենայն ուստեք զմիութիւնն[65] տեսանեմք եւ ոչ զշարայարութիւն[66] ըստ[67] տումարին Լեւոնի եւ ժողովոյն Քաղկեդոնի: Յով-

---

[36] էր] Ա
[37] աճումնն Գ
[38] արեանն ԱԴ
[39] ի բաժակին] բաժանեն Ա
[40] բայց] այլ Դ
[41] տէրն ԲԳ
[42] կողին ի] Ա
[43] մկրտութեան ԱԲ
[44] Զեբեթեա ԱԲ, Զեբեթեայ Գ
[45] հարքն] Հայք Բ
[46] ի խորհուրդ] Գ
[47] մկրտութեան ԱԴ
[48] զմահս Գ
[49] զկենդանի աստուածութիւնն Դ
[50] յայտնէ Ա, յայտնի է Դ
[51] ջուրն ԲԳԴ
[52] նմին ԱԴ
[53] ...-ին ի քուն լինելն] Ա
[54] խռովել ԲԳ
[55] զծովն եւ ԲԳ
[56] խաղաղացուցանելն] դադարեցուցանելն Դ
[57] միացել ԱԴ
[58] Արդ] Այդ ԱԴ
[59] եթէ ոչ որ էջն] Ա
[60] ըստ մարմնոյն Գ
[61] թէպէտ եւ] Ա
[62] զնոյն ասաց Դ
[63] եւ ի մարմնի] Ա
[64] ի մարմին (մարմնի Դ) լինելով] Դ
[65] զմիութիւն ԱԴ
[66] ըստ շարայարութեան Բ, շարայարութիւն Գ
[67] ըստ] Ա

Հաննէս[68] աւետարանիչ գրէ. Արիւն Որդ[ւ]ոյն Աստուծոյ սրբէ զմեզ յամենայն մեղաց մերոց[69] (Ա Յովհ. Ա. 7), զի թէ[70] բաժանես զԱստուածութիւնն ի մարմնոյն՝ արիւն մարդոյ սրբել ոչ կարէ: Աստուածաբանն ասէ. Արիւն եւ չարչարանք լսելով մի՛ ի վայր անկցիս անաստուածաբար, անաստուածութիւն ասէ զարիւնն լոկ մարդոյ համարեալ[71]:

Արդ, տուաւ մեզ ջուրն ի մկրտութիւն եւ արիւնն ի հաղորդութիւն, զոր եւ Քրիստոս ի բերոյ որթոյ ասաց ըմպել[72] (Ղուկ. ԻԲ. 18), եւ որթն, որպէս մեկնէ Յոհան[73] Ոսկեբերանն[74], գինի եւ ոչ ջուր[75] բերէ եւ յանդիմանէ, ասելով՝ Ո՞ւր են որ[76] ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր առնուն: Թէպէտ եւ Յոյնք[77] լոկ ջրամատուցած ասեն[78], բայց ի կիր առնուլն զխառնուածն ցուցանեն[79]:

Ահա, յայտ է, թէ յաւուրս նորա չէր կարգ ջրոյն՝ որպէս ոչ տաւնելն[80] ի դեկտեմբերի, այլ ըստ կանոնացն[81] ի Զ-ն[82] յունվարի, զոր եւ գրէ[83] Սոկրատէս զմերժելն[84] Յովհաննու յեկեղեցւոյն մինչ տաւներ ընդ[85] յայտնութեանն[86] եւ զծնունդն, որպէս Աստուածաբան[87] ի Ծննդեան ճառին զծնունդն եւ[88] Յայտնութիւն անուանէ, ասելով[89]՝ Բայց[90] այժմ Աստուծոյ յայտնութեանս տաւն է, զի երեւեցաւ Աստուած մարդ[91] ծննդեամբ ի Կուսէ: Զնոյն եւ[92] Բարսեղ անուանէ ի Ծննդեան ճառին, ասելով՝ Անուն դիցուք տաւնիս Աստուծոյ Յայտնութիւն[93], եւ մարմնոյն Աստուածութեանն[94] միանալոյն է[95] յայտնութիւն[96]:

[ԺԵ.] Այլ[1] այնոքիկ, որ աղ եւ ձէթ[2] յաւելուն՝ զՀոգւոյն տալ

68 Յոհաննէս ԲԳ
69 մերոց] ԱԲԳ
70 եթէ Դ
71 համարեայ ԲԳ, համարել Դ
72 չըմպել Ա
73 Յոհան ԱԲԳ
74 Ոսկեբերանն] Դ
75 եւ ոչ ջուր] եւ ոչ բերէ Բ
76 որ] Բ
77 եւ Յոյնք] Յոյն Ա
78 ջրամատուցուցեն Ա
79 ցուցանէ ԱԲԳ

80 տօնել Դ
81 կանոնաց ԱԴ
82 -ն] Ա
83 գրել է Ա
84 զմերժեալն Ա
85 ըստ] ԱԲԳ
86 զյայտնութիւնն ԱԲԳ
87 Աստուածաբանն ԲԳ
88 եւ] ԱԲԴ
89 անուանէ, ասելով] անուանելով ԲԳ
90 բայց] Ա
91 Աստուած մարդ] Ա
92 եւ] ԱԲԳ
93 յայտնութեան Ա
94 աստուածութեամբն ԱԲԳ
95 միանալութիւն Գ
96 յայտնութիւնն ԱԴ
[ԺԵ.] 1 այլ] Դ
2 ձայթ Ա

զաւրինակ եւ զԱստուածութեանն[3], եւ[4] խմորոյն[5]՝ զաճման[6] մարմնոյն, եւ այս[7] բաժանման[8] տայ կարծիս յատուկ ունել յԱստուածութենէն[9]՝ այլ ասել զԱստուածութիւնն[10] եւ այլ զմարդկութիւնն[11]: Այլ զի պարզ Աստուածութեանն[12] միացաւ՝ բիծ եւ արատ ոչ ունելով, եւ հաց պարզ լինել խմորեալն ոչ կարէ, այլ ունի փքացումն նշանակ ամբարտաւանութեան[13], իսկ աղն եւ ձէթն[14] համեմելոյ[15] է աւրինակ, եւ մարդկային[16] հնարիցն ոչ էր[17] կարաւտ տերունական մարմինն[18], զի աղն Բանի Աւետարանին է[19] աւրինակ եւ ձէթն[20]՝ խորհուրդ մկրտութեան[21]:

Ի պատարագն[22] ոչինչ յարի, զի զաճելն[23] մարմնոյն տան միայն. Աստուածութեանն[24] անհնար[25] ասեն զաճելն, այլ ճշմարիտ միութեանն տան, զի եւ առ մեզ մարմինն աճէ: Սակայն Հոգւոյն[26] ներգործութեամբ աճէր մարմինն Տեառն[27]՝ բաւական[28] անապականութեամբ աճելն[29] ըստ աւրինակի մանանային:

[ԺԶ.] Իսկ Վիրք զողջոյն ամի[1] լուծանեն զչորեքշաբաթի[2] եւ զուրբաթ[3] եւ զկնի յարութեանն[4] պահեն, պատճառելով, թէ[5] Ծ. աւր պահել եւ Ծ. աւր[6] ուտել՝ այդ աստէն հատուցանել է: Ոչ յիշեն զասելն տեառն՝ Յորժամ վերասցի փեսայն՝ ապա պահեսցեն[7] (Մարկ. Բ. 20): Զայն պահեն, որ ոչ է[8] ըստ կանոնաց[9]: Որպէս

3 զաստուածութեան ԱԴ, զաստուածութիւնն Բ
4 եւ] Գ
5 խմորին Դ
6 զաճմանն Ա
7 այդ Դ
8 բաժանման] Ա
9 առնել (ունել Գ] յաստուածութենէն] ունել... Ա, առնել աստուածութենէն Բ
10 զաստուածութիւնն ասել Դ
11 մարդկութիւնն Գ
12 աստուածութիւնն ԱԲԳ
13 ամպարտաւանութեանն ԱԴ
14 ձայթն Ա, ձեթն Գ, ձէթ Դ
15 համեմելոց Գ
16 մարդկաին Ա, ի մարդկային Գ, ի մարդկան Դ
17 ոչ էր] զի չէր Դ
18 մարմին Դ
19 է] Դ
20 ձայթն Ա, զձէթն Գ, ձէթն ի Դ
21 մկրտութեանն Ա

22 պատարագ Դ
23 զաճեալն Ա, զաճեալ Դ
24 աստուածութեան Ա
25 + է ԲԳ
26 հոգոյն ԱԲԴ
27 աճէր... տեառն] ԲԳ
28 բաւական] բանին ներգործութեամբ անապական Ա
29 աճել ԱԲԳ
[ԺԶ.] 1 ամին Դ
2 զչորեքշաբաթի Ա, զչորեքշաբաթն Դ
3 զուրբաթն Դ
4 յարութեան Դ
5 թէ] Դ
6 պահել եւ Ծ աւր] Գ
7 պահիցեն Ա
8 է] Դ
9 + է Դ

Ասորիք զսկիզբն[10] աւուր[11] յերկոյն դնեն[12] եւ զչորեքշաբաթն եւ զուրբաթն[13] լուծանեն՝ հրէաբար թուելով, մոռացեալ[14] զգրեալսն[15] ի Մովսիսէ[16]. Եղիցի լոյս՝ (Ծն․ Ա․ 3) սկիզբն աւուրն[17]:

Զկրճատեալ[18] զանասունն աւրէնքն ի պատարագ[19] ոչ ընդունէր, զիա՞րդ[20] ի քահանայութիւն ընդունելի իցէ ըստ սովորութեանն Յունաց, եւ զի[21] ոչ ըստ բնութեան պատահեալսն աւրէնքն ընկալաւ, զիա՞րդ ի[22] մարդկանէ զեղեալսն ընկալցուք: Զի Որոգինէս ժպիրհ անուանեցաւ եւ Արարչին հակառակ լինել ցուցաւ, զի հարկաւ առաքինութիւնն եւ բռնադատելն[23] անընդունելի է: Զի ըստ բնութեանն եւ բազում կենդանիք ողջախոհք են, որպէս տատրակք[24] եւ արագիլք[25] եւ այլք, թէ խոտան լինել ըստ աւրինացն կարծէ ոք՝ ցուցցէ ըստ Աւետարանիս, թէ ոչ ընկալաւ ի սրբոց կամ ի ժողովոց, զի ի բազում ժողովս նզով[26] եդեալ է[27], եւ որք արարին առաքինութիւն կարծելով՝ որոշեցան, որպէս այնոքիկ, որ[28] յԱղեքսանդրիայն արարին:

[ԺԷ.] Տես որքա՛ն է մասնաւոր[1] բաժանիլս[2] ի Տէր հաւատացելոց, զի Հռոմայեցիք[4] բազմաւրեայ նշխարաւ[3] պատարագ[5] մատուցանեն[6] մտացածին պատճառաւ[7]: Կանոնք առաքելոցն ջերմն[8] հրամայէ[9] զհաց պատարագին հանել ի սեղանն: Նաեւ աւրէնքն[10] զհաց երեսացն յաւրն հրամայէր[11] դնել եւ առնուլ, որ էր[12] նշանակ Քրիստոսի միում աւուր պատարագելոյն ի վերայ[13] խաչին[14]:

10 զսկիզբն ԱԴ
11 աւուրն ԱԲԳ
12 դնելով Դ
13 զչորեքշաբաթն եւ զուրբաթն Ա
14 մոռացեալ] Գ
15 զգրեալն Ա
16 + ասաց Աստուած ԱԲԳ
17 աւուր Ա
18 զկրճատատեալ Ա
19 պատարագն ԱԲԴ
20 զիա՞րդ] ընդէ՞ր Դ
21 զ'ի] Ա
22 զ'ի Դ
23 բռնադատեալն ԱԴ
24 տատրակ ԱԲԳ
25 արագիլ ԱԲԳ

26 նզովս ԱԴ
27 եդեալ է] եդին յաղագս այսր Դ
28 որք ԱԴ
[ԺԷ.] 1 մասնաւոր] մարմնաւոր Ա
2 բաժանելս ԱԳ
4 Հռոմայեցիք Ա,Հռովմայեցիք ԳԴ
3 նշխարով Ա
5 պատարագին Դ
6 մատուցանեն] Դ
7 + զի ԱԲԳ
8 ջերմ Ա
9 հրամաէ Ա
10 աւրէնք ԱԴ, օրէնքն ԲԳ
11 հրայէ Ա, հրամայէ Դ
12 էր] են ԱԴ
13 վերա Գ
14 + Յունաց կիսապատարագն զոր ունի խորհուրդ, զի յեկեղեցի անխորհուրդ ոչինչ է, եւ Քրիստոս կատարեալ պատարագաւ ի վերայ խաչին Դ

Այլ Հռոմայեցւոցն[15] անկին լինել քահանայ աշխարհի՝ ընդդէմ է Առաքելական կանոնաց եւ բազում ունի վնասու պատճառս[16], զի անխտիր վարին[17] չնութեամբ եւ չար խառնակութեամբ, զոր եւ մերժէ կանոնք Եկեղեցւոյ[18] սրբոյ, զի քաւիչ թարգմանի քահանայն. զի թէ ինքն մեղուցեալ է[19]՝ զիա՞րդ[20] քաւէ զմեղս բազմաց, զի[21] ոչ միայն չէ քահանայ, նաեւ[22] ոչ հաղորդելի արժանի է ընդ աշխարհականս[23]: Զի թէպէտ եւ զմարդասիրութիւն[24] պատճառէ եւ համարձակի[25], զիա՞րդ եւ զիրաւունս մոռանայ եւ ընդէ՞ր ոչ լսէ զքարոզ պատարագին՝ Մի՛ ոք[26] յապաշխարողաց եւ[27] թէ աշխարհականաց ոչ տա[յ] թոյլ հաղորդիլ[28], որոց պետք են[29] ապաշխարութեան, որպէ՞ս անարժան քահանայ քահանայել[30] իշխէ[31], քանզի կանոնք ցուցեալ է[32], թէ զորս արժան է կոչել ի քահանայութիւն[33] եւ զորս[34] ոչ: Եւ որ զչնացեալն քահանայ ընդունի եւ զպատարագ նոցա՝ զԱստուած բարկացուցանէ[35] աշխարհի[36], քան թէ հաշտեցուցանէ:

Եւ ոչ ետ կանոնք մկրտել սարկաւագի[37] եւ ոչ[38] պատարագ մատուցանել[39], զիա՞րդ լոկ աշխարհականի արժան է հաղորդեցուցանել զհիւանդ[40], որպէս առնեն բազումք յազգաց. զի յոր կոչումն կոչեցեալ[41] է՝ արժան է նմին[42] կալ ըստ առաքելոցն[43] (Հմմտ․ Ա․ Կոր․ Է․ 20․ Եփես․ Դ․ 1):

Կանոնք[44] ի հասարակաց տան ոչ հրամայեն[45] պատարագել, բայց միայն ըստ վտանգի, զիա՞րդ ի փողոցս եւ հրապա-

15 Հռովմայեցւոյն Ա, Հռոմայեցիք ԲԳ, Հռովմայեցւոց Դ
16 վնասս պատճառ Գ
17 վարեն Ա
18 եկեղեցոյ ԱԲԴ
19 մեղացել ԱԴ
20 + կարէ Դ
21 զի] եւ Դ
22 նաեւ] եւ Դ
23 աշխարհականսն Դ
24 զմարդասիրութիւնն ԱԴ, + Աստուծոյ Դ
25 համբարձակի ԱԴ
26 մի ոք] թէ մի Ա
27 եւ] Ա
28 հաղորդել Ա
29 էն ԱԳԴ

30 քահել Ա
31 իշխեսցէ
32 ցուցեալ է] Ա
33 կոչելոյ քահանայութեան Ա
34 զոր Ա
35 բարկացանէ Ա
36 աշխարհի, քան թէ հաշտեցուցանէ] Դ
37 սարկաւագի] ԱԳԴ
38 + սարկաւագի Ա
39 մատուցանել պատարագ Դ
40 զհիւանդս Դ
41 կոչեցել ԱԲ
42 է նմին] էին ԲԳ, + ինձ Դ
43 առաքելոյն ԲԳ, առաքելոց Դ
44 կանոնքն Դ
45 հրամաեն Ա

րակս[46], ուր ոչ է կանգնեալ[47] սեղան ըստ կանոնաց եւ ոչ խնկարկութիւն, եւ ոչ լուսաւորութիւն, եւ անպատրաստ, եւ անարժան հաղորդին[48]: Զի որպէս արհամարհանաւք շինեցաւ եկեղեցին՝ իբր տղայոց[49] խաղ, նոյնպէս եւ[50] հաղորդին քամահանաւք:

Զվրան[51] վասն զաւրաց թոյլ ետ կանոնք[52], այլ զաւրէն բազորսաց[53] առնել խուճակ խուղ[54], մանաւանդ ուր հնար գոյ եկեղեցի լինել[55]՝ յո՞ր կանոնաց է: Յայտ է[56]՝ [յ]արհամարհութենէ լինել, թէպէտ եւ այլ ազգ[57] ինչ պատճառեն:

Նոյնպէս եւ[58] զպահս ունին հեշտութեամբ եւ արհամարհանաւք. զճուկն[59] եւ զձէթ[60] եւ զինի պահոց անուանեն: Կանոնք առաքելոցն ի շաբաթու[61] եւ ի կիւրակէի[62] հրամայէ[63] լուծանել զպահս, յորում[64] եւ պատարագելն է[65], այլ չեն յայտ արարեալ[66] զպահոց եւ զտաւնից[67] կերակրոց[68]: Յայտ է, զի[69] զմիս միայն արգելու[70] ուտել[71], զի զատկին հրամայէ[72] զենուլ զառնն[73]: Ապա եւ[74] թան, եւ պանիր, եւ իւղ, եւ ձուկն, եւ ձէթ[75], եւ գինի ըստ հրամանի նոցա տաւնի է, զոր բազում ազգ[ք] պահոց արարին: Այլ յամենայն աւուր[76] չէ պարտ ուտել[77] ի Գրոց, եւ թէ ոք պատճառէ զկանոնք, թէ ըստ կարի պահք հրամայեցաւ[78], որպէս պատմէ Սոկրատ՝ զկամաւոր պահոց ասէ, ոչ ի[79] կարգելոց ի կանոնս[80]: Զի ի Կանոնաց առաքելոց չորեքշաբաթ եւ ուրբաթ ի պահս գրեալ[81] է: Թէ[82] յամենայն

46 ի հրապարակս] յառապարս Դ
47 կանգնել ԱԲԳ
48 հաղորդեն Ա
49 տղաոց Ա
50 եւ] ԱԲԳ
51 զվրանս Ա, զվրանն Դ
52 կանոնքն ԱԴ
53 բազորսդ Դ
54 խուղ] ԱԲԳ
55 լինել] շինել Դ
56 է] ԱԲԳ
57 ազգ] Դ
58 + ազգ Ա
59 զձուկն Ա
60 զձայթ Ա
61 շաբաթս Գ
62 կիւրակէի Դ
63 հրամաէ Ա
64 որում Ա
65 պատարագեալն Ա
66 արարել ԱԲԴ
67 տօնից ԲԳ
68 կերակուր Դ
69 + եւ Ա
70 արգու Ա, արգելուն Դ
71 չուտել ԲԳԴ
72 հրամաէ Ա
73 զառ Ա, զառն Դ
74 եւ ապա Դ
75 ձայթ Ա, եւ ձէթ] Դ
76 ամենայն ազգ Ա
77 չէ պարտ ուտել] ուտել չիք Դ
78 հրամաեցաւ Ա
79 ի] ըստ Ա, ի] Դ
80 ի կանոնս] ի պահս (զպահս Գ] ըստ կանոնաց ԱԲ
81 գրել Ա
82 եթէ ԱԴ

աւր[83] ուտէ[84] ոք եւ ըմպէ՝ ցուցցէ, թէ զո՞ր պահէ, զի զատ ի մսոյ Գիրք վկայութեամբ զամէն մի ասեն[85] յուտել եւ յըմպել եւ ի[86] պահել: Առաքեալ մարմին ասէ, եւ Վիրք՝ ջուր:

Զխաչ եւ զեկեղեցի[87] ոչ աւրհնեն Վիրք, զի կանոնք զսեղան[88] միայն յիշեն[89] աւրհնել, բայց արդ տեսանեմք, զի յայլ խաչէ մասն դնեն, եւ այն նոյն է, զի եւ ոչ այն է աւրհնեալ[90]: Զի թէ այդպէս էր[91]՝ քահանայ զի աւծեալ է՝ զորդին չէ արժան աւծանել, եւ հայրն մկրտեալ է[92]՝ զորդին չէ պարտ մկրտել[93]: Արդ, կամ չէ ի դէպ դնել եւ[94] կամ՝ յաւրհնելոյ[95] դնել, կամ[96] աւրհնել եւ աւծանել[97], զոր կանոնք յիշեն զաւծանելն[98]: Եւ թէ վասն այն չաւրհնեն, թէ[99] Քրիստոսիւ աւրհնեցաւ[100], եւ ջուրն Յորդանանու Քրիստոսիւ աւրհնեցաւ՝ ընդէ՞ր զջուրն աւրհնեն[101] մեռոնիւ[102], որ ոչ երկրպագի, եւ զխաչ զերկրպագելի ոչ աւրհնեն եւ ոչ աւծանեն. զի այդ այնոցիկ է, որ ոչ խոստովանին[103] ի խաչին զԱստուածութիւնն[104]: Եւ թէ զեկեղեցի վասն այն չաւծանեն[105], զի իբրեւ[106] ի տուն ժողովին յաղաւթս, բայց եկեղեցի հաւատացելոց է աւրինակ, եւ աւծանին քրիստոնեայք, զոր եւ[107] արժան է աւծանել զեկեղեցի, որպէս Հայք, եւ պատուել վասն աւծմանն եւ չառնել աւթեւան ի նմա[108]:

Այլ հաւատացելոց[109] ի Քրիստոս երկիր ոչ պագանել միմեանց խաչի եւ եկեղեցւոյ՝ յոյժ[110] հակառակ է Աստուծոյ, զի յանուն Քրիստոսի կանգնեն ամենայն ազգք[111], զՔրիստոս անպատուէ[112]՝ որ զխաչ եւ զեկեղե-

83 աւուր ԱԴ, օր ԲԳ
84 ուտիցէ Դ
85 միասին Ա, մի ասեն զամենայն Դ
86 ի] Դ
87 եկեղեցի ԱԳԴ
88 զսեղանն ԱԴ
89 յիշէ ԱԲԴ, յիշել Գ
90 աւրհնել ԱԲ
91 է Ա
92 մկրտել Ա
93 զի թէ… մկրտել] Դ
94 եւ] ԱԲԳ
95 աւրհնելոյ ԱԳԴ
96 կամ… կամ] Դ
97 աւծել ԱԴ
98 զօծելն Ա
99 զի Դ
100 եւ ջուրն… աւրհնեցաւ] ԲԴ
101 + եւ Ա
102 մեռոնաւ ԲԳ
103 խոստովանի ԱԲԳ
104 զաստուածութիւնն ի խաչին Դ
105 ոչ օծանեն Գ
106 իբր Ա
107 եւ] Դ
108 աւթեւան ի նմա] Ա, ի նմա օթեւանս Դ
109 հաւատացել Ա
110 յոյժ] յորժամ Ա
111 ազգ ԱԲԳ
112 այն պատուէ Բ, այն պատուէր Դ

ցի անպատուէ[113]՝ իբրեւ զանհաւատ դատապարտի[114]: Զի որ[115] պատճառէ զմեռոն Հայոց անկատար լինել եւ[116] վասն այն անպատուէ՝ յոյժ ստութիւն ունի[117]. եւ զինքեանց զմեռոնն[118] պատուեն յոյժ՝ թէ պալասանի ձէթ եւ այլ անուշահոտ ի[119] խունկ խառնեալ[120] է՝ եւ կանոնք[121] տա[ն] խառնուած առնել ի մեռոն[122], որպէս ի հաց սուրբ[123] պատարագին զխմոր[124] եւ ի բաժակին՝ ջուր[125]: Եւ ոչ է գրեալ[126], թէ հարկաւոր է ի[127] ձիթապտղոյ ձէթ աւրհնել[128]՝ ըստ գաւառաց զինչ պատահի[129] ձէթ՝ ընդունելի է եւ թէ շուշմայի[130], եւ թէ այլ ազգ: Եւ թէ Մովսիսի[131] հրամայեաց[132] Աստուած զձիթապտուղ խակակութ[133] զըստ[134] պատահելոյ[135] գաւառին էր[136] եւ այն. այլ որպէս զհաց պատարագին աւրհնութիւն[137] առնէ մարմին[138] Քրիստոսի, նոյնպէս զձէթն[139] աւրհնութիւնն[140] առնէ նշանակ Հոգ[ւ]ոյն[141], զի Հոգին Սուրբ է, որ կատարէ զաւրհնութիւնն, եւ յայտ անուշահոտ լինելոյն[142] է թէ պատարագն եւ թէ մեռոնն:

Եւ թէ զաւրինացն[143] ասիցէ[144] ոք, զի չորք խունկք[145] անուշահոտ խառնեցան[146] ի յիւղն[147] աւծութեան, զի աւրինակին այն վայելէր[148], բայց ճշմարտութեանս[149] չեն[150] ինչ խառնուածքն պէտք, զի ամենայն ինչ անդր մարմնաւոր է[151] եւ աստ հոգեւոր:

[113] + եւ ԱԳԴ
[114] դատապարտէ Ա
[115] որ] Դ
[116] եւ] Գ
[117] ունին ԲԳ
[118] մեռոն ԱԴ
[119] անուշայհոտ Ա, ի] ԱԴ
[120] խառն Ա
[121] կանոն Գ
[122] ի մեւսն] մեռոնի Ա, ի մեռոնն Դ
[123] սուրբ] ԱԲ
[124] զխմոր] ԱԲԳ
[125] բաժակն ԱԲԳ, ջուր Ա
[126] գրել ԱԲ
[127] ի] ԱԲԴ
[128] ձայթ Ա, աւրհնել ձէթ ԲԳԴ
[129] ինչ թէ պատահին Դ
[130] շաշմանի Ա
[131] Մովսէսի ԱԲԳ
[132] հրամաեաց Ա

[133] խակակութն Դ
[134] ըստ ԱԴ
[135] պատահելոց Ա
[136] էր] ԲԴ
[137] աւրհնաթիւն Ա
[138] մարմինն Ա
[139] ձեթն Ա
[140] աւրհնութիւն Ա
[141] հոգոյն նշանակ ԱԴ
[142] լինելին Ա
[143] զաւրինացն] Գ
[144] ասէ Դ
[145] խունկ ԲԳ
[146] խառնուածք անուշահոտ խնկոց Գ
[147] յեւղն Ա, յեօղն Բ
[148] վաելէր Ա
[149] ճշտութեան Գ
[150] չէ ԱԲԳ
[151] անդր մարմնաւոր է] անմարմնաւոր էր Ա

Իսկ կենդանւոյն[152] առնել ժամ՝ գիտեմք զի Քրիստոս կենդանեաց է քաւիչ եւ մեռելոց, զի վասն այնորիկ մեռաւ եւ յարեաւ, զի կենդանեաց եւ մեռելոց տիրեսցէ՝ ընկալեալ եղեւ այդ[153] յԵկեղեցի: Այլ զի պատճառ եղեւ[154] ծուլութեան[155] եւ յաճախելոյ ի հեշտութիւնս, եւ վասն այն անընդունելի եղեւ ի Հայոց[156]: Եւ Տէր Յիսուս զպատարագն Իւր[157] յիշատակ անուանեաց[158], եւ յիշատակ յետ[159] մահու լինի եւ անուանի: Եւ առաքեալն Փիլիպպոս[160] յետ մահուն[161] պատուիրէր Բարթուղիմէոսի[162] մատուցանել պատարագ[163], զի մի՛ զոր շինէ ոք՝ զնոյն եւ քակէ: Բարի[164] է յետ մահուն լինել պատարագին, զի ագահելոյ[165] պատճառ է քահանայից եւ վաճառաշահելոյ[166], եւ[167] յայն ապաստանեալ[168] ոչ հատանի ի մեղաց: Ահա՝ թէ սիրէ ոք կենդանւոյն ժամ առնել՝ զգուշանալ պարտի[169] ի մեղաց, իբրեւ զմեռեալ[170], եւ զի հասարակ փրկագործութիւն եղեւ՝ հասարակ պարտ է[171] պատարագին լինել: Բայց զի ըստ գոյին զանազանի ընծայողացն[172] շատ[173] համարելն[174] եւ սակաւն[175], զի մի՛ քահանայք հեղգասցին[176]՝ աւուրբք թուեցաւ: Եւ զի կանոնք առաքելոյն[177] Փիլիպպոսի[178] զքառասունսն[179] հրամայէ՝ արժան է եւ թուելին[180] լինել եւ հասարակն ըստ ասացելոյ պատճառին:*

[ԺԸ.] Իսկ Հռոմայեցիք[1] զի բազում կանայս առնեն՝ որքան մեռանի[2], մոլորեալք յառաքելոյ[3] բանն, զոր ի Քրիստոս ասէ եւ յաւրէնսն, նոքա առին[4] կար-

[152] կենդանոյն ԱԲ
[153] այդ] Ա
[154] պատճառ եղեւ] պատճառել եւ Ա
[155] ծուլութիւն Ա
[156] հաոց Ա
[157] իւր] Ա
[158] յիւր յիշատակ զպատարագն Դ
[159] ետ Ա
[160] Փիլիպոս Ա
[161] մահու Դ
[162] Բարդուղիմոսի ԲԳ
[163] + արդ Դ
[164] բարիոք Դ
[165] ագելոյ ԲԳ
[166] վաճառաշահոյ Ա
[167] եւ] զի ԱԲԳ
[168] ապաստանել Ա, ապաստան ԲԳ

[169] զգոյշ պարտի կալ Դ
[170] զմեռել Ա
[171] պարտի Ա, փրկագործութիւն... պարտ է] Դ
[172] ընծառողացն Ա, ընծայողացն Դ
[173] շատն Բ
[174] համարեալն ԱԲ
[175] + եւ ԳԴ
[176] հեղգասցեն Ա
[177] առաքելոցն ԲԴ
[178] Փիլիպոսի Ա
[179] զքառասունս Ա
[180] թուելի Դ
* Ե-ն այստեղ ընդհատւում է

[ԺԸ.] [1] Հռոմաեցիք Ա
[2] մեռանի] ի Ա
[3] յառաքելոց Ա
[4] առին] ասին ԳԴ

ծեաւք[5] յայր եւ ի կին զասելն. Ապա թէ մեռանի այրն՝ չհամարել[6] չնութիւն[7] եթէ լինիցի առն այլում (Հռոմ. Է. 2), այլ ինչ պատճառաւ[8] ոչ թողուն: Այլ Կանոնք առաքելոցն[9] ոչ ընդունին՝ յասելն երրորդին եւ չորրորդին ալրջնքն չեն դատաւոր[10], այսինքն՝ ձեռնտու զինքեանց կանոնս աւրէնս անուանէ: Եւ Պաւղոս երկրորդին հազիւ տայ թոյլ, ասելով՝ Ապա թէ չունի[11] ժոյժ ամուսնասցի (Ա. Կոր. Է. 9): Եւ զերկրորդ ամուսնութիւնն ապաշխարութեամբ սահմանէ կանոնք:

[ԺԹ.] Այլ զկերակուր[1] աւրհնեալ եւ կամ պղծեալ ցուցեալ է[2] կանոնք[3], զջրհորս ոչ պղծեն վասն անհնարութեան, բայց զայլ[4] ինչ պղծեն եւ ազահութիւն համարին, բայց հաւատովք սրբի ըստ առաքելոյ, որ վասն խոզեն[ւ]ոյն ասացեալ է (Հմմտ. Հռոմ. ԺԴ. 20): Այլ կրաւնաւորք Հայոց զի ուտեն միս, եւ Հռոմայեցիք[5]՝ զմիս խոզենի[6] եւս՝ կանոնական է եւ այն, զի զուտելն ընդունի եւ զչուտելն, բայց պատճառ ունի կանոնք զոմանց պիղծ համարել զմիս[7], զոր նզովէ եւ հրամայէ[8] [չ]ուտել եւ բանադրէ որ զմսոտ բանջար խոտէ[9]: Բայց այնքան խորշին Յոյնք եւ Վիրք, զտեառն ուտելն ի Վերնատան[10] ձուկն նկարագրեն[11]:

Արդ, որպէս խոտելի է ուտելն, խոտելի է եւ նոյնքան[12] չուտելն խզճիւ, գովելի է չուտելն, զի անդէպ է կրաւնուորին[13], բայց պարսաւի խղճիւ եւ պիղծ[14] կարծեաւք[15] ուտելն (Հռոմ. ԺԴ. 20–23): Իսկ յիւրաքանչիւր աւուր ուտել[17] ձուկն եւ ըմպել գինի՝ ամբաստանի[18] յաւրինաց եւ ի կանոնաց, զի եւ ոչ մի աւր պահոց առ նոսա գտանի[19]: Նաեւ ի բազմաց սակաւ գտանի ի Հայոց

5 կարծեւք ԱԴ, կարծեօք ԲԳ
6 չհամարեալ Ա
7 շուն ԲԳԴ
8 պատճառ ԱԲԴ, + առ Ա
9 առաքելոց ԱԴ առաքելոյն ԲԳ
10 դատաւոր] դաստուր ԱԲԴ
11 չունին ԱԴ
[ԺԹ.] 1 զկերակուրս Ա, կերակուր ԲԳ
2 պղծեալ ցուցեալ է] պղծել է Ա
3 կանոնքն Դ
4 + ինն Գ
5 Հռոմաեցիքն Ա
6 խոզի ԲԳ
7 միս Ա
8 հրամաէ Ա
9 զմսոտ բանջար խոտէ] զբանճար մսոտ խոտէ Ա
10 + ըստ աւրինացն զգառն Ա
11 նկարագրէն] կարգեն Դ
12 այնքան ԱԲԳ
13 գովելի է (գովի Դ) չուտելն, զի անդէպ է կրաւնաւորի] ԲԳ
14 պեղծ Ա
15 կարծիւք ԱԳԴ, կարծեօք Բ
16 իւրաքանչիւր ԲԴ
17 ուտելն Ա
18 ամպաստանի Ա
19 + երբէք Դ

կրաւնաւորաց[20] մսոյ[21] կերող՝ համարձակեալ ի կանոնաց:

[Ի.] Այլ ոչ առնել սարկաւագ եւ դպիր եւ ոչ բացաւ գլխով[1] եւ հանդերձիւ[2] պատարագել յեկեղեցւոյ[3]՝ այդոցիկ խափանումն չէ յաղանդոյ[4], այլ յաւերմանէ եկեղեցեաց, եւ ուր կարն է շուրջառաւք[5] եւ հանդերձիւք պատարագեն եւ ի քահանայից[6] կարգեն սարկաւագ եւ դպիր զի ի խակ մանկունսն[7] չհամարձակին[8] զահագին խորհուրդն պատարագի[9]:

Այլ զի կրաւնաւորք հերս ոչ ունին՝ եւ վասն այնորիկ[10] ոչ բանան զգլուխս[11], եւ աշխարհի քահանայք բացաւ գլխով պատարագեն եւ աղաւթեն:

[ԻԱ.] Իսկ ամբաստանելն, թէ զպատկերս սրբոցն[1] ոչ ընդունին[2] Հայք, եւ կարի առաւել ընդունիմք, զի առաջին պարգեւ[3] ի Քրիստոսէ իւրն[4] տուաւ պատկեր Հայոց թագաւորին Աբգարու եւ զառաքելոցն ունէր զպատկեր[5] սուրբն Սեղբեստրոս, եւ ամենայն սուրբք ընկալան: Բայց եղեւ երբեմն եւ[6] հակառակութիւն ի սոյնս, թէ նմանութիւն է կռոց[7], եւ ոչ ընկալան ոմանք[8] ի թագաւորաց, այլ այրէին[9] եւս՝ մինչեւ[10] նշանք եղեն[11], եւ[12] Աստուածածնին[13] պատկերն, որ[14] ի հրոյն[15] արտաքս անկաւ, եւ դարձեալ տեսիլ ցուցաւ[16], եւ ապա ընկալան[17]: Նաեւ Յուլիանոս ամբարիշտն[18] ընդ իւր պատկերին եւ զսատանայի[19] նկարեաց եւ ի Հայս առաքեաց՝ դնել յարքունական յեկեղեցին, զոր առեալ Յուսկանն[20] եւ կամ[21] Դանիէլ[22] քահանայի[23] կոխեաց եւ

20 կրաւորաց Ա, կրօնաւոր Դ
21 մսի ԱԴ
[Ի.] 1 բացագլխով Գ
2 հանդերծիւ] հանդիսիւ Դ
3 եկեղեցոյ պատարագել ԱԲԳ
4 յաղանդոյն Գ
5 շրջառաւք Ա, շուրջառիւք Դ
6 քահանից ԱԴ
7 մանկունս Ա
8 չհամարձակեն Ա
9 խորհուրդ պատարագին ԲԳ
10 այն ԱԲԳ
11 զգլուխն Ա, գլուխս ԲԳ, զգլուխ Դ
[ԻԱ.] 1 սրբոց ԱԴ
2 ընդունինք ԲԳ
3 առաջի պարգեւս (պարգեւ Գ) Ա
4 իւր Գ
5 զպատկերն Ա, զպատկեր] Դ
6 եւ] ԱԲԳ
7 կռոց է Դ
8 ընկալան ոմանք] ընկան Ա
9 այրէին] ներէին ԲԳ
10 մինչ ԱԲԳ
11 եղեւ ԱԲԳ
12 եւ] ԱԲԳ
13 յԱստուածածնին Բ, յԱստուածածնի Գ
14 որ] ԱԳԴ
15 հրոյն] հորոյն Գ
16 եւ դարձեալ տեսիլ ցուցաւ] ԲԳ
17 ընկան ԱԲԴ
18 ամպարիշտն Ա
19 զսատանաին ԱԴ
20 սկանն ԲԳ
21 կամ] ԱԲԳ
22 Դանիէլի Ա, Դանիլ Դ
23 քահանա Ա, քահանայ ԲԳԴ

վասն այն սպանաւ ի Տիրանայ: Բայց զի կարի բազմացուցին՝ եւ անարգեցան[24] սրբոց[25] պատկերքն ընդ այլսն[26]: Զի որպէս Հայք զխաչ[27] անարգեցին՝ արհամարհանաւք[28] յամենայն տեղիս կանգնելով, նոյնպէս եւ[29] Յոյնք եւ Վիրք զպատկերս: Զի զոր գիտեմք՝ ընդունիմք եւ պատուեմք, զի յիշեցուցիչ է՝ որպէս պատմութիւն[30] վարուց սրբոցն[31], բայց զի արք տգէտք զպաշտելի[32] կարծեն՝ վասն այն եւ ոչ փութան առնել Հայք. այլ իմաստունք զսրբոցն[34] զարարեալ[ս]ն[35] ոչ անպատուեն:

[ԻԲ.] Եւ վասն Առաջաւորաց[1] պահոցն[2] առաւել գայթակղին Յոյնք եւ Վիրք ի մեզ, եւ զի[3] յիշատակ տաւնի սրբոյն Սարգսի[4] անդ պատահեաց[5], եւ կարծի[6] զայն[7] պահք նմա լինել: Եւ անգիտանան զի պատմութիւն նորա յԱսորւոց է, զի ի Պարսս[8] նա վկայեաց[9], եւ անտեղեակ են պատմութեանն[10]: Եւ այն առաջին[11] պահք է[12], զոր[13] կարգեաց[14] սուրբն Գրիգոր ի[15] բժշկել զՏրդատ թագաւոր, որպէս պատմէ[16] Ագաթանգեղ[17]՝ այր Հռոմայեցի եւ ոչ Հայ: Եւ Զենոբ Ասորի եպիսկոպոս[18], աշակերտ սրբոյն Գրիգորի զնոյն գրէ յիւրում Պատմութեանն[19] եւ յաւելու ի պատմել[20], թէ եւ Ե. աւր պահք Մեծին Կոստանդիանոսի կարգեցաւ ի Սեղբեստրոսէ[21] ի բժշկել[22] զնա, եւ վասն այն առաջաւոր անուանի, զի առաջին պահք այն եղաւ[23] ի Հայս[24]. եւ թէ[25] զայլ պահս[26] յիշեմք՝ վասն աւրի-

[24] անարգեցաւ ԱԲԳԴ
[25] սրբոցն ԱԲԳ
[26] ընդ այլսն] ընկալան ԲԳ
[27] զխաչն Դ
[28] արհամարհանաւք] Դ
[29] եւ] ԱԲԳ
[30] պատմութիւնն ԱԲԳ
[31] սրբոցն վարուց Դ
[32] զպաշտելին Ա
[34] զսրբոցն] ԱԲԳ
[35] զոր արարեալ են Դ
[ԻԲ.] [1] առաջաւորացն ԲԳ
[2] պահոց Դ
[3] զի] Ա
[4] + զօրավարին Դ
[5] պատահեալ է Դ
[6] կարծեն Դ
[7] այն ԱԲԳ
[8] Պարս Գ
[9] վկաեց Ա, վկայեց Գ
[10] պատմութեան Գ
[11] առաջի ԲԳ
[12] է] եղեւ ԲԳ
[13] որ Գ
[14] կարգեալ է Ա
[15] ի] Գ
[16] պատմեաց Դ
[17] Ագաղանկեղ Ա
[18] եպիսկոպոս ասորի Դ
[19] պատմութեան Դ
[20] պատմեալ Ա
[21] ի Սեղբեստրոսէ] Ա
[22] բժշկեալ Ա
[23] եղաւ Գ
[24] Հայք ԱԲԳԴ
[25] թէ] ԲԳ, եթէ Դ
[26] պահքն Ա, պահք ԲԳԴ

նակի միայն՝ զՆինուէացւոցն[27] եւ զայլոց[28]:

Բայց Մանիքեցիք թէպէտ եւ ազգաւ չեն ի Հայոց, այլ զի ի Հայս[29] բնակեալ[30] են եւ զՀայոց ունին զլեզու[31] եւ վասն շահի երթան ի Յոյնս[32] եւ ասեն զինքեանս[33] Հայ[34] լինել եւ մկրտին վասն ընչից եւ զաղանդն իւրեանց ասեն նոցա: Եւ նոքա, զի սիրողք չարի են[35], ճշմարիտ կարծեն լինել, թէ Սարգիս ոմն արուեստիւ[36] հալաճ[37], աղանդիւ[38] կախարդ, ազգաւ Հայ[39], շուն ունէր եւ ուր[40] երթալն կամէր[41]՝ շունն յառաջէր[42]: Եւ այս[43] է նոցա առաջաւորաց պահքն[44], զոր ընդ շունս եւ ընդ գայլս[45] եղիցի բաժին աստղացն: Այլ Սարգիս զաւրավարն[46] յաւուրս Կոստանդիանոսի էր[47] եւ ի[48] Յուլիանոսէ հալածեալ[49] ի Կապոդիկիէ[50] եկն ի Հայս առ Տիրան թագաւորն[51] Հայոց: Եւ նա առ իւր ունել զանգիտեաց ի Յուլիանոսէ՝ գնաց ի Պարսս առ արքայն[52] Պարսից, եւ նա պատուեաց եւ զաւրավար կարգեաց ընդդէմ Տաճկաց՝ հանդերձ որդովն իւրով, զոր[53] գերի վարեցաւ ի նոցանէ եւ աղաւթիւք հաւրն՝ նշանաւք եւ տեսլեամբ դարձաւ ի նոցանէ, որ եւ այս շնորհ եղեւ տուեալ[54] սրբոյն, զի տակաւին աղաւթիւք նորա[55] ազատին գերիք: Եւ զի զաւրաւոր[56] եւ յաղթող ցուցաւ ի պատերազմունս եւ յայտնի եղեւ քրիստոնէութիւն նորա, եւ սորին աղագաւ[57] կոչէր[58] Շապուհ եւ ստիպէր զոհել կռոց: Եւ նորա չառեալ[59] յանձն՝ վկայեաց[60] որ-

[27] զՆինուեցիոցն Ա, զՆինուացւոցն Գ
[28] զայլոցն Դ
[29] Հայք ԱԲԳԴ
[30] բնակել ԱԳ
[31] լեզու Բ
[32] Յոյնք ԱԲԳ
[33] զինքեանց Դ
[34] հա Ա
[35] + զմեզ Դ
[36] արեստիւ Ա
[37] հալաջ Ա
[38] աղանդ ԱԲԳ, + եւ ԲԳ
[39] հայ] Գ
[40] յուր Ա
[41] կամէր] Դ
[42] յառաջէր շունն Դ
[43] եւ այս] այն Դ
[44] պահն Ա, պահք Դ
[45] զայլսն ԱԴ

[46] զօրավար Դ
[47] է Գ
[48] ի] ԲԳ
[49] հալածել ԱԲԳ
[50] + է Ա
[51] թագաւոր Դ
[52] արքայն] թագաւորն ԱԲԳ
[53] որ Դ
[54] շնորհք տուեալ եղեւ Դ
[55] սրբոյն Դ
[56] զաւրավար Դ
[57] սորին աղագաւ] վասն սորին Դ
[58] կոչէ ԲԳ
[59] չառել ԱԳ
[60] վկաեաց Ա

դովն, որ անուանեալ կոչիւր[61] Մարտիրոս, յամսեանն յունվարի որ աւր ԼԱ. էր[62]: Եւ ոչ կայ ի պատմութեանն[63] Յունաց, այլ Ասորւոց[64], եւ վասն այն նոցա անհաւատալի թուի[65] եւ թէ կամին եւ թարգմանեն՝ արդարեւ պատուեն եւ նոքա տաւնիւ[66]: Պահքն Առաջաւորաց[67] է եւ տաւնն Սարգսի զաւրավարի եւ վասն այն պահք[68] Սարգսի կարծեն[69], որպէս յառաջին շաբաթն[70] յաղահուցսն անուանեալ պահքն շաբաթ աւրն Թէոդորոսի տաւն է[71], եւ շաբաթն նորա անուանի պահք: Յառաջագոյն յայն շաբաթն թագաւորացն տաւնէին՝ Կոստանդիանոսի եւ Տրդատայ, վասն Ե-աւրեայ նոցա պահոցն, եւ յետոյ Սարգսի՝ վասն անդ պատահելոյն անուանեցաւ[72]:

[ԻԳ.] Այլ պանրուտէքն այսպէս կարգեցաւ. Թագաւորն Յունաց Զենոն մսասէր էր եւ բազմակեր եւ յաւուրս բարեկենդանին[1] բազմաճաշակ եղեալ ի միս եւ տաղտկացեալ՝ ի վաղիւն խղճիւ աւրէնս կարգեաց յայն[2] շաբաթ ոչ ուտել[3] միս, եւ այդ սովորութիւն կալաւ:

Այլ մատաղ առնել ի տաւնի Հայոց[4] ոչ է հրէաբար[5], այլ՝ որպէս գրեալ[6] է ի կանոնս, զի Հրեայք[7] ընդ բաղարջս[8] եւ ընդ եղեգն ուտեն, եւ հաւատացեալք պարզաբար, զի չէ ինչ նման հաւատացելոց եւ Հրէից տաւնելն[9]:

Եւ ոչ զանկակ ունել ի բուրուառն[10] եւ կամ[11] չունելն հերձուած է, այլ որպէս[12] ի քչոցն է՝ ազդ առնել միայն խորհրդական աղաւթիցն եւ ահաւոր առնել զժամ պատարագին[13] ի լսելիս: Եւ զի խորհուրդ սերոբէից սրբասացութիւնն[14] է՝ այլ քահանայք եւ կրաւնաւորք զինուոր են Քրիստոսի, եւ զփիլոն[15] եւ զվե-

61 կոչէր ԱԲԳ
62 էր] Ա, + ամսոյն Դ
63 պատմութիւնն Ա
64 յասորոց ԱԲԳ
65 թվի Գ
66 պատուելոց են տոնիւ Գ, եւ նոքա պատուեն տոնիւ Դ
67 առաջաւորացն Ա
68 պահքն ԱԲԳ
69 կարծի ԱԲԳ
70 շաբաթ Դ
71 տաւնի ԱԲԳ
72 անուանեցաւ] տաւնեցաւ ԱԴ

[ԻԳ.] 1 բարեկեանդանին Ա
2 յայնմ Ա
3 + ի Դ
4 Հայոց] ԱԴ
5 հրաբար ԱԳԴ, հրէաբար Բ
6 գրեալն Ա
7 հրէքն Ա
8 բաղարջի Ա, բաղարջն Դ
9 տաւնեալն ԱԴ
10 բուրուառ Ա, բուրվառսն Բ, բարվառն ԳԴ
11 կամ] Բ, եւ կամ] Գ, եւ] Դ
12 որպէս] ԲԳ
13 պատարագի ԱԴ
14 սերոբէիցն սրբասացութեան ԲԴ
15 զփիլոնն ԱԴ

ղար[16], որ ասի քուսիթայ[17], որ է կուսից[18] պսակ՝ որպէս զէն զանձամբ ունին, եւ չէ պարտ անզէն լինել:

Իսկ Յոյնք եւ Վիրք զի[19] այպանեն[20] զբեւեռ խաչի՝ յոյժ անգիտաբար ամբաստանեն[21], զի ասեն թէ[22] զԱստուածութիւնն խաչեալ[23] ասեն Հայք, եւ վասն այն է բեւեռն: ԶԱստուած ասեմք խաչեալ[24]՝ ոչ զԲանն[25], այլ զմարմինն[26]՝ աստուածացեալ Բանիւն, զի ոչ էր բաժանեալ Բանն ի մարմնոյն[27], որպէս ասաց Նեստոր, զի ուր մարդկաւրէնն[28] ասի՝ ոչ առանց Բանին, եւ ուր Բանն[29]՝ ոչ առանց մարմնոյն: Այլ բեւեռ խաչի խորհրդական[30] է, որպէս եւ[31] գրեալ է ի կանոնս եւ որպէս առաքեալն Պետրոս մեկնէ՝ ուղիղ[32] փայտն Աստուածութեան[33] Քրիստոսի է աւրինակ, եւ խոտորնակն՝ բնութեան մարդոյն[34], իսկ բեւեռն՝ դարձն եւ ապաշխարութիւնն[35]:

Իսկ խաչեցար[36] ասելդ ոչ ի Հայոց[37] միայն է, այլ ի մարգարէից[38] գուշակեալ[39] եւ յաւրինաց նկարագրեալ[40] եւ յառաքելոց եդեալ եւ ի[41] հրեշտակաց վկայեալ[42] եւ որպէս պատմէ Նեքտարիոս հայրապետն Հռոմայ, եթէ ոչ եղեւ հնար Յովսեփայ[43] իջուցանել զմարմինն ի խաչէն, զի փայլատակունք հրատանէին ի փորուածէ բեւեռացն, եւ ոչ կարէր հանդարտել: Ապա զձեռսն տարածեաց եւ[44] աղաւթեաց[45] այսպէս ասելով. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ: Եւ երիցս զայս ասելով՝ իջոյց ի խաչէն[46] եւ

16 զվեղարն ԱԲԴ
17 քուսիթա ԱԴ
18 կուսի ԱԴ
19 զի] ԱԲ
20 այպանեան ԱԴ, այպնեն Բ
21 ամբաստանեն] ապստամպեն Ա
22 եթէ ԲԳ
23 խաչիլ ԱԲԳ
24 խաչել ԱԳԴ
25 զԲանն] զբնութիւնն Դ
26 զմարմին Ա
27 մարմն Ա, մարմնոյ Բ
28 մարդկօրէն Դ
29 ոչ առանց Բանին եւ ուր Բանն] Գ
30 խորհրդաբար Դ
31 եւ] ԱԲԳ
32 աղեղ ԱԲ
33 աստուածութեանն ԲԴ, աստուածութիւնն Գ
34 մարդոյ Դ
35 ապաշխարութիւն Ա
36 խաչեցարն Դ
37 Հայոց] հարց ԱԲԳ
38 մարգարից Ա, մարգարէիցն Դ
39 գուշակելով Գ
40 եւ յաւրինաց նկարագրեալ] Դ
41 ի] Ա
42 վկաել Ա, + քարոզեալ Դ
43 Յուսիփայ Ա
44 զձեռն տարածելով Ա, տարածեալ Բ, եւ] ԱԲԳ
45 աղօթից Դ
46 ի խաչէն] Ա

պատեաց եւ թաղեաց[47]: Իսկ առաքելոցն յաւուրս[48] ուրբաթի[49] եւ[50] չորեքշաբաթի նախ զայս[51] ասէին կցուրդիւ[52] եւ ապա Գիրս ընթերցեալ[53]՝ պատարագ մատուցանէին, բայց աւրէնս ոչ եդին, այլ ըստ աւուրց հանդիպմանց[54] փոխել, որպէս ի յարութեանն զՅարեաւն[55] ասել եւ յայլ[56] տնաւրինականսն, ուստի յայտ է, թէ Որդւոյ ասի եւ ոչ Երրորդութեանն:

Եւ ի փոխիլն[57] Աստուածամաւրն եւ զկնի երից[58] աւուրց բացեալ[59] զգերեզմանն[60] ոչ գտին զմարմինն[61]: Ապա Հոգին[62] Սուրբ ազդեալ[63] զփոխիլն առաքելոցն՝ Թովմաս[64] առաքեալն աղաւթեաց. Փառաւորեալ միշտ սուրբ Կոյսդ[65] Աստուածածին Մարիամ, մատո՛ զաղաչանս մեր Որդւոյ քո եւ Աստուծոյ[66] մերոյ[67], զոր եւ այլ[68] առաքեալքն առեալ եդին զկնի աղաւթիցն Յովսէփայ[69], որ է Սուրբ Աստուածն: Եւ այսոքիք[70] կայ ի գիրս[71] Նեքտառեայ[72] Հռոմայեցւոյ, որ Կանոնաց լրմունք կոչին: Վասն յիշատակի Եկեղեցւոյ Քրիստոսի զայս բանս դրոշմէ եւ գրէ ի Գիրս զատկաց, զոր ընթերցեալ Յոհաննու[73] Ոսկեբերանի՝ կարգեաց յիւր[74] ժամանակի, զոր արդելուին Թէոփիլեանքն[75], թէ զՈրոգինին[76] խորհի[77], եւ առ ժամանակ ինչ դադարէին բանքն:

Եւ ապա Կիւրեղ ընդդէմ Նեստորի կարգեաց ի ժողովն Եփեսոսի, եւ ասացին ամենայնքն[78] Միածին Որդի եւ Բանդ Աստուած եւ զՍուրբ[79] Աստուածն խաչեցարիւն հանդերձ, զոր բարձին ի ժողովն Քաղկեդոնի՝ որ-

[47] եւ թաղեաց] Ա
[48] յաւուրսն Ա
[49] ուրբաթու Դ
[50] + ի ԱԴ
[51] + իսկ Դ
[52] կցորդիւ ԱԲԳ
[53] ընթերցեալ Գիրս Գ
[54] հանդիպման ԲԳ
[55] զյարեաւն] զարերն Ա, զյարեարն ԲԳ
[56] յել Ա
[57] փոխել Ա, փոխելն Բ, փոխիլն Գ
[58] երից] ԲԳ
[59] բացին Դ
[60] զգերեզման Ա
[61] եւ մարմինն ոչ գտին Դ
[62] հոգի Ա
[63] ազդել ԲԳ
[64] Թոմաս Ա
[65] կոյս Ա, կոյսսն Դ
[66] Աստուծոյդ ԲԳ
[67] Աստուածածին... մերոյ] Դ
[68] սա] ԲԳ
[69] Յուսեփայ Ա, Յովսեփայ Գ
[70] այսոք Ա
[71] գիրսն ԱԳ
[72] Նեկտառեա ԲԳ
[73] Յովհաննու Ա
[74] յիւր Ա, իւրում Գ
[75] Թոփիլեանքն Ա
[76] զՈրոյգինին Բ
[77] խորհին Ա
[78] ամենայնքն] երկու հարիւրքն Գ, երկերիւքն Դ
[79] սուրբ ԲԳ

պէս գրէ Պետրոս Անտիոքացին[80] զամենայն եղեալսն ի Հայս[81], գրէ եւ Կիւրղոս[82], գրէ եւ Տիմոթէոս բազում ինչ ի Հայս[83]: Զայսոսիկ լուեալ մերն Իսահակ հայրապետ[84] այնպէս[65] հաստատեաց ասել խաչեցար, թէպէտ[86] ի Լուսաւորչէն կարգեալ էր: Եւ յետոյ հարքն մեր վասն Նեստորի աղանդին ժողովեալ ի Դուին եւ ի Մանազկերտ եւ եդին սահման՝ եթէ[87] որ ոչ ասէ զխաչեցարն՝ յամենայն սրբոց զգովեալն, եղիցի նզովեալ, զի զերախտիսն Քրիստոսի յիշեմք եւ ոչ թշնամանեմք, զի հրեշտակք եւ առաքեալն[88] Պաւղոս նովաւ պարծին:

[ԻԴ.] Իսկ վասն Առաջաւորացն[1] պահոց այսպէս գտաք գրեալ. զի յորժամ գնաց[ին][2] Տրդատ եւ սուրբն Գրիգոր ի Հռոմ եւ միաբանութեան[3] դաշն[4] եդին, վասն զԼուսաւորիչն եւ զՏրդատ պատուելոյ զառաջաւոր[5] պահսն[6] յիւրեանց[7] ամիսն եդին՝ պահեալ[8] ի Կոստանդիանոսի պահոցն տեղիս, եւ մեք զՍեղբեստրոս եւ զԿոստանդիանոս պատուեցաք եւ ի կատարումն[9] առաջաւորացն Տրդատայ եւ Կոստանդիանոսի[10]՝ տաւնէաք ընդ նոսա, եւ նոքա ընդ մեզ, զոր եբարձ Մարկիանոս ի ժողովն Քաղկեդոնի[11]: Եւ իբրեւ եբարձ զպահսն[12]՝ խափանեցաւ եւ տաւնելն[13], իսկ մեք զմեր Լուսաւորչին զկարգեալն հաստատուն[14] պահեցաք:

[ԻԵ.] Արդ[1], զի ի[2] բաժանմունսն են[3] որ ի սատանայէ[4] է, որպէս Մանքեցիքն[5] եւ այլքն[6] նմանք նոցա[7], եւ է որ[8] ի փառասիրութենէ[9], որպէս ժողովն Քաղկեդոնի, եւ է[10] յանկարութե-

[80] Անդոքացին Ա, Անտիոքացին] Դ
[81] Հայք ԱԲԴ, Հայս] Դ
[82] Կիրղոս ԱԳ
[83] բազում ինչ ի Հայս] ԱԲԳ
[84] հայրապետն ԳԴ
[65] այնպէս] այնուհետեւ ԱԲԳ
[86] + եւ ԲԳ, թէպէտ] թէեւ Դ
[87] թէ Դ
[88] առաքեալ Ա, առաքեալքն Գ

[ԻԴ.] [1] առաջաւորաց ԲԳ
[2] գնաց ԱԲ, գնար Գ, գնայ Դ
[3] միաբանութեամբ ԱԴ
[4] դաշինս ԱԲԳ
[5] զյառաջաւոր ԲԴ
[6] պահքն ԱԲԴ
[7] իւրեանց Գ
[8] պահել ԲԳԴ
[9] կատարման ԱԳԴ
[10] Կոստանդիանոսի եւ Տրդատայ Դ
[11] + զառաջաւորաց պահքն Դ
[12] զպահսն] Գ
[13] տաւնեալն Ա, տօնելն ԲԳԴ
[14] հաստատեալ կարգն Ա

[ԻԵ.] [1] Արդ] եւ Դ
[2] ի] ԲԳ
[3] են] է Դ
[4] սատանաէ Ա
[5] Մանիքեացիք Բ, Մանիքեցիք Գ
[6] այլք ԲԳ, այլ Դ
[7] նոցայ ԱԳԴ
[8] է որ] ԱԲԳ
[9] + է Դ
[10] է] ԱԲԳ

նէ, որպէս կարգաց Հայոց[11] Եկեղեցւոց, եւ յանձնիշխանութենէ, որպէս կարծելն յիւրաքանչիւր[12] յազգաց որք[13] լաւ լինել, եւ է[14] յանգիտութենէ եւ յանուսումնութենէ, որպէս [յ]իւրաքանչիւր յազգս[15] տեսանեմք արտաքոյ Գրոց վկայութեանն[16] հակառակիլ[17]: Եւ վասն այն[18] անհնարին[19] տեսանեմք զգալն ի միաբանութիւն, զի ամբարտաւանեալ ոչ հնազանդին միմեանց, եւ բարձան բարեպաշտ թագաւորքն Յունաց եւ Հոռոմոց[20], զի նոքաւք լինէր տիեզերական ժողովն: Եւ զի չորք էին ազգ[ք] հիմն ժողովոյ՝ ըստ չորից աւետարանչացն[21]. Յոյնք եւ Հոռոմք, Հայք եւ Ասորիք, զի չորից[22] ազգաց հայրապետք էին ի[23] մեծամեծ ժողովն ի Նիկիա եւ ի Բի[ւ]զանդիա[24] եւ յԵփեսոս: Եւ թէ իւրաքանչիւր ոք[25] զիւրն թողոյր զխոտելին եւ առնոյր զգովելին[26]՝ լինէր միաբանութիւն ազգաց[27]: Եւ թէ չորք[28] ազգդ[29] միաբանէին՝ ամենայն ազգ[ք] ընդ նոսա միաբանէին, զի Վիրք զՅունացն[30] ունին[31] եւ նոքա միաբանէին ընդ նոսա[32]: Եւ արդ այսպէս լինէր, թէ զգլխաւոր[33] իրսն[34] ուղղէին, մանրագունիցն չլինէր հակառակութիւն[35], եւ այս են գլխաւորքն, զժողովն Քաղկեդոնի նզովէին եւ զերից սուրբ ժողովոց[36] զաւանդեալսն[37] հաստատէին զհաւատս եւ զտաւնս[38], եւ զխմոր եւ զջուր խափանէին, եւ ամենեքեան Գրոց վկայութեամբ միմեանց հնազանդէին, զԱստուածն[39] ուրախ առնէին:

[ԻԶ.] Այլ զի զթերին[1] ասացաք ամենայն[2] ազգաց, այժմ եւ[3]

11 Հայոց կարգաց ԱԴ
12 իւրաքանչիւր ԱԳԴ
13 որք] ոք Ա, որք] Դ
14 է] են Դ
15 ազգս ԱԴ
16 վկայութեան ԱԲԳ
17 հակառակել ԲԳ
18 եւ վասն այն] վասն Ա, եւ վասն այնորիկ Դ
19 անհնար Դ
20 Հոռոմոց եւ Յունաց ԲԳ
21 աւետարանչաց Դ
22 չորք Դ
23 ի] ԱԴ
24 Բիւզանդիայ Ա, Բիւզանդիոն Դ
25 ոք] ԱԴ

26 + զիւրաքանչիւր Դ
27 ազգաց լինէր միաբանութիւն Դ
28 չորս Դ
29 ազգ ԱԲԳ
30 զունաց Ա. զյուրանցն Բ
31 ունէին Գ
32 նոսայ ԱԴ
33 զգլխաւորս Գ
34 իրս ԱԲԳ
35 չէր հնար հակառակութեան Դ
36 ժողովոյ Ա, ժողովոյն ԲԳ
37 զաւանդեալն ԱԲԳ
38 տօնից Դ
39 զԱստուած Դ
[ԻԶ.] 1 թերին ԱԳԴ
2 զամենայն ԱԲԳ
3 եւ այժմ ԱԲԳ

զգովելին ասացից. Յոյնք իմաստունք են եւ ողորմածք, ուսեալք ի Յոհանէ[4] Ոսկեբերանէ, Հոռոմք զգաստք[5] են աղաւթից եւ հնազանդք[6] առաջնորդաց, Ասորիք խոնարհք են եւ ճգնողք, Հայք պահողք են եւ ողորմած[7] գերելոց եւ եկեղեցականաց, սրբութեանց[8] սիրողք, Վիրք՝ սրբոց եւ վանորէից[9] մեծարողք եւ անբամբասք[10] առաջնորդաց[11]: Բայց մի՞թէ խափանի չար նախանձն[12] սատանայի, որ զչարն տեսանել տայ եւ բարին՝ ոչ[13], բայց կարծի[14], թէ[15] չտայ մեզ աշխարհին[16] զբարին[17] առնել: Լաւ էր, թէ զայն ընտրէաք, որ[18] զթշնամութիւն[19] բառնէաք[20] ի միմեանց եւ բարեկամ լինէաք եւ զկարգ միմեանց չհայհոյէաք: Զի եւ[21] Աստուած կարող էր[22] զամենայն ազգ մի առնել, այլ բռնադատեաց[23] զմեզ եւ զամենայն ազգացն[24] ընկալաւ զպաշտաւնն[25] եւ զկարգ[26]՝ մինչ ի ժամանակ դատաստանին թոյլ տալով: Զի Ե. ազգացդ[27] չտեսանեմք այնքան պատճառս[28], որ անընդունելի առնէ Աստուած զհաւատ[29] կամ զտաւն[30], եւ նա ճանաչէ զիւրաքանչիւրոցն զարժանաւորութիւն[31]: Այլ զԱրիանոսացն չընդունի[32] եւ ոչինչ ի կարգաց[33], զի արարած ասեն զՈրդի, նոյնպէս եւ[34] զհոգեմարտից եւ զԵւնոմիանոսաց[35], զՆեստորականաց եւ զԵւտիքիանոսաց[36] եւ զՆաւատիանոսաց եւ զսոցին նմանեաց:

Այլ թէ ասացեալ հինգ ազգացդ[37] ոչ կարեն միաբանիլ[38], բայց կարող են թշնամիք մի-

4 Յովհաննէ ԲԳԴ
5 սգաստ Ա
6 հնազանդ Ա
7 ողորմած ԱԴ
8 սրբութեան ԱԲԳ
9 վանօրէից Բ
10 անբամբաս ԱԲԳ
11 առաջնորդացն Դ
12 նախանձ Գ
13 ոչ] չտա Բ
14 կարծիլ Դ
15 թէ] Դ
16 աշխարհի ԲԳ
17 զբարին] Ա
18 որ] զի Գ
19 զթշնամութիւնն Դ
20 բառնայաք Դ
21 եւ] ԱԲԳ

22 + եւ ԱԲԳ
23 չբռնադատեաց ԲԳ
24 ազգի] ԱԲԳ
25 զպաշտօն ԲԳԴ
26 եւ զկարգ] Դ
27 ազգաց Ա
28 պատճառք Ա
29 զհաւատ] ԲԳ
30 զտաւնն Ա, զտօն ԲԳԴ
31 արժանաւորութիւն Դ
32 չընդունի] չընկալաւ Դ
33 կարգացն Դ
34 եւ] ԱԲԳ
35 զեւնեմիանոսաց ԱԴ
36 զՆեստորականաց եւ զեւտիքիանոսաց] ԲԳ
37 ազգդ Ա, ազգդ հինգ Դ
38 միաբանել ԱԲԳ

մեանց[39] չլինել, զխաչ եւ զեկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ, բայց այնքան սատանայ էարկ[40] զատելութիւն[41], զի զխաչ[42] եւ զեկեղեցի միմեանց անարգեն եւ նախատեն[43], որով եւ[44] Քրիստոս հայհոյի: Զի որպէս հարկաւոր ընկալաւ Աստուած զբաժանումն լեզուացն[45], մի՞թէ եւ զայս ընկալաւ՝ զբաժանումն կրաւնից[46], զի ի[47] միմեանց նախանձով զբարին գործիցեն[48] եւ ոչ չար:

Արդ, բարիատեացն սատանայ զբարին խափանէ[49] եւ զչարն յորդորէ առնել, զի Յոյնքն[50] եւ Վիրք այնքան բամբասողք են Հայոց, զի զեկեղեցի աւրհնեալ[51] քակեն եւ զսեղանն[52], յորոյ[53] վերայ պատարագեալ է Քրիստոս, արտաքս ձգեն եւ ասեն շուն զենուլ[54] յեկեղեցի[55] Հայոց եւ այնպէս զաւրհնութիւն հանել[56] զՀայոց[57]: Զայդ միայն Յուլիանոս արար ուրացողն Քրիստոսի՝ զմկրտութիւնն[58] իւր շան արեամբ կամեցաւ լուծանել:

[Իէ.] Եւ արդ՝ Յոյնք եւ Վիրք եւ Հայք[1] զմկրտութիւն միմեանց կամին լուծանել՝ կրկին մկրտելով զմիմեանս, զոր ընդդէմ կանոնաց գործեն. զի մի է Քրիստոս եւ մի մկրտութիւն (Եփես. Դ. 5): Եւ յաղագս այնորիկ[2] հարկ է ցուցանել, թէ զո՞ր արժան է մկրտել յազգաց եւ զոր՝ ոչ, յորժամ գան ի կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատս[3] զո՞րս կնքաւորել կամ զո՞րս[4] սուրբ իւղովն աւծանել, կամ զո՞րոց[5] միայն աղաւթս առնել, կամ զիա՞րդ զՀրեայս[6] եւ զհեթանոսս մկրտել եւ լուսաւորել սուրբ աւազանաւն, կամ զզաւակ[7] քրիստոնէի զիա՞րդ[8] մկրտել: Զի որք կամիցին Աստուծոյ երկիւղիւն[9] զհետ լինել

39 միմեանց թշնամիք ԲԳ
40 էարկ սատանայ Դ
41 զատելութիւնն ԲԳ
42 խաչ ԲԳ
43 ատեն եւ անարգեն ԲԳ, նախատենեւանարգեն Դ
44 եւ] Դ
45 զլեզուաց բաժանումն ԲԳ
46 կրօնիցն Դ
47 ի] ԱԲԳ
48 գործեսցեն Դ
49 խափանէր Ա
50 Յոյն Բ
51 զաւրհնեալ
52 զսեղան ԱԲԳ
53 յորոց Ա
54 զենող Բ, զենօղ Գ
55 յեկեղեցիս Դ
56 հանել զօրհնութիւն Դ
57 Հայոց Դ
58 զմկրտութիւն ԱԴ
[Իէ.] 1 եւ Հայք, եւ Վիրք ԲԳ
2 այնոցիկ Ա
3 հաւատ Դ
4 զոր ԲԳ
5 որոց Ա, որոյ ԲԳ
6 զՀայսս Ա, զՀրէայս ԲԴ
7 զաւակ ԱԴ
8 զիա՞րդ] որպէ՞ս ԱԲԳ
9 երկեղին Ա

առանց ծուլութեան՝ զհաճոյսն Աստուծոյ կատարիցեն, ապա թէ ոք ծուլասցի եւ կամ արհամարհեսցէ[10] եւ թերակատար առնիցէ[11] յաստուածային կարգացն[12]՝ մեք զարծաթն արկցուք ի սեղանաւորս, իսկ սէրն եկեալ զիւրն պահանջէ[13] տոկոսիւք, եւ մեք անպարտ գտցուք:

Եւ արդ՝ այսպէս[14] պարտ է ընդունել զհերձուածողսն[15] յԵկեղեցի Աստուծոյ՝ զԱրիանոս[ս][16], զԿաթարոսս[17], զՄակեդոնիանոսս[18], զՍամբատիանոսս[19], զՆաւատիանոսս[20], զչորեքտասանեայս[21] եւ որք զչորրորդութիւն խոստովանին եւ զԱպաւղինարիս[22]: Սոքա[23] ամենեքեան նզովեսցեն նախ[24] զհերձուածս[25], յորում[26] մոլորեալ էին, եւ ապա զամենայն հերձուածս, որ[27] հակառակ է ողջամիտ վարդապետութեանն Քրիստոսի Եկեղեցւոյ[28], եւ յետ այսորիկ ուսցին զճշմարիտ հաւատս Եկեղեցւոյ, եւ ապա կնքէ քահանայն[29] զճակատն եւ սիրտն եւ զամենայն զգայարանս[30] սուրբ մեռոնաւն՝ որպէս թէ այժմ լուսաւորեալք եկին ի հաղորդութիւն[31] ի փրկական եւ ճշմարիտ արեանն[32] Քրիստոսի: Իսկ մկրտութեան վերստին չեն պէտք լուացումն[33] ջրոյն, այլեւ[34] արասցէ այսպէս արժան է պահել աւուրս Եժ. եւ պարապել[35] աղաւթից առաւաւտուն[36] եւ երեկոյին[37] եւ աշակերտել[38] զմերս եւ ապա կացուցանէ[39] զնոսա քահանայն[40] առաջի սուրբ աւազանին[41] եւ ասել տայ այսպէս. Նզովեալ (այս անուն) հերձուած, յորում մերն[42] էր եւ

10 արհամարհիցէ ԱԲԳ
11 առնիցէ] արասցէ Դ
12 կարգէն ԱԲԳ
13 պահանջիցէ Ա
14 այսպէս] Գ
15 զԱրիոս Ա
16 զհերձուածօղս ԲԳԴ
17 զկաթարոս ԲԳ, զկաթարոսսն Դ
18 զՄակեդոնիանոսսն Դ, + եւ Բ
19 զՍմբատիանոս Գ, զՍամբատիանոսսն Դ
20 զՆաւատիանոսն Դ
21 զչորեքտասանեակս ԱԲ, զչորեքտասեակս Գ, զչորեքտասանեայքսն Դ
22 զապօղինարիոսն Դ
23 սոքայ ԱԴ
24 նախ] Դ
25 զհերձուածսն Դ
26 որում Ա

27 որ] յորում Ա
28 վարդապետութեան եկեղեցոյ Բ, Քրիստոսի] ԱԲԳ
29 քահանեն Ա
30 զգաարանս Ա, զգայարանօքն Դ
31 ի հաղորդութիւն] Դ
32 արեան ԱԴ
33 լուացման ԱԲԴ
34 այլեւ] եւ ԱԲԳ
35 պարապեալ Ա
36 առաւօտին ԲԳԴ
37 երեկոյն ԱԲԳ
38 աշակերտեալ Ա
39 կացուցանել ԲԳ
40 քահանայն] Ա
41 աւազանին] սեղանին Ա
42 մերն] իւրն Ա, մերն էր] էրն Դ

հաւանակիցք նորին[43] եւ խորհողք[44] զնորայսն, քանզի հրաժարիմք ի նմանէ եւ յամենայն հերձուածական աղանդոյն[45][46] եւ հաւատամք ի մի[47] Տէր, ի[48] միասնական Սուրբ[49] Երրորդութիւն[50] ըստ աւանդութեան սուրբ հարցն ուղիղ դաւանել զԲանն ճշմարտութեան: Եւ ասել տայ[51] զմի մի[52] զբան[53], եւ ասէ ցնա քահանայն երիցս՝ Հաւատա՞ս[54] ի միասնական Սուրբ Երրորդութիւնն, եւ նա պատասխանի տայ[55]՝ Հաւատամ: Իսկ թէ չգիտիցէ խաւսիլ[56]՝ թարգման կալցի[57], եւ խոնարհեցուցանելով զնորադարձն, եւ ունի քահանայն զձեռն ի վերա[յ] գլխոյն եւ ասէ զաղաւթս զայս. Աստուա՛ծ, Փրկի՛չ մեր, որ կամիս զամենայն մարդկան զկեալ եւ ի գիտութիւն ճշմարտութեան[58] գալ (Ա. Տիմ. Բ. 4), ընկա՛լ զծառայս Քո (զայս անուն), զհազիւ[59] կարացեալս մաքրել ի մոլորութենէ եւ ցանկացեալ գալ ի գիտութիւն Քոյոյ[60] ճշմարտութեանդ[61], քանզի Դու ասացեր՝ Նաեւ այլ եւս[62] ոչխարք են Իմ, որք[63] ոչ են յայսմ[64] գաւթէ, եւ զայն եւս պարտ է Ինձ ածել[65] այսր[66], եւ եղիցին մի հաւտ եւ մի հովիւ (Յովհ. Ժ. 16): Հովուեա՛ զսա[67] առ ի Քէն գիտութեամբ ճշմարտել զլաւն[68] ներգործութեամբ սրբոց Քոց եւ[69] փառաւորեալ առաքելոց Քոց[70] եւ արժանաւորեա՛ զսա[71] կնքոյ Քո աստուածային մեռոնիդ եւ Սրբոյ Հոգւոյդ[72] տնկարկութեանդ[73] եւ հաղորդութեան[74] պատուական մարմնոյ եւ արեան Քրիստոսի

[43] նորա ԱԳԴ
[44] խորրողք Ա, խորհողքն Դ
[45] + նորա ԱԲԳ
[46] յաղանդոյն Ա
[47] մի] Դ
[48] ի] եւ ԱԳ
[49] + աստուածութիւն Դ
[50] երրորդութեանն ԲԳԴ
[51] տա Բ
[52] մի մի Ա
[53] զբանն Դ
[54] երից հաւատս Գ
[55] տա Բ, + թէ ԱԲԳ
[56] խաւսել ԱԲԴ, խօսիլ Գ
[57] կալցէ Ա
[58] ճշմարտութիւն Ա
[59] որ հազիւ Դ
[60] քոյ Ա, քոոյ Բ, քո Դ
[61] ճշմարտութիւնդ Ա
[62] եւս] Դ
[63] որ ԱԲԳ
[64] այսմ Ա
[65] ածել ինձ Բ
[66] + եւ ծայնի իմում լուիցեն Դ
[67] զսայ ԱԳ
[68] լաւ ԱԲԳ
[69] եւ] ի Դ
[70] եւ փառաւորեալ (փառաւորել Բ) առաքելոց քոց] Ա
[71] սայ Ա
[72] հոգոդ Ա, հոգոյդ Բ
[73] տնկարութեանդ Գ, տնկարկութեանդ] տնկարկութեամբ Դ
[74] հաղորդութեամբ Դ

Քո եւ վերայայտեա՛[75] զսա կատարեալ ծառայ Քո, զի ընդ հաւտի[76] Քո զուգաթուեսցի[77] եւ սա[78]՝ ի փառս եւ ի գովութիւն[79] մեծութեան Քո[80], զի Քո է զաւրութիւն եւ փառք այժմ եւ յաւիտեանս[81] յաւիտենից, ամեն[82]:

Եւ որպէս[83] յառաջն ասացաւ[84], աւծանէ զնա որպէս նորակնիք[85] եւ դարձեալ աղաւթէ զայս. Տէր Աստուած մեր, որ արժանի արարեր վերայայտեալ[86] կատարել[87] ծառայի Քո (զայս անուն) ի ձեռն որ ի Քեզ[88] ուղղափառ հաւատով[89] եւ կնքոյ սուրբ մեռոնի, Դու Տէ՛ր ամենայնի[90], զառ ի Քէն ճշմարիտ հաւատ ի սմա հաստատեա՛[91] եւ[92] զարգացո՛[93] զսա արդարութեամբ[94] եւ ամենայն շնորհաւք զարդարեա՛, քանզի աւրհնի եւ փառաւորի ամենապատիւ եւ մեծավայելուչ[95] անունդ Հաւր եւ Որդւոյ եւ Սրբոյ[96] Հոգւոյդ այժմ եւ միշտ[97] եւ յաւիտեանս յաւիտենից[98], ամէն:

Ապա հաղորդի ի մարմին եւ յարիւն Քրիստոսի[99]:

Իսկ Նեստորիանոսաց[100] եւ Եւտիքիանոսաց եւ այլ նոյնպիսի հերձուածողաց տալ ի[101] խոստովանութիւն եւ նզովել[102] զհերձուածն[103], յորում են եւ զամենայն հերձուածս, իսկ[104] աւծման չեն պէտք, բայց ասեն[105] աղաւթս այս ի վերայ[106]. Տէր Աստուած զաւրութեանց, Աստուած ապաշխարողաց, որ զամենայն մարդիկ կամիս զի կեցցեն[107] եւ ի գիտութիւն ճշմարտութեան[108] եկեսցեն[109], որ զպատրեալս[110], ի

[75] վերայայտեայ ԱԲ, վերաստեղծեա Դ
[76] հոտիդ Դ
[77] զուգաքեւեսցի Գ
[78] եւ սա] Դ
[79] գովութեան ԱԲ
[80] մեծութիւն գովութեան քոյ Դ
[81] յաւիտեան Բ
[82] յաւիտենից, ամէն] Բ
[83] որպէս] Դ
[84] ասացի Ա
[85] նորկնիք Ա
[86] վերայ յայտել Ա
[87] կատարեալ ԳԴ
[88] որ ի քեզ] Դ
[89] հաւատովք ԲԳ, հաւատոյ ի քեզ Դ
[90] ամենայն Գ
[91] հաստատեա] հաւատաց ԲԳ
[92] եւ] ԱԲԳ
[93] զարգացոյ ԱԲԳ
[94] յարդարութիւն Դ
[95] եւ] ԲԳ, վաելուչ Ա, մեծ վայելուչ Դ
[96] սրբոց սուրբ ԱԲԳ
[97] եւ միշտ] Դ
[98] յաւիտենից, ամեն] ԲԳ
[99] Ապա... Քրիստոսի] ԱԲԳ
[100] + եւ ԲԳ
[101] ի] ԲԳԴ
[102] նզովեալ Ա
[103] զհերձուածս ԱԲԳ
[104] են եւ զամենայն... իսկ] ամենայն հերձուածք ԱԲԳ
[105] ասին ԱԲԳԴ
[106] վերա ԲԳԴ
[107] կեցցեն եւ ի] Գ
[108] ճշմարտութիւն Ա
[109] զի կեցցեն... եկեսցեն] զի ամենայն մարդիկ գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն Բ
[110] զպատրեալս Բ, զպարտեալսն Դ

մտախաբ վարդապետութենէ[111] դարձուցանես ի փրկութիւն. Դու, Տէ՛ր[112] ամենակալ, ընկալ զծառայս[113], որ զերծաւ յորոգայթից սատանայի[114] եւ ընթացաւ ի սուրբ Եկեղեցի Քո, վասն որոյ պաղատիմք եւ աղաչեմք զՔեզ, արա՛ զսա[115] լինել ի համար ընդ[116] այնոսիկ[117], որ արեամբ Քո փրկեցան եւ պահեա՛ զսա ի մահաբեր նետից թշնամ[ւ]ոյն. զի մեռեալ էր եւ եկեաց[118], կորուսեալ էր եւ գտաւ (Ղուկ. ԺԵ. 32): Եւ արդ[119], տո՛ւր սմա անբիծ[120] եւ անարատ խոստովանել զՔեզ եւ ճշմարտութեամբ փառս տալ Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյ[121] այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից[122]:

Իսկ զՍիմոնացիս եւ զմիւս Սիմոնացին եւ զԿեղեղացին[123] եւ զԵւնոմիանոսս[124], որք միոյ հակառակ երկու մկրտին, եւ զՄոնտանոսս եւ զԱրտեմոնացիս եւ զՍաբելացիս[125] եւ զՓոիւզացիս, որք զորդեհայրութիւն[126] ուսուցանեն եւ որք ի Պաւղոսէ Սամոստացւոյ[127] են խաբեալք, զՄանիքեցիս եւ զՄանինեցիս[128], զՄարկիոնացիս, զՎաղենտիանոսս[129], զՊեպուզացիս[130], զՓիարտիանոսս[131], զՈնոտացիս[132], զԱպաւղինարոսս[133], զԿերինթիանոսս[134], զԵրդինացիսս[135], զՄենանդրացիսս[136] եւ որ այլ այսպիսի հերձուածող[137] իցէ, պարտ է իբրեւ զհեթանոսս եւ իբրեւ զՀրեայս[138] մկրտել[139]: Եւ թէ զի՞նչ են աղանդ[ք] նոցա[140] եւ որպէ՞ս ի դէպ[141] է մկրտել եւ յո՞ր աւուրս, զի մի լիցի երկարութիւն[142] ճառի՝ չառաք ի մէջ:

111 վարդապետութենէն Դ
112 + ամենայնի Դ
113 + քո զայս Դ
114 սատանայի] հակառակողին Դ
115 զսա] ԱԲԳ
116 ընդ] Դ
117 այնոցիկ Դ
118 եկաց ԱԲԳ
119 արդ] Ա
120 ամբիծ ԲԳ
121 հոգոյդ սրբոյ ԱԴ, հոգոյ սրբոյ Բ, սուրբ հոգւոյ] Գ
122 այժմ... յաւիտենից] Բ
123 զկեղետացին Դ
124 զեւմիանոսս Ա, զեամիանոսս Գ
125 զՍաբէլացիս] ԲԴ, եւ զսաբէլացիս]
126 զորդէ հայրութիւն ԳԴ
127 Սամուստացոյ Ա, Սամոստացոյ Բ
128 զմանինացիս եւ Դ, + եւ Գ
129 զվաղենտիոսս Ա, զվաղենտիոս ԲԳ
130 զՊեպուզացին Դ
131 զՓոտիանոսս ԱԲԳ
132 զսնոտացիս ԱԲԴ
133 զԱպօղինարոս Գ
134 զԿերիթիանոսս Ա, զԿերիթոսս ԲԳ
135 զերդինացիս ԲԳ, զերգինացիս Դ
136 զՄէնանդրացիսս Ա, զՄենանդրացիս ԲԳԴ
137 հերձուածողք Ա
138 զՅրայս Ա, իբրեւ] Դ
139 մկրտեալ ԱԳԴ
140 նոցայ ԱԲ, սոցայ Դ
141 դեպ ԱԳ
142 յերկարութիւն ԱԲ

Արդ, այս սահմանք հայրապետացն է[143] առաջնոց, զոր շնորհաւք Սուրբ[144] Հոգւոյն[145] արարեալ[146] քննութիւն՝ այդպէս[147] կարգեցին: Արդ[148], զԱրիանոսաց եւ զհոգեմարտից ցուցին եւ զսոցին[149] նմանեաց ոչ ի ջուր մկրտել[150], այլ խոստովանել զուղիղ[151] հաւատն եւ նզովել զհերձուածսն[152] եւ աւծանել[153] միայն եւ աղաւթել ի վերայ նոցա[154], իսկ զաղանդաւորսն[155] իբրեւ զհեթանոսս եւ զՀրեայս[156] մկրտել, զի բազումք ի նոցանէ անաստուածք[157] եւ դիւապաշտք եւ կախարդք են, զոր[ս] պարտ է ամենայնիւ մկրտելն[158]:

Իսկ զՆեստորիանոսս[159] եւ զԵւտիքիանոսս[160] ոչ մկրտել եւ ոչ աւծանել, այլ ուղիղ խոստովանել եւ աղաւթիւք սրբել:

Արդ բարձեալ են աղանդաւորք շնորհաւքն Քրիստոսի[161]՝ եւ Արիանոսքն եւ նոցին նմանիքն[162]:

[ԻԸ.] Արդ, յայտ է, զի Յոյնք եւ Վիրք[1] եւ Հայք յոյժ մեղանչեն զմիմեանս մկրտելով եւ աւծանելով, զի Հայք ամբաստանեն[2] զՅոյնս եւ զՎիրս[3] վասն երկու բնութիւն[4] ասելոյն[5] անմիաւոր՝ զՆեստորին ունել, եւ նոքա զՀայս[6] բամբասեն զԵւտիքէին[7] ունել վասն մի բնութիւն[8] ասելոյն: Եւ ահա յայտ է[9] եւ գիտելի է, զի մի բնութիւն ասեմք՝ ոչ զմարդկութիւնն ուրանամք որպէս Եւտիքէս[10], այլ վասն անճառելի միութեանն[11] մի ասեմք, եւ նոքա[12] անդիտաբար դայթակղին: Այլ թէ նոցայն այսպէս[13]

143 է հայրապետացն ԲԳ
144 սուրբ] ԲԳ
145 հոգոյն Ա
146 արարել ԱԲԳ
147 այսպէս Դ
148 + զի] ԱԴ
149 սոցին ԱԲԴ
150 եւ զսոցին... մկրտել] ցուցին ի շար չմկրտել եւ զնոցին նմանեացն Դ
151 զուղեղ Ա
152 զհերձուածն ԱԲԳ
153 օծանեալ Բ
154 նոցայ] նորայ Ա, նոցայ Դ
155 զաղանդաւորս Ա
156 զՅրայսս Ա, զհեթանոսս եւ զհրէայս] զՅրեայ եւ իբրեւ հեթանոս Դ
157 + են Դ
158 մկրտել ԱԲ
159 զՆեստորիոս ԲԳ
160 զեւտիքիոսս ԱԲԳ
161 Շնորհոքն Քրիստոսի բարձեալ են աղանդաւորքն ԲԳ
162 նմանիք Ա

[ԻԸ.] 1 Վիրք եւ Յոյնք Դ
2 ամբաստեն Ա, բամբասեն Դ
3 զՅոյնք եւ զՎիրք Դ
4 բնութեան Ա
5 ասելոյ Դ
6 զՅայք ԱԲԳ, բամբասեն զՅայք Դ
7 զեւտիքի ն Դ
8 միաբանութիւն ԱԴ
9 յայտ է եւ] Դ
10 իբրեւ զետիքէս ԲԳԴ
11 անճառ միութեան Ա, անճառելի] անքակ Դ
12 նոքայ Ա
13 այնպէս Դ

